1

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 թ.

223

# ՄՆԱՑՈՐԴՔ
## ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ
### ԱՐՏԱՔՈՅ ՏՕՆԱՑՈՒՑԻՆ ՄԵՐՈՅ

Յիշատակելոց

'Ի Յայսմաւուրս կամ՝ 'ի Ճառընտիրս Հայոց
որք և Յունաց, և Լատինացւոց.

Զոյգ ընդ ցուցակի Տօնելի օրից.

Համառօտեալ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ Վրդպի
Աւգերեան, 'ի միաբանութենէ մեծին Մխիթարայ
Աբբայ հօր:

Եւ տպագրեալ հրամանաւ Տն Տն Ստեփաննոսի
Ագոնց՝ Աբբայի և Արքեպիսկոպոսի:

Արդեամբք ա̃ծասէր Մանուկ Աղայի կարնեց-
ւոյ մահտեսի Ածատուրեան:

## ՀԱՏՈՐ ԺԲ.

Այբուբենական.

որ է Բառարան յատուկ անուանց Սրբոց,
հնոց և նորոց:

1815. Ի ՎԵՆԵՏԻԿ. ՌՄԿԴ:
'Ի Վանս Սրբոյն Ղազարու:

10203
A / 1098

~~3648~~

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ա. յԸուբենական Հատորոյս Մնացորդաց ։

Քանզի անմարթ էր եկեղեցւոյ զամ սրբոց յանուանէ տօնել ամ ըստ ամի՝ առ անթիւ բազմութեն նոցա քան զաստեղս երկնից , ( Թո՛ղ զորոց անգիտանամք և զանուանս՝ որ գրեալ կան 'ի գիրն կենաց , ) սովորութիւն եղև վայելչական՝ յիշատակել և գէթ մասն սրբոց արտաքոյ Տօնացուցի՝ ըստ ընթերցուածոյք 'ի կարգի Յայսմաւուրաց ։ Եւ այս յամ ազգս . զի որպէս Հայք , նոյնպէս և Յոյնք և Հռովմայեցիք , Ասորիք և Ղպտիք և Եթէովպացիք եւն , Թուով ևեթ և ընտրանաւ տօնեն զայսպէս ինչ սրբոց յանուանէ ըստ աւուր պատշաճի . Են որ զնոյնս , և են որ զզանազանս , ըստ զատուել հանդիպեցելոյ յազգի անդ իւրեանց՝ կամ 'ի գիրս իւրեանց . և զնա բազումս նշանաւորեն ևեթ յիշատակելեօք 'ի կարգի յայսմաւուրաց կամ Վկայագրոց իւրեանց ։

Արդ յետ գրելոյ մեր զկենսակատար Վարս և զՎկայաբանութիւնս սրբոց տօնելոց յազգի մերում , կամեցեալ արժանաւորաց և վկայաւորաց տալ ծայր 'ի նոյն տեղեկութիւն և զնմանեաց յիշատակելի սրբոց , ( եթէ տօնելի եղեն առ այլս , և եթէ յիշատակելի ևեթ ) , երեք ինչ եդաք 'ի մտի 'ի դիւրութիւն մեզ և ընթերցանելեաց ։

Նախ՝ չերկարել զպատմութիւն սոցա որպէս զտօնե-

ըէայն առ 'ի մէնջ՝ հապարեալ հիպատանութե . ապա
թէ ոչ՝ պա՛րտ էր և մի սոյա յօրինել նովին չափ հա-
տորս տասն , և գոյցէ և ևս աւելի . այլ՝ շա՛րօրէ-
նակ յայտնութենական ծաղէկս հարուց սէջ արարաք ,
նոյնպէս և սար շաղաւոր ստորագրութե հարուց
նոյա շարանալ . թէպէտև ո՛չ մօրենակ . շէ շամանց
սմանց շգործս նորանորս ձոխր մի աւելի նշանակեմք ,
և շայլոյն շմօրենակ ընթայս աւելի հարձեմք . որ-
պէս և ջերմեռանդն պաշտօնաէրք այնպէս ճաճա-
ձէն լինել : Ո՛ռղ շէ և սմանց 'ի սէջ շգտանեն հարք
հապարեալ , այլ հա՛մ սահառապող ստոյգ յեղափոխու-
թէք , և համ էրկարապատում՝ էայց անստոյգ և ան-
հաւէրական առանձնութէք :

Խորհուրդ՝ ոչ միայն յեղափոխել շեղեալն 'ի շանապարհն
օրինակս յայսմանաւորաց մերոց , այլև յաւելուլ շորս
գտանեն 'ի ձեռագրաց մեր՝ արտաքոյ յայսմանաւորացս .
որպէս և շգտեալն առ յոյնս՝ էէր հաւաքանորս և
հաւեալս 'ի լուէլէս ազգէն մերոյ . նոյնպէս և շհան-
դիսացեալս առ լատինս և քարոզեալս յազգի մերում :
Իսկ նշանակ որոշմանց սոյա յերերաց՝ լեցէ սոհրա-
կան նշանն , զոր դնեմք առընթեր էւրաքանչիւր սէջ .
քանզի ∴ . նշանակէ զյեղափոխեալն 'ի հայոց յայս-
մանաւորս . որպէս և Λ . զաւանդեալն 'ի ձեռագրաց
մերոց հայոց . և {} . շէշեալն առ յոյնս . և | .
զորս առ լատինս : Նայց թէ արդեօք յազգի միում
ևեթ կամ յերկուս և կամ յերիս էցէ յեղափոխ նոյնն ,
յայտնի լինի ի նշանակելոյ մեր զնոյն տառս ∴ .
{} . | . էրբեմն զբառն մանգամայն , էրբեմն զեր-
կուս , և էրբեմն զմին առանձին :

Խորհուրդ՝ ի հարկ այժմութենէ յարմարել զայս հատոր-

շի

չէ ինքնին դիւրագիւտ լինիցի՝ որոց ցանկան գտա-
նել և ընթեռնուլ զվարս այսր կամ այնր սբյ արդա-
րոյ տօնացուցի։ Բայց որպէս չէ լեցի հատոր այս
միանգամայն և Յանկ Վարուց սբց տօնելեաց ՚ի մէնջ,
եւր և հանրական ցուցակ՝ կմ Յայսմաւուրան ամ սբց ե-
րևելեաց, անցուցանեմք ՚ի կարգ այժմուեանեցս և
զանուանս եղելոյ ՚ի տօնացուցի, առաքելով չըն-
թերցօղս ՚ի լեզուաց վարս նոցա՝ որ ՚ի նախընթաց
հատորս, ասելով. տես ՚ի Տօնելեօ. հատ. Ա. կամ
Բ. ԻԶ. երես, ԻԶ։

Իսկ թէ քանի՞ քրդանց և աշխատասիրեց էջէ գործս,
դն է գիտելի. յորժ ևեթ ծամ անհնարին վար-
ժուց ըստ անեաւ մարդասիրութէ նորա՝ երբեմնօ-
ւոյթեամբ սմ սբց. այլ յընթերցանելեաց ակն ունիմ
ըստ աշօթից, և ըստ ներողամտութէ մարդկօրէն սխա-
լանաց՝ ընդունել և զղջումն վարդապետաց՝ ՚ի հոգևո-
րարեանց. չէ մ՚ լով ընթերցցին ընդլալն, այլ չէ
պատշաճեցելոյն և չափաւորելոյն իւրև իրեկ ևւրէ
և պարապ, նմանօղ լինելով վարուց սբցն ամ. չէ
և նոյին պատշաճին արժանի լինիցին ՚ի քմ յմ ՚ի մր
մեր։

Իսկ չէ գործս եռանդեան շարեոլն յածի տօնելեօք
կմ յիշատակելեօք, չորոց է դաւել սբյ առաքելական
գահին հռովմայ, ըստ նորոյն դաստիարակու արժա-
նեմ չմմ առ յինէն գրեալս պատմագրաց կամ քննո-
ղաց. որպէս և չմմ գրոծածս իմ քերականս և
գործնականս յմմ ՚ի կէանս իմ ՚ի կարգս ամ, և ՚ի
պատիւ անձնօրհնեալ մբ ածածնի, և յօգուտ մա-
կանց եկեղեցւոյ։

* Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք զԲազմութիւն Վկայից, զհպարտութիւն զամ՛ ՚ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս, համբերութեամբ ընթասցուք ՚ի պատերազմ, որ առաջի կայ մեզ։ Հայեսցուք ՚ի զօրագլուխն հաւատոց, եւ ՚ի կատարիչն Յս Ք։

Եբր. ԺԲ. 1։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ



Իշխեա՛ մեզ դու և որդի քո ։

# ՄՆԱՑՈՐԴՔ

## Վարուց Սրբոց՝ Յիշատակելեաց ,
## Որպէս ըստ ցուցակի Տօնելեաց ,
## ըստ Այբուբենի ։

---

## Ա․

ԱԲԳԱՐ ԿԱՄ ԱՒԳԱՐ Թագաւոր Հայոց յԵդեսիա . տես 'ի վարս տօնելի սրբոց . հատոր . Ա․ երես․ 145 = 157 ։

Աբդաս կամ Աւդաս եպս պարսից՝ ընդ Որմզդանայ և Սայենի և Բենիամենի սարկաւագի՝ նահատակեալ . տես 'ի տօնելիս . հատ . Բ . երես․ 211 = 224 ։

Աբդոն կամ Աւդոն , որ և Աբդիւս՝ եպս խերխաղիդայ 'ի պարսս , և Աբդիշոյ կամ Աւդիշոյ եպս սախարայ՝ էին 'ի Հալածանս Յազկերտի ։ Նախ ըմբռնի Աբդիշոյ՝ մատնեալ 'ի քեռորդւոյ իւրմէ սարկաւագէ . և դատեալ վն 'ի քն հաւատոց 'ի Ներսիթայ եղ-

բօ․

բօրէ արքայի՝ պրկի 'ի դաՀճաց մինչև 'ի խախտումն ոսկերաց եօթն անգամ, և կի-սամաՀ դնի 'ի բանտ ։ Ապա ըմբռնեալ և աբդաս՝ Հանդերձ ժ՟Զ քաՀանայիւք, Թ սար-կաւագօք , ժ՟Զ աբեղայիւք , Է կուսանօք , և Լ՟Ը ծականօք , յետ դատելոյ 'ի ներսիթայ՝ մատնեցան կապանօք 'ի ձեռս մամլթի մոգ-պետին · որ վ՟ս խոստովան լինելոյ ն՟ց զ՟ք՟ս զուարթութ՟բ՝ ետ Հարկանել զգերանս ն՟ց քարամբք , և ապա գլխատել · նոյնպէս գլխատեցաւ 'ի նմին աւուր և աբդիշու ։ ⁘
Յ․ Լ․ 'ի մայիսի · 16 ։ Ա՛յլք և ԱԲԴԻՇՈՅ․
ապր․ 8․ ը՟ս ո՟ր ինչլ ։

ԱԲԴԱՍ կամ ԱԲԴԻԱՍ վկայ՝ էր ծիկ քրիստո-նեայ պարսիկ 'ի ներդուլ քաղաքէ՝ ջերմ յա՟ծպաշտութե՟ , որ ձգէր զբ՟զմս 'ի պարսից 'ի ն՟ր Հաւատս յաւուրս Շապհոյ կ՟մ յազկերտի· կալաւ զնա մոգպետն , և ստիպէր յերկրպա-գութ՟ի արեգական և Հրոյ · և իբրև ոչ կա-րաց Հաւանեցուցանել , ետ Հարկանել զփոր-ն՟ր , և տանջել յառաւօտէ մինչև ցօր Հասա-րակ , և ապա 'ի բանտ արկանել կիսամեռ · ուր յետ պաՀու աւանդեաց զՀոգի իւր ու-րախութ՟բ 'ի ձեռս փրկչին ։ ⁘ փետր․ 20 ։
Յ․ սեպտ․ 5 ։

ԱԲԴԻԱՍ կ՟մ ԱԲԴԻՈՒ՝ մին յերկոտասան մար-գարէից · տե՛ս 'ի տօնելիս · Հատ․ Գ․ 308 ։
ԱԲԴԼՄՍԵՀ՝ որ և ԱՍԵՐ , մանուկ եբրայեցի՝ նաՀատակ 'ի պարսս · տե՛ս 'ի տօնելիս · Հատ․ Ա․ 92 ։

ԱԲԵ

Ռ.ԷԵղայ․ սինէական լերինն , և ըռուԹայ
կին հռայրիԹու եգիպտացւոց՝ նահատակին
սրով և պէսպէս տանջանօք 'ի սարակինո-
սաց , 'ի Դ և 'ի Ե դարու , անձինք իբր ուԹ-
սուն և մի ․ 'ի հռայրիԹ կատարեցան միայ-
նակեացք խԴ ․ և 'ի սինա լԸ ․ յորոց վԸ ծա-
գեաց լոյս յերկնից ․ և զմարմինս սցն Թա-
ղեցին սաբա և եսայի ճգնաւորք ։ Օ վկայե-
լոցն 'ի սինա ճոխագոյն գրեաց սըն հայրն
նեղոս ։ ՜․ յունվ․ 11 ։ Յ․ Լ ․ յունվ․ 14 ։

Ռ.ԷԵրկնոս եպս յերապօլսոյ փռիւգացւոց՝
փայլեաց նշանագործուԲ 'ի Բ դարու , յա-
ւուրս մարկոսի անտոնինոսի իմաստասէր
կայսեր , և դարձոյց զբազումս 'ի հաւատս
քնի․ բժշկեաց զգիճահարս և զախտաժէտս,
լուսաւորեաց զկոյրս , ջուր բղխեցոյց յան-
ջրդի վայրի , և յետ բժշկելոյ և զդուստր
կայսեր 'ի հռովմ՝ դարձաւ յարևելս , և խա-
ղաղուԹԲ հանգեաւ 'ի քն առաքելանման
հայրապետն , և Թաղեցաւ 'ի տապանին՝
զոր ինքն էր պատրաստեալ՝ գրելով 'ի նմա
և բանս խորինս ։ ՜․ Յ․ Լ ․ հոկտ․ 22 ։

Ռ.ԷԷւ արդար՝ տօնելի Ե նախահարս ․ հատ․
Գ․ 194 ։

Ռ.ԷԷԷաւ սարկաւագ տօնելի ․ հտ․ Ր․ 444 ։

Ռ.ԷԷոողոմ սարկաւագ տօնելի ․ հտ․ Ռ․ 37 ։

Ռ.Էոււդնմոս վկայ էր 'ի տենեդոյ կղզւոյն առ
դիոկղետիանոսիւ ․ որ վն մերժելոյ զկուռս
և զզոհս՝ կապեալ 'ի չորս ցիցս տանջեցաւ
յինն դահճաց ․ և յետ քերանաց գլխատե-
ցաւ ։

ցաւ ։ Նա եւ երեւեցան թգ̃րին հրեշտակք սու-
սերաւորք , եւ ցուցեալ զհոգի ս̃բյն աբուդի-
մոսի որպ̃ քաջ սպառազինի՝ ասեն . տես զծա-
ռայն ա̃յ՝ զոր դու կարծէիր կարճել 'ի կե-
նաց . եւ գիտեա՛ , զի եւ յետ մահուա՛նն կեն-
դանի է մեռեալն վ̃ն ք̃ի , եւ հզօր եւ յաղ-
թօղ ընդդէմ դիւաց՝ զորս պաշտէք կռա-
պաշտքդ . իսկ բռնաւորն յահի լեալ , այլ
ոչ ինչ օգտեալ՝ ետ այրել զմարմինն վկային ։

∸. օգոստ. 25 կամ 26 ։ ⁂. Լ. յուլ. 15 ։

ԱԲՐԱՀԱՄ ՆԱՀԱՊԵՏ՝ տօնելի ը̃ նախահարս .
հտ. Գ. 219 ։

ԱԲՐԱՀԱՄ եւ ԽՈՐԷՆ խոստովանողք երիցունք
հայոց՝ աշակերտք Ղեւոնդեանց , տօնելիք .
հտ. Ա. 210 ։

ԱԲՐԱՀԱՄ կամ ԱԲՐԱՄ եպս̃ պարսից՝ յարտա-
ւիլ քաղաքէ՝ յաւուրս շապհոյ արքայից ար-
քայի , վասն ածելոյ զպարսիկս 'ի հաւատս
ք̃ի՝ մատնեցաւ կապանօք 'ի ձեռս աղէլ-
փարայ մոգպետի . եւ ոչ հաւանեալ զոհել
արեգական եւ հրոյ՝ կրեաց ազգի ազգի տան-
ջանս , որպ̃ եւ կնեղութիս բանտի . եւ ապա
գլխատեցաւ՝ 'ի բերան ունելով զխոստովա-
նութի ամենասր̃ երրորդութե ։ ∸. փետր.
8 , կամ 7 ։ ⁂. փետր. 4 ։

ԱԲՐԱՀԱՄ քահանայ անապատաւոր՝ մակա-
նուն ԱԲԴԱՐ , էր ասորի ուռհայեցի՝ աշա-
կերտ ս̃բյն յակոբայ մծբնայ հայրապետի .
մուծեալ 'ի ծնողաց բռնութբ̃ 'ի կարգ ա̃ի ,
եւ յետ եօթն աւուր հրաժարեալ 'ի կնոջէն
կա-

կամակցութե՟ նր՟ արգել զանձն 'ի խուղ մի՝ երկու մղոնաւ հեռի յեղեսիոյ , և ընդ պատուհանն առնոյր զողեպահ կերակուր՝ զամն տասն : Ապա 'ի վախճանիլ ծնողացն՝ բաշխեաց զինչս նց աղքատաց . և բռնադատեալ յեպսկն՝ օծաւ քահանայ , և քարոզեալ դարձոյց 'ի քս՟ զգիւղ մի կռապաշտից . և դարձեալ առանձնացաւ 'ի խուղ իւր զամս յիսուն :

Նր դուստր եղբօր նր Աբրհմ անուն՝ որբ մնացեալ . զոր եդ աբրահամ 'ի խուց մի՝ ուսուցեալ նմա զամ՟ կարգ ճգնութե . այլ նա պատրանօք չարին անկեալ 'ի մեղս՝ դարձաւ յաշխ՟ . յայնժամ արդարն գնաց ծպտեալ զինւորական ձևով 'ի խնդիր կորուսելոյն , և դարձոյց զնա յաւաջին կարգ իւր . և այնքան ապաշխարութե ճգնեցաւ մարիամ , մինչև գործել սքանչելիս . և այնպէս երկոքեանն սրբութե կատարեցան 'ի քս՟ 'ի միայնարանս իւրեանց : Զգործս աբրահամու գրեաց աշակերտակից նր՟ նը աբբայն եփրեմ : Յ. հոկտ . 28 : Զ. հոկ. 29 : Լ. մրտ. 16 :

Ագաթէ կմ Ագաթա կոյս՝ ( որ յունարէն բարի լսի , ) էր 'ի սիկիլիայ կղզւոյն՝ 'ի պանորմայ քաղաքէն ( այն է բալերմօ ) , չքնաղ յոյժ և մեծատուն , և պայծառացեալ առաքինութե 'ի հաւատս քսի՝ յաւուրս հալածանաց դեկոսի կայսեր : Կալան զնա կռապաշտք , և տարան առ կուսինկտիանոս դատաւոր կատանայ քաղաքի ( որ և գաղանա՝

'ի

'ի ստորոտս Ետնայ լերին ) . և մինչև հար-
ցեալ՝ ինքնին խոստովան եղև կոյսն զքրիս-
տոնէութիւն իւր , և յանդիմանեաց զմոլո-
րութիւն կռապաշտութե՟ : Իսկ դատաւորն զար-
մացեալ և զամօթի հարեալ՝ ետ դան հար-
կանել զաղախինն ք՟ի , և հատանել սրով
զստինս ն՟ր , և այնպէս 'ի բանտ արկանել :
Ընդ երևեցաւ նմա 'որ առաքեալն պետրոս
'ի նմանութիւն ծերունի բժշկի՝ հանդերձ
լուսաւոր պատանեկաւ միով . և մատուցա-
նէր կուսին դեղս , զի ողջասցի 'ի վիրացն :
Ասէ ագաթի . ես դեղ ունիմ զք՟ս , որ
բժշկէ զիս առանց դեղոց : Ասէ պետրոս .
և զիս նա առաքեաց առ քեզ , զի աշակերտ
եմ ն՟ր և առաքեալ : Իսկ զայս ասացեալ՝
անյայտ եղև . և կոյսն գտաւ ողջացեալ բո-
լորովին , և գոհացաւ զա՟յ : Ապա հանին
զնա 'ի բանտէ , և քարշեցին 'ի վ՟ր մանր
խեցւոյ , և այրեցին հրով զխոցս վիրացն .
յայնժամ եղև շարժումն , և կործանեցաւ
կէս քաղաքին կատանայ . ( զի ուր ստէպ լի-
նի սասանութի 'ի բնութէ հրաշունչ լե-
րինն Ետնայ , նովին կամեցաւ տ՟ր ահ արկա-
նել անհաւատից վ՟ս տանջելոյ նորա զագա-
թա . ) և 'ի դիմել ամբոխին 'ի վ՟ր դատա-
ւորին սպանանել զնա՝ դադարեցին դահիճք
'ի տանջելոյ զկոյսն . և եդին անդրէն 'ի
բանտ . ուր 'ի գիշերին յայնմիկ յաղօթս կա-
լով ագաթեայ՝ աւանդեաց զհոգի իւր առ
ա՟ծ . և հաւատացեալքն առին զմարմին ն՟ր ,

և

և եղին 'ի տապանի 'ի նշանաւոր տեղւոջ․ և արար և առնէ ա՟ծ 'ի ձեռն ն՟ր նշանս բազումս ։ Եւ ինձ յաջողեաց անցանել ը՟ն այն քաղաքն կատանայ , և մատուցանել զպատարագ 'ի վ՟ր գերեզմանի ս՟րյ կուսին ագաթայ 'ի հոյակապ մայր եկեղեցւոջ քաղաքին , և մխիթարիլ մեծապէս 'ի պանդխտութեան յամի տ՟ն 1809 ․ 'ի հոկտ ․ 15 ․ հանդերձ ուղեկցօքս ։ Հ․ փետր 4 ․ կմ ը՟ռ տ՟ր
ի՟նէն ․ 5 ։ Յ․ Լ․ փետր ․ 5 ։

Ագաթոնիկէ վկայուհին էր աղախին Նիկողայոսի ուրումն և կնոջ ն՟ր պաւլինեայ ուրացողաց զք՟ս 'ի հալածանս կռապաշտից․ և զի ագաթոնիկէա ոչ եթող զք՟ս , չարչարեաց զնա անօրէն տիկինն զամս ութ աղէպէս խոշտանգանօք․ էր զի քարամբք ջարդէր զոսկերս ն՟ր , և էր զի փայտի՛ւ և ուռամբ հարկանէր զգլուխն և զթիկունս․ մինչև մատնեաց զնա դատաւորի , և ետ հատանել զլեզու ն՟ր՝ որ խոստովան լինէր զք՟ս․ և իբրև արկին զնա 'ի բանտ անսնունդ , Թռչունք բերէին նմա կերակուր 'ի պտղոյ ծառոց ։ Եւ ապա կատարեցաւ 'ի բանտի , զի տիկինն շողացեալ ակշով այրեաց զերեսս և զկուրծս ն՟ր․ կմ հրացեալ նիզ. մխեաց 'ի փողս ն՟ր․ վ՟ս այլք գրեն , թէ հրով կատարեցաւ ։ Հ․ սեպտ․ 25 ։ Յ․ 16 ։ Լ․ 17 ։

Ագաթոնիկէ , տես 'ի Կարպոս ։

Ագաթոնիկոս , զոտիկոս , զենոն , Թէոպրեպոս , ակինդինոս , պրինկիպոս , և սևերիանոս ,

նոս, էին իշխանք փառաւորք և իմաստունք՝ նիկոմիդացիք, նէոկեսարացիք, և պոնտացիք՝ քրիստոնեայ հաւատով 'ի հալածանս մաքսիմիանոսի. յորում ժամանակի եւտողմիոս կոմսն յետ սպանանելոյ զեզ̃մս յաղքատաց ՟Է ՟ում ձանապարհն՝ զոր արար 'ի նիկոմիդեայ 'ի պոնտոս, զեօթանեսին զսոսա արս երևելիս էած կապանօք առ Թգ̃րն՝ որ էր յայնժամ 'ի սիղիւմբրիա Թրակիոյ. և նր գտեալ զնս հաստատուն 'ի քս՝ ետ հատանել զգլուխս նց: Ն. օգոստ. 20, կամ 21, և կմ 22: Յ. օգոստ. 22: Լ. օգոստ. 22. և ապր. 20:

Ա.Գաթոպոս կամ ագաթոպուս սարկաւագ ծերունի, և Թէոդուլոս ընթերցող երիտասարդ՝ եղբարք էին Թեսաղոնիկեցիք, փայլեալք հաւատով 'ի հալածանս մաքսիմիանոսի. և եղև նց տեսանել 'ի միում գիշերի միանգամայն՝ ոչ տեսիլ երազոյ, զի ունէին 'ի մատունս իւրեանց մատանիս ոսկիս՝ յորս գրեալ կայր 'ի վր պատուական ականց մարտիրոսութի նց: Եւ ահա յետ աւուրց կալաւ զնս փաւստինոս դատաւոր Թեսաղոնիկեայ, և էարկ 'ի բանտ. և անդ եւս Թուէր նոցա տեսանել՝ զի կային 'ի նաւի. յորոյ 'ի խորտակել յալեացն՝ իբրև ընկղմեցան նաւորդք, ինքեանք ելին 'ի լեառն մի բարձր, և զերծան: Ի վաղիւն անդր փորձեալ զնս դատաւորին, և ոչ կարացեալ մեկնել զնս 'ի քսէ, ետ ընկենուլ զվկայսն 'ի ծով. իսկ ազ-

աղգականք նոցա գտեալ զմարմինս սրբոյն 'ի ծովեզրն՝ թաղեցին պատուով ։ Յ․ ապր․ 4․ կմ 5 ։ Յ․ Լ․ ապր․ 4 ։

Ագաթէ կամ ագապի՝ տօնելի դուստր սոփիայ․ տես հատ․ Գ․ 398 ։

Ագաթէ յիշատակելի․ տես աստ ընդ Նորինեայ ։

Ագաթոս կմ ագապիտոս վկայն, և ընկղ կմ թեկղա վկայուհին էին 'ի գաւառ պաղեստինոյ 'ի հալածանս դիոկղետիանոսի․ և յետ բանտարգել լինելոյ՝ յաւուր յորում կատարեցաւ անդ տիմոթէոս երևելի վկայն, արկին և զոսա առաջի գազանաց․ են որ ասեն՝ թէ թեկղ այնպէս կատարեցաւ 'ի քն, այլ ագապիոս և այլ բազում տանջանօք ։ Յ․ օգոստ․ 24, կմ 30 ։ Յ․ Լ․ օգոստ․ 19 ։

Ագաթոնիկոս կմ ագաթոնիոս հռովմայ հայրապետ էր հռովմայեցի, նստեալ յաթոռ սրբոյն պետրոսի յամի տն 535 ։ Սա վն օգտի եկեղեցւոյ կամեցաւ երթալ առ յուստինիանոս կայսր կոստանդնուպօլսոյ․ և յելլադա բժշկեաց զայր մի կաղ և համր՝ հաղորդելով զնա 'ի սբ խորհրդոյն․ և 'ի մտանելն 'ի թգրեալ քաղաքն ը դուռն ոսկի կոչեցեալ՝ եբաց զաչս կուրի միոյ ։ Անդ էր յայնժամ անթիմոս ոմն անարժան եպս տրապիզոնայ՝ որ էր եւտիքի և սևերիանոսի հերձուածողն, և առեալ զպատրիարգունի կոստանդնուպօլսի՝ սերմանեալ էր զաղանդ իւր

'ի քաղաքին. մ՟յ յանդիմանեաց զնա ո՟ք
հայրապետն ագապիտոս, և ընկէց յաթո-
ռոյն, ձեռնադրեալ 'ի տեղի նր՟ պատրիարգ
զմինաս այր ողջամիտ և առաքինի՝ վկայեալ
յամենեցունց. և ինքն խօթացաւ, և ոչ
կարաց դառնալ 'ի հռովմ. և փոխեցաւ առ
ած՟ 'ի կոստանդնուպօլիս, և թաղեցաւ փա-
ռօք 'ի տաճարի սր՟ց առաքելոց։ Հ. ապր. 15,
կմ՟ 19։ Յ. ապր. 17։ Լ. սեպտ. 20։

Ագնէս կոյս, որ և Ագնեսիա, (ը՟ յունաց՝
ազնի, որ թարգմանի գառնիկ, և ողջա-
խոհ, և հագնի) էր առ դիոկղետիանոսիւ՟
'ի հռոմայ, օրիորդ պարկեշտ և իմաստուն.
որ զբազում կանայս ուսոյց դառնալ 'ի չար
ճանապարհէ և 'ի կուապաշտութե՟։ Ս՟յ
կալաւ զնա սիմփրոնիոս իշխան քաղաքին.
և ստիպէր կամ զոհել կռոց, և կմ՟ դնալ 'ի
պոռնկատունն։ Սա 'ի մերժել զն՟ և պար-
կեշտ կուսին զանօրէն հրամանսն՝ տարան
զնա բռնութե՟ 'ի տուն գարշութե՟. ուր նր՟
տարածեալ զձեռս յերկինս՝ զքս՟ կոչէր յօգ-
նականութի. յորմէ պակուցեալ անառակ
երիտասարդաց՝ որք կամեցան մտանել առ
նա, ահիւ մեծաւ արտաքս փախչէին որպս
պարտեալք և կթուցեալք. մի ոմն 'ի նոցա-
նէ քանզի յանդգնեցաւ բռունն հարկանել
'ի ն՟ր կոյսն, նոյնժամայն պատուհասեալ
անկաւ և եհան զոգին։ Կոչեաց իշխանն
զագնէս, և հարցանէր՝ թէ իւ՟ մեռաւ ե-
րիտասարդն. և նա պատմեաց, թէ ը՟ իս էր
հրեշ-

հրեշտակ մի իմոյ՝ պահապան հզօր , և յա-
հէ նր մեռաւ այրն : Ասէ իշխանն . եթէ
յարուսցես զմեռեալդ , յայնժամ գիտասցիս՝
թէ ճշմարիտ է բանն քո : Եւ յաղօթել կու-
սին ծնրադրութբ՝ իսկևիսկ յարեաւ մե-
ռեալն . և զահի հարան ամենեքին . իսկ
բռնաւորն հրաման տայր այրել զագնէս իբ-
րև դիւթ և վհուկ . այլ ոչ վնասեաց նմա
հուրն . և ապա հատին զգլուխ կուսին յա-
մի տն իբր 304 : Յետ ութ աւուրց երևե-
ցաւ ագնէս փառօք՝ ծնողաց իւրոց , և փա-
րատեաց զսուգ նց . արար և զայլ սքանչե-
լիս՝ որոց գային 'ի տապան նր . զորօրինակ
բժշկեաց և զկոստանդիա զդուստր կոս-
տանդիանոսի նախ քան զմկրտութիւն . որ
և մկրտեալ՝ շինեաց եկեղեցի 'ի պատիւ
սրբուհւոյն ագնեսի , որ է կոյս փառաւո-
րեալ յամ ազգս և 'ի լեզուս՝ ասէ հերոնի-
մոս : Հ . յուլիս . 9 , կմ 10 : Յ . յուլ . 5 :
Լ . յունվար . 21 , և 28 :

ԱԴԱՄ նախաստեղծ՝ տօնելի ընդ նախա-
հարս . Հտ . Պ . 186 :

ԱԴԴԷ Հայրապետ՝ տօնելի . Հտ . Ջ . 141 :

ԱԴԱՒԿՏՈՍ վկայ տօնելի . Հտ . Օ . 215 :

ԱԴՐԻԱՆՈՍ և ՆԱՏԱՂԻԱ տօնելիք . Հտ . Ի .
167 :

ԱԴԷՈՍ , որ և ադա կմ ադի , սքանչելագործ
վկայ՝ էր խաւրացի՝ զօրական լիկիանոսի ,
առանձնացեալ 'ի լեառն յերեսաց հալա-
ծանաց , և կրօնաւորեալ բազում ճգնութբ .

մինչև ետ նմա տր շնորհս բժշկութեն ։ Տե-
սեալ զնա արքայազուն ոստրոգաց՝ ծանեան ,
և պատմեցին դիոկղետիանոսի . և յառա-
քել նր զօրականս ճծ 'ի բերել զաղխոս՝ նա
դարձոյց զնս 'ի քս՝ բղխեցուցանելով ջուր
'ի վր ճանապարհի . զորս մատնեաց թգրն
ը աղխոսի և այլ ևս նահատակաց 'ի ձեռս
ակուիղինոսի եպարքոսի . և նր տարեալ զնս
'ի պոնտոս՝ ետ կախել զոճն աղխոս պհե-
րայ , և քերել երկաթի ճանկօք , և 'ի բանտ
արկանել . ուր երևեցաւ նմա տր , և ողջա-
ցոյց զվէրս նր ։ Արկին զնա 'ի հուր բորբո-
քեալ , և ել անտի անվնաս . և հաւատա-
ցին կինն և դուստրն եպարքոսի . և կոչե-
ցան Պեղագիա և Թէոդոսիա . վսյ ետ դատա-
ւորն հատանել զգլուխս նց ը աղխոսի և ը
ճծ զօրականաց ։ Ու եկեալ եպս սինոպ քա-
ղաքի տր թադէոս՝ եհաւ զմարմին սբյն ա-
ղխոսի , և ամփոփեաց պատուով . իսկ 'ի լի-
նել հրաշից 'ի տապանէ նորա՝ հաւատացին
այլ ևս ժը զօրականք . և նոքա ևս կատա-
րեցան սրով ։ Հ . նոյեմբ . 20 ։ Յ . Լ .
նոյ . 19 ։

Աթանագինէ եպս տօնելի . հատ . Գ . 56 .
և Գ . 319 ։

Աթանաս հայրապետ աղեքսանդրացի՝ մեծն
կոչեցեալ , տօնելի . հտ . Ա . 217 ։

Աթանաս եպս տարսոնի կիլիկեցւոց՝ այր ա-
ռաքելական՝ յաւուրս վաղերիանոսի կայ-
սեր . առ որով էր 'ի սելևկիա իսաւրացւոց

Ասա

Խանթուշ կամ Անթուսա դուստր մեծատուն և կռապաշտ ծնողաց. որ եկն երկու ծառայ-իւք զանխուլ 'ի տարսոն առ աթանաս՝ խնդրել զմկրտութի. և աթանաս ազդմամբ հրեշտակի տն ել ը առաջ նր, և նշանաւ խաչի ջուր բղխեցոյց 'ի քարի, և մկրտեաց զկոյսն. որում երևեցան երկու հրեշտակք, և զգեցուցին հանդերձ պայծառ։ Եւ պա 'ի հաղորդել զնա եպսին՝ տեսանէին ծառայքն խանթուշի, զի կայր առ նմա տիկին մի փառաւոր՝ ունելով 'ի գլուխն պսակ երկու և խաչ մի. յայնժամ հաւատացին և ինքեանք, և մկրտեալ՝ անուանեցան Խարիսիմոս և Նէոփիտոս։ Յետ այսորիկ հալածել խանթուշ կուրոյն՝ զգեցաւ մաշեղէն, և կրօնաւորեցաւ 'ի լերին զամս իը, և սքանչելի սրբութբ փոխեցաւ առ այ յառանձնութեան. զոր յետ չորից ամաց եկեալ ամփոփեաց յայտնութբ այն աբրահամ անապատաւոր. և շինեցաւ վկնի մատուռն և վանք 'ի վր տապանի նր։ Իսկ որ եպսն աթանաս մատնեցաւ 'ի ձեռս կայսեր, և գլխատեցաւ վն անուանն քի. և մարմին նր եդաւ յեկեղ յարծաթի տապանի։ Տանջեցան վն հաւատոյ և խարիսիմոս և նէոփիտոս. և յետ քերանաց՝ սրով կատարեցան 'ի քս։
Ն. սեպտ. 3։ որ ինէլ. օգոստ. 25։ Յ. Լ. օգոստ. 22։

Սանանու զօրական. տես ը Զոսիմոսի։
Սեւերիանոս, կամ աւեքսիոս այրն այ՝ կամա-

ւոր աղքատ՝ տօնելի. Հատ. Թ. 388։

Ալոյիզէոս գոնզակա, (որ և Լուիճի ասի), մանուկ ազնուական և հրեշտակային վարուք հանգոյն աղեքսիանոսի առն այ՝ էր որդի փերրանդէի կմ՝ փերտինանտի գոնզակեան ասպետին գաստիլիոնի 'ի լոմպարտիա, և մարթայի դանայ սանդենայ, ծնեալ յամի տն 1568. նուիրեալ 'ի բարեպաշտ մօրէն նախ քան զծնունդն 'ի ձեռս փրկչին ը̄ հովանեաւ ընդ ածածնի. և սնեալ 'ի վարս պարկեշտութե և անարատութե, յաղօթս և 'ի գիրս։ Մինչդեռ ինն ամաց էր՝ տարաւ զնա հայր իւր 'ի փլորենտիա՝ կրթիլ 'ի պալատան դքսին յարքունի հրահանգս և յարտաքին գիտութիւս։ Իսկ ալոզիոս առաւել 'ի հոգևորս եղև յառաջադէմ՝ աղօթասէր և ընթերցասէր գոլով ընդ գրոց և վարուց սբց. և 'ի տիս անդ դեռափթիթ մանկութե ուխտեաց առանձինն առաջի պատկերի աւետման կուսին մշտնջենաւոր ողջախոհութի. զոր և պահեաց ամ ամբծութբ և կատարեալ պահպանութբ զգայարանաց, մինչև յերեսս մօր իւրոյ իսկ չհայէր համարձակ. ոչ և 'ի մատրիտ սպանիոյ յապարանս կալով զամս երկու՝ ոչ ակնարկեաց երբէք 'ի դէմս թագուհւոյն. միանգամայն և ճնշէր զմարմին իւր 'ի ծածուկ ինքնատանջ հարուածովք և պէսպէս իրօք. պահէր երիցս 'ի շաբաթու՝ հացիւ և ջրով շատացեալ, սիրէր զլռութի և զառանձնութի, և տքնէր

'ի

'ի գիշերային աղօթս զօգուտ ժամս ։ Խրա-
տեալ 'ի հօրէն վարիլ որպս զայլս 'ի հասա-
կակցաց 'ի վայելս ծի ը աստիճանի պատո-
ւոյ իւրոյ՝ յայտնեաց նմ պատանին զկամս
իւր , թէ կամի կրօնաւորիլ ըստ առանձին
ազդեցութեն ոգյ ․ Ընդդէմեկաց հայրն բազ-
մօք , զի նա էր անդրանիկ իւր , և յոյս մեծ
ունէր յառաջադիմութե նր յԾի ․ բայց ոչ
կարաց խափանել զնա 'ի բարի խորհրդոյ ,
թէպէտև զերկեամ մի աշխատ եղև ․ միջ-
նորդ էր և մայրն կատարելոյ զմտահաճոյ
կամս նը զաւակին իւրոյ ։ Եւ այնպս եմուտ
ալօզիոս 'ի կարգն յիսեանց 'ի հռոմ յամի
1585 ․ ժէ ամաց ։ և կատարեաց 'ի սակաւուն
զժամանակս երկայնս՝ եղև հայելի անա-
րատ ամ առաքինութեց , հեզ , խոնարհ ,
հնազանդ , ուրացեալ զանձն և մեռեալ ծի ,
և կատարեալ յամ կանոնապահութիս , և
աղօթից մասամբ առաւելեալ ․ զի սա է ա-
սէր համառօտ ճանապարհ կատարելութե՝
աղօթասէր լինել ։ Եւ զի արգելուին զնա
յառաւելութէ արտաքին ճգնութեց՝ վասն
փափկիկ և տկար մարմնոյն , նա ետ զանձն
ևս քան զևս 'ի ներքին մեռելութիս , և 'ի
կարդացմունս և 'ի կրթութիս հոգևորս և
'ի մտաւոր տեսութիս ․ եառ զշնորհս աղօ-
թից և արտասուաց ի նախնի հարանց , և
վառեալ սիրովն ոյ՝ եղև ոպ անմարմին 'ի
մարմնի , և եհաս 'ի ներքին միաւորութիւն
ը ոյ ․ մինչ զի 'ի լսելն բան զոյ՝ լինէր ոպ

արտաքոյ ինքեան . և 'ի միում նուագի 'ի սեղանատան լուեալ զընթերցուած զսիրոյն այ՝ այնպէս բորբոքեցաւ սիրտ նր, մինչև մոռացեալ զճաշելն՝ զեղաւ յաղբիւրս արտասուաց . բայց մեծաւորք չափաւորէին զհանապազորդեան արտասուս նր , զի մի վնասեսցին աչքն : Ըստ ածսիրութեն՝ և յեղջայրսիրութե էր կատարեալ, և ստէպ հրաման առեալ՝ երթայր 'ի հիւանդանոցն , և ծառայէր յամ խոնարհ գործս՝ ուր նմին իսկ քնի սպասաւորելով . և պատիւ համարէր անձին 'ի վանս՝ ծառայակից լինել հիւանդապահին : Նուայր հոգւովն երթալ քարոզել՝ եթէ հնար լինէր իցէ՝ ը ամ զնր հաւատս և զսէրն քնի . այլ նր կոչեաց զնա փութով առ ինքն զկենդանախարուկեալն հրով սիրոյ իւրոյ : Քանզի 'ի լինել հիւանդութե 'ի հուովմ իբր ժանտախտի՝ ծառայելով հիւանդաց սիրով՝ անկաւ և ինքն 'ի մահիճ . և յայնմանէ զերծեալ՝ կրեաց զայլ խօթութի հիւծիչ զամիսս երիս . և լի զըւարթութբ պատրաստէր զանձն 'ի մահ . և ասէր որոց գային 'ի տես նր , երթիցուք առ նր ուրախութբ . մարգարէացաւ և զօր փոխման իւրոյ . և այնպէս գետնախշտի տարածեալ, և վերակնեալ 'ի պատկեր խաչելեալ փրկչին՝ քաղցրութբ աւանդեաց զմաքուր հոգին 'ի մէջ գիշերի՝ որում լուսանայր 21 յունիսի , յամի 1591 . 'ի հասակի իգ ամաց և իբրև երից ամսոց : Նա յայտնե-

նեցաւ ումեմն 'ի սբց փառք երանելւոյն ա-
ղօթիւքն յերկինս . ուր և յերկրի փառաւո-
րեաց զնա տծ յոյժ՝ առնելով բազում նշ-
շանս բարեխօսութբ նր և որ նշխարաց նո-
րին : Ա. յունիս . 21 :

Ա.ւմէոս անտիոքացի՝ հանդերձ երկու եղ-
բարբք էր դարբին երկաթոյ առ դեկոսիւ
կմ դիոկղետիանոսիւ . յորում ժամանակի
Մ.արկոս ումն հովիւ քրիստոնեայ՝ որ արածէր
զոչխարս 'ի լերինս անտիոքայ պիսիդեայ,
սքանչելի եղեալ սրբութբ՝ մինչև վայրի
երէոց գալ լեզուլ զոտս նր, համբաւեցաւ
յորսորդաց . և դատաւորն մանկունս առա-
քեաց զօրականս Ը՝ բերել զնա . և մարկոս
դարձոյց զնս 'ի քս . մնչ զօրականքն կատա-
րեցան սրով 'ի նինկիա : Իսկ սբն մարկոս վա-
րեցաւ 'ի զանազան քաղաքս, և ածաւ անդ-
րէն յանտիոք պիսիդեայ . ուր 'ի խնդրել
դարբինս վասն չինելոյ գործիս տանջանաց
սբյն՝ կոչեցան երեքին եղբարքն Ա.ւմէոս,
Ա.ղէքսանդրոս և Օ.ռուֆոս . և աշխատեալ
յոյժ՝ ոչ կարացին կակղել զերկաթն հրով
և կռանել . մնչ հաւատացին 'ի քս, և գլխա-
տեցան Ը սբյն մարկոսի : Նոյնպէս քրիս-
տոնեայ եղէն և երեք գործակիցք նր Նե-
կոնիոս, Նէոնոս, և Նաղեփորոս . և ըստ նմին
օրինակի կատարեցան սրով . Ը ամենայն ան-
ձինք լէ : ~. հոկտ. 12, կմ 13 : {}. Ա. սեպ-
տեմբ. 28 :

Ա.ւմէոս իտալացի, և երկու եղբարք նր Փե-

լա-

ղադեկտիոս և Սեւերինոս որդիք վիտաղիոսի էին 'ի հալածանս լիկիանոսի. զորս դարձոյց 'ի քս̃ և մկրտեաց Մեղեսիմոս սրբն̃. և նոքօք համ-դերձ մատնեալ 'ի ձեռս դատաւորի, ը̅ որս և Աբրահամոս, և այլ ևս ժդ̃, կմ̃ ձծ̃ անձինք՝ առաքեցան 'ի հռոմ։ Քննեաց զնս̃ դիւ-մեդէս դատաւոր 'ի պատիողոս, և ետ դնել քար ծանր 'ի վր̃ սրտին անեսխմեայ, մինչև աւանդեաց նա զոգին. և զերասմոս այ-լովքն համդերձ ետ գլխատել. իսկ զերե-սին եղբարսն յղեաց 'ի սիկիլիա. ուր կատա-րեցան հրով և քարկոծմամբ։ Ն. ապր. 20, կմ̃ 21. և սեպտ. 28։ Յ. Լ. մայ. 10։

Ակակիոս ամասիացի՝ մանուկ, և մեծն Ակակիոս կապադովկացի՝ որ և բուզանդացի ասի, վկայք տօնելիք. հատ. Գ. 100. և 103։

Ակակիոս խոստովանող եպս̃ արևելեան՝ կմ̃ ամդայ 'ի միջագետս առ դեկոսիւ, յիշատա-կեալ 'ի Ն. ապր. 11. կմ̃ ը̅ տր̃ իֆլի. մարտ. 22։ Յ. մարտ. 29։ Լ. ապր. 9։

Ակեփսիմաս եպս̃ տօնելի. հտ. Բ. 175։

Ակեւլինէ վկայուհի տօնելի ը̅ Քրիստափո-րի. հտ. Գ. 906։

Ակիւլինէ կմ̃ ակուիղինա կոյս մատաղ 'ի բիբղոպօլսոյ փիւնիկեցւոց կամ պաղեստի-նացւոց, առ դիոկղետիանոսիւ կմ̃ տրայիա-նոսիւ, դուստր եւտոլմիոսի ազնուականի՝ մկրտի հինգամեայ յեւտաղիոսէ եպիսկոպո-սէ. և յետ տասնամեայ հասակի առեալ յայ̃ շնորհս՝ դարձուցանէր 'ի քս̃ զհասակակից ազ-

աղջկունս ։ Այս մատնեաց զնա Նիկանդրոս կմ Նիկոդիմոս ոմն յատեան վաղերիանոսի բդեշխի ․ և նա ետ ապտակել և գանել զկոյսն , և հրացեալ շամփուրս մխել յականջս նր , մինչ զի հոսէր ուղեղն արիւնախառն ընդ ունգունս և ընդ լսելիս ։ Իսկ յաղօթելն նր 'ի բանտին՝ բժշկեաց զնա հրեշտակ Տյ ․ և ապա սրով կատարեցաւ , կմ ըստ ոմանց 'ի ժամ գլխատման աւանդեաց վաղագոյն զհոգին ։ Հ․ յունիսի , 13 , կմ 14 , կմ 16 ։ Յ․ Լ․ յունիսի ․ 13 ։

Ակիւղաս տօնելի ընդ Աղերիոսի ․ հտ ․ Ա ․ 631 ։

Ահարոն քահանայ՝ տօնելի ընդ Սախահարս ․ հտ ․ Գ ․ 253 ։

Աղեքսանդրոս Հյրպտ տօնելի ընդ Մետրոփանոսի ․ հտ ․ Բ ․ 239 ։

Աղեքսանդրոս թեսաղոնիկեցի առ Մաքսիմիանոսիւ , այր ջերմ յածպաշտութե՝ կործանեալ զսեղան զոհից կռոց , և յանդիմանեալ զհեթանոսութի յատենի թգւորին՝ ածի 'ի գլխատումն ․ և դօսանայ ձեռն դահճին ։ Իսկ յաղօթել վկային , և 'ի լռեալ զձեռս՝ ասելով , Տր Տր Տր Տր զօրութեց , այլ ոմն 'ի դահճաց կարող լինի հատանել ըզգլուխ սրբյն ։ Իսկ թգրն տեսեալ , զի չորս հրեշտակք 'ի հանդերձս լուսաւորս տանին զհոգի վկային յերկինս , զահի հարաւ , և թոյլ ետ քրիստոնէից փաւօք թաղել զմարմին նր 'ի թեսաղոնիկէ , և ցածոյց զհալածումն ,

ծուծն ։ ∸. փետր. 18 ։ {}. |. նոյ. 9 ։

Ա.ՂԷՔՍԱՆԴՐՈՍ հռովմայեցի զօրական առ մաքսիմիանոսիւ 'ի գնդէ նումերիանոսի կոմսի՝ վասն ոչ յանձն առնլոյ զոհել ըս̄ քանակին, յետ բազում տանջանաց և նշանաց, և վարելոյ 'ի բիւզանդիա և 'ի բերիա՝ կատարի սրով 'ի դրիզիպար Թրակիոյ ։ ∸. ապր. 27. կմ 28. կմ 30 ։ {}. մայ. 13 ։ |. մրտ. 27 ։

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ պատիողացի՝ նոյնպէս առ մաքսիմիանոսիւ չարչարեալ բազմօք վ̄ս 'ի ք̄ս հաւատոց, և վարեալ 'ի կաղքեդոն և 'ի մարկիանուպօլիս, գլխատի 'ի Թրակիա ։ ∸. փետր. 19, կմ 20 ։ {}. փետր. 25 ։

Ա.ՂԻՊԻՈՍ սիւնակեացն յադրիանուպօլսոյ պափլագոնիոյ՝ յաւուրս հերակլի կայսեր, 'ի մանկութենէ սնեալ 'ի ս̄բ վարս, և սարկաւագ ձեռնադրեալ՝ եղև պկնի միայնակեաց. և գտեալ սիւն մի բարձր՝ յորում կայր բագին կռոց 'ի բայլ, կործանեաց, և ինքն եկաց 'ի վերայ սեանն զամս բազումս բացօթեագ՝ զցայգ և զցերեկ, արևակէզ և ցրտահար, փայլեալ սքանչելեօք. և կոչկոձեալ քարամբք 'ի մախացող դիւէն՝ կրեաց զցաւ կողից զամս ժ̄դ. և հասեալ 'ի խոր ծերութի փոխեցաւ առ ա̄ծ՝ ձ̄ը ամաց ։ ∸. նոյ. 22 ։ ո̄ր ին̄էլ. և {}. նոյ. 26 ։

Ա.ՄԲԱԿՈՒՄ մի յերկոտասան մարգարէից՝ տօնելի. հտ. Դ. 313 ։

Ա.ՄԲՐՈՍԻՈՍ այր սքանչելի մի 'ի չորից վ̄դպաց արևմտեան եկեղեցւոյ, ո̄ր ջահ լուսափայլեալ

լեաց յեկեղեցի ( ըստ ասելոյ յայսմաւուրաց հայոց ), նախանձաւոր գոլով ուղղափառ հաւատոյ , և տապալիչ հերձուածողաց ։ Սա յառաջագոյն էր 'ի դասէ սինկղիտոսաց հռովմայ յաւուրս որդւոյ մեծին կոստանդիանոսի, լի հանճարով, և ներհուն ա՟ծային և արտաքին գիտութեց ։ և եղեալ հոգաբարձու քաղաքաց և գաւառաց արդարակորով տնտեսութ՟բ՝ խաղաղացոյց և զխռովութիս արիանոսաց 'ի միջուլէ , որ և մեդիոլան կմ՟ միլան քաղաք իտալիոյ ։ և վ՟ առաքինուե իւրոյ ընտրեցաւ եպ՟ս այնր քաղաքի հաւանութ՟բ յովլիանոսի կայսեր ։ և մաքրեաց զկողմանսն զայնոսիկ յաղանդոյն արիոսի, և զարդարեաց ամ՟ բարեկարգութ՟բ յաւուրս մեծին թէոդոսի ։ Սորա և ընդդէմ կալաւ արիաբար , և ոչ թողացոյց զինքնակալն մտանել յեկեղեցի 'ի տօնի ծննդեանն ք՟սի՝ վ՟ անպարտ արեանց հեղլոց հրամանաւ նորա ։ մինչև յետ արժանաւոր ապաշխարութե ընկալաւ զնա ։ և յետ վախճանի թէոդոսի՝ պատուեաց զնա ներբողական ճառիւք ։ ոպ՟ ասացաք 'ի վարս ն՟ր ։ Գրեաց և այլ բազում ճառս և մեկնութիս և գիրս և թուղթս՝ ճարտար և խորին իմաստիւք և լուսաւոր վ՟դպութ՟բ , և եթող յետ իւր յիշատակ յաւիտենական ։ և 'ի բարիոք ծերութե հանգեաւ 'ի ք՟ս ։ Այս և թղթակցուե սիրոյ ընդ սա և ս՟ բարսեղ կեսարացի ։ սա ինքն ամբրոսիոս ճանաչի և հայր հոգևոր մեծին օգոստի-

տի-

տինոսի · և յիշատակ բարեկարգութեանց նր
պահի ցարդ ևս յաթոռ իւր 'ի միգուլէ: Ն.
դեկտ. 12, կմ ըստ այլ ինէլի · դեկտ. 7: Յ.
դեկ. 7: Ի. դեկ. 7. և ապր. 4:

Ա. Մենայն սբոցն այ՝ հնոց և նորոց, տօնելեաց և յիշատակելեաց և անյիշատակաց, ծանօթից և անծանօթից՝ համախումբ տօն յիշատակի խորհրդով կատարի յեկեղեցւոջ: Նախ՝ զի որովհետև յայտնիքն են թուով, իսկ անյայտքն անթիւ բազմութբ, ըն հանուր յիշատակաւս ամենեքին տօնախմբեսցին, և ըստ այսմ եդեալ կայ հանրական ներբողեան 'ի յայսմաւուրս մեր · և մեք ևս յաւելաք ճառ ընդհանուր զկնի տրուհնական տօնից · հատ. Ժ.Ա. · երես · 248: Եւ երկրորդ՝ զի որովհետև հեթանոսք պարծէին 'ի բազմութի չաստծոց իւրեանց, և կատարէին Դայլին և մոլեկան ուրախութի 'ի պատիւ նց, արժանի էր և քրիստոնէից ըն հակառակն պարծիլ 'ի բազմութի անհամար վկայից և ընտրելոց ծառայից միոյ միայնոյ ճշմարտին այ: Այս հայրապետն հռովմայ վոնիփակիոս դ՝ որ նստաւ յամի. 607 · սրբեալ 'ի հռովմ զտաճար կռոց, որ կոչիւր բանթէօն, յա ամենայնից մ-հեան, նուիրեաց զայն 'ի պատիւ սբ աստածնի և համօրէն մարտիրոսաց, և կարգեաց զտարեոր յիշատակ նց 'ի սկիզբն նոյեմբերի · որ և առաւել հանդիսացաւ յութերորդ և յիններորդ դարու: Իսկ 'ի մեզ թէպէտև հասարակօրէն լոկ յիշատակ լինի

ամ

ամսոյս ՚ի սկիզբն նոյեմբերի , բայց ՚ի տա-
րւոյն՝ յորս երկար է միջոցն ՚ի սբ. գէորգեայ
մինչև ՚ի յիսնակաց բարեկենդանն , իբր զի
յաւելեալ գտանի և ութերորդ շաբաթ յա-
ռաջ քան զյիսնակամուտն ,յայնմ եօթնե-
կի տօն է՝ բշ. հրեշտակաց ։ գշ. մարգա-
րէից ։ դշ. առաքելոց ։ և շբ. ամ սբց՝ հնոց
և նորոց ,յայտնից և անյայտից ։ Տ. Ա. նո-
յեմբ. 1 ։

Ամոն կամ ամուն ոք հայրն եգիպտացի՝ առա-
քինասէր ՚ի մանկութէ . զառաջինն բանի
մուծեալ ՚ի կարգ ծի՝ հաւանեցոյց զհարսն
իւր կալ առ միմեանս սրբութ իբրև եղբայր
և քոյր ։ Ապա ՚ի մեռանիլ ծնողաց երկո-
ցունցն յաւուրս հալածանաց մաքսիմիանո-
սի՝ սրբասէր ամուսինն եմուտ ՚ի վանս կա-
նանց . և սբն ամոն եղև անապատաւոր ՚ի
լերինն նիտրիոյ՝ սքանչելի վարուք և նշա-
նօք , առաջնորդելով խստակրօն միայնակե-
ցաց երից հազարաց ։ Եւ ՚ի վախճանիլն լի
աւուրբք՝ ետես մեծն անտոն արբայ զհոգի
նր , զի ելանէր յերկինս պարակցութ հրեշ-
տակաց ։ Տ. ապր. 25 , կմ 28 ։ Յ. հոկտ. 4 ։
Թող և զայլ ճգնաւորս ամոն կամ ամմոնիոս
անուամբ ։

Ամովս մի ՚ի ժբ մարգարէից՝ տօնելի . հտ.
Գ. 307 ։

Ամփիլոքիոս եպս իկոնիոյ ( որ և գրի ամփի-
լիքոս կամ ամփիլիկոս ) էր աշակերտ սրբոյն
բարսղի կեսարացւոյ , և գործակից նր՝ ոչ
և

և գրիգորի տճարանի 'ի Ջգնողական վարս, և 'ի յաղթահարել զհերձուածողս տճարան վկայութք: Սա մեռեալ երբեմն առ մեծն Թէոդոս' ոչ եւ կամաւ զարժանի պատիւ գահակցի նր արկադեայ արքայորդւոյ. և 'ի դժուարին է այն կայսեր' ասէ ամփիլոքիոս. տեսանես՞ արքայ, զի դու ոչ տանիս զանարգանս որդւոյ քո. և զիա՞րդ հայրն երկնաւոր տանիցի զարհամարհանս միածնին իւրոյ յերեսաց քնամարտ հերետիկոսաց ժամանակիս: Յայնժամ Թգրն զարմացեալ ընդ իմաստութի սբյ եպսին' արգել ձեռնագրով իւրով զհամարձակութի արիանոսաց, եւնոմեանց, սաբելեանց, մակեդոնեանց, և ապողինարիտաց: Սրար և այլ բազումս ինչ ամփիլոքիոս գրով և բանիւ յօգուտ եկեղեցւոյ: Ն. հոկտ. 26: Տնիէլ. և Յ. հոկտ: 19: Ա. նոյ. 23:

Ամփիրեոս կմ անփիրլիոս. տես Ապփիանոս:

Աքիլլաւոս սարկաւագ տօնելի. հտ. Ա. 175:

Աքիլլաւոս քուրմ կռոց 'ի պարսս յաւուրս շապհոյ' գտեալ զբժշկութի յանբուժելի ախտից անուանեն քնի' մկրտեցաւ, և սկսաւ քարոզ լինել Ճշմարտութե: Կալաւ զնա իշխան քղքին, և հրամայեաց մուծ 'ի քրիստոնէից հատանել զլեզուն այնթալայ. և նա առ աջի կատարեաց զհրամանն. բայց նոյնժամայն գօսացաւ ձեռն նր: Ի նոյն աւուրս ըմբռնեցաւ և Տաճատն կմ ափսէ սարկաւագ. և յետ զանից մատնեցաւ ընդ այնթալայ 'ի

ձեռս մոգպետին · և նա խոշտանգեաց զնմ բանտիւ և կապանօք · և ոչ ինչ օգտեալ` եհան յատեան արքայի · և իբրև հաստատուն գտան 'ի քս̃` սրով կատարեցան ։ Հ․ դեկտ․ 16․ կմ 22 ։ Տր̃ իհէլ․ և Յ․ դեկտ․ 11 ։

Անանիա առաքեալ` տօնելի · հա․ Լ․ 51 ։

Անանիա պարսիկ` այր Ծիկ , քրիստոնեայ հաւատով , վն̃ յանդիմանելոյ զմոլորութի̃ պարսից հրապաշտից յարտաքիւ քաղաքի , ձգեալ 'ի քղ̃քացւոց` չարաչար հարուածովք քարշեցաւ արտաքս իբրև զմեռեալ · և յետ պահու բացեալ զաչերան իւր` ասէ ցորս անդն կային · արի՛ք կայցէք յաղօթս , զի տեսանեմ սանդուղս յերկրէ մինչև յերկինս , և արս հրեղէնս` զի ելանեն 'ի վեր , և ասեն ցիս · եկ ը̃ մեզ , և հանցուք զքեզ 'ի քաղաքն լի լուսով և ցնծութբ̃ · և զայս ասացեալ` աւանդեաց զհոգի իւր ուրախութբ̃ ։ Հ․ Յ․ Լ․ դեկտ․ 1 ։

Անանիա քահանայ` 'ի հալածանս դիոկղետիանոսի չարչարեալ վն̃ անուանն քսի̃ 'ի մաքսիմոսէ դատաւորէ , յետ գանից արկաւ առաջի գազանաց · այլ նք̃ ոչ մերձեցան 'ի նա ։ Ապա զահիճքն շամփուրս հրացեալս խաղացուցին 'ի վր̃ պորտոյ սր̃յն · և քացախով և աղիւ և խորդով շփեալ` արկին 'ի բանտ · ուր եկաց անսուաղ զեօթնեակ մի ։ Յայնժամ հաւատաց բանտապանն , և մկրտեալ կոչեցաւ Պետրոս ։ Եկն այլ դատաւոր մաքսիմիանոս անուն · որ ետ կապել զանանիա

և զպետրոս յանխիւս, և փորձեաց զնոսա հրով․ և յանփոյթս պահիլ նոցա՝ հաւատացին դահիճքն եօթանեքին․ և այնոքիկ ընդ վկայք միանգամայն արկան ՚ի ծով։ Ճ․ յունվար․ 30․ կմ 31։ Յ․ յունվր․ 27։

Ընթերցուած աբեղայ տօնելի․ հա․ Բ․ 5։

Ընթերցուածէ կոյս հռովմայեցի՝ կրօնաւորել ՚ի վանս կուսանաց, որպէս գլխաւոր ՚ի նոսա՝ մատնեցաւ անուր ՚ի պարանոցի ՚ի ձեռս պրոբոսի դատաւորի առ դեկոսիւ և վաղերիանոսիւ․ և մինչ դաւանելոյ զքս աներկիւղ՝ ապտակս հանին նմա․ և տարածեալ ՚ի վր հրոյ՝ հեղին զնովաւ ձիւթ և ձէթ եռացեալ․ ապա քերեցին զմարմինն․ հատին զստինս․ ՚ի բաց կորզեցին զեղնգունս, կտրեցին ըզձեռս և զոտս, և ջարդեցին զատամունսն․ և յետ ամի հատին զգլուխ փառաւոր կուսին։ Մինչդեռ ՚ի տանջանս էր սրբուհին՝ ՚ի խնդրել նորա զջուր, մատոյց նմա զայն ոմն ՚ի մերձակայից Աֆրոբեղ անուն․ զնա և զկնիւրեղ գլխատեցին, որ եղև անզուգական վարձ տալոյ զջուր բաժակաւ յանուն քի։ Ճ․ հոկտ․ 19, կմ 29։ Յ․ հոկ․ 12․ Լ․ հոկ․ 28։

Ընթերցուածէ կին հռովմայեցի՝ դուստր հօր հեթանոսի առ դիոկղետիանոսիւ, և մօր քրիստոնէի, ուսեալ առ ոտս խրիսոգոնոսի վկայի՝ մկրտեցաւ․ բայց հայր նորա ետ զնա ՚ի կնութիւն պոպղիոսի առն կռապաշտի․ որ և սկսաւ խոշտանգել զաղախինն քի՝ ար-

կա-

կանխելով 'ի բանտ, զի դարձցի 'ի հաւատոց.
այլ նա կայր հաստատուն 'ի տր: Եւ եղև
պոպղիոսի ընկղմիլ 'ի ծով՝ յորժամ երթայր
դեսպանուք 'ի պարս. յայնժամ ազատա֊
ցեալ սրբուհին անաստասիա՝ շրջէր 'ի ձև
աղքատի նաժշտաւ միով, և մտեալ 'ի բանտս՝
դարմանէր զնահատակս, և բաշխէր զինչս
իւր կարօտելոյ: Սոյն մատնեցաւ 'ի ձեռս
դատաւորաց, և վարեցաւ բազում չարչա֊
րանօք 'ի սահմանս բիւզանդիոյ. և ազա֊
տութիւն գտեալ՝ հանդիպեցաւ սրբուհւոյն
թէոդիտեայ, որ էր 'ի կալանս երեք որդ֊
ւովք իւրովք, և քաջալերեց զնա. և լուեալ
զնահատակութիւն նց և զայլ ևս բազմութեն՝
լայր դառնապէս. զոր իմացեալ հեթանո֊
սաց՝ մատնեցին փլորոսի եպարքոսին լիւրի֊
կեցւոց. և նա ետ զնա 'ի ձեռս ուլպիանո֊
սի քրմապետի՝ առնել զնա իւր կին: Իսկ
անաստասիա մերժեաց զհրապոյրս ուլպիա֊
նոսի. և 'ի կամիլ նր մերձենալ 'ի նա՝ կու֊
րացաւ. վոյ արկին զսրբուհին 'ի բանտ. և
ապա ընկեցին 'ի ծով. յորմէ զերծաւ կեն֊
դանի 'ի կղզին պալմիւրայ. ուր 'ի նահատա֊
կիլ բազմութեն իբր երկերիւր արանց և եօ֊
թանասուն կանանց՝ կապեցին և զանաստա֊
սիա 'ի չորս ցիցս, և այրեցին հրով. զորոյ
զնշխարս առեալ թաղեաց 'ի պալատի իւ֊
րում ապողոնիա կին հաւատացեալ, և յետ
հալածանաց շինեաց 'ի վր նր վկայարան:
Եւ եղև անաստասիա մին 'ի նշանաւոր և 'ի

նշանաւորած վկայուհեաց ։ Ճ. դեկտ. 21 ։
Տն իէլ. և Յ. 22 ։ Լ. 25 ։

Անատոլ ընդ Ադրիանոսի՝ տօնելի. հտ. Ա. 167 ։

Անգէ մի ՚ի ժԲ մարգարէից՝ տօնելի. հաս. Գ. 315 ։

Անդրէաս առաքեալ՝ տօնելի. հտ. Ժ. 168 ։

Անդրէաս զօրավար և բանակ նր տօնելի. հտ. Ա. 121 ։

Անդրէաս կրօնաւոր կրետացի՝ մի յերևելի արանց յութերորդ դարու, եկեալ ՚ի կոստանդինուպօլիս յաւուրս կոպրոնիմոսի կայսեր՝ պաշտպան եղայ պատուոյ սբ պատկերաց և նշխարաց սբց ընդդէմ պատկերամարտից. վնյ եւ թգրն հարկանել զնա արջառաջլօք. և յետ ջարդելոյ քարամբք զոսկերանս նր և զատամունսն՝ կապեցին չուան յոտս նր, և քարշեցին ընդ մէջ քաղաքին. ապա ոմն ձկնավաճառ եհատ կացնով զաջոյ ոտն սբյն, և այնպէս աւանդեաց զոգին. և ՚ի լինել սքանչելեաց՝ թաղեցին զնա պատուով ՚ի տեղի մի որ՝ կրիսիս կոչեցաւ ։ Ճ. հոկտ. 18 ։ Յ. ժմ. և Լ. հոկտ. 17 ։

Անդրէաս կանոնաւոր կղերիկոս յարևմուտս՝ մականուն Աւելլինոս, ՚ի նոր աւանէ լուկանիոյ, երբեմն փաստաբան եկեղեցական ատենի ՚ի նէապօլիս՝ թէև ինչ սուտ խօսեցաւ, և ապա զգաստացեալ բանիւ գրոց, եթէ բերան ստախօս սպանանէ զանձն, ետ զանձն ՚ի խիստ վարս ճգնութե՛ սրբակրօն

կար-

կարգօք , և եղև առաջնորդ բազմաց 'ի կանոնաւոր կոչեցեալ երիցանց , և քարոզ բանին այ , և շահեցօղ հոգւոց բազմաց ։ Ի միում նուաղի յընթանալ գիշերայն 'ի ծառայուն հոգւոց՝ տեղաց անձրև յորդ ․ բայց ոչ եթաց ընաւին զնա և զուղեկիցս նորա ․ միանգամայն և լոյս ցոլացեալ յանձնէ նր ցուցանէր զճանապարհն ։ Որ ջերմ պաշտօնասէր սբյ կուսին ․ և եղև արժանի խօսակից լինել ե հրեշտակս , և լսել զհոգեղէն հնչմունս անձային փառաբանութե նց ․ ստացաւ և զշնորհս մարգարէութե և հոգետեսութե ։ Ի ծերութե իւրում յաւուր միում մինչդեռ կամէր մատուցանել զսբ պատարագ , երիցս կրկնեաց 'ի մուտս անդ զբան սաղմոսին , Մտից առաջի սեղանոյ այ , և ոչ ևս յաւել բարբառել ․ զի ըմբռնեալ 'ի կաթուածոյ՝ անկաւ 'ի մահիճս , և փոխեցաւ առ տր ․ որ և կայ թաղեալ փառօք 'ի տաճար սբյն պօղոսի 'ի նիկապօլիս , փայլէն սքանչելեօք ․ որում և մեք արժանի եղաք այց առնել 'ի մօտոյ , ոչինչ հեռի յեկեղեցւոյ վանաց սբ լուսաւորչին մերոյ ։ Ի ․ Նոյեմբ․ 10 ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ՝ տօնելի ընդ Տարագոսի ․ հատ ․

Ի ․ 271 ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ անտիոքայի ոսկերիչ , և ամուսին նր ԱԹԱՆԱՍԻԱ 'ի վեցերորդ դարու , անձինք երկիւղածք այ , աղքատասէրք և աղօթասէրք , յետ վախճանելոյ երկուց զա-

ւակաց խուրեանց 'ի միում աւուր 'ի տարա-
ժամ հասակի՝ միաբան կամօք բաշխեցին
զամ ինչս իւրեանց աղքատաց , և շրջեալ
յուխտս եկին՝ անցին յաղեքսանդրիա . և
գտեալ 'ի սկիտէ զհայրն դանիէլ՝ ուսան 'ի
նմանէ զճանապարհ կատարելութե : Ան-
դրոնիկոս կրօնաւորեցաւ առ նոսա հօրն դա-
նիէլի , և աթանասիա առանձնացաւ ը̃ կու-
սանս կանայս : Յետ ձգնելոյ զամս երկո-
տասան սքանչելի առաքինութբ՝ հանդիպե-
ցան միմեանց 'ի գնալն միասնգամ յեմ .
և լռութբ գնացին և դարձան . զի թէպէտ-
և աթանասիա ծանեաւ զանդրոնիկէ , այլ
սա ոչ ծանեաւ զնա . քանզի զգեցեալ էր
առնացի ձևով . և ապա հաճութբ հօրն դա-
նիէլի բնակեցան յութուտասնեկի վանս .
ուր այց առնէր նոցա աբբայն դանիէլ . և 'ի
փոխիլն նց երջանիկ մահուամբ մի զկնի միւ-
սոյն՝ թաղեաց զնս ծերն հանդերձ բազմու-
թբ սկիտացւոց . ոպ լրով գրի 'ի վարս հա-
րանց : Տ . փետր . 7 . կմ ըստ ոմր լինել . յուն-
վար . 24 : Յ . մարտ . 2 : Լ . հոկտ . 9 :
Անդրէաս հայրապետ տօնելի . հտ . Օ . 137 :
Անդրէաս՝ վկայ հաւատարիմ կոչեցեալ 'ի
յայտնութեն յովհաննու , էր մի յառաջին
աշակերտելոց՝ ձեռնադրեալ յառաքելոց
եպս պերգամայ յասիա . որ աղօթիւք հա-
լածէր զդևս , և անգործ առնէր զխաբէու-
թիս նց 'ի բազմս . վսյ ասեն դևքն ցիշ-
խանս հեթանոսաց , ոչ կարեմք կալ 'ի տե-
ղիս

ղիս յայս, և ոչ կամիմք զզոհս ձեր. զի Ան-
թիպաս գլխաւորն քրիստոնէից բռնանայ ՚ի
վ̃ր մեր: Ապա կալաւ դատաւոր քաղաքին
զս̃բ եպ̃սն. և ոչ կարացեալ տալ նմա զոհել
կուռոց՝ եարկ ՚ի պղնձի ցուլ ջեռուցեալ և
շողացեալ. և այնպէս կատարեցաւ երանե-
լին, և թաղեցաւ անդ ՚ի պերգամա: ∸.
ապր. 10: Յ. Ա. 11:

Անիկիտոս և Փոտինոս տօնելիք. հտ. Գ. 373:
Աննա մայր տիրամօր՝ տօնելի. հտ. Ե. 5:
Աննա մայր կիւրղի՝ տօնելի. հտ. Բ. 429:
Անոյշ, որ և սրբուհին Անթուսա, թեսաղո-
նիկեցի առ Մաքսիմիանոսիւ, որբ մնացեալ
՚ի բարեպաշտ ծնողաց՝ կեայր առաքինի վա-
րուք. յերթալն ն̃ր ը̃ սովորութե̃ յեկեղեցի՝
ել ը̃ առաջ նորա զօրական հեթանոս, և
ստիպեր ՚ի մեհեանն երթալ ՚ի զոհ կուռոց:
Նա յը̃դէմ դառնալ սրբուհւոյն և ՚ի թշնա-
մանել զդիս՝ խոցեաց զնա այլն սրով, կամ
գեղարդեամբ ը̃ կողս և ը̃ սիրտն. և նորա
անկեալ յերկիր և թաթաւեալ յարեան՝
աղօթելով աւանդեաց գոհութ̃բ զհոգին:
՚Ի նոյն աւուրս նահատակեցաւ և եպս թե-
սաղոնիկեայ Անթուսա: ∸. ապր. 16: Տե̃
իէլ. ապր. 20: Յ. Ա. դեկտ. 30:

Անսելմոս երևելին յարևմտեան վ̃դպս մի-
ջին դարուց՝ էր յօգոստայ պիէմոնդի, փոյթ
՚ի մանկութէ յա̃ծպաշտութ̃ի, մինչև դնել
՚ի մտի կրօնաւորիլ. այլ յոչ թողուլ զնա
ծնողացն՝ հիւանդացաւ առ ցաւոյ սրտին.

իսկ իբրև առողջացաւ՝ անփոյթ եղև զի-
րացն. և յետ մեռանելոյ երնեմբերգայ
բարեպաշտ մօրն՝ իսպառ հոլացեալ՝ սկսաւ
ընկղմիլ 'ի սէր ծի ։ 'Ի խրատել և 'ի յան-
դիմանել զնա հօրն՝ նախ գժգմնեցաւ. և
ապա զգաստացեալ՝ շրջեցաւ աստ և անգ-
ամն երիս. մինչև եկեալ 'ի Նորմանդիա՝
եմուտ յաբբայարանն բեկկայ. և աշակեր-
տեցաւ առ ոտս Լանփրանկոսի առն սբյ ։
Յորմէ կրթեալ 'ի գիտութիւս, և առաւել
'ի վարս բարիս՝ զգեցաւ զքեմն կրօնաւո-
րութեան բենեդիկտեանց՝ յամի տն 1060. իէ
ամաց, 'ի ձեռաց երղուինոսի աբբային հիմ-
նադրի տեղւոյն ։ Նա 'ի սուղ ժամանակի
այնչափ յառաջադէմ եղև, մինչև 'ի պա-
կասիլ վերակացուին՝ զանսելմոս ընտրեցին.
Էր որ խեռայլին ոմանք, այլ նա քաղցրութբ
և խոնարհութբ շահեցաւ զամենեսին. Հա-
նապազորդեան խստակրօնութի նր և պա-
հեցողութի, համեստութին և նախանձա-
ւորութի բարեկարգութե՝ աճեցոյց զեռանդն
'ի վանականս. մինչև առնել նմա յայնմ
աբբայարանի զմեծ դպրոց սբց միանձանց.
յորոց և ընտրեցաւ աբբայ զկնի վախճանե-
լոյ երղուինոսի՝ յամի 1078 ։ Այլ նա յա-
ւել 'ի խոնարհութի. մինչև ոչ զմի յեղ-
բարց կատարել զամ ցածուն պաշտօն վա-
նաց ։ Դէպ եղև նմա վն գործոյ իմիք ան-
ցանել յանգղիա. ուր արքայն գուլիելմոս
Բ՝ կարմիրն կոչեցեալ՝ իբրև ետես զհան-
դէս

դէս սրբութեան և իմաստութեան անսելմոսի ,
ընտրեալ զնա յարքեպիսկոպոսութիւն կանտուարիոյ
կամ կանտորբերայ . յորմէ բազմօք հրաժա-
րեալ էր , և յանհնարս մտեալ՝ յանձն էառ
զգործ արտասուօք յամի 1094 . և իբրև քաջ
հովիւ խնամ կալաւ հօտի իւրում յոյժ ։
Այլ 'ի դուռն գործել նոր մի խաղաղութեան
յերկպառակութեան անդ աթոռոյն հռովմայ ,
և 'ի յորդորել զամենեսին ընդունել իբրև
հարազատ քահանայապետ զուրբանոս Բ ,
Թշնամացաւ ընդ նմա Թագաւորն , և ստրջա-
ցաւ ընդ ընտրել իւր զնա յեպիսկոպոսութիւն . քանզի ոչ
ներէր նմա անսելմոս սեպհականել զինչս
եկեղեցւոյ ։ Իսկ աւագանին կուսակից լեալ
արքային՝ եղեն 'ի կողմն դերապապին գուլի-
բերտոսի . և զի անսելմոս ընդդէմ եկաց
այսմ , կողոպտեցաւ յամենայն հասից եկեղեց-
ւոյ , և կրեաց բազում հալածանս անպար-
տելի համբերութեամբ ։ Ի հաշտիլ արքային
ընդ ուրբանոսի պապին՝ տակաւին ոչ ուղղե-
ցաւ սիրտ նորա ընդ անսելմոսի . զի նա էր յան-
դիմանիչ իւր մտաց յափշտակութեան ընչից եկե-
ղեցւոյ , մինչ և յորդորեաց զպապն՝ ընկե-
նուլ զանսելմոս յաթոռոյ եպիսկոպոսութեան . և ոչ
գտեալ զհաւանութիւն՝ ինքնին տարագրեաց
զերանելին յաթոռոյ . և նա դէմ եդեալ
գնաց 'ի հռովմ . ուր պատուեցաւ յոյժ 'ի
հայրապետէն ։ Գնաց զկնի անսելմոս և 'ի
ժողովն բարիոյ ( կամ պեւկետիոյ յերկրին
նէապօլսոյ ) յամի 1098 . ուր քաջ հանդի-

սա-

տացոյց զաստուածաբան վարդապետութիւն իւր զօրագոյն բանիւք ՚ի ցուցանել ընդդէմ յունաց զելումն հոգւոյն սրբոյ և յորդւոյ. Նոյնպէս փայլեցոյց զաստուածիմաստ գիտութիւն իւր և զպերճախօսութիւն ՚ի միւս ևս ժողովն որ եղև ՚ի Հռովմ։ Իբրև մեռաւ Գուլիելմոս արքայ անգղիացւոց յամի 1100, յաջորդ նր Հենրիկոս Ա՝ կոչեաց անդրէն զանսելմոս յաթոռ եպիսկոպոսութե իւրոյ ՚ի կանդուարիա։ Այլ ՚ի ծագել նորոյ հակառակութե ընդ թագաւորին և ընդ եպսն մն խիլայից, (խմն զգեստու և գաւազանի և այլ ևս նշանակաց պատուոյ՝ զորս թագաւորք կամէին անձամբ տալ եպսաց և աբբայից,) հարկ եղև Անսելմոսի միւսանգամ դարձ առնել ՚ի Հռովմ։ Իսկ ապաւինեալ ՚ի Լուգդոն քաղաք Գաղղիոյ իբրև ՚ի տեղի ապաստանութե. ուր և եկաց առ ժամանակ մի, մինչև ընդ թախանձելոյ համօրէն տրութեն անգղիացւոց՝ որք ոչ կէնդանի ոչ ձանաչէին զանսելմոս, դարձոյց արքայ պատուով զնա յաթոռ իւր, և լսէր նմա քաղցրութբ։ Յայնմհետէ պարապեալ սրբոյն առաւել հանդարտութբ ՚ի շարագրութիւն՝ յօրինեաց բազմապատիկ գործս ՚ի պայծառութի եկեղեցւոյ. և յետ երից ամաց խօթացեալ՝ ետ տարածանել զինքն ՚ի վր մոխրոյ, և արկաւ զիւրև քուրձ խոշոր. և այնպէս փոխեցաւ առ տր յամի 1109. ՚ի 21. ապրիլի, հզ ամաց. և փայլեաց սքանչելեօք ՚ի կեանս և յետ մահու։ Ի.

ապ-

ապրիլ . 21 ։

ԱՆՏԻՈՔՈՍ բժիշկ սեբաստացի յաւուրս հա-լածանաց ( դիոկղետիանոսի ) բժշկէր զամ հիւանդս անուամբն Քսի , և փոխանակ վար-ձու դարձուցանէր զնս ՚ի Տր ։ Զայս կալաւ զնա ադրիանոս դատաւոր , և յետ բազում չարչարանաց՝ եարկ ՚ի կաթսայ եռացեալ . յորմէ պահեցաւ կենդանի . նոյնպէս և ա-ւազի գազանաց արկեալ՝ ոչինչ վնասեցաւ ։ Ապա ՚ի կործանել սբյն աղօթիւք կռատունս կռոց՝ հատին զգլուխ նր . և ՚ի բղխել կա-թին վոյդ ընդ արեան՝ հաւատաց Կիւրեղէս դա-հիճն . և նզովեաց զկուռս . որք վկ և նա ևս կատարեցաւ սրով ։ ∴ . օգոստ . 38 . կմ 24 ըս տր իւլի ։ Յ . Լ . յուլիս . 15 ։

ԱՆՏՈՆ աբբայ՝ տօնելի . հտ . Ա . 57 ։

ԱՆՏՈՆ և ԹԷՈԴՈՍԷՍ՝ տօնելիք . հտ . Լ . 33 ։

ԱՆՏՈՆ պադովացի՝ նշանագործ այրն ած՝ էր ծննդեամբ յերկրէն լիւսիտանիոյ ի փոր-թուգալայ՝ ՚ի լիսբոնայ քաղաքէ , որդի մար-տինոսի և մարեմայ . և առաջին անուն նր փերնանդոս . որ եղև մանուկ փոյթ յա-ղօթս և յածպաշտութի , սակայն կանխելով ՚ի մօտակայ եկեղեցի սբ ածածնի՝ ուր կայր մարմին սբ վկային վինչենցիոսի վալենցաց-ւոյ ։ Խորշէր ՚ի տղայական զբօսանաց , և յերիտասարդական ցանկութեց . և էր ու-սումնասէր յոյժ , մինչև ներհուն լինել ամ գիտութեց՝ առաւել սբ գրոց ։ Ապա յադգ-մանէ տն հրաժարեալ յաշխ՝ եմուտ ՚ի վանս

կա

կանոնիկոս աբեղայից կարգի միոյն օգոս-
տինոսի, որ կայր արտաքոյ քաղաքին. ուր
զամս երկու փայլեաց սքանչելի վարուք։
Այլ տեսեալ՝ թէ նեղեն զնա բարեկամք
տեղւոյ երթևեկօք՝ հրամանաւ մեծաւորին
փոխեցաւ յայլ վանս նոյն կրօնի 'ի քաղաքն
կոյեմբրիայ. անդ առաւել յայտնի կացոյց
զեռանդն հոգւոյ իւրոյ։ Յետ այսորիկ լու-
ւաւ, թէ ոմանք 'ի կարգէ միոյն Փրանչիս-
կոսի նահատակեալ են 'ի մառօքքօ աֆրի-
կոյ, և մարմինք նոցա փոխադրեալ 'ի փոր-
թուգալ. յայնժամ վառեցաւ յանհնարին
փափաք հեղլոյ զարիւն իւր վասն անուանն
քի. վյ խօսեցաւ ընդ Փրանչիսկեանս, և
ասէ. մտադիւր առնուլ զձև կրօնի ձերոյ,
եթէ գիտէի՝ թէ առաքէք և զիս 'ի քարո-
զութի յերկիր անհաւատից։ Նքա խըն-
դամիտ ընկալան զբանն՝ գիտելով զայրն ի-
մաստուն և սրբասէր՝ լինել 'ի պարծանս
կրօնի իւրեանց։ Նա 'ի խնդրել միոյն հրա-
մանն 'ի մեծաւորէ օգոստինեանց վն անցա-
նելոյ 'ի կարգ Փրանչիսկեանց, ոչ կարաց
նա ընդդէմ դառնալ. զի օրէն էր 'ի խոստա-
գոյն կրօն փոխել, և զի տեսանէր զնա ող-
ջամիտ և փափաքօղ 'ի լաւ անդր. այլ մե-
ծապէս ցաւելով ետ զհրամանն՝ վն զրկելոյ
յայնպիսի անձնէ։ Յայնժամ մի ոմն յաբե-
ղայից նոյն վանաց ասէ հեգնելով ցերանե-
լին. գնա՛ գնա՛ խաղաղութբ փե՛րնանդէ՝ առ
'ի զգենուլ զքեմ եղբարց կրտսերաց, զի
թէ.

թերևս որ լինիցի ։ Իսկ նա ասէ հեզուբ․ յորժամ լսիցես՝ թէ որ լեալ իցէ իմ, յայնժամ մեծապէս փառս տացիր այ ։ Իսկ այնպէս եկն եմուտ 'ի կարգ Փրանչիսկեանց , և զգեցաւ զձև նց․ և փոխեալ զանուն իւր՝ կոչեցաւ անտոնիոս , առ աւաւել անծանօթ լինել յաչս ծի ։ Իսկ եղև յետ տեսանելոյ մեծաւորայն անտոնի զբորբոքումն սրտի նր 'ի նահատակութիւն՝ ետուն նմա հրաման ը խոստման իւրեանց երթալ քարոզել զաւետարանն յափրիկէ․ և նա յօժարափոյթ սիրով եմուտ 'ի նաւ , ոչ գիտելով՝ եթէ այլազգ էր տնօրինեալ 'ի վերուստ ։ Քանզի հասեալ 'ի ցամաք , և ելեալ 'ի բնակութի ուրեք քրիստոնէից՝ հիւանդացաւ․ և ոչ եգիտ զառողջութի զձմեռն ողջոյն․ մինչև հարկ լինել դառնալ նմա 'ի սպանիա , և երթալ յիւր տեղի․ բայց բռնութի հողմոց տարաւ ընկէց զնաւն 'ի սիկիլիա ։ Ընդ լուաւ զսէյն Փրանչիսկոսէ , զի հանրական ժողով առնէ կարգին 'ի քաղաքն իւր ասսիզ՝ որ յումբրիա իտալիոյ․ վս ել գնաց անդր նաև անտոն տկար անձամբ ։ Իսկ յարձակել ժողովոյն՝ այր իւրաքանչիւր ցրուեցան 'ի վանս իւրեանց․ և ոչ ոք գտաւ վանատուր և ասպնջական անտոնի՝ վս անծանօթ և հիւանդ գոլոյն․ մինչև աղաչեաց զգաւառապետն ռոմանիոյ , և նա տարաւ զնա ը իւր 'ի վանս անապատին՝ որ կոչիւր պօղոսի լեառն ։ Ընդ եկաց անտոն միակե-

յա

ցական վարուք իբրև զձգնաւոր կատարել՝ տուեալ զանձն յանդադար աղօթս և 'ի խոկմունս , ոչինչ տուեալ նշան հմտութե գրոց , այլ սպաս կալեալ 'ի խոհակերոցի և 'ի սենեակս եղբարց ըստ ցածութե : Դէպ եղև նմա երթալ հանդերձ քանի մի ընկերօք և մեծաւորաւ տեղւոյն 'ի քաղաքն Փօռլի ( որ և Փօռում լիւի ) առ ձեռնադրութե . ուղեկից գտան և ոմանք 'ի դոմինիկեանց և յայլ ևս կարգաց . և 'ի մտանել նց 'ի տուն ուրեք առ ճաշելոյ՝ բանք եղեն 'ի մէջ ժողովելոյն , զի մի ոմն 'ի նոցանէ խօսեսցի բանս մխիթարութե 'ի շինութի լսողաց . և 'ի հրաժարել ամենեցուն՝ պատճառելով զանպատրաստութիւն , մեծաւորն անտոնի ակնարկեաց նմա ասել ինչ , ոչ զի կարծէր զնա աջողակ 'ի բանս , այլ պարզաբար փորձել կամելով զհնազանդութի նր : Ասէ անտոն ցմեծաւորն . գիտես հայր զիմ գործ 'ի վանս . և զիա՞րդ իշխեսցէ յետնեալս խօսել յանպատրաստից առաջի այսպիսի գիտնաւոր հարանց : Այլ իբրև բռնադատեցաւ 'ի հնազանդութե՝ յանձին կալաւ ասել , զոր ինչ Տր տայցէ : Եւ սկսեալ պարզ և մեկն զրուցաբանութբ՝ երթալով երթայր և խորամուխ լինէր յածեղէն վերպութիւն անդր՝ հրաշալի բանիւք և իմաստիւք , մինչև յակձիռս կալ լսելեաց . և այնչափ առաւել՝ որչափ կարծէին զնա հետևակ 'ի դըպրութե : Հնչեաց այնուհետև համբաւ քա-

րու

րողութե̃ անտոնի . մինչև եւ հրաման յա-
ռաջնորդաց լինել նմա քարոզիչ հրապարա-
կաւ ։ Յայնժամ երևեցաւ անտոնի՝ նոր հե-
ղինա նախանձաւոր փառացն ա̃յ՝ 'ի յանդի-
մանել զտարապադէպ ընթացս որդւոց մարդ-
կան՝ զօրաւոր քարոզութ̃բ 'ի քաղաքս քա-
ղաքս . զի և երևելի քարոզիչք կանխեալ
յունկնդրութ̃ի բանից նր̃՝ զարմանային ը̃
համարձակութ̃ի նր̃ , և ը̃ հոգին՝ որով խօ-
սէր ։ Իսկ այնչափ քաջ յաղթահարէր զհա-
կառակորդս Ճշմարտութե̃ , մինչև կոչիլ նմա
կուռն զլխահար հերետիկոսաց . յորոց և
զբազում դարձոյց , ո̃պ և զաղանդապետ
ոմն յարիմինոն քաղաքի ։ 'Ի քարոզել նորա
երբեմն յանդիման կարդինալաց և հայրա-
պետին հռովմայ , սքանչացաւ հայրապետն
ը̃ յորդութ̃ի բանից՝ զորս 'ի մէջ առնոյր
'ի գրոց սրբ̃ց , մինչև կոչել զանտոն՝ արկղ
կտակարանաց ։ Նա կարգեցաւ և նախկին
դասատու ա̃ծաբանութե̃ 'ի կարգի Ֆրան-
չիսկեանց 'ի բոլոնիա իտալիոյ ։ Ունէր և
զշնորհս սքանչելեաց և մարգարէութեան ։
Յորժամ եղև անտոն տեսուչ վանաց 'ի
բոտա քաղաք , կայր անդ նօտար ոմն՝ որոյ
անուն ոչ բարի համբաւէր . զսա քանիցս և
տեսանէր անտոն զճանապարհայն՝ ո՛չ միայն
ողջունէր սիրով , այլ և յարգելով իմն ծունր
դնէր ը̃ անցանել նր̃ . ը̃ որ զժուճարեալ նօ-
տարին՝ ո̃պ թէ այպն առնիցէ զնովաւ ան-
տոն , 'ի միում նուագի ասէ ցնա 'ի լուր ըն-

կե.

կերայ խորոց . եթէ չերկնչէի յո՟յ , մինչ
պտուր իմ 'ի կողս քո . զի մի ևս յաւելուցուս
ծաղրել զիս ։ Պինի եա անտոն . բաղում
անգամ բաղում փափաքանօք խնդրեցի յո՟յ
զպարգև մարտիրոսութե՟ , և չեղէ արժա֊
նի . այլ յայտնեալ ինձ տր՟ մ՟ր քո՝ զի մար֊
տիրոսանալ ունիս . և մ՟ր այն առնեմ քեզ
առանձին մեծարանս . որդ աղաչեմ յիշել
զիս 'ի ժամ ը՟ունելոյ քո զպսակն վկայութե՟ ։
Ծիծաղեցաւ նոտարն ը՟ այս . բայց կատա֊
րեցաւ բան սր՟յն . քանզի 'ի գնալ եպսին
բոտայ յեկեղ՟ տարաւ ընդ իւր և զայն նո֊
տար . և իբրև անցանէին ը՟ մաւրիտանիա՝
'ի քարոզել եպսին առ անհաւատս , պնդա֊
գոյն քարոզիչ գտաւ նա ինքն նոտարն . և
արժանի եղև նահատակութե՟ . յորում ժա֊
մու յիշեաց զբանն անտոնի , և պատմեաց
'ի լուր հաւատացելոց ։ Իսկ անտոն ևս քան
զևս յառաջադէմ լինէր 'ի քարոզութեան
բանին այ՟ , անձանձիր և անխոնջ քրտամբք
ընթանալով յա՟մ տեղիս . և զի էր մնեղ և
թանձրամարմին՝ առաւել կրէր նեղութի՟ ,
այլ յոչինչ դրէր զա՟մ աշխատութի՟ 'ի փառս
այ՟ և յօգուտ հոգւոց ։ Բազում փորձանս
յարոյց ը՟դէմ սր՟յն բարխատեաց բանսար֊
կուն , բայց ինչ ոչ շահեցաւ ։ Ի գիշերի
միում յայտնապէս 'ի վ՟ր վազեաց նր՟ դևն .
և այն ինչ թուէր բուռն հարկանել զպա֊
րանոցէ նր՟ և խեղդել , գոչեաց անտոն առ
տր՟ ա՟ծածինն՝ բանիւ երգոյն . Մ՛ղ փառա֊

ւորեալ տիրուհի . և առժամայն անհետ
եղև չարն ։ Ի խուռն ընթանալ ամբոխին
'ի լուր քարոզութե անտոնի՝ առ չքաւելոյ
եկեղեցւոյն ելանէր երբեմն 'ի հրապարակս
և 'ի դաշտս . և խօսէր նմա զբանն այ այնպի-
սի հոգւով , մինչև բազմաց դառնալ 'ի չար
ճանապարհաց , և ամենեցուն յորդորիլ յեր-
կիւղ և 'ի սէրն այ ։ Այլ առաւել 'ի պատ-
ուհա քաղաքի հանդիսացաւ քարոզութիւն
սբյն . ուր հարկ լինէր 'ի գնալ նորա ը փո-
ղոցս՝ շուրջ պատել զնա արանց զօրաւորաց ,
զի մի 'ի խռնիլ ժողովրդեան՝ որք կեղուին
զնովաւ 'ի համբոյր ձեռաց և հանդերձից
նր , հեղձուցանիցեն զայրն այ ։ Ի քարո-
զել նր 'ի հուովմ առաջի ժողովելոցն յամ
ազգաց և 'ի լեզուաց՝ զարմանք կալաւ զա-
մենեսին , զի ուր նա իտալացի բարբառէր՝
ունկնդիրք առ հասարակ 'ի միտ առնուին
ոմ յիւրեանց բարբառ , իբր ոչինչ ըհատ
'ի շնորհէ առաքելոց ։ Օրաւոր էր ձայն
սբյն . այլ ոչ առանց սքանչելեաց արդեօք
լսելի լինէր անհամար բազմութե յերեսս
դաշտաց ։ Ի միում նուագի՝ յորժամ այս-
պէս քարոզէր 'ի բացի յոտին դաղղիացւոց
առ բիտուր քաղաքաւ , սկսան երկինք փայ-
լատակել և որոտալ . և 'ի խորհիլ ամբոխին
մեկնիլ անտի և մտանել ընդ յարկաւ՝ ասէ
սբն . հանդարտեցէք 'ի տեղւոջդ , զի և ոչ
շիթ մի անկցի 'ի վր ձեր . և եղև այնպէս ,
ուր արտաքոյ այնր դաշտի յամ տեղիս անձ-

ձրևեաց յորդութի : Որկու միջնաւ հեռի 'ի տեղւոջէն կայր 'ի գիւղ մի՝ հիւծանդ այր , որոյ վն և կին նորա արգելեալ յերթալոյ 'ի քաղաք սրբն . այլ առ տենչմանց սրտին նստաւ կինն 'ի պատուհան տանն՝ որ հայէր 'ի դաշտն . և եաես՝ զի լոյս զբանս սրբն յատակութի . և 'ի պատմել զայն առն իւրում՝ խնդութի՝ նա ևս յարեաւ և եկն տկար ոտիւք առ պատուհանն , և լոյր նոյնպէս և զբանչանայր : Սո մին յունկնդրաց ընթանայր բոթաբեր 'ի ձև ծառայի , ոչ թէ մեռեալ իցէ զաւակ նր 'ի տան . զոր իմացեալ սրբն հոգւով՝ ծանոյց յամպիոնէ անտի , թէ դևն ինքնին հայրն ստութե կերպարանեալ 'ի ծառայ՝ բերէ զայն գոյժ առ 'ի խափանել զունկնդիրս բանին այ . և այնպէս յամօթ եղև չարն և կորեաւ 'ի միջոյ : Յորժամ 'ի պատուա էր սրբն անտոն , յայտնեցաւ նմա յայ , զի 'ի լիսպոնա հայրն իւր պարտաւորեալ է 'ի մահ ոչ մարդասպան յերեսաց սուտ չարախօսաց . յայնժամ հրաման խնդրեալ անտոնի 'ի մեծաւորէն երթալ 'ի քաղաք իւր՝ որ է Ճաւ հեռի , 'ի միում գիշերի ձեռամբ հրեշտակաց ածաւ 'ի պատուայէ իտալիոյ 'ի լիսպոնա փորթուգալու . ուր խնդրեաց 'ի դատաւորաց բերել առաջի իւր զմեռեալն՝ զորմէ ասէին սպանեալ 'ի հօրէ իւրմէ . և յանուն Յին եհարց զմեռեալն , թէ հայր իւր իցէ սպանօղ նր . և եա մեռեալն զբարբառ կենդանի , թէ անպարտ

է

է նա յարենէ իմմէ ։ Եւ այնպէս զահի հա-
րան և արձակեցին դատաւորք զհայրն ան-
տոնի ․ և նա յետ կալոյ զմի գիշեր ևս ընդ
հօր իւրում՝ ՚ի վաղիւն անդր դարձաւ սքան-
չելապէս ՚ի տեղի իւր ՚ի պատուա ։ Ի խօ-
սել երբեմն սր̄յն քարոզ ՚ի վ̄ր ուրուք մե-
ռելոյ ՚ի մեծատանց՝ բանս ՚ի մէջ աւեալ
ը̄դէմ արծաթսիրութե̄ , ասաց ․ լցեալ է
յայրդ յայդ բան աւետարանին , թէ ուր
գանձն ձեր է , անդ և սիրտք ձեր եղիցին ․
և եթէ կամիք իմանալ , բացէ՛ք զարկղ գան-
ձուցն ն̄ր , և անդ գտանիցէք զսիրտ մեռե-
լոյն ․ և եղև այնպէս ․ զի ընթացեալ բա-
ցին զարկղ մեծատանն այնորիկ մեռելոյ , և
ահա սիրտ ն̄ր թարմ կայր ՚ի մէջ արկեղն
ընդ դրամս ․ և եղև ահ մեծ ՚ի վ̄ր ամենե-
ցուն ։ Ս̄ն ՚ի պատուայւոց խոստովանեալ
սր̄յն անտոնի զմեղս իւր՝ ասաց և զայս , թէ
աքացի հարի զմայրն իմ ․ և սր̄ն ՚ի յանդի-
մանել զնա՝ ասէ ․ արժան է հատանել զոտս՝
որ աքացէ զծնօղս ։ Ի բանից աստի այնչափ
շարժեցաւ սիրտ առն , մինչ զի դարձ արա-
րեա̄լ ՚ի տուն՝ ինքնին կտրեաց կացնով զոտն
իւր զայն ։ Եւ եղև բանս այս յունկն ան-
տոնի ․ ետ բերել առ ինքնին զայրն , և ըզ-
հատեալ ոտն ն̄ր ․ և նշանաւ սր̄յ խաչին եդ
զոտն ՚ի տեղի իւր , և ողջացոյց զնա ։ Բազ̄մ
և այլ սքանչելիս արար , որք գրեալ կան ՚ի
լիակատար պատմութե̄ ն̄ր ։ Արժանի եղև
սր̄ն անտոն տեսանել և զողջայացեալն մ̄ծ

մեր զյս՟ 'ի կերպարանս մանկութե՟ գեղեցիկ տեսլեամբ քան զա՟մ որդիս մարդկան , և խօսակից լինել ը՟ նմա սիրով ընտանութե՟ ։ Կանխագէտ եղեալ անտոնի իւրումն օրհասի՝ առանձնացաւ 'ի խուղ մի արտաքոյ քաղաքին պատուայու . և յետ ա՟մ պատրաստութե՟՝ նուագէր զերգն առ տիրամայրն . ով փառաւորեա՟լ տիրուհի . և ստէպ վերակնէր յերկինս ։ Հարցին որք անդն կային կրօնաւորք , թէ զի՞ 'ի վեր հայիս . և նա ասէ . հայիմ 'ի տէրն իմ յս՟ քս՟ . և այնպէս աւանդեաց զհոգի իւր առ ա՟ծ 'ի ձեռն հրեշտակաց յամի տն՟ 1231 . 'ի յունիսի 13 . և մինչչև էր գիտացեալ ուրուք արտաքոյ , սկսան մանկտին՝ որ 'ի պատուա , աղաղակել այսր անդր . ո՟ր հայրն մեռաւ . անտոն փոխեցաւ ։ Իսկ եղև հինգ օր վէճ 'ի քաղաքին վս՟ տեղւոյ թաղման սր՟ոյն , զի ոմանք աստ՝ և ոմանք անդ կամէին . ապա միաբանեա՟լ թաղեցին 'ի տաճար ո՟ր ա՟ծածնի . և յետ ժամանակաց շինեցին խորան հոյակապ յանուն սր՟ոյն անտոնի յեկեղեցւոջ անդ , և անդր փոխադրեցին 'ի ներքոյ բեմի զմարմին սր՟ոյն . յորմէ և եկեղեցին այժմ կոչի՝ ո՟ր անտոն . կա՟մ պարզապէս՝ սր՟ . զի պատուայեցիք ո՟ր ասելով զանտոն իմանան ։ Այնչափ յաճախեցին սքանչելիք նշանագործ սր՟ոյն ը՟ ա՟մ տեղիս յետ փոխման նր՟ , մինչ զի 'ի յաջորդ ամի իսկ և իսկ դասեցաւ 'ի կարգս սր՟ոց տօնելեաց յարևմուտս . իսկ հրաշք նր՟ անպա-

կա-

կասելիք յամ ժամանակի հռչակեալ են և յարևելս ։

Լ․ յունիս ․ 13 ։

Անտոնինէ սրբուհին 'ի Նիկիոյ բիւթանացւոց առ դիոկղետիանոսիւ մատնեալ վն 'ի քն հաւատոց 'ի ձեռս պրիսկիղիանոսի իշխանին՝ յետ գանից արկաւ 'ի բանտ ․ ապա քերեցին զմարմինն 'ի կախաղանի և խանձողեցին հրով ․ և հրացեալ շամփրօք ծակեցին զթաթս ձեռաց և զպճղունս ոտից ․ և 'ի գոհանալ նր զնէ՝ բուրեաց 'ի նմանէ հոտ անոյշ խնկոյ , և եկն ձայն յերկնից 'ի քաջալերել զնա ։ Ի միւսանգամ բանտարկիլն՝ բժշկեցաւ սքանչելեօք ․ և մնաց 'ի բանտի անդ զամս երկու ․ և զկնի արկաւ 'ի լիճ ․ կմ ըստ ոմանց կատարեցաւ սրով ։ Հռ․ մայ ․ 10 ․ և յունիս 13 , կամ 15 ։

Յ․Լ․ յունիս ․ 12 ։

Անտոնինէ կոյս 'ի կարդամայ կմ 'ի կորդոմայ գեղջէ ('ի սահմանաց բիւզանդիոյ) առ մաքսիմիանոսիւ , հարցափորձեալ 'ի փեստոսէ դատաւորէ , և հաստատուն գտեալ 'ի քն , արգելաւ 'ի տուն պոռնկութե ոչ 'ի բանտ ․ ուր անարատ պահեցաւ՝ կացեալ զաւուրս երիս անսուաղ ․ և 'ի չորրորդում գիշերի ծագեաց լոյս յերկնից , և տուաւ նմա կերակուր 'ի հրեշտակէ այ ։ Յետոյ հանեալ զաղախինն քնի՝ բրածեծ և սրածեծ արարին ․ և դարձեալ արկին 'ի պոռնկատունն ։ Յայնժամ երիտասարդ մի 'ի քաջ զօրականէն Ալեքսանդրոս անուն՝ հրա-

մանաւ հրեշտակի ոմն եմուտ 'ի բանտ անդր․ և արկեալ զկուսին զքղամիդ իւր՝ քաջալերեալ եհան զնա 'ի դուրս, ոչ թէ ինքն իսկ ելեալն․ և ինքն եկաց 'ի ներքս 'ի տեղի նր․ ապա 'ի գալ այլոց յանաւակ զինուորաց՝ 'ի վէր ել բանն։ Կոչեաց դատաւորն զաղեքսանդրոս առաջի իւր․ և 'ի խոստովան լինել նորա զքո՝ կախեցին զնա, և սրով կտրատեցին զմարմինն․ և նր զօրացեալ յերկնաւոր ձայնէ՝ արիաբար տարաւ տանջանաց։ Յետոյ միանգամայն դատէ փեստոսի զանտոնինէ և զաղեքսանդրոս՝ ետ հատանել զմատունս ձեռաց և ոտից նց, և զնո ընկենուլ 'ի հուր․ որով և կատարեցան իսկ․ և մարմինք սրբյն եդան 'ի կոստանդինուպօլիս․ Հ․ յունիս․ 9։ Յ․ յունիս․ 10։ Լ․ մայիս․ 3։

Անտոնինոս վկայ կրկին․ տես 'ի սօնելլիս․ հտ․ Գ․ 361։ տես և ասա ըն մելասիպոսի։

Անտոնինոս երէց, ըն ոմանց քահանայ, և ըն այլոց այր ծեր՝ 'ի կեսարիոյ պաղեստինոյ առ մաքսիմիանոսիւ, դատեալ վն քրիստոնէութե 'ի փիրմելիանոսէ իշխանէ՝ կատարի սրով, հանդերձ երիւք մանկագոյն ընկերօք, որ են Նիկեֆորոս, Զեբինաս, և Գերմանոս։ Ընդ սոսա ըմբռնեցաւ և Մանաթեա (ըն այլոց Մանեթոն, կմ Ննաթա) կոյս 'ի սկիւթուպօլսոյ․ զոր մերկ շրջեցուցին ընդ քաղաքն, և բազում չարչարանօք փորձեցին․ յորոց պահեցաւ մեծամեծ բա-

քանչելեօք. և դարձոյց զկաղումն յանհա-
ւատից ածային վկայութբ. և ապա արկեն
՚ի հնոց հրոյ՝ աղօթիւք աւանդեաց զոգին:
Ն. Հոկտ. 31: որ իէլ. Նոյեմբ. 7: Յ.
Լ. Նոյ. 13:

Ս. Նիկողայոս եպիսկոպոս փլորենտացի յիտալիոյ՝ ծնեալ յամի Տեառն 1290, յազնուական ծնողաց. անուն հօրն Նիկողայոս, և մօրն Թովմասա: Նա ՚ի մանկութենէ յանմեղութեան և ՚ի նոյն վարս՝ աղօթասէր և ծառեաց, հեզ և համբարտ և ուսումնասէր: Ի հասակի ժե ամաց աւարտեալ զամ ուսումն, և զհետ կրթեալ կանոնական գիտութե՝ կամեցաւ կրօնաւորիլ ՚ի կարգ դոմինիկեանց քարոզչաց: Իսկ հայր վանիցն տեսեն զհասակ նր փոքր և զմարմին կերպարանս՝ չկամելով զնա ընդունել, ասէ. երթ ՚ի տուն քո, և յորժամ սերտ ՚ի բերան ունիցիս զգիրս վճռոց՝ ապա եկ առ մեզ: Եւ նա պարզմտօք հնազանդեալ՝ ամ ջգամբք սերտեաց զդժուարին զայն գիրս ողջոյն. և յետ տարւոյ եկեալ ՚ի վանսն՝ ասէ. արարի հայր ըստ բանի քում, արդ տուր ինձ զխոստմանդ զձև կրօնից: Եւ նա զարմացաւ, մանաւանդ յորժամ ստուգեաց հարցփորձիւ. և առեն զգեցոյց նմա զսքեմն. և եղև անտոնինոս յառաջադէմ յոյժ յամ կարգս կրօնին առաւել խոստմամբերութե, որ անբերելի թուէր այնպիսի տկար մարմնոյ. քանզի էր պահեցօղ յոյժ և տքնօղ յաղօթս, խարազա-

նագեաց 'ի վ՟ր մերկ մարմնոյ, և գօտի ա-
ծեալ երկաթի. խշտի նորա տախտակ չոր,
և երբեմն քուրձ մի յարդալից. այլ առա-
ւել խոնարհ էր հոգւով, և ընթերցանէր
յոյժ. և անպարապ 'ի գրելոյ զհոգևոր
բանս քաղցր և հոգեշարժ ոճով: Յետ քա-
հանայանալոյ՝ արար պտուղ բազում 'ի քա-
րոզութե՟ և 'ի խոստովանահայրութե՟: Նաև
և առաջնորդ վանաց 'ի հռովմ, 'ի նէապո-
լիս, 'ի փլորենտիա, 'ի սենա, 'ի կայետա,
'ի գորդոնա և 'ի Փիէսօլ: Որչափ պար-
կեշտ և համեստ գնայս ցուցանէր, մինչև
չխօսել ը՟ կանայս՝ արտաքոյ հոգևոր պաշտա-
մանն: Երբև անցանէր ը՟ գետ մի փոքրիկ,
ետես զաղախին ոմն՝ զի լայր. զի խորտա-
կեալ էր զանօթ մի մեծ կաւեղէն, և երկնչէր
անկանիլ 'ի ցասումն տիկնոջ իւրոյ. իսկ
սրբյն գթացեալ 'ի նա՝ եառ զբեկորս անօ-
թոյն, և նշանաւ խաչի ամբողջացոյց զայն՝
ո՟պ զառաջինն. և անցեալ գնաց: Ի մեռա-
նիլ եպսին փլորենտիոյ՝ ընտրեցաւ յայն ա-
թոռ անտոնինոս յեւգինէոսէ դ՟ հռովմայ
հայրապետէ ը՟ խնդրոյ ա՟մ քաղաքին. նա
բազմօք հնարեցաւ ը՟դէմ կալ և փախչիլ.
այլ չեղև հնար, մինչև սպառնալ նմա պա-
պին բանադրանս. մ՟ոյ հարկեցաւ յանձն
առնուլ: Իսկ յաւուր օծութեան 'ի մտա-
նել 'ի քաղաքն՝ ոչ եկն երիվարաւ որպէս
զայլսն, այլ հետիոտս արտօսրալից աչօք.
և այս խոնարհութիւն նր՟ և ս քան զևս կա-
պեաց

պեաց զսիրտ ժողովրդեան ը՟ ընտրել՟ հով-
ուէին։ Յովուեաց երանելին զհօտ իւր զամս
ժզ՟՝ ա՟մ արթնութբ՟ և իմաստութբ՟, պա-
հելով միշտ զխոնարհ ընթացս իւր, և ըստ
կարի զա՟մ նշանակս կրօնաւորութե. մինչև
երբեմն լուանալ և զսկտեղս՝ ո՟տ երբեմն ՚ի
վանս. իսկ զուքնութի աղօթից առաւել ևս
յաճախէր. ստէպ այց առնէր միոյ միոյ յե-
կեղեցեաց, և փոյթ տանէր ա՟մ բարեկար-
գութեց։ Այց արար երիցու գեղջն մօտել-
լոյ՝ որ անկեալ էր ՚ի մահիճս. և կարդաց
՚ի վե՟ աւետարան հանդերձ քանի մի աղօ-
թիւք. և նոյնժամայն յարեաւ երէցն ող-
ջացեալ։ Իբրև անցանէր ը՟ գետն բխալէ,
ուղեկից նորա կանոնիկոսն անկաւ ջրասոյզ
հանդերձ ՚ի գետ անդր. և ՚ի կարդալ նր՟
յօգնութի զու՟ եպսն՝ գտաւ իսկոյն յափն
գետոյն անթաց զգեստուք։ Ի գնալ սր՟ն
՚ի հռովմ՝ տեսեալ զճանապարհայն զոմն աղ-
քատ մերկ՝ եհան յանձնէ զպաղաբողոնն, և
ետ նմա. այլ իբրև եմուտ ՚ի քաղաքն՝ գը-
տաւ պաղաբողոնն սր՟ն յանձին իւրում, ո՟չ
թէ ՚ի վերուստ տուեալ նմա փոխանակաւ։
Տեսեալ սր՟ն անտոնինոսի զհրեշտակս ՚ի
դուռն աղքատին տան միոյ, ՚ի վե՟ եհաս՝
զի բնակիչ տանն էր կին մի այրի երեք դստե-
րօք ՚ի յետին աղքատութե, որք վաստակօք
ձեռաց իւրեանց հայթե՟ հոգային զաւուրն
պարէնս. յայնժամ ետ նց՟ ողորմութի առա-
տապէս. բայց յայլում նուագի անցեալ առ

աե-

տեղեաւն՝ ետես անդ գդեւս. և իմացաւ՝ զի ՚ի պատճառս առաւելութե ընչից յուղացեալ էին բնակիչք տանն այնորիկ, և յաւելուրդ գդեստս և ՚ի զարդս տռճեալ զանձինս. ուսուցանէր ուսաւ չափով առնել զողորմութի՝ որոց կայցէ վտանգ չարաչար վարելոյ նոքաւ ։ Աղքատ ոմն էր գաւճհիկ ՚ի փլորենտիա, որ օրըստօրէ երթայր ՚ի տաճար աւետման սբ ածածնի, և աղաչէր զնա վն երկուց դստերաց իւրոց ՚ի չափ հասելոց. և ՚ի միում աւուրց լուաւ զխօսել երկուց մուրացիկ կուրաց ՚ի խորշ մի եկեղեցւոյն՝ ոչ թէ զանխուլ ՚ի մարդկանէ, վն որոյ ողորմութե՝ զոր ժողովեալ էր նց. մին ասէր, երկերիւր ոսկի դահեկանք են իմ ՚ի քսակի աստ, որ կախեալ է զպարանոցես. միւսն ասէ, ես ունիմ զերեքհարիւր ոսկի կարեալ ՚ի գլխարկի իմում ։ Զայն լուեալ գաւճհիկն այն՝ ընթացաւ և բռնի կորզեաց ՚ի նոցանէ զքսակն և զգլխարկն. և տարեալ ետ առաջի անտոնինոսի եպսի՝ պատմելով զբանս կուրացն ։ Յայնժամ կոչեաց եպիսկոպոսն զկոյրսն. և յետ կշտամբելոյ զնս՝ ետ միում ՚ի նոցանէ դահեկանս քսանևհինգ, և միւսումն երեսուն. և զմնացեալսն պարգևեաց առն կարօտելոյ՝ հարսնացուցանել զերկոսին դստերս իւր ։ Այլ ոմն էր շինական փլորենտացի, որ եբեր սբյ եպսին ուղերձ զկողով մի լի պտղովք յերախայրեաց, ակնունելով փոխարինաց լիաձեռն դրամով. իսկ

սբն

մե՛ն զայս ևեթ ասաց նմա. ա՜ծ լիցի քեզ
վարձահատոյց: Բայց իմացեալ զդժկամա-
կութե՜ն շինականին, հաճեցոյց զնա հրաշալի
օրինակաւ. գրեաց 'ի վ՜ր թղթոյ միոյ զբուր
մաղթանս, ա՜ծ լիցի քեզ վարձահատոյց. և
եդ զայն 'ի թաթ մի կշռոյ. և 'ի միւսն եդ
զընծայն շինականին զպտղալից կողովն. և
իբրև 'ի վեր առին զկշիռն՝ ծանրէր յոյժ
կողմն թղթոյն քան զկողովոյն. յայնժամ
ասէ ցայրն եպ՜սն. տե՛ս զի չզրկեմ զքեզ,
ուր աւելի տուեալ է իմ քեզ՝ քան զըն-
ծեալն առ 'ի քէն: Որչափ հեզ էր և անբար-
կացող անտոնինոս, նոյնչափ և նախանձա-
ւոր օրինացն ա՜յ և ազատութ՜ե եկեղեցւոյ:
Ընդ բանիւ արար և զքաղաքապետն վասն
իշխելոյ նր՜ տալ ըմբռնել զնուիրակ պա-
պին. և իբրև սպառնացաւ նմա իշխանն,
ասէ եպ՜սն. ստուգութ՜բ գիտեմ, զի դու
ոչ ունիս սպանանել զիս. վ՜ն զի ես չե՛մ ար-
ժանի մարտիրոսութ՜ե. ապա եթէ զրկել
կամիցիս զիս յաթոռոյ արքեպ՜սութ՜ե քա-
ղաքիս, շնորհ մեծ առնես. և ձգեալ զձեռն
'ի մենաստանն կոյս՝ ասէ. կայ իմ անդ սե-
նեակ, ուր կարող եմ նստիլ 'ի հանդար-
տութ՜ե, և ազատանալ 'ի հոգւոյս՝ զոր յա-
կամայս յանձին կալայ: Յաւուրսն յայնո-
սիկ երևեցաւ 'ի փլորենտիա աղանդաւոր
ոմն մեռելահմայ, որ և բարբանջէր բանս
հակառակ ամենամբ կոյս ա՜ծածնի. քննեաց
զնա եպ՜սն դատաստանաւ, և գտեալ ան-

զեղջ

ձեղջ 'ի չարիս՝ եւ կենդանւոյն այրել հրապարակաւ յահարկուն ամենեցուն ։ Այնչափ էր զգօնութիւն անտոնինոսի 'ի խորհըրդեան, մինչեւ կոչել զնա բազմաց՝ այր խորհրրդոյ ։ 'Ի փլորենտիա անպակաս էին խռովութիւնք եւ աղէտք պատերազմաց եւ այլ ևս արկածք ․ այլ յորժամ հետէ նստաւ անտոնինոս յաթոռ եպիսկոպոսութեան, կարճեցաւ այն ամ ։ Յետ շարադրելոյ սրբոյն եւ զբազմապատիկ գրեանս լի հոգւով Աստուծոյ՝ փոխեցաւ յերկրէ յերկինս յամի 1461 ․ 'ի մայիսի 2 ․ եօթանասուն ամաց ․ առաջիկայ գտաւ թաղման նորա եւ պապն պիոս բ ․ որ եւ ինքն անտոնինոս լեալ էր տուօղ վերջին թօշակի եւգինէոսի պապին ։ Մարմին սրբոյ եպիսկոպոսին մնաց անթաղ զաւուրս ութ 'ի տաճարի սրբոյն մարկոսի՝ յերեսաց խուռն ընթացից ամբոխին վասն առնելոյ զօրհնութիւն նորա ․ յորժամ եւ բուրէր հոտ անուշից ․ բժշկեցան եւ ոմանք 'ի հիւանդաց մերձեալք 'ի նա հաւատով ․ որ եւ յետ թաղմանն ևս բազմագոյն սքանչելիք եղեն բարեխօսութեամբ նորա 'ի փլորենտիա եւ յայլ տեղիս ․ որ վասն դասակարգեալ եղեւ ընդ սրբս յամի 1623 ։ Ի ․ մայիս ․ 2 ։

ԱՇԱԿԵՐՏՔ ՊՕՂՈՍԻ՝ տօնելիք ․ հտ ․ Ի ․ 269 ։ տես եւ աստ Արքիպպոս եւ փիլիմոն ․ Յասոն եւ Սոսիպատրոս ։

ԱՇԽԷՆ ՏԻԿԻՆ տօնելի ․ հտ ․ Գ ․ 460 ։

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ՝ առաջին թագաւոր հայոց 'ի ցեղէ բագրատունեաց, որդի սմբատայ սպա-

րա-

բապետի խոստովանող կոչեցելոյ, եղև այր
ընտիր ամ ձրիւք հոգւոյ և մարմնոյ, գովե-
լի առաջի այ և մարդկան. խաղաղարար աշխհի
և եկեղեցւոյ Հայաստանեայց ՚ի ձեռն ժո-
ղովոյն շիրակվանու առ զաքարիա կաթողի-
կոսիւ. և յետ պսակելոյ կրկին թագաւ՝
յամիրապետէն այլազգեաց, և ՚ի կայսերէն
յունաց ՚ի վասլէ արշակունւոյ՝ առաւել պայ-
ծառացոյց զազգ իւր աշխական և եկեղեցա-
կան բարեկարգութեամբ. ածասէր թգւրն. և
փոխեցաւ ածահաճոյ վարուք յերկնից թա-
գաւորութիւն՝ յամի 889. և ՚ի թուիս մե-
րում ՅԼԸ: ÷. մայիս. 27:

ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ՝ արքայ Հայոց բագրատունի՝
որդի աբասայ և թոռն սմբատայ նահատա-
կի, թող զայլ անձին լաւութիւս և զառա-
քինութիւս, շինեաց զբազմութիւն վանօրէից
և եկեղեցեաց. և առաւելաւ ՚ի գործս ո-
ղորմութեան և խոնարհութեան. զի ոչ միայն
շինեաց աղքատանոցս, այլ և սեղանակից
իւր առնէր զախտաժէտս յաղքատաց, ըզ-
կաղս և զկոյրս, և իշխանս իւր փառաւորս
անուանէր զնս. և զվէրս նց համարէր իբ-
րև ակունս պատուականս. և զբաժակն իւր
թգւրական մատուցանէր նց, և զմնացորդս
նոյն բաժակին ինքն ըմպէր. և այնքան ա-
ռատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց, մինչ
չև դատարկել զգանձս իւր. և այսպիսի
կատարեալ ածպաշտութեամբ փոխեցաւ յեր-
կինս յամի. 977. նիզ. յաւուրս նարեկաց-
ւոյն:

ւոյն ։ Սոյնպէս և երանելի կողակից աշոտոյ՝ դշխոյն հայոց խոսրովանոյշ՝ գործակից գտաւ յա̃մ բարեգործութի̃ս առն իւրոյ · որ և շինեաց զերկոսին վանսն սանահնի և հաղբատու ։ Տ̇ · մայիս · 27 ։

Ապառար կմ՝ ապառառ, այն է աբէթայ օր, էր մին յերևելի հարց ձգնաւորաց՝ պատկառելի ծերութ̃բ և խստակրօն վարուք · որ ունէր ը̃ իւր և հազար կմ̃ տասն հազար միաբանս · և առանց դպրութ̃ե խելամուտ էր գրոց · ունէր և զշնորհս բժշկութ̃ե · ո̃ր յայտ է 'ի հարանց վարուց ։ Այլ թէ ոմանք բամբասեցին զսա ո̃ր կուսակից որոգինեանց, կա̃մ այլ ոք էր համանուն, և կմ̃ սխալումն պարզմտութ̃ե · զի ոչինչ ստուգու̃բ մարթ է քաղել 'ի հակառակ բանից գրչաց ժամանակին · ապա թէ ոչ՝ ոչ դնէին յոյնք զսրբատակ ն̃ր 'ի ժամագիրս իւրեանց, և հայք 'ի յայսմաւուրս ։ Տ̇ · ապր · 28 ։ Յ · ժմ · օգոստ · 7 ։

Ապիտոն եղբայր եւգինեայ կուսի՝ տօնելի · հտ · Ա̃ · 467 ։

Ապողոնիա կոյս վկայուհի՝ էր օրիորդ պարկեշտ և անարատ վարուք յաղեքսանդրիա եգիպտացւոց · զոր կալեալ դատաւորի տեղւոյն 'ի հալածանս դեկոսի՝ ստիպէր երկրպագանել կռոց · և յոչն հաւանիլ՝ ետ բռնաւորն քանդել զա̃մ ատամունս ն̃ր · և ոչ այնու կարացեալ խախտել զնա 'ի հաւատոյ՝ հրամայեաց հուր բորբոքել և արկանել

նել 'ի նոյն ։ Յայնժամ կոյսն խաչակնքեալ զերեսս իւր , և լուեալ աղօթիւք յած ապաւինեալ՝ ինքնին յառաջեաց 'ի հուրն առ սեր փրկչին . և այնպէս կատարեցաւ 'ի քս յամի իբր 260 ։ Սա է զօրաւոր բարեխօս ատամնացաւաց , որք կարդան առ նա հաւատով ։ Ի . փետր . 9 ։

Ապողոնիոս կմ ապողլոնիոս մկայ՝ էր 'ի սարդիս քաղաքէ լիւդացւոց . որ շրջեալ ը բազում տեղիս՝ դարձուցանէր յանհաւատից 'ի քս . մյ կալեալ եղև յիկոնիոն , և կապանօք կացեալ յատենի պերենիոսի իշխանին՝ խոստովան եղև զանձն ծառայ քսի ։ Ստիպէր զնա իշխանն երդնուլ 'ի բախտ արքայի . և ոչ կարաց հաւանեցուցանել . մյ յետ հարուածոց զանից և տանջանաց՝ 'ի խաչ հանին զերանելին , և գեղարդեամբ խոցեցին . և այնպս աւանդեաց զոգին ։
յուլ . 22 . կմ 27 , կմ 28 ։ Յ . 9 ։ Ի . 10 ։

Ապողոն . տես Ապուղինէոս ապուռն ։

Ապողոնեմոս , որ և Ապողոնոնիոս եպս իտալացւոց առ դիոկղետիանոսիւ՝ մս հալածանաց ժամանակին գնաց 'ի բիւթանիա . ուր բնակեալ 'ի գիւղն սիւրէ առ կուռնելիոսի առն ածասիրի՝ քարոզէր և դարձուցանէր զբազումս . մինչև շինեալ եկեղեցի յանուն հրեշտակապետին՝ ձեռնադրեաց զկոռնելիոս նախ սարկաւագ , և ապա քահանայ և եպս ։ Եւ մինչդեռ մատուցանէր զսբ պատարագ յիւրաշէն եկեղեցին՝ հասին 'ի վերայ կռա-

պաշտք

պաշտք սուսերօք և բրօք և քարամբք . և ցրուեա՛լ զժողովուրդն՝ սպանին զսբն առաջի սեղանոյն . որ և Թաղեցաւ 'ի դեօղն վանըլուր . և առ Կոստանդիանոսիւ՛ շինեցաւ վկայարան 'ի վերայ նր : Ա . Ժ . Լ-
սեպտ . 12 : Ա = Ժ . 13 :

Ապփիա կին Փիլիմոնի . տե՛ս ը Արքիպպայ : Ապփիանոս ( որ և ապիանոս կամ ամփիրիոս կամ ամփիրիոս ) , և եղբայր նր Եդեսիոս՝ էին 'ի քաղաքէն լիւկիայ առ մաքսիմիանոսիւ՛ . և եկեալ 'ի բիւրիտոն՝ աշակերտեցան սբյն պամփիւղոսի կամ պամփիլեայ վկային : Ապալան հեթանոսք զապփիանոս հրամանաւ ուրբանոսի իշխանի . և տեսեա՛լ զնա՝ զի 'ի ձայն ցնծութե երգոց խոստովան լինէր զքս , խոշտանգեցին զանիւք . օծին զմարմինն ձիթով , և հրով խանձողեցին , և քերեցին մինչև 'ի բանալ կողիցն . և ապա 'ի ծով ընկեցին . կամ ըստ այլոց 'ի տանջանս աւանդեաց զոգին : Իսկ զեդեսիոս արտաքսահմանեցին յաղեքսանդրիա 'ի մետաղս պղնձոյ . ուր տեսեալ նր զհերակլիոս իշխանն՝ զի անողորմ տանջէր զքրիստոնեայս , ապաժոյժ եղեալ՝ յարձակեցաւ 'ի վր իշխանին , և զգետնեալ զնա՝ գանեաց . վա որոյ և զօրականքն այնչափ հարին զեդեսիոս , մինչև եհան զոգին . կամ կենդանւոյն 'ի ծով ընկեցին : Ընդ սոսա գրի և Ալեքսան վկայ , զորոյ ծակեցին կուապաշտք զպձղունս , և կախեա՛լ զգլխիվայր՝ տանջեցին մինչև 'ի մահ :

Հ. ապր. 4: Յ. 2: Լ. 8:

Աւրէստէս կամ Որէստէս բժիշկ 'ի տիՃան քա- ղաքէ կապադովկիոյ առ դիոկղետիանոսիւ՛ ըմբռնեալ 'ի մաքսիմոսէ կամ 'ի մաքսիմիա- նոսէ դատաւորէ՝ յորժամ անարգեաց ըզ- կուռս , և դքս̄ ո̄ծ դաւանեաց , հարին զնա դալար բրօք , մինչև տրորիլ ո̄մ մարմնոյն , և երևիլ աղեացն : Զկնի բանտարկութե̄ դարձեալ փորձեալ վկայն՝ հարին բևեռս յոտս նր̄ , և կապեալ ը̄ ձի ամեհի՝ վարե- ցին ը̄ քարինս և ը̄ թուփս , մինչև աւան- դեաց ոգին . և զմարմինն 'ի գետ ընկե- ցին . որ գտաւ սքանչելեօք , և թաղեցաւ 'ի լերին : Հ. յուլիս . 12 , կամ 13 : Յ. Լ. նոյ . 9 :

Ասափ մարգարէ և երգիչ՝ որդի բարաքեայ՝ իշխան ղևտացւոց կարգեալ 'ի դաւթայ գը- լուխ սաղմոսերգուճաց յանդիման խորանին և տապանակին 'ի սբ̄ն սիոն . յորոյ անուն վերագրին և ոմանք 'ի սաղմոսաց : Հ. ձեռ. փետր . 3 : ո̄ր իէլ . մարտ . 2 :

Ասկղաս կամ Ասկաղոս վկայ 'ի թեբայիդայ ե- գիպտոսի՝ տանջեալ դանիւք և քերանօք յարրիանոս դատաւորէ՝ արկաւ կիսամահ 'ի բանտ : Ի նաւել դատաւորին յայն ա- ւուրս ը̄ գետն՝ աղօթէր սբ̄ն վն̄ նր̄ , չհա- սանել 'ի ցամաք՝ մինչև գրով տացէ վկայու- թի̄ ճշմարտութե̄ . յայնժամ արգելան գնացք դատաւորին 'ի վր̄ ջուրց . և գիտացեալ զզօրութի̄ն քս̄ի՝ գրեաց առ սբ̄ն , թէ ճըշ- մար-

մարտապէս մեծ է ա՛նձն քրիստոնէից, և ոչ գոյ այլ ա՛նձ բաց ՚ի նմանէ։ Զայս արարեալ յաջողեցաւ նմա երանել ՚ի ցամաք. յայնժամ համարեալ անօրինին զօրէն կախարդօղ կարօղ ջրոյ՝ ետ այրել զկօղս նր. և ապա կապեալ վէմ յոտս նորա՝ ընկէց ՚ի գետն. իսկ մարմին վկային գտաւ ՚ի ցամաքի, և ամփոփեցաւ ՚ի ձեռն հաւատացելոց։ Կ. Յ. մայ. 20։ Լ. յունվր. 23։

Ռոփէոս եպս դիւռակիոյ ՚ի մակեդոնիա՝ եր աւ տրայիանոսի՝ լուսաւոր վկյ ճշմարտութե. զոր կալեալ եարկ ՚ի բանտ ագրիկողայոս դատաւոր. և ապա զմն հարեալ կապարեայ գնտովք՝ ետ օծանել մեղու, և կախել զփայտէ ՚ի վր պարսպին ՚ի տօթաժամու, ուր մեղուք և պիծակք կրծեցին զա՛մ մարմին սբյն, մինչև աւանդեաց գոհութբ զոգին։ Կանդիդատես եղեն քաջ նահատակութեւ ոմանք ՚ի հաւատացելոց իտալացւոց, որք փախուցեալ էին անդր ՚ի հալածանաց արևմտից, Պերեգրինոս, Լուկիանոս, Պոմպէոս, Հեսիքիոս, Պապիոս, Սատուռնինոս և Գերմանոս. յայնժամ և սբ յայտնեցին զքրիստոնէութի իւրեանց. վյ չարաչար զմն հարեալ՝ ծովահեղձոյց եղեն. որք և երևեալ յետ ինն ամսոց ՚ի տեսլեան աղեքսանդրոսի եպսի՝ ցուցին զմարմինս իւրեանց ծածկեալս ՚ի ծովեզերին. և նա ամփոփեաց զե մարմնոյ սբյն աստիոսի. և զկնի շինեցաւ վկայարան ՚ի վր նց։ Կ. յունիս.

3 . և յուլիս . 6 , կմ 11 ։ Ե. յուլ . 6 , և 7 ։
Լ. յուլ . 7 ։

Ածատուր վկայ , որ և Եղիազարոս տօնելի .
հտ . Փ. 234 ։

Ատոմեանք առաջին և երկրդ՝ տօնելիք . հտ .
Ռ. 66 ։

Ատրներսեհ , որ և Ադրիանոս , որդի պրոբոսի
կայսեր , մօր և արքայ հռովմայ անուանեալ
յոմանց , ասի լինել քրիստոնեայ հանդերձ
եղբարբ կմ հօրեղբարբ իւրով դոմետիոսիւ ,
որ եղև եպս բիւզանդիոյ . որդ և յաջորդք
նր պրոբոս և մետրոփանոս կարծին լինել
որդիք ատրներսեհի կմ դոմետիոսի ։ Արդ
ատրներսեհ եկեալ 'ի նիկոմիդիա՝ խրատէր
զհալածիչ կայսրն լիկինիանոս՝ 'ի բաց կալ 'ի
կոտորելոյ զքաջ զօրականս քնի . զի 'ի պա-
կասիլ ասէ քրիստոնեայ զօրուդ՝ զօրանան
թշնամիք տրութե քո ։ Իսկ նր բարկացեալ
ետ գլխատել զերանելին մն պաշտելոյ ըղ-
քն . և դոմետիոս կմ դոմետիանոս եպս գո-
ղացաւ զմարմին սբյն , և տարեալ ամփո-
փեաց յարկիւրոպօլիս ը նշխարս ադրիանո-
սի և կնոջ նորա անաստղայ , և եւստաքէի
առաքելոյն բիւզանդացւոց ։ Հ. օգոստ .
23 , կմ 30 ։ Լ. օգ . 26 ։

Արարատեան վկայք բիւր մի՝ յիշատակին ա-
ռանց իրիք հանդամանաց վկայութե 'ի Լ.
յունիսի . 22 . այսպէս . * 'Ի լերինն արա-
րադայ նահատակութի սբց վկայից տասն
հազարաց խաչելոց ‖ ։ Փող զի ոմանք հա-

մարեցան զսոսա զօրականս լինել առ ադրի-
անոս կայսերաւ, և այլք կրօնաւորս. և զի
կարմեղականք զ՟ամ միանձունս ծի զՀլինս՝
'ի կարգել իւրեանց համարին լինել՝ սկսեալ
յեղիայ մարգարէէ, կամեցան և զսոսա առ-
դնել կարգակիցս իւրեանց. և այն՝ չորս
բիւր, ՟ո քառասուն հազար։

Արտաւոն կամ Արտաւղէոն կատակօղն՝ միմոս էր
ծաղրածու առ մաքսիմիանոսիւ. և ձևացու-
ցեալ առաջի Թ՟գրին և մեծամեծաց նր ընդ-
խաղս զնահատակութ՟ի մարտիրոսաց՝ ինքն
ձևացաւ իբրև քրիստոնեայ ածել յատեան
դատաւորի։ Այնդ փոխեաց տր զմիտս նր 'ի
կատականաց 'ի ճշմարտութ՟ի. մինչև պըն-
դագոյնս հաստատէր՝ Թէ այսուհետև ոչ է
խաղս խօսիմ, այլ ճշմարտութ՟ե խոստովան
լինիմ զհաւատս ք՟ի. զի շնորհք նորա ծա-
գեաց 'ի սրտի իմում. վ՟յ նզովեմ զկուռս
հեթանոսաց։ Եւ այնպէս 'ի մահ վիրաւո-
րեալ երանելւոյն զեերլիար և զատեանն կռա-
պաշտից՝ արկաւ 'ի հուր բորբոքեալ, և եղև
ստուգապէս մարտիրոս։ Ապր. 16։ Տօ-
նեալ, և Յ. 17։ Լ. 14։

Արտեւելէոն կինայ՝ ասիացիք տօնելիք է Պօղի-
կարպոսի. հտ. Ա. 563։

Արէադոն կամ Արէադնէ աղախին տերտուղոսի
հեթանոս իշխանի 'ի պրիմիս փռիւգացւոց՝
առ ադրիանոսիւ, ստիպեալ 'ի տօնի կռոց 'ի
մնել իւրմէ գնալ 'ի մեհեանն, չէառ յանձն.
զի քրիստոնեայ էր։ Ա՟ն որոյ յետ զանից և

բան-

բանտի և սովու՝ մատնեալ 'ի ձեռս դատաւորի՝ ընկալաւ և քերանս 'ի կախաղանի . Բայց ժողովուրդն հայեցեալ 'ի համբերութին սրբուհւոյն՝ ետուն արձակել զնա . և նա ել գնաց 'ի լեառն մօտակայ . իսկ 'ի դիմել զօրականաց զկնի նր՝ պատառեցաւ վէմն , և ընկալաւ զնա 'ի ներքս՝ լինելով գերեզման նմա : ÷ . սեպտ . 19 , կմ 21 : {} . 18 :

Լ . 17 :

Արիստակէս որդի լուսաւորչին՝ տօնելի . հտ . Պ . 481 :

Արիստակէս կմ Արիստոտակէս քահանայ աւագեկեղեցւոյ 'ի դամաս քաղաք կիպրոսի , յետ թաքչելոյ յայլս վասն հալածանաց մաքսիմիանոսի՝ յայտնութի առեալ 'ի տնէ իջանել 'ի մայրաքաղաքն և մարտիրոսանալ , եկն 'ի տաճար սբյն բառնաբայ՝ որ յելլիդրուս . և պատմեաց Դեմետրիանոսի սարկաւագի , և Աթանասի դպրի զտեսիլն . և իջեն նոքօք 'ի սաղամինա՝ դատեալ եղև 'ի սաբինոսէ դատաւորէ , և յետ սաստիկ գանից կատարեցաւ սրով . սոյնպէս և ընկերք նր զկնի այլոց տանջանաց կատարեցան . և եդան երեքին 'ի միում տապանի : ÷ . յունիս . 27 : {} . 23 :

Արտէն կմ Արտէնիոս հայր՝ տօնելի . հտ . Թ . 278 :

Արտեմոն կմ Արտեմոնէ ծերունի քահանայ եկեղեցւոյն լաւոդիկեցւոց առ դիոկղետիանոսիւ , լցեալ հոգւով և միաբանեալ ընդ

մխիթանոսի եպիսկոպոսի՝ խորտակեաց զբա-
գինս կռոց · և 'ի դիմել կոմսի տեղւոյն
'ի վերայ նորա՝ ըմբռնեցաւ այրն 'ի խիստ
ցաւոց, և աղօթիւք եպիսկոպոսին բժշկել՝
ներեաց առ ժամն ։ Այլ զկնի տարւոյ դր-
տեալ կոմսն զքահանայն արտեման 'ի կե-
սարիա՝ եդ 'ի բանտ · և դատեալ յատենի՝
ստիպէր 'ի զոհ կռոց · իսկ նա աղօթիւք կոր-
ծանեաց զկուռս ասկղեպիոսի · և հալածեց
զեօթն վիշապս բունեալս 'ի մեհենի նորա ·
ուստի հաւատաց 'ի ք͞ս բիտալիոս քուրմն ։
Յայնժամ կոմսն ետ կտրատել պատառ-
պատառ 'ի մարմնոյ արտեմանայ, և արկա-
նել 'ի հուր · և զնա հանել 'ի կատսայ եռա-
ցեալ · յորմէ ապրեցաւ սքանչելեօք · և յետ
բազում և մեծամեծ գործոց խաղաղութ͞բ
աւանդեաց զհոգին 'ի ձեռս ա͞յ ։ Ն · ապր ·
11 ։ Յ · ապր · 12 ։ Ի · հոկտ · 8 ։

ԱՐՏԵՄԻՍ վկայ տօնելի · հտ · Ի · 511 ։

ԱՐՔԻՊՊԱՍ և ՓԻԼԻՄՈՆ էին աշակերտք պօղո-
սի՝ կողոսացիք 'ի փռիւգիա · ուր առ ներո-
նիւ՛ 'ի կատարել հեթանոսաց զտօն արտե-
մեայ դիցն ( որ և անահիտ ), և 'ի դիմել 'ի
վերայ քրիստոնէից ժողովելոց յեկեղեցի,
փախեան ամենեքին, և մնացին միայն ար-
քիպպաս և փիլիմոն հանդերձ կնաւ իւրով
ԱՊՓԻԱ · զորս տարեալ կապանօք յատեան
անդրոկղի դատաւորի · և յետ գանից ար-
կեալ զարքիպպաս 'ի գուբ մինչև ցգօտին՝
հրաման ետուն մանկանց դպրոցի ծակո-
տել

տեղ զգլուխ նր երկաթի դրչօք , և ապա
քարկոծեցին : Նոյնպէս տանջեցան փիլի-
մոն և ապփիա . և 'ի բրածեծն լինել աւան-
դեցին զոգիս : Հ . նոյ . 22 . և յունիս . 5 :
Յ. նոյ. 23 : Լ. մարտ . 20 . և նոյ . 22 :
Ն.–ԻԴ Նոր վկայն բաղիշեցի՝ 'ի մանկութե
եղև քսակակար արուեստիւ 'ի սալամաստ
քաղաքի առ ոտս պարսկի ուրումն . յորմէ
'ի կարծիս եղեն ոմանք յայլազգեաց՝ թէ
յայլազգութի եկէ դարձեալ մանուկն . մինչ
զի յետ անցանելոյ իբր Է ամաց՝ տեսեալ
զնա 'ի բաղէշ այր ոմն պարսիկ , պնդէր՝ թէ
դու այլազգի էիր 'ի սալամաստ : Նահ ա-
ւագ . ես քրիստոնեայ էի և եմ և եղէց ,
ծառայ քի այ իմոյ օրհնելոյն 'ի բարձունս :
Իսկ պարսիկն ձգեաց զնա բազմութբ հա-
մակդենից իւրոց յատեան ամիրշարաֆ ամի-
րային . և նր չգտել 'ի նմա պատճառս՝ կա-
մէր արձակել . այլ 'ի հաճել զմիտս ամբո-
խին՝ յղեաց զնա առ գլխաւոր դատաւորն :
Սա իբրև եհարց զաւագ , նա համարձակ
խոստովան եղև զքն ած , և զինքն ծառայ
նր . և էր ինքն լցեալ հոգւով սբվ , և տե-
սիլ նր լուսաւոր իբրև զհրեշտակի . վն ա-
ռաւել ևս կրճտէին թշնամիք զատամունս
'ի վր նր . մինչև զեղեալ բազմութե զնո-
վաւ՝ հարին զգլուխ վկային կէսք փայտա-
կոճիւ , և այլք սրով և քարամբ . և այնպէս
կատարեցաւ յամի 1390 . պնթ . 'ի դշբի
երկրորդ շաբաթուն աղուհացից : Հ . փե-

տրվարի. 23:

Աֆեր. տես Եղիսաբէթ:

Աֆենդրոս և Պէնխոս պարսիկ վկայք. տես 'ի վարս Լաւրենտիոսի՝ ըն ~. օգոստ. 12. որ 'ի Լ. ուրոյն ևս յիշատակին՝ 'ի յուլ. 30.

Աբդոն և Սեննէն անուամբք:

Աֆրա էր կին պոռնիկ յարևմուտս յօգոստ-տայ քաղաքէ՝ որ և աւկսպուրկ, յաւուրս հալածանաց կռապաշտից. զոր կալեալ ստի-պէին զոհել. իսկ նա ոչ հաւանեցաւ, քանզի ասէ՝ քրիստոնեայ եմ: Հարց դատաւորն. որո՞յ բախտի ես, և ո՞րպիսի են վարք քո: Ափրա ասէ. չարի բախտի էի յառաջագոյն վս պիղծ գործոց իմոց՝ սատանայական խաբէութբ ծառայեալ պոռնկական գարշութեանց. այլ այժմ ազատ եմ. զի շնորհքն տյ գործեցին զիս զգաստ և պար-կեշտ: Ասէ դատաւորն. եթէ զգաստա-ցար, մատի՛ր զոհեա՛ դից ըս հրամանի թա-գաւորաց: Ափրա ասէ. պղծութի՛ է պաշ-տել և զդիս, քան զորս ոչինչ է աղտեղա-գոյն. և իմ հայեցեալ՝ թէ որպէս ընթա-ցակից են նք աղտեղի գործոց, հեռացայ 'ի նոցանէ, և ընթացայ առ փրկիչն քն՝ որ հատանէ և զարմատս մեղաց, մինչև ընդ-շունս դատել և զորս հայէն 'ի կին ցանկու-թեամբ: Սպառնայր դատաւորն՝ չարաչար տանջանօք ապականել զգեղ նր, և կոր-ծել 'ի կենաց. իսկ ափրա ասէ. հաւա-տամ 'ի քն, որ վասն բազում մարդասի-

րու

բուն խորոյ հայեցաւ յիս, զի տացէ զօրու-
թիւն մարմնոյս իմոյ ժուժկալել տանջա-
նացդ քոց. որպէս զի բարի գործովք լցայց՝
լցեալս երբեմն չարեօք, և հաշտեցուցից
զնա՝ զոր բարկացուցի, և ուրախ արարից
զհրեշտակս՝ զորս տրտմեցուցի: Բարկա-
ցաւ բռնաւորն, և ասէ. ապտակեցէ՛ք զե-
րեսս դորա սաստկագոյն. և ասացէ՛ք, թէ
մի՛ ը̃դդիմանար հրամանաց թ̃գրին: Եւ այն-
չափ հարին զերանելի կինն, մինչև լաւ տե-
սողաց: Ասէ դատաւորն. տեսանե՞ս ա՛փրա,
զի լայ վ̃ն քո քաղաքս. այդքան սիրեն ըզ-
քեզ: Ափրա ասէ. 'ի բազում պոռնկութ̃ե
իմում արբանեակք սատանայի՝ որք էին իմ
գործակիցք, ուրախ լինէին, և հրեշտակք
տրտմէին. և այժմ ն̃ք լան, և հրեշտակք
յերկինս ցնծան. արդ զի՞նչ կամիս՝ արա՛.
ես քրիստոնեայ եմ: Դատաւորն ասէ. ա՛յ
անամօթ զոհեա՛ ա̃ծոյն. ապա թէ ոչ՝ երդ-
ուեալ 'ի նմ̃, առ սակաւ սակաւ հրով վառ-
նեմ զքեզ: Ափրա ասէ. և ես երդմնեցու-
ցանեմ զքեզ 'ի թագաւորն քո, զի հրա-
մայեսցես այրել զմարմինս իմ աղտեղեալ
մեղօք. զի ո՞չ անդրի պղնձի բազմաժամա-
նակեայ հնացեալ և ժանգոտեալ՝ նորոգի
'ի ձեւն հրոյ և փայլէ, նոյնպ̃ս և զիս հրա-
մայեա՛ հրով այրել, զի ամբիծ և անարատ
պատարագ մատիցէ մարմինս իմ 'ի ք̃ս: Եւ
զարմացեալ դատաւորին ը̃ պնդութ̃ի խոս-
տովանութ̃ե ն̃ր՝ հրամայեաց կապել զձեռս
և

և զոտս նր, և քարշել արտաքոյ քաղաքին մինչև 'ի գետեզրն. և անդ այրել զնա կենդանւոյն։ Եւ այսպէս կատարեցաւ հրով որ կինն ափրա 'ի քս յս 'ի տր մեր. որում փառք ընդ հօր և ամենասբ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Ղ՛աւընտ. հյ.

Բ. ջհզ. և Օ. մլր։

Սա է, որ յիշատակի 'ի Լ. օգոստ. 5. * Յօգոստա վինդելիկայ կատարումն սրբուհւոյն ափրայ վկայուհւոյ, որ գոլով կին հեթանոս՝ դարձաւ 'ի քս վկպութբ սբյն նարկիսոսի եպսի, և յեմ տամբ իւրով մկրտեալ, վս խոստովանութե քսի մատնեցաւ 'ի հուր ||։

Բ

Բաբելացւոց հայրապետ տօնելի. հտ. Ն. 26։

Բաբելացւոց ծեր տօնելի. հտ. Բ. 109։

Բագարատ հայրապետ տօնելի. հտ. Փ. 130։

Բագոս ընկեր սարգսի տօնելի. հտ. Գ. 140։

Բագոս աբեղայ՝ նոր կմ կրտսեր բակքոս կոչեցեալ, էր 'ի կողմանց եգիպ 'ի կայսերութե կոստանդեայ և եռինեայ, մի յեօթն զաւակաց առն ուրումն դարձելոյ յայլազգութիւն. յորոյ 'ի մեռանելն՝ մայր մանկանցն ուսոյց նց անդրէն զքրիստոնէութի. և մի 'ի նոցանէ դահակ կմ դելաւ անուն՝ չոքաւ 'ի վանս սբյն սաբայի, և մկրտեալ կրօնաւորեցաւ ժբ ամաց, և անուանեցաւ բագոս.

դոս. և յետ կալոյ առ ժամանակ մի՛ եկեղ
՚ի տուն՝ մկրտեաց զհնդեսին եղբարս իւր.
իսկ վեցերորդն՝ որ մնաց յայլազգութե՛ ,
մատնեաց զբագոս. զոր կալեալ այլազ-
գեաց՝ տարան զանիւք և Թշնամանօք առ
ամիրայն. որ և ետ ապտակել զնա. իսկ նա
ասէ. ալէ՛լուիա ալէ՛լուիա, փա՛ռք քեզ ա՟ծ.
և զոր ինչ ասէր ամիրայն, բագոս զնոյն եր-
կրորդէր օրհնութի՟. մինչև յետ բազում
խոշտանգանաց հատին զգլուխ երանելւոյն.
զոր բարձեալ Թաղեցին քրիստոնեայք հան-
դէպ սրբոյն սիոնի և ս՟բ փրկչի վանացն և
ննջման ա՟ծածնին յարևմտից կուսէ: Տօ.
դեկտ. 19, կ՟մ 18: Յ. 17:

Բառնաբաս առաքեալ տօնելի. հտ. Ա. 88:

Բասս կ՟մ բասսա. տե՛ս Սասա:

Բասիլիդէս տօնելի ը՟ բասոսի. հտ. Բ. 133:

Բասիլիսկոս և Բասիլիոս տօնելիք. հտ. Ա.
546. և 562:

Բասիլոս կ՟մ Բասիլէոս արշիմանտրիտ ՚ի բիԹ-
լապատայ պարսից՝ յերևելի տանէ, զկնի
մահու ծնողացն բաշխէ աղքատաց զինչս
իւր, և կրօնաւորեալ՝ կարգի հայր վանաց.
զոր կալեալ Եօբնաշէրդօտ՝ տարան առ շա-
պուհ արքայ: Նա յոչն հաւանիլ նմ՟ պաշտել
զարեգակն և զհուր՝ արկին ՚ի բանտ. և
յետ չորից ամսոց տարան ՚ի գլխատել. և
էր դահճին՝ ներսան մայրաս ուրացող: Որ
տեսեալ ս՟բ հօրն բասիմոսի՝ զի այլադու-
նեալ էր յահէն, սկսաւ արտասուօք յիշե-
ցու-

ցուցանել նմա զահաւոր դատաստանն քնի · իսկ թշուառականն այն ոչ եկն 'ի զղջումն , այլ դողալով եհար չորիս զպարանոց սբյն բասիլիոսի , նոյնպէս և զեօթանց աբեղայից · և այնպէս կատարեցան 'ի քս յամի տն իբր 375 · իսկ ներսան ըմբռնեալ 'ի գործս չարութե խորոյ՝ սրամահ կորեաւ : · ապր ·

4 : Յ · 9 :

Յ[illegible] տօնելի · Հտ · Կ · 13 :

Յ[illegible] Ճգնաւոր՝ էր յազգէ պարսիկ 'ի պերգամ գեղջէ , զաւակ քրիստոնէից՝ սնեալ բարեպաշտութե · և վս քսի թողեալ զամ ինչ՝ եմուտ 'ի վանս խստակրօն միանձանց 'ի բիզագաղոն · և զկնի երեսնամեայ ճգնութե յանկացեալ մարտիրոսութե , յորժամ փախեան վանականքն յերեսաց հալածչաց՝ ինքն միայնիկ եկաց 'ի վանս · և ըմբռնեալ ածաւ առ յուղիտ քաղաքապետ · և յոչ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական և հրոյ՝ տասն արք քարշեցին զերկոսին ձեռս բատոյ՝ հինգ յաջմէ և հինգ 'ի ձախմէ , մինչև փրթուցին յանձնէ զերկոսին բազուկս թևօքն հանդերձ · և յորսայս արկեալ՝ եաուն զայլ ևս քստմնելի տանջանս · և 'ի վախճանի հատին զգլուխ սբյն · զորոյ զմարմինն յափշտակեաց դանիէլ քահանայ , և տարաւ 'ի մծբին · և որ աբրահամեանս քաղաքին եդ գնա պատուով 'ի տապանի · յորմէ եղև ասել ոմանց՝ թէ 'ի մծբին իցէ նահատակեալ :

Հ. ապր. 29: Յ. մայ. 1:

Բարաղամ անտիոքայի տօնելի. Հտ. Բ. 124:

Բարբաշմին եպիսկոպոս պարսից ՚ի սղան և ՚ի տիսբոն՝ քեռորդի և յաջորդ սրբոյն շմաւոնի, ածաւ յատեան շապհոյ իբրև դիմակաց դե-նին պարսից. խոստանայր նմա Թգրն ինչս բազում՝ եթէ յանձն առցէ դառնալ ՚ի մո-գութի. և յանարգել սրբոյն զնմ՝ մերկա-ցուցին զնա, և չարաչար տանջեցին, և ար-կին կապանօք ՚ի բանտ՝ սովալլուկ նեղեալ զամիսս մետասան. մինչև գլխատեցին զե-րանելին հանդերձ վեշտասան աշակերտօք կամ ընկերօք, յամի իբր 346: Հ. յունիս. 10:

Ա. սոր. առ եւոդիոսի:

Բարդեղա կամ Բարդէս եպս պարսից ՚ի նոյն ժամանակս շապհոյ՝ դաւանեալ զքս յատե-նի արքային՝ հարաւ յերկար փշալից բրօք. զորոյ և զմկէրս շփեցին խորգով. յետոյ ե-դին զոտս նր ՚ի մամուլս հիւսանց, և խոր-տակեցին: Եդին խունկ ՚ի ձեռս նր՝ ար-կանել ՚ի հուր, զոր պաշտէին պարսիկք. և ՚ի ցրուել սրբոյն զխունկն յերկիր՝ ետ թա-գաւորն քայքայել զմատունս ձեռաց նր: Այրք երեքտասանք յարքունեաց տեսանելով զհամբերութի եպսին՝ դարձան ՚ի քս. և բանտարկեալ՝ գաղտ կատարեցան ՚ի տր: Իսկ վերջ եպսին զլեզուն ընդ ծոծրակն հա-նին վս համարձակ յաղթահարելոյ զԹգրն. և իբրև եկն առ նա ձայն յերկնից՝ հաւա-տացին անձինք յհզ. և մկրտեցան արեամբ իւ-րեանց.

րեանց . ապա գլխատեցաւ և քաջ հոյլին : Յ . հոկտ . 19 , կամ 26 : Ճառընտ . Ա . ճժթ :

Բարդիշոյ , Իսահակ , և Շմաւոն՝ պարսիկ քրիստոնեայք , իբրև խոստովան եղեն համարձակ զքն ած առաջի շապհոյ արքայի , ասէ ցնս թգւրն . երդնում 'ի դիս՝ չարաչար տանջել զձեզ . ասեն երեքին վկայքն . և մեք երդնումք 'ի ճշմարիտն ած մեր՝ մեռանել , քան լսել քեզ . յայնժամ ետ ծակել զպնչունս նց , և կախել . բրածեծ արար զնս . ներքեայ բանտին և անսուաղութբ . եարկ և 'ի հուր . և 'ի պահել տն զնս՝ ետ հատանել զգլուխս նցյն : Յ . մայ . 16 :

Յ . 15 :

Բարթողիմէոս առաքեալ՝ մի յերկոտասանից . տես 'ի տօնելիս . Հտ . Թ . 425 .

Բարթողիմէոս մի յեօթանասնից տօնելի ընդ փիլիպպոսի առաքելոյ՝ հանդերձ մարիամնեաւ . Հտ . Բ . 485 :

Բարուք մարգարէ՝ որդի Ներեայ , և Աբեդմելէք կամ Աբդեմելէք ներքինի եթեովպացի՝ աշակերտք երեմիայ մարգարէի , գործակիցք նր և չարչարակիցք . որոց գոյութիւն յանձանօթի անդ է : Յ . մայ . 1 :

Բարսեղ հայրապետ տօնելի . Հտ . Գ . 324 :

Բարսամ եպս եդեսիոյ տօնելի . Հտ . Ա . 371 :

Բենեդիկտոս աբբայ՝ հրեշտակակրօնն նց հայրն մեր , օրհնեալ անուամբ և արդեամբք , որ

'ի

'ի գաւառէն Հռովմայ 'ի Նորկիա քաղաքէ , ծնեալ յամի տն 480 · յազնուական և 'ի բարեպաշտ ծնողաց , և սնեալ ժուժկալ վարուք ։ Յետ կալոյ առ ժամանակ մի 'ի Հռովմ յուսումն՝ եթող զն և զծնօղս իւր 'ի դեռաքոյս հասակի , և առանձնացաւ յանապատն սուբլակ , օգնական իւր գտեալ զմիայնակեաց ոմն Հռոմանոս անուն , որ ընծեպ այց առնէր , և բերէր նմա կերակուր · Անդ դադարեալ 'ի խորափիտ այրի միում սքանչելի ճգնութբ և ընտանութբ ը ամ՝ անծանօթ էր 'ի մարդկանէ զամս երիս · մինչև երեւ մի ազդեցն 'ի տնն յաւուր զատկի՝ եբեր առ նա 'ի խորտկաց իւրոց · և յայնմ օրէ գային առ նա մարդիկ 'ի գտանել զհոգևոր մխիթարութիւն ։ Երևեցաւ նմա երբեմն դևն 'ի կերպարանս ագռաւու , և զարթոյց 'ի միտս նր խորհուրդս աղտեղիս · յայնժամ բենեդիկտոս մերկացաւ և թաւալեցաւ 'ի մէջ տատասկաց , մինչև խոցոտել զնմ մարմինն և արեամբ շաղախել · և յայնմ հետէ ազատ գտաւ 'ի չար խորհրդոց ։ Էր յայնժամ իէ ամաց · և եկաց 'ի նոյն ճգնութե նոյնչափ ևս ամս ։ Եկին առ նա աբեղայք ոմանք , և հարկեցուցին զնա լինել իւրեանց առաջնորդ · այլ ոչ կարացեն տանել խստակրօնութե նր և անաչառ յանդիմանութեն՝ մատուցին նմա դեղ մահու · և 'ի խաչակնքել սրբյն նախքան զըմպելն՝ հերձաւ ամանն , և հեղաւ մահադեղն ։

դեղն ։ [illegible] դարձաւ անդրէն յայրն իւր , բազումք ընթացան առ նա՝ աշակերտիլ նմա . որով ՝ի սուղ ժամանակի կանգնեցան երկոտասան վանս . և հիմնարկեաց յարևմուտս զկարգ կրօնաւորութե՟ան բարեկարգութե՟ , սահմանեալ լուսաւոր կանոնս ։ Ապա եկեալ ՝ի կասսինոն՝ կործանեաց ըզբագինն ապողոնի , և այրեալ զանտառն՝ շինեաց անդ մատուռն յանուն ս͞բյն մարտինոսի , և զյարկն կոչեցեալ ս͞բյն յովհաննու . և զբնակիչս տեղեացն կրթեաց յա͞ծպաշտութի . ունէր և զշնորհս մարգարէութե ։ Լուաւ զհամբաւ ս͞բյն՝ տոտիղաս բռնաւոր արքայ գթաց . և ՝ի փորձել զնա՝ յղեաց առ նա յանուն իւր ՝ի ձև զարդուց իւրոց ուրուք թ͞գր զվինակիր իւր թիկնապահօք համդերձ . զոր տեսեալ ս͞բյն՝ ասէ . ՝ի բաց հան որդեակ , ՝ի բաց հան յանձնէդ զայդ ձև , զի չէ քո , այլ՝ տ͞ն քո ։ Պռուշակեաց տոտիղասայ և զմահ ն͞ր զկնի ինն ամաց և պէսպէս անցից ։ Արար և զայլ բազում գործս սքանչելիս . մինչև յարուցանել և զմեռեալ ։ Պատմեաց յառաջագոյն և զփոխումն իւր . և վեց աւուրբք յառաջ ետ բանալ ինքեան գերեզման . և յաւուրն վեցերորդի մտեալ յեկեղեցին , և հաղորդեալ ՝ի ս͞բ խորհրդոյն՝ աւանդեաց զհոգին ՝ի ձեռս ա͞յ ՝ի նմին կասինեան լերին յամի . 543 . կամ 536 ։ [illegible]ւուր վախճանի ն͞ր՝ որ էր հասարակած գարնայնոյ , տեսին երկու միայնակեացք ն͞ր ՝ի

զանազան տեղիս տեսիլ, զի յերկրէ յեր-
կինս կանգնեալ էր թափոր լուսազգեստ ա-
րանց՝ ոսկեհուռն հանդերձիւք և պայծառ
լապտերօք. և եղև ձայն՝ որ ասէր. այս է
ճանապարհն, զոր յերկինս ընթանայ սի-
րելի ծառայն այ բենեդիկտոս: Եւ յայնմ
հետէ կարգն բենեդիկտեանց փայլեաց միշտ
երևելի արամբք 'ի սրբութե և յիմաստութե.
յորոց և բազմք ընտրեցան յեպսկոպոսութի կողմանց
կողմանց, ոմն և ոմանք յաթոռ հայրապե-
տութեն հռովմայ. զոր օրինակ է և յաւուր
յայսմիկ պիոս ե՛՝ այրն սքանչելի, որում ե-
ղէ արժանի և ես երբեմն լինել պաշտօ-
նեայ: Իսկ երանելի հայրն մեր մեծ աբ-
բայն մխիթար 'ի կանգնել անդ զմերս միա-
բանութի յանուն կարգի սբյն անտոնի աբ-
բայի՝ ընտրեաց և զկանոնս սբյն բենեդիկ-
տոսի աբբայի, զորս և վաղագոյն թարգ-
մանեալ էր սբյն ներսեսի լամբրոնացւոյ:

Ն. մարտ. 22: Յ. Լ. մարտ. 21:

Ընդ սբյն բենեդիկտոսի յիշատակի և սըր-
բակրօն քոյր նր Սխոլաստիկէ կուսան ճգնա-
ւոր՝ ծաղկեալ ամ առաքինութբ. առ որ
միանգամ 'ի տարւոջ գայր եղբայր նր, և
պարապէր 'ի հոգևոր խօսակցութիս և 'ի
քննութի սբ գրոց ը նմա: Ի միում նոճա-
գի աղաչէր սխոլաստիկա զեղբայր իւր ար-
տասուօք՝ մնալ զգիշերն զայն, և խօսել ը
նմա զերկնային ուրախութեց: Իսկ սբն բե-
նեդիկտոս. արտաքոյ խղճին իմոյ ոչ կարեմ

օթեւս քո՛յր իմ։ Եւ կոյսն աղաչեաց զա̄ծ․ եւ պարզութի օդոյն փոխեցաւ 'ի կարկուտ եւ 'ի յորդ անձրեւ․ որով արգելաւ յերթալոյ նք հայրն եւ որ ը̄ նմա եղբարքն․ եւ ասէ․ զի՞նչ է այս՝ զոր արարեր քո՛յր իմ։ Ասէ սրբուհին․ աղաչեցի զքեզ, եւ ոչ լուար ինձ եղբայրդ իմ․ աղաչեցի զա̄ծ, եւ լուաւ ինձ փութապէս։ Յետ կատարելոյ այնուհետեւ զգիշերն ողջոյն 'ի բանս հոգեւոր մխիթարութե, դարձաւ բենեդիկտոս 'ի տեղի իւր․ եւ իբրեւ աւուրք երեք անցին 'ի վ̄ն, տեսանէր զհոգի քեռն իւրոյ թռուցեալ յերկինս իբրեւ զաղաւնի․ եւ իմացեալ զփոխումն նր̄՝ ետ բերել զմարմին նր̄ նք, եւ թաղեաց 'ի գերեզմանի՝ զոր վ̄ն իւր էր պատրաստեալ։

Ղ․ մարտ․ 22։ Լ․ փետր․ 10։

ԲԵՆԻԱՄԻՆ սարկաւագ տօնելի․ հա․ Բ․ 216։

ԲԵՆԻԶԻ, որ եւ ԲԵՆԻԶԻՈՍ ՃԻՆՃԻԴՈՍ փլորենտացի՝ այն ինչ էր նորածին մանուկ հնգամսեայ, խօսել սկսաւ սքանչելեօք առ մայր իւր՝ տալ ողորմութի ծառայից ածածնի։ 'Ի պատանեկութե կրթեալ յուսումն գիտութեց 'ի փարէզ գաղղիացւոց՝ բանիւք եւ օրինակօք յորդորէր զնս յածպաշտութի։ Եկեալ 'ի հայրենիս՝ ընկալաւ յայտնութի 'ի նք ածածնէ մտանել 'ի կարգ ծառայից իւրոց, որ դեռեւս էր կառուցեալ․ եւ յետ ձգնելոյ խստամբերութբ 'ի լեառն սենարեայ, եւ առաւել՝ մտածութբ չարչարանաց փրկչին, շրջեցաւ 'ի քարոզութի 'ի բազում

տե-

տեղիս . և սահմանեաց զեղբայրութի եօթն
ցաւոց սբ. ածամօր : 'Ի տալ զհանդերձ իւր
յողորմութիւն մերկ աղքատի բորոտի՝ իսկ
և իսկ բժշկեցաւ այրն : Յետ բազում երևե-
լի գործոց սրբութե և առաքինութե կասկած
առեալ՝ եթէ կամին զնա ընտրել 'ի հայրա-
պետութի հռովմայ , թաքեաւ և ոչ երևե-
ցաւ ուրեք , մինչև լուաւ զնստիլ զրիգորի
տասներորդի : Վախճանեցաւ յամի 1285 ,
զիրկս արկեալ զխաչելութե տն , 'ի դու-
տերդոն քաղաքի , որ և դօտի . և 'ի տապա-
նէ նր եղեն և լինին սքանչելիք 'ի վր ամ
ախտաժետաց , կուրաց և կաղաց . պատմի
և յառնել մեռելոց : Լ. օգոստ . 23 :

Բեռնարդոս աբբայ պայծառաձորոյ՝ էր գաղ-
ղիացի 'ի պոռկոնեայ գաւառէ՝ ծնեալ 'ի
փոնտանոն . հայր նր տեսկեղինոս զօրա-
կան , և մայրն աղկիդիա . որոց եղեն վեց
ուստերք՝ առ հասարակ կրօնաւորեալք . և
մի դուստր՝ որ յետ մտանելոյ 'ի կարգ ծի՝
առանձնացաւ 'ի վանս կանանց : Մինչև
ծնել էր բեռնարդոսի՝ թուեցաւ մօրն տե-
սանել յերազի զշուակն հաչել ոմն սկունդ .
և ապա լուաւ յառնէ սբյ ասել , թէ շուակ
քո լինիցի պահապան տանն այ ըդէմ թըշ-
նամեաց եկեղեցւոյ , և հզօր քարոզ բանին
այ : 'Ի մանկութե ցաւ գլխոյ կալաւ զբեռ-
նարդոս . և ոմն 'ի պառաւանց եկեալ՝ առ-
նէր շշիւնս և կարդայմունս 'ի վր նր . 'ի
բաց ոստեաւ մանուկն . ոչ կամիմ ասէ այդ-

պխսի դեղ մնոտի և յիմարական . և ինքն դիմեալ յաղօթս՝ փութապէս առողջացաւ : ՚Ի ճրագալուցի ծննդեան ՚ի հսկել բեռնարդոսի յեկեղեցւոջ՝ յանկարծակի երևեցաւ նմա զհասարակ գիշերաւ մանկացեալն յս̃ . յորմէ լցեալ անպատում ուրախութ̃՝ ստէպ յիշէր զայն խորհուրդ անճառ : Տասնամեայ էր բեռնարդոս ,յորժամ փորձել կամեցաւ զնա դեւն՝ մուծանելով ՚ի սենեակ նր̃ զկին մի . իսկ ս̃ն գոչեաց , գո́ղք գո́ղք . յայնժամ ընթացան ընտանիք տանն , և կինն կորեաւ ամօթով : Յայլում նուագի կրեալ զփորձութ̃ի մարմնոյ ՚ի տեսոյ կնոջ՝ ընկէց զանձն ՚ի լիճ մի սառնասառոյց ՚ի ձմերայնի . և այնպէս յաղթեաց : Եւ զի ինքն իսկ բեռնարդոս էր գեղով վայելուչ , եդ ՚ի մտի մտանել ՚ի կրօն՝ զի հեռի լիցի ՚ի տալոյ և յառնլոյ զգայթակղութ̃ի . և նախ առանձնացեալ ՚ի տան լռութ̃ , աղօթիւք և ընթերցուածովք , զկնի վախճանելոյ մօրն գնաց եմուտ ՚ի կարգն կիստերսական կոչեցեալ , զոր հնգետասան ամօք յառաջ հիմնեալ էր ս̃բ աբբայն հռուբերտոս ը̃ կանոնաւ ս̃ր̃յն բենեդիկտոսի՝ յաւելուածով իրիք իրիք բարեկարգութ̃եց . իսկ բեռնարդոս առաւել պայծառացոյց զայն՝ որպս երկրորդ հիմնադիր : Երբև կամեցաւ և աւագ եղբայր նր̃ գուիտոն մտանել ՚ի նոյն կարգ , ասէ ցկրտսերն յեղբարս՝ որ խաղայր ընդ մանկունս . մ՛նարդէ ( զի այս էր անուն նր̃ ) ,

նր ), ահա մեք մտանեմք 'ի կրօն , և տմ
ինչք մեր քեզ մնասցեն ։ Պետի եւ մանուկն
զգօն . և որ իրաւունք իցեն այս , ձեզ առ-
նուլ զերկինս , և ինձ զերկիր թողուլ . և
այնպէս յետ ոչ բազմաց հրաման առեալ 'ի
հօրէն՝ հետևեցաւ և մինարդոս զկնի եղ-
բարց իւրոց 'ի վանս ։ Իսկ սբն բեռնարդոս
էր ամաց քսան և երից 'ի կրօնաւորիլ իւ-
րում յամի տն 1113 ։ Այնչափ միայաւ ե-
րանելլն ընդ այ , մինչև 'ի վեր լինել քան
զզգալիս և զզգայութիս . զի զկնի տարւոյ
նորընծայութեն իւրև հարցաւ , թէ որպի-
սի իցէ յարկ սենեկի իւրոյ , ոչ գիտաց պա-
տասխանի տալ անգամ , արդեօք ընդ յար-
կաւ նստի , եթէ յանյարկ խղկան . որպս և
ոչ զայն գիտաց , եթէ երե՞ք իցեն պատու-
հանք եկեղեցւոյ , եթէ և ոչ աւելի քան
զմի ։ Այսպէս էր բոլորովին յամս պարա-
պեալ . և ստէպ հարցանէր զանձն . բեռ-
նարդէ առ ի՞նչ եկիր 'ի կրօն . որով ևս քան
զևս կրթէր 'ի կատարելութի անդր . կան-
խէր յամ գործս վանաց , և դնէր 'ի մտի ,
թէ ինքն ոչինչ առնէ , այլ այլք առնեն
զամ ։ 'Ի հրաժարիլ յԾէ նաև Ծակաւ եղ-
բարց բեռնարդոսի՝ մտին և կանայք նոցա
'ի վանս կուսանաց ։ Եւ 'ի բազմանալ վա-
նորէից 'ի կիստերսեան կարգէ՝ ձեռն արկ
հուրբերտոս աբբայ շինել և վանք մի 'ի տե-
ղին կոչեցեալ քլարավալլիս , ըստ պայծառա-
ձոր , 'ի լինգոնն նահանգի՝ կեղտ անուանել

գաղղիոյ . և կայոյց աբբայ տեղւոյն զբեռ-
նարդոս . ուր բազում աշխատութի կրեաց
նա խուրովքն հանդերձ յերեսաց աղքատու-
թե մինչև 'ի լրումն շինուածոյն . այլ ար-
թուն հսկողութի նր և համբերութիւն և
ձգնութի էր առաւել շինութիւն կրօնին ։
Ոմ թեթև պակասութիս եղբարցյան-
դիմանէր և ուղղէր՝ 'ի ննջել և 'ի յառնել .
և ասէր . ոմ պակասուէ յառաջ գայ յան-
հոգութե ։ Եւ որ ոք ցանկայր մտանել 'ի
վանս նր , ասէր ցնա . տե՛ս , զի 'ի կրօնն ու-
նի մտանել հոգի և եթ՝ թողլով զմարմինն
արտաքոյ ։ Գովէր զզգեստս խոշորս և հնա-
տիս , այլ կշտամբէր զորս զգենուին պատա-
ռատունս և աղտեղիս , ասելով . աղքատու-
թիւնն է ոյ հաճոյական , և ո՛չ անվայելչու-
թին ։ Իսկ քարոզութի սբյն առ տնին և
հրապարակաւ՝ էր լի հոգւով , խորին վար-
դապետութբ , և համեղ բանիւք . մինչև
կոչել նմա մեղրածորան վրդպ՝ 'ի գիր և 'ի
բան ։ Հարցեալ՝ թէ ուստի՞ է այդ քո իմաս-
տութի , ետ պնին , յաղօթից և 'ի մտա-
ծութեց՝ ակնարկելով 'ի դաշտս և 'ի մայ-
րիս . զի և ո՛չ գոյր ասէ իմ վրդպ այլ , բայց
միայն ածաշունչ գիրք ։ Ի միում նուագի
հոգևոր զրուցաց անկաւ 'ի միտս նր բան
ինչ գեղեցիկ , և կամէր պահել զայն այ-
լում երևելի պահու քարոզից . այլ լռեաւ
'ի ներքուստ ասել , եթէ ոչ խօսեսցիս ըդ-
տանեաւն 'ի ժամուս , և ո՛չ յայլում ժամու

տա-

տացի · և իսկոյն խօսեցաւ ։ Ի քարոզելն երբեմն էանց ը̅ մտս ն̅ր խորհուրդ ամբարհաւանութե՛, թէ տեսանե՞ս զանթիւ բազմութի՛ ունկնդրացքոց · յայնժամ ընդհատեաց առ վայր մի զբանն, մինչև կամէր կարծել իսպառ · այլ 'ի մտս եկեալ՝ եթէ 'ի գիրՀն է այն 'ի թշնամւոյ բանին ո̅յ, ասէ · ո՛չ վ̅ս քո սկսայ, և ո՛չ վ̅ս քո թողում · և յառաջ տարաւ զքարոզն ։ Հայրն բեռնարդոսի լսելով և տեսանելով զյառաջադիմութի զաւակաց իւրոց 'ի ն̅ր վարս՝ հրաժարեցաւ և ինքն յա̅շ · և մտեալ 'ի կրօն՝ անդ կատարեաց զկեանս սրբութե̅ ։ Մին յեղբարց բեռնարդոսի գերարդոս անուն տնտես վանայն ասէ ցնա վարանմամբ · չունիմ ինչ այսօր 'ի պէտս կերակրոյ եղբարց և այլ իրաց կարևորաց · պխնի եա սե̅ն · մի՛ ինչ հոգար, յուսա՛ յա̅ծ՝ որ ոչ թողու զծառայս իւր · և ինքն առանձնացաւ յաղօթարանն ։ Նա ահա եհաս 'ի դուռն վանիցն տիկին մի մեծ · եա կոչել զաբբայն բեռնարդոս, և ասէ ցնա · ա՛ռ զօրհնութիւս զայս, և աղօ՛թս արա հա՛յր վ̅ս առն իմոյ հասելոյ 'ի դլունս մահու · և նա ասէ · երթ 'ի տուն քո, և ը̅ հաւատոյ քոց գտցես զայր քո ողջացեալ · և եղև այնպէս ։ Գուլիելմոս եպս սերտ բարեկամ բեռնարդոսի տեսեալ զնա տկարացեալ յոյժ հիւանդութե̅ յերեսաց բաղում ճգնութեց՝ եա տանել զնա 'ի գիւղ մի՝ զիւրել անձին փոքր մի · և կարգեաց

Նմա զոմն 'ի գեղջէից 'ի սպասաւորութ՟ի. որ հանդիպեցաւ շինականագոյն 'ի գեղ֊ջուկս. բայց բեռնարդոս հնազանդ լինէր նմա յամի իբրև մեծաւորի ։ Այդ իբրև եկն եհարց զբեռնարդոս ոմն 'ի բարեկամաց, թէ որպէս կեաս հայր. պնդին ես սէ՟ն, յոյժ բարւոք. զի որ ցայսվայր հնազանդէի բա֊նաւորաց, ուսայ հնազանդ լինել և անբա֊նի. և թերևս պակասեալ է իմ 'ի նոսին, վ՟ այն կամք եղեն տ՟ն՝ զի այժմ զթերին լցից ։ Իբրև դարձաւ 'ի վանս, ո՟չ թէ հան֊գիստ եգիտ 'ի շէնս, եւ զանձն յառաւել ձգնութ՟ի, 'ի պահս, և յոտնակայութիւն տքնութ՟ե. մինչև երբեմն անկանիլ յերկիր իբրև զմեռեալ. ունէր և ցաւ ստամոքաց, և 'ի տանջանս էր նմա տ՟մ կերակուր. այլ ինքն յամի զուարթ. զգենոյր 'ի ներքոյ և խարազն խոշոր. բայց իբրև եղև այլոց տե֊սանել զայն, 'ի բաց եհան յանձնէ վաղվա֊ղակի ։ Յասել ոմանց՝ թէ խիստ ձգնութ՟ի բերէ զխօթութ՟ի, ասէր. լաւ է կրօնաւո֊րաց լինել երբեմն հիւանդ. զի բազում շահ տեսեալ է իմ 'ի հիւանդութ՟ե. ըստ այնմ, յորժամ մարմինս տկարանայ, հոգիս զօրանայ ։ Ստէպ յղէին առաջնորդք եկեղե֊ցեաց զբեռնարդոս 'ի ծանր ծանր պէտս ժո֊ղովրդեանն ի՟յ. որով առաւել ևս հանդի֊սացաւ սրբութ՟ի և իմաստութ՟ի նորա ։ Ի գնալ երբեմն գրաստու յուղի երկար ը՟ եղ֊բարս՝ իբրև խօսէին ն՟ք զձէն, առ որով

անցանէին զօրն ողջոյն , բեռնարդոս հարցանէր , զո՞ր լի՛ծ ասէք ։ զի ցայնվայր խորհուրդք նր էին առ ած , և չէր նր տեսեալ զլի՛ծն ։ և յայսր ամի մր գանգատէր ստէպ զցնդմանէ մտաց իւրոց յաղօթս , և զանհաստատութիւն սրտից մարդկան ։ Օ այն լուեալ ուրումն 'ի շինականաց՝ ասէ ։ զի՞նչ ցնդումն իցէ մտաց , զի ես յորժամ յաղօթս կամ , ո՛չ խորհիմ ինչ այլ ։ Ասէ ցնա սրբն ։ եթէ կարասցես զմի հայր մր ասել՝ առանց ցրուելոյ մտացդ յօտար խորհուրդս , քեզ տաց 'ի պարգև զձորին՝ որ է ը ինև ։ Ուրախութբ սկսաւ այրն ասել զհայր մերն ։ այլ չև 'ի կէսն հասեալ՝ ասէ ը միտս , արդեօք 'ի տալ ինձ զձորին՝ տա՞յ և զզարդս նր ։ և այնչափ զբաղեցան միտք նր յայս խորհուրդ, մինչև խոստովան եղև զարդարն ։ Իերին երբեմն առ բեռնարդոս եկին մի դիւահար ։ և նա ասաց տանել 'ի տաճար սրբյն սիրոսի ։ և իբրև չեղև ինչ օգուտ , ածին անդրէն առ բեռնարդոս ։ իսկ դևն սկսաւ այպանել զսրբսն , և ասել ։ ո՛չ սիրիկն և ոչ բեռնարդիկն կարէ հանել զիս ։ Յայնժամ ասէ սրբն ։ ո՛չ սիրոս և ո՛չ բեռնարդոս հանէ զքեզ , այլ հանելով հանցէ տր յս քս ։ և զդյգ ը բանին տանջեալ՝ ել այսն չար ։ Ոմն յազգականաց սրբյն ել 'ի կրօնէ նր , և գնաց յայլ թուլագոյն վանս ։ զայս լուեալ սրբյն՝ մինչդեռ էր բացօթեայ 'ի դաշտի , գրեաց առ նա գիր յորդորական՝ 'ի ժամուն , յորում տեղայր անձ-

րև

րեւ յորդ․ այլ գիրն մնաց անթաց։ Այլ ոմն
կրօնաւորեալ 'ի վանս նր՝ կամէր դառնալ
յաշխ առ սէր խաղալոյ դրամովք իւր չար սո-
վորութեն առաջնոյ․ կոչեաց զնա բեռնար-
դոս, և տուեալ նմա դրամս առատապէս՝
ասէ․ ա՛ղէ երթ խաղա՛ առ մի նուագ, բայց
պայմանաւ բաժանելոյ զշահն 'ի մէջ մեր․
և ինքն աղօթեաց՝ զի կորուսցէ զամն․ որպ
և եղև. իսկ․ վյ դարձաւ այրն կորանօք․
և յայնմհետէ ազատ եղև 'ի փորձութէ ան-
տի, և գտաւ կրօնաւոր ընտրեալ։ Ի բազ-
մաց անտի երևելի աշակերտաց բեռնարդո-
սի եղև եւգինեոս գ հայրապետն հռովմայ։
Հրաւիրեցաւ և ինքն բեռնարդոս յերկիս ա-
թոռս եպսուն․ բայց և ոչ զմին եառ յանձն։
Իսկ յաւուրս իննովկենտիոսի պապին երկ-
րորդի բազմօք աշխատ եղև բեռնարդոս հա-
ւանեցուցանել զերիշխանս և զթգւորս 'ի բաց
կալ յանհարազատ պապէն՝ որ նստաւ հա-
կառակաթոռ՝ անակլետոս երկրորդ ան-
ուամբ․ միայն խստասիրտ գտաւ դուքսն
ակուիտանիոյ կամ կուասգոնեայ 'ի գաղ-
ղիա․ վյ յորժամ կամէր սա գալ երբեմն
խօսել ը բեռնարդոսի, իմացեալ զայն սբյն
'ի վր խորանի 'ի ժամ պատարագի, յղեաց
ասել նմա, զի կացցէ առ դրան, և մի իշ-
խեսցէ մտանել յեկեղեցի՝ որպ բանադրեալ․
և ինքն մօտ 'ի կատարումն պատարագի ա-
ռեալ զամենասուրբ խորհուրդն մարմնոյն՝
ել 'ի դուռն եկեղեցւոյ․ և հրափայլ դիմօք

և

և հրայայտ բերանով ասէ ցդուքսն․ որով-
հետև ոչ կամեցար մեզ լսել, աւասիկ ածեմ
առ քեզ զկուսածին տէրն մեր զանմահ փե-
սայն եկեղեցւոյ, զոր դու հալածես․ սա՛ է
դատաւոր քո և տէր և թագաւոր, որում կրկնի
ա͞մ ծունր․ տեսից՝ եթէ արհամարհես և
զնա՝ որպէս զծառայս նորա։ Օ աչի հարաւ
դուքսն, և անկաւ յոտս սբ͞յն և սրբութե
սբ͞ց․ իսկ բեռնարդոս ասէ ցնա․ ա՛րի կա՛ց,
և լո՛ւր զպատգամ տ͞ն․ և նա դողալով եր-
կիր եպագ տ͞ն վերստին․ և ասէ ցսբ͞ն․ մե-
ղա՛յ տ͞ն, հնազանդ եմ հա՛յր սբ͞՝ զի՛նչ և
հրամայես․ և այնպէս դարձաւ 'ի հնազանդ-
դութի սբ͞յ գահին։ Եկեալ երբեմն հայ-
րապետն հռովմայ է արքային գաղղիացւոց
հանդերձ մեծամեծօք 'ի տես վանաց սբ͞յն
բեռնարդոսի 'ի պայծառաձոր, չինեցան
յոյժ 'ի վ͞ր եղբարց․ մինչև յարտասուս լու-
ծանիլ՝ տեսանելով զհրեշտակակրօն գնացս
նոցա խոնարհ և աղքատ յա͞մի։ 'Ի դառնալ
պապին 'ի հռովմ՝ կոչեաց առ ինքն զբեռ-
նարդոս վ͞ս ձեռնտու լինելոյ նմա յերկպա-
ռակութիս անդ եկեղեցւոյ․ ք͞զի նստան յայն
աւուրս և այլ երկու հակաթոռք․ յորոց
մին մեռաւ, և զմիւսն էած բեռնարդոս 'ի
հպատակութի հարազատ պապին իննովկեն-
տիոսի։ Եւ յետ այլ ևս մեծամեծ գործոց
փոխեցաւ առ տէր երանելին բեռնարդոս՝
կգ͞ ամաց, յամի 1252․ յօգոստ․ 20․ թողել
վանս հիմնարկեալս քուրմ 160 յայլևայլ

գա

դաւառս , և գիրս բաղումս լի հոգեւոր՟այ և
համեղ բանիւք ։ ՚Ի քաղցրութե՟ վ՟դպութե՟ ստո_
րա և յառաւել ջերմեռանդութե՟ առ ս՟բ ա՟ծա_
ծինն՝ եւ աւանդութե՟ն այն , ո՟պ թէ զկաթն
կուսին իցէ դիեցեալ ․ զի և հոգեկիր հաւե_
տորն մեր ասաց ․ * ահա կաթիւ մի կաթին
քումդ կուսութե՟ յանձն իմ անձրեւեալ՝ կե_
նաց ինձ զօրէ ‖ ։ Բ՚ալ է և տեսիլն , որ ե_
րեւեցաւ բեռնարդոսի մօտ ՚ի վախճան իւր ․
քանզի տեսանէր զինքն ածեալ յատեանն
՟այ , ուր բանսարկուն չարախօսէր զ՟ն ՟նմ
դուզնաքեայ բանի ․ յայնժամ գոչեաց բեռ_
նարդոս ․ գիտեմ , զի ես ինև չեմ արժանի
կենացն յաւիտենից ․ այլ ՟տր իմ յ՟ս ՟քս՝ կրկին
իրաւամբք փրկէ զիս ․ զի է որդի ՟այ , և զի
եհեղ զարիւն իւր վ՟ս իմ ․ և ո՟պ ինքն է ՟տր
և ժառանգ արքայութե՟ , յաղագս մարդա_
սիրութե՟ իւրոյ կամի և զիս առնել իւր ժա_
ռանգակից ․ և ՚ի բանից աստի հալածական
եղև չարախօսն ։ Յ ․ օգոստ ․ 20 ։

Բեռնարդինոս սենացի՝ այր ցանկալի զուարթ_
նոց , պտուղ աղօթից բարեպաշտ ծնողաց՝
տուղղիոսի և ներայ , ծնաւ ՚ի նահանգին
մասսայ մօտ ՚ի սենա քաղաք իտալիոյ՝ յամի
1380 ․ ՚ի տօնի ծննդեան տիրամօրն ․ և ե_
ռամեայ որբացեալ ՚ի մօրէն , ո՟պ և վեցա_
մեայ ՚ի հօրէն՝ սնաւ ՟ի հովանեաւ մօրաքեռ
իւրոյ դիանայի ։ Նա եղև մանուկն բեռնար_
դինոս ուսումնասէր և փոյթ ՚ի վարս առա_
քինութե՟ ․ ստէպ կանխէր յեկեղեցիս և ՚ի

քա_

քարոզս . և երբեմն ժողովեալ զհասակա-
կիցս՝ երկրորդեր նոցա 'ի բարձր վայրի ըզ-
լուծեալսն ոմն քարոզիչ կիրթ . և էր շնորհա-
զարդ և համեստ 'ի գնացս , և սիրելի ամե-
նեցուն ։ Աշակերտեցաւ 'ի սենա երևելի
վարժապետի յովհաննու սպոլետացւոյ՝ 'ի
հասակի ժ՟ ամաց . և էր ուշիմ և ընտիր
քան զա՟մ դասակիցս իւր՝ ը՟ վկայելոյ վար-
դապետին , Վկայէին և աշակերտակիցք ,
թէ ոչ երբէք ել 'ի բերանոյ բեռնարդինու-
սի բան անվայելուչ . մինչ զի և 'ի լսելն ու-
տեք անարժան ինչ զրոյց՝ կարմրէին երեսք
նր՟ ոպ՟ զպարկեշտ օրիորդի . և եթէ լինէր
ուսումնակցաց խօսել ինչ թեթև յիւրեանս՝
ակնածէին , և ասէին . փոխեսցուք զզրոյցս ,
զի ահա բեռնարդինն գայ ։ Յաւուր յիշա-
տակի սրբուհւոյն ոնոփրիայ՝ մինչդեռ լցեալ
էր տաճար նր՟ 'ի սենա ժմ՟ բազմութե՟ , յան-
կարծակի լցեալ պատանին բեռնարդինոս
հոգւով՝ ել յամպիոն , և կնքեալ զերեսս
նշանաւ սբ՟յ խաչի՝ խօսեցաւ եռանդեամբ
զանն՟ այ՟ ոպ՟ քարոզիչ կատարեալ . մինչև
հիանալ բոլորեցուն ։ Սովորութի՟ կալաւ
բեռնարդինոս ելանել 'ի տարաժամու ընդ-
դուռն քաղաքին , և յամել փոքր մի . և հար-
ցեալ 'ի հոգևոր դաստիարակէ իւրմէ՝ թէ
յո՞ գնաս , ասէ . երթամ առ սիրելին իմ
աննման . և ո՞ այլ սիրական քան զամենաս՟բ
կոյս ա՟ծամայր . զի էր անդ պատկեր կու-
սին գեղեցիկ , որում այց առնէր նա յա՟մ

երե-

Երեկորի. և առ նա դիմեր յա՟մ կարիս իւր,
և նովաւ ազատ լինէր յա՟մ փորձանաց չա-
րին: Իբրև եղեն ն՟ր ամք եօթնևտասն,
կատարեալ զայլ գիտութիւս՝ կրթեցաւ 'ի
կանոնական իրաւունս. և քսանամեայ ըս-
կիզբն արար ա՟ծաբանութե՟՝ մինչդեռ յ՟ծի
էր. և 'ի կրօնաւորիլն եղև կատարե՟լ ա՟ծա-
բան: Ի լինել մահտարաժամու յամի 1400,
զամիս չորս, ծառայեաց հիւանդաց յա՟մ
հոգևոր և 'ի մարմնաւոր պէտս ն՟ց 'ի հի-
ւանդանոցն օտարաց 'ի սենա. յետ դադա-
րելոյ ժանտախտին՝ ինքն խօթացաւ յերե-
սաց վասատակոց զամիս չորս: Իսկ իբրև ա-
ռողջացաւ, առանձնացաւ 'ի տուն մի որ՟պս
միայնակեաց խստակրօն՝ տուեալ զանձն
յաղօթս, 'ի պահս, 'ի խարազնազգեցու՟թ,
'ի ձաղկումն, և յայլ ևս մեռելութիւս մարմ-
նոյ՝ հացիւ և ջրով շատացե՟լ: Ի միում յա-
ւուրց աղաչէր զխաչելեալ փրկիչն՝ յայտ-
նել նմա, թէ ի՟ւ մարթասցի լաւ ևս ծա-
ռայել նմա. և թուեցաւ նմա լսել ձայն 'ի
խաչէն. բեռնարդինէ ծառայեա՛ երթալով
մերկ զհետ մերկոյն. ուստի հաստատեցաւ
'ի խորհուրդս՝ մտանել 'ի կրօն աղքատացն
ք՟րի, ա՟յ 'ի կարգ Փրանչիսկեանց մինորից 'ի
սենա. և ն՟ք ընկալան զնա ա՟մ խնդութե՟:
Զգեցե՟լ զսքեմն յամի 1401. 'ի իե՟ ամի հա-
սակին, այնչափ յառաջեաց 'ի վարս առա-
քինութե՟ և ճգնութե՟, մինչև 'ի վեր ք՟ զկար
մարդոյ երևէր, և յոմանց ոմանց ո՟չ գործ
ան.

անմտութե՟ դատեալ լինէր․ այլ ն՟ր յանձն առեալ էր լինել յիմար վ՟ս ք՟սի․ և առաւել ք՟ զա՟մ կրթէր զանձն 'ի կատարեալ հնազանդութի՟, զուարթամիտ և զուարթերես կատարելով զա՟մ բան դժուարին ։ Ապա մախանօք բանսարկուին յարեաւ փորձիչ ը՟-դէմ ս՟րբոյն կին մի առնակին նշանաւոր 'ի քաղաքին․ որոյ հարեալ 'ի սէր սրբասէր երիտասարդին՝ որ կայտառ էր տեսլեամբ , հնարէր որսալ զնա արտաքոյ վանաց․ և եդև 'ի շրջիլ բեռնարդինոսի մուրողութե՟ ը՟ քաղաքն ը՟ սովորութե՟ կրօնին՝ կոչեաց զնա կինն չար 'ի դուռն իւր , ո՟պ թէ տալ նմա հաց 'ի մօտակայ սենեկէ․ և ն՟ր ոչինչ ձախողակի ածեալ զմտաւ 'ի վերայ այնպիսւոյ մեծանուն տիկնոջ՝ եմուտ 'ի ներքս պարզ մտօք․ իսկ կինն փութանակի աղխեալ ըզդուռն՝ ասէ լրբաբար ցն՟ն․ 'ի կարծոյ ասեմ քեզ․ եթէ ոչ կատարես զկամս իմ, ձիչ բառնամ՝ թէ բեռնարդինն լլկեաց զիս ։ Տեսեալ ս՟րբոյն զհնարս չարին՝ կարդաց 'ի սրտէ զամենազօր ա՟ծն յօգնականութի․ և 'ի վերին տուչութե՟ եկն 'ի միտս նորա խորհուրդ քաջայաղթ․ և ասէ ցկինն․ ա՛ղէ մերկեա՛ զանձն քո․ և նա առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ փութայր 'ի նոյն․ յայնժամ ձգեալ բեռնարդինոսի զկարկամ ձաղկիչն կի՟ զչուան զօտի իւր՝ սկսաւ անխնայ ձաղկել զկինն յա՟մ զօրութե՟ ։ Խիթացաւ սասանեցաւ քստմնեցաւ սատանայ՝ թո՟ղ թէ զոր-

ծի

ծի նր կինն է այն գործ անակնկալ, և յանձ-
հնարս եմուտ, թէ զի՞նչ առնիցէ. զի ձիչ
բառնալ այնուհետև՝ էր խայտառակութիւն
անձին. և լռելն էր անբերելի, զի ոչ կա-
րէր ժուժել այնպիսի սաստիկ ցանից՝ զորոյ
զփորձն անգիտանայր: Ապա անկեալ ար-
տասուօք յոտս սրբոյն՝ աղաչէր և ասէր. Թո՛յլ
տուր ինձ հա՛յր, և երթ 'ի խաղաղութի. զի
եանց յինէն փորձութիւն իսպառ. և այնպէս
մեկնեցաւ սրբն 'ի տեղւոջէն՝ գոհանալով
պապատարար տնէ իւրմէ: Յետ այսորիկ քա-
հանայացեալ՝ փայլէր քարոզութբ 'ի քաղաքս
քաղաքս իտալիոյ, վառելով զ̃մ սիրտ յա-
պաշխարութի և յածպաշտութի. զի սքան-
չելի էին բանք բերանոյ նր, և ազդու հոգ-
ւոյն նոյ. որով և դարձան ոչ սակաւք 'ի կա-
նանց մեղաւորաց, և երիտասարդք յետս
կացին 'ի մեղսառիթ խաղուց. մինչզի և ար-
ուեստագործք թղթոյ և վիգից և քուէայց
և այլոց վնասակար խաղալեաց՝ լքին զար-
հեստս իւրեանց: Պատմի՝ թէ մին 'ի նոցա-
նէ եկեալ առ սրբն՝ ասէր. արհեստ էր իմ
կազմել տախտակս խաղուց. և զի այն խա-
փանեալ կայ՝ ի՞ւ գտից կաւուրն պարէնս.
զի ոչ գիտեմ արհեստ այլ: Յայնժամ եցոյց
նմա սրբն զօրինակ մի տախտակի, յորոյ վր
քանդակեալ էր փակագրով (յունական քան
լատին տառիւք) անունն Յս̃. IHS. ոսկե-
զարդ շրջանակաւ ճառագայթից, և ասէ
ցնա. եթէ կարիցես գործել զնմանս սորա,

Օ                                                            շա՛տ

շատ է քեզ։ Նոյնա իբրև սկսաւ շինել զայն, շահէր առաւել քան զառաջինն. զի վն կրելոյ սբյն 'ի ձեռին զայն նշանակ, սկսան և մարդիկն գնել յառնել անտի զնմանութի տախտակին։ Բայց կայր ասեն և այլ առիթ սկզբնաւորութե տախտակիս. զի 'ի քարոզել երբեմն սբյն, յորժամ խօսէր յաղագս երկրպագելի անուանն Յսի՝ զոր պաշտէր յամմ սրտէ, երևեցաւ յօդս 'ի վր գլխոյ նր բոց հրեղէն ճառագայթարձակ. և 'ի մէջ նր գրեալ պատուական անունն Յսի։ Այլ 'ի յաճախել սովորութե կրելոյ զտախտակ այդպիսի՝ եղև ամբաստանութի զբեռնարդինոսէ առաջի մարտինոսի Ե հռովմայ հայրապետի, լինել նորաձևութե գտակ, և առիթ գայթակղութե, կմ անպատուութե անուան փրկչին։ Նա հայրապետն կոչել զբեռնարդինոս, և ստուգեալ զիրսն՝ ետ յաւելուլ 'ի փակագիր անուր և զխաչ. զի ամ որ գիտասցէ զխորհուրդ և զյարգ անուանն Յսի։ Շրջեցաւ սբն բեռնարդինոս քարոզութբ մինչև յետմ, և դարձոյց զբզմս յանհաւատից. և 'ի դարձին յիտալիա՝ կարգեցաւ ըդհանրական տեսուչ ամ վանորէից կրօնից իւրոյ յայսկոյս լերանցն ալբեայ. և եղև վերանորոգիչ իբր երեքհարիւր մենաստանաց՝ վերածելով 'ի նախկին խստութի և 'ի կանոնապահութի աւուրց հիմնադրին, սր սբյն Փրանչիսկոսի ասսիզացւոյ. առաւել ըն ուխտի աղքատութե, յորմէ օր քան զօր

թուլացեալ էին առանձնաստացութբ ։ Ի յանդիմանել բեւնարդինոսի վանկարգութի դքսին մեդիօլանու՝ վո դնելոյ անձին անուն իմն պատուոյ՝ առաւել յանկաւոր ոյ քան մարդոյ, յղեաց առ նա իշխանն սպառնալիս. և ոչ ինչ օգտեալ՝ յաւել առաքել ընծայ զբազմութի դրամոց. իսկ սբն արար պղնձի առ ընծայաբերն. չէն ինչ ինձ պիտոյ ոսկի և արծաթ. եթէ կամիս՝ զի պիտանի լիցին դոքա, տար զն քեզ 'ի բանտ, և արձակեա զորս ենն անդ 'ի սակս պարտուց ։ Սոլիմէ առաւել դիւրալուր գտաւ իշխանն և ծմ բազմութին խրատուց սբյն ։ Հրաժարեաց բեւնարդոսյերից եպսարանաց՝ որք եդան նմա աւաջի, որ են սենայու, փերրարայի, և ուռպինայ. վոյ նկարին առ ոտս նր խոյրք երեք ։ Ի գտանիլ սբյն երբեմն զն ուրբանոսի պապին՝ էառ պապն խոյր մի եպսական, և եդ 'ի գլուխ բեւնարդինոսի. իսկ նա հեզաբար 'ի բաց հանեալ դարձոյց յետս, շնորհ ունելով. և ասէ. վո այն չառնում յանձն հայր սբ զայս պատիւ, զի համարձակ եղէց քարոզել զարհամարհութի Յի. և հայրապետն ոչ ևս ստիպեաց ։ Արար սբն և զայլ գործս սքանչելեաց. և լի արդեամբք փոխեցաւ յերկինս՝ կդ ամաց, յամի 1443. 'ի մայիսի 20. և յետ ութ ամաց դասեցաւ 'ի կարգ սրբց ։ Ի. մայ. 20 ։

ՌՈՒԷՆՏԱՐՈՍ կմ բիանովը պիսիդայի յարևելս՝ յաւուրս հալածանաց. կռապաշտից՝ տարեալ եղև

եղև կապանօք առ սևերիանոս դատաւոր
իսաւրիոյ. որ եւ կտրատել զմարմին վկային
՚ի կախաղանի, և այրել հրացեալ շամփրօք
զվէրսն. հանին և զատամունս, հատին և
զականջս: Զարմացեալ ընդ համբերութեն սբյն
Սեղբեանոս կամ սիղուանոս զօրականն՝ հա֊
ւատաց ՚ի քս. վնյ նախ զնա նահատակեցին՝
հատանելով զլեզուն, և ապա զգլուխն. յե֊
տոյ քերթեցին զճակատ սբյն բիանորոսի,
և հանին զակն աջոյ. ծակեցին զպճղունս
ոտից. և յետ ամի գլխատեցին: Յ. յուլ. 3,
կմ 4: Ց. 9: Ժ. 10:
Բեթէլանէ կոյս հռովմայեցի՝ դուստր նահա֊
տակաց, ժմ փլաբիանոսի և դափրոզայ վկայե֊
լոց առ յուլիանոսիւ, կրեաց բազում հալա֊
ծանս և տառապանս վն քսի ընդ դեմետրիայ
քեռ իւրում. և յետ վախճանելոյ նր՝ աւան֊
ձինն փորձեցաւ ողոքանօք և սպառնալեօք.
այլ ոչ ՚ի բաց եկաց ՚ի քսէ. վնյ ապրոնիա֊
նոս պռետորն հռովմայ ետ մերկացուցանել
զկոյսն, և չարաչար հարկանել կապարեայ
գնտովք. մինչև աւանդեաց զոգին: Մար֊
մին նր արկեալ ՚ի հրապարակն տաւրոսի ՚ի
կերակուր շանց՝ անվնաս պահեցաւ, և թա֊
ղեցաւ գիշերայն ՚ի ձեռն յովհաննու քահա֊
նայի առ մօր իւրումն և քեռն մերձ ՚ի լիկի֊
նեան պալատն. ուր և շինեցաւ վկնի եկե֊
ղեցի յանուն բիբիանեայ կուսի: Լ. դեկ֊
տեմբ. 2:
Բենկոր, այն է Սէգոռ, ժմ յաղթող, եր

վկայ իտալացի յաւուրս անտոնինոսի կայ-
սեր . դատեալ 'ի սեբաստիանոսէ դքսէ՝ յետ
խորտակման ատամանց՝ արկաւ 'ի հուր . այլ
պահեցաւ կենդանի զերիս աւուրս 'ի մէջ
կայծախառն մոխրոյ . արբուցին նմա և մա-
հադեղ . և իբրև չեղև ինչ , դեղատուն հա-
ւատաց 'ի քս . ապա արկին ձէթ եռացեալ
զմարմնովն բիկտորի . և զկնի այլ ևս տանջա-
նաց գլխատեցին ։ Տեսեալ զ.քաջ նահատա-
կութի նր կին մի այրի՝ Ստեփանէ կամ Ստե-
փանիս անուն , որ և Կորոնա , ե՟տ պսակ ,
ձայն եբարձ և ասէ . երանի՛ է քեզ բի՛կտոր ,
և երանելի են գործակիցք քո . ահա տեսա-
նեմ երկու պսակս իջեալ յերկնից . մին մեծ՝
քեզ , և միւսն փոքր՝ ինձ ։ Իսկ դատաւորն
քններ և զսա՝ ետ քաջ արանց խոնարհել
զերկու ծառս , յորս կապեցին զստեփանէ
զձեռաց և զոտից յերկուց կողմանց . և 'ի
թողացուցանել զծառսն՝ հերձաւ ն՟ր կինն
յերկուս՝ վն անուան քսի ։ Հռ . նոյ . 9 , կմ
10 ։ Յ . նոյ . 11 ։ Լ . մայ . 14 ։ Դաւրնտ . Ն .
Ճժբ ։

Բոնավենտուրա կմ Պոնավենտուրա , որ թարգ-
մանի Բարի գալուստ , էր 'ի Թոսկանայ իտա-
լիոյ՝ որ և Ետրուրիա , 'ի տեղւոջէն՝ որ կոչի
արքունի բաղանիք ։ 'Ի մանկութե՟ ուխտեաց
զնա մայրն տալ 'ի կարգ սր՟յն Փրանչիսկո-
սի՝ որ պահեաց զորդայն 'ի վտանգէ մահու ։
Ս՟յ 'ի չափ հասեալ՝ եմուտ 'ի կրօնն մինո-
րեց . ուր աշակերտեալ աղեքսանդրի աղէ-
սեան՝

սեան՝ զարգացաւ յիմ̃ուսմունս և 'ի վարս
առաքինութե․ մինչև կարգիլ նմա ը̃հան-
րական մեծաւոր կարգին 'ի հուովմ․ և սքան-
չելի լինել յաչս ամենեցուն ։ Գրեաց բա̃մ
ինչ գիրս՝ լի իմաստութ̃բ և հոգւով ա̃յ․ և
ձեռնադրեցաւ կարդինալ, և եպ̃ս ալպանու։
Նաև մտերիմ սիրելի մեծին Թովմայի ակ-
ուինացւոյ հրեշտակային վրդ̃պի, որ և նը̃
անուամբ պատուեաց զբոնավենտուրա, յա-
սելն զնմանէ 'ի գրել նր̃ զվարս Ֆրանչիս-
կոսի, Թողցուք սը̃յն աշխատիլ վասն սը̃յն․
քանզի և ետես զնա ասեն յաղօթս ոտիւք
ամբարձելովք յերկրէ ։ փոխեցաւ յծ̃է՝ յի-
սուն և երեք ամաց, 'ի ժողովն լուգդոնի
ե̃, յամի 1275․ 'ի յուլիսի 13․ որոյ են և
պէսպէս սքանչելիք 'ի կենդանութե և զկնի
մահուան ։ Սա էր մի 'ի ջերմեռանդն պաշ-
տօնասիրաց նը̃ ա̃ծածնի, և յորդորիչ բոլո-
րից 'ի պաշտօն կուսին ։ Լ․ յուլ․ 14։

ԲՈՒՐԱ քահանայ տօնելի․ հտ․ Բ․ 331 ։

ԲՐԻԳԻՏԱ, որ և ՊՐԻՃԻՏՏԱ, կին այրի՝ սքան-
չելի, էր յերկրէն շուեդայ կամ սուեցիայ
յարքունի զարմէ, զաւակ ա̃ծասէր ծնողաց
բրիգեռոսի և սիգրետիայ ։ Մինչ չև ծնեալ
մայր նր̃ յղի մազապուր վերծեալ 'ի նաւա-
բեկութե, լուաւ 'ի տեսլեան, թէ ա̃ծ ըդ-
կեանսդ քեզ շնորհեաց 'ի շնորհս դստերդ՝
որ է յարգանդի քում։ Իբրև ծնաւ բրիգի-
տա, զերիս ամս ոչ բացաւ լեզու նր̃, այլ
կայր ա̃մ համր․ իսկ ընդ բանալն այնուհե-

տև՝ խօսէր որպէս խելահաս ։ Եօթնամեայ էր՝ յորժամ ետես 'ի սենեկի իւրում խորան մեծ, յորում նստեալ կայր տիկին փառազգեաց՝ պսակ 'ի ձեռին, և ձայնէր առ նա. Բրիգիտա կամի՞ս զայս պսակ. և յասելն նր՝ այո, եդ 'ի գլուխ նր, և եղև աներևոյթ ։ 'Ի լինել տասնամեայ՝ փայլէին 'ի նմա ամ առաքինութիք, առաւել ամօթխածութի, պարկեշտութի, հնազանդութի, և սէր անկեղծ ։ Լուէր զքարոզ 'ի վր չարչարանաց տն՝ մինչդեռ զայն խոկայր 'ի գիշերի, երևեցաւ նմ փրկիչն լի վիրօք ոպ յաւուր խաչելութե ։ Ասէ Բրիգիտա. տէր ո՞վ վիրաւորեաց զքեզ. տրն ասէ. հովացեալք 'ի սիրոյ ։ Եւ յայնմ հետէ յիշատակաւս այսուիկ անդադար էր Բրիգիտա 'ի լալ սրտցաւութբ ընդ վէրս յսի ։ Յերևիլ նմա դիւին իբրև ճիւաղ ահագին՝ նա փախեաւ և անկաւ առ պատկերն խաչելութեան. յայնժամ ասէ դևն. ցորչափ 'ի քո կողմն է խաչելեալն, ես 'ի զուր աշխատիմ ։ Իբրև եհաս ժամանակ, բռնադատեաց զնա հայր իւր, և ետ 'ի կնութի վլփոնի իշխանին Ներիկիայ, որ էր այր բարեպաշտ. մչ և թողացուցանէր կնոջ իւրում առնել անխափան զամ ջերմեռանդութիս իւր յաղօթս և 'ի պահս, և բաշխել ողորմութիս առատապէս. մինչ զի և զաղքատս 'ի տուն բերեալ Բրիգիտայ՝ լուանայր զոտս նց, և զգեցուցանէր զնս ։ Ծնաւ ուստերս և դստերս. և սնոյց զնս յածպաշտութե ։ Գնաց ընդ առն

իւ-

իւրում յուխտ սբ̃յն յակոբայ 'ի սպանիա ։ և
'ի դարձին քանզի հիւանդացաւ այր նորա 'ի
գաղղիա , 'ի կալ բրիգիտեայ յաղօթս՝ ե-
րևեցաւ նմա սբ̃ն դիոնեսիոս , և մխիթա-
րեաց զնա ։ և պատմեաց որ ինչ անցք ան-
ցանելոց էին ը̃ն նա ։ նոյնպէս և զփութա-
պէս առողջութի̃ առնն ։ որ և եղև իսկ ։ Իբ-
րև դարձան 'ի տունս իւրեանց՝ կացին այ-
նուհետև հրաժարեալք յիրերաց ։ և յետ
տնտեսելոյ զինչս իւրեանց՝ կրօնաւորեցան
երկոքեան ։ Նախ վիսոն եմուտ 'ի կարգ-
կիստերսեանց ։ և անդ վախճանեցաւ սըր-
բութբ̃ ։ Իսկ սրբուհին բրիգիտա այրի մնա-
ցեալ , յետ հանելոյ բաժին զաւակացն յըն-
չից իւրոց՝ զմնացեալն ծախեաց 'ի շինութի̃
կուսաստանի 'ի վալցենոն , և անդ կրօնա-
ւորեցաւ ։ ուստի անուն ընկալաւ կրօնն
բրիգիտեան ։ Եւ էր ինքն աղքատացեալ
խոպառ մ̃ քնի , խարազնազգեաց՝ և չուան
գօտի զմիջով , ձգնասէր յամի՝ գետնախշտի
և տքնօղ յաղօթս ։ և 'ի բազում ծնրադրու-
թէ խստացեալ էին ծունկք նր̃ ոպ̃ զուղտու ։
Յաւուրս ուրբաթու ճաշակէր եղէգ դառն ։
և կաթեցուցանէր քացախ 'ի վ̃ր բազկաց և
ձեռաց իւրոց 'ի կսկծումն ։ Եւ էր զօրաւոր
բանիւ և գրով , և լի հոգւով ։ ունէր և ըզ-
շնորհս հոգետեսութե̃ և մարգարէութե̃ ։
որպէս է տեսանել 'ի թուղթս նր̃ գրեալս
առ քահանայապետս , առ կայսերս , առ
թագաւորս և առ իշխանս ։ Գնաց հռոմա-

նաւ տին 'ի հռովմ՝ յայց ելանել եկեղեցեաց և նշխարաց սրբց · շրջեցաւ նոյնպէս յերուսաղէմ ընդ տնօրինական տեղիս · ուր եղեն առ նա մեծամեծ յայտնութիւնք 'ի տնէ՝ յորժամ յափշտակէր յաղօթս , մինչև վերանալ երբեմն 'ի գետնոյ և 'ի վեր · արար զճանապարհայն և նշանս բժշկութեց 'ի վր հիւանդաց և այսահարաց : Ոչ և 'ի սիկիլիա իմացեալ հոգւով , թէ պատճառ ըկանաց կնոջ միոյ 'ի դիւէն՝ էր կախարդական կամ սնապաշտական գրուած ինչ անիմանալի անուամբք՝ պահեալ 'ի մէջ հերաց գլխոյն , ետ հանել զայն և այրել , և այնպէս ազատեաց զնա 'ի փորձանաց չարին : Դարձ արարեալ 'ի հռովմ՝ հիւանդացաւ անդ զտարի մի · և հինգ աւուրբք յառաջ՝ գիտաց զփոխումն իւր · որ և եղև 'ի յուլիսի 24 · յամի 1474 · 'ի հասակի Հ ամաց · և 'ի յաջորդ ամի տարան զմարմին նորա յերկիրն շուէտաց 'ի վանս օգոստինեան կուսանաց՝ հիմնարկեալ 'ի նմանէ · իսկ ընդ սրբս գրեցաւ յամի 1491 · 'ի 8 · հոկտեմբերի : Լ · Հոկտ. 8 :

ԲՐԻԳԻՏԱ կոյսն էր յիբերնիայ կղզւոյ բրիտանացւոց 'ի սկիզբն վեցերորդ դարու , դուստր դուքստակսի ուրումն յաղախնոյ իւրմէ , իբրև 'ի փշաբեր ծառոյ պտուղ հասունացեալ գեղեցիկ · և արդարև չքնաղ էր հոգւով և մարմնով բրիգիտա , այլ աչք նր անհամեմատ գեղեցկութբ · վսյ իբրև այն ինչ 'ի չափ հասեալ լրման 'ի հօրէն , թէ բազումք

զումք խնդրեն զքեզ, և ես խոստացայ մի-
ում 'ի պատուհականաց, պխի ետ պարկեշտ
օրիորդն. մի՛ է վայր աշխատ լինիր վ՞ս բանիս
այսորիկ, զի ես չկարեմ գտանել զայլ պատ-
ուհական փեսայ քան զփրկիչն իմ ք՞ս յ՞ս. և
ոչ ոք կարէ հանել զիս 'ի ձեռաց նորա. և
եթէ ա՛ զհետ պնդի գեղջ իմոյ, դիւրին է
ա՞յ խափանել զայն. և ինքն սկսաւ խնդրել
'ի տ՞նէ՝ զի անհաճոյ ցուցցէ զնա յաչս ա՞ի.
և եղև այնպէս. զի թեթև խօթութ՞բ ա-
պականեցաւ դեղ երեսաց ն՞ր, և աչք նորա
խանդարեցան. մնացանդ 'ի բազում ար-
տասուաց. յայնժամ թողացոյց նմա հայրն
ե՞ր փափաքանաց նորա՝ լինել կուսան: Եւ
եառ բրիգիտա զքօղն 'ի ձեռաց մաքիլլայ ե՞պ-
եպսի. և ե՞ր ժամանակին արար զուխտ իւր
առաջի ն՞ր. և եղեն սքանչելիք յաւուր յայն-
միկ. զի տեսանէր եպ՞սն 'ի վ՞ր գլխոյ կու-
սին սիւն հրեղէն մինչև յերկինս. և նոյն-
ժամայն դարձոյց ա՞ծ 'ի նա զառաջին գեղ
իւր և զպայծառութի աչաց: Եւ յառաջա-
դէմ եղեալ բրիգիտեայ 'ի փարս սրբութե՝
ընկալաւ յ՞այ շնորհս բժշկութե. սրբեաց
աղօթիւք զլորոտ մի, և առողջացոյց զեր-
կու անդամալոյծս: Եւ 'ի հաշակել համբա-
ւոյ ն՞ր՝ կոյրք երկու առաջնորդ առեալ զբո-
րոտ զոմն՝ եկին 'ի հեռաստանէ մինչև 'ի
վանս ն՞ր. և երեքեանն իսկ գտին զառող-
ջութի: Այն մի 'ի կանանց անպզամաց բամ-
բասեաց զն՞ր եպ՞սն, թէ նա յղացոյց զիս. և
եղև

եղև գայթակղութիւն յոյժ 'ի ժողովրդեանն. այլ իբրև ծնաւ զաւակն, ետ բերել Բրիգիտա զերեխայն, և եհարց ցնա առաջի բազմութեան. ո՞վ է ասէ՝ հայր քո. և եբաց տր զբերան մանկանն տղայոյ, և ասաց 'ի լսելս ամենեցուն. ոչ է հայր իմ եպսն՝ զորմէ չարախօսեաց մայր իմ, այլ՝ ոմն 'ի գռեհիկ արանց է իմ հայր։ Բազում և այլ զօրութիւնք ցուցան 'ի ձեռն Բրիգիտեայ կուսի, և դարձ բազմաց 'ի մեղաւորաց աղօթիւք և խրատուք նր. իսկ վախճան նր եղև յամի տն 528, կամ 532։ Ա. փետր. 1։

Բրունոն, որ և Բրունոնոս՝ հեղինակ կարգի լռակացից կարթուսեանց, էր ծննդեամբ 'ի կողոնիայ ագրիպպինայ երկրին ալամանաց՝ յազնուական և յածասէր ծնողաց. յորոց առաքեալ մն ուսման 'ի լուտեսիա՝ այն է փարէզ գաղղիացւոց, յառաջադէմ եղև յոյժ. մինչև լինել վդպ փիլիսոփայութե և ածաբանութե, և գլուխ կանոնիկոսաց եկեղեցւոյն հռեմայ։ Յաւուրսն յայնոսիկ մեռաւ 'ի քաղաքի անդ ոմն յանուանի իմաստնոց համալսարանին. և բազում շքով յուղարկաւորութե ածեալ յեկեղեցի՝ կատարէին զպաշտօն թաղման. և ահա յանկարծակի վերայոյց մեռեալն զգլուխ իւր 'ի դագաղաց, և ասէ 'ի ձայն ահեղ, արդար դատաստանաւն այ մատնեցայ յատենի։ Յայնժամ զահի հարան ամենեքին. և թողեալ անդ զդագաղն՝ սպասէին ելից իրաց։ Նա

ահա

ահա յաւուրն երկրորդի ետ մեռեալն ըղ-
ձայն՝ ասելով. արդար դատաստանաւն այ
դատեցայ. և յերրորդ աւուր յաւել ասել.
արդար դատաստանաւն այ դատապարտե-
ցայ: Ապա բարձին և թաղեցին զնա թա-
ղումն իշոյ յանտք տեղիս. և այն զի ունէր
երբեմն անուն ոչ չար, և արտաքուստ իբր
պատրաստութբ էր մեռեալ: Յայսմ դիպ-
ուածոյ բազմաց եղև ուղղութի և կցուշու-
թիւն. այլ առաւել օգուտ ներգործեաց
յեօթն անձինս, որոց գլուխ էր բրունոն.
քանզի սա քաջ 'ի միտ էառ, և յայտ արար
ընկերաց իւրոց, թէ պատճառ դատապար-
տութե թշուառականին այնորիկ էր լեզ-
ուանի գոլն նր, որ իւրով ճոռոմաբանութբ
յաղթէր բոլորից, և պարտաւոր առնէր
նաև զանպարտս. վսյ և յորդորեաց բրու-
նոն զիւրսն մեկնիլ յաւանձնութե, և դուռն
դնել ամուր շրթանց, և լեզուի պահապան՝
իսպառ լռութբ, կանգնելով նոր կարգ լռա-
կեցութե՝ հրամանաւ հուգոնի եպսին գրա-
տիանուպօլսոյ առն սբյ: Իբրև դէմ եդեալ
գնային սք, տեսիլ տեսանէր հուգոն, որպ
թէ եօթն աստեղք ընթանային առ ոտս
նորա. ապա 'ի վր հասեալ իրացն՝ գովեաց
զբրունոն և զորս ը նմա, և ետ նց բնակու-
թի 'ի դժուարս լերանց 'ի թեմի իւրում.
այն է տեղին կոչեցեալ կարթուսա կմ չեր-
թօզա. ուստի անուն ընկալաւ և կրօնն:
Լուեալ հայրապետին հռովմայ ուրբանոսի
երկ-

երկրորդի՝ որ երբեմն աշակերտեալ էր սրբոյն Բրունոնի՝ զսքանչելի վարս նորա 'ի միայնութեան, կոչեցաւ զնա 'ի Հռովմ, և արար իւր խորհրդական յիրս կարևորս զամս ինչ . կամէր տալ նմա և զարքեպիսկոպոսութիւն Ռեգիոնայ . այլ նա ոչ էառ յանձն . և սիրով առանձնութեան մեկուսացաւ 'ի փապարս լերանց յանապատն Կաղաբրիոյ՝ աշտարակ կոչեցեալ, մօտ 'ի Սկիւլլակ, (կամ 'ի Շիլլա) Հանդէպ Սիկիլիոյ . և անդ կատարեաց զկեանս իւր՝ փայլեալ սրբութեամբ և նշանագործութեամբ . և Թաղեցաւ 'ի վանս սրբոյն Ստեփաննոսի՝ զոր շինեաց 'ի ձեռն Ռոգերայ կոմսին Կաղաբրիոյ, Թողեալ ոմն 'ի գաղղիա, նոյնպէս և յիտալիա աշակերտս ընտրեալս : Վախճան սրբոյն եղև յամի . 1101 : Ի . Հոկտ. 6 :

## Գ.

ԳԱԲՐԻԷԼ Հրեշտակապետ . տես 'ի տօնելիս . Հտ . Ի . 266 :

ԳԱՂԻՆՈՍ մկայ իմաստասէր՝ գլխատեալ 'ի կռապաշտից վն անուանն քսի, յիշատակի 'ի ձեռագիր յայսմաւուրս : Յ . մայ . 3 :

ԳԱՅԻԱՆԷԱՆՔ կուսանք տօնելիք . Հտ . Գ . 43 :

ԳԵՆՆԱԴԻՈՍ կամ յանուարիոս եպս տօնելի . Հտ . Թ . 175 :

ԳԵՐԱՍԻՄՈՍ . տես Երասիմոս :

ԳԵՐԵԱՆՔ 'ի պարսից յաւուրս Շապհոյ յամի տն 362,

362, ողիք ինն հազար 'ի բաժնէ տրութե-
յունայ, նահատակեցան զճանապարհայն
Թուով իբր երկերիւր և եօթանասուն և եօթն.
Թող զորս անկան 'ի հաւատոյ: Մին 'ի նա-
հատակաց Աբդիշոյ կիմեղեպետեան սարկաւագ՝
խոցեալ սրով և կիսամեռ Թողեալ, զկնի
չուելոյ բանակին եմուտ 'ի գիւղ մի. և գը-
տեալ զպարման 'ի ձեռն քահանայի միոյ՝ ամ-
փոփեացնովաւ հանդերձ զմարմինս վկայից.
և ինքն բնակեալ յայրի միում՝ եղև ճգնա-
ւոր նշանագործ. և դարձոյց զբազումս յան-
հաւատից. որ վ՟ սպանաւ յումեմնէ 'ի կռա-
պաշտից. և Թաղեցաւ 'ի ձեռն քահանայ-
ին: Հ. ապր. 7. Յ. ապր. 9. և օգոստ. 4:
Լ. ապր. 22. և օգ. 4: Նուող. ասորի:
Գերմանոս պատրիարգ յունաց էր որդի յու-
ստինիանոսի պատրկի, զոր առ նախանձու
սպան որդին հերակլի, և զգերմանոս մա-
նուկ ներքինացոյց, և կարգեաց 'ի ծառայ-
ութի եկեղեցւոյ. որոյ յառաջադէմ գը-
տեալ 'ի նը փառս և յածային գիտութիւն՝
եղև եպս կիւզիկոյ, և ապա պատրիարգ
կոստանդնուպօլսոյ. քանզի էր այր խոնարհ
և խաղաղարար, հանճարեղ և մեծիմաստ.
որ և գրեաց բազում ճառս. արար և շարա-
կանս և կցուրդս. ունէր և զշնորհս նշանա-
գործութե: Սու սովաւ նստաւ լևոն իսաւ-
րացի պատկերամարտ կայսր. զոր բազմօք
յանդիմանեաց քաջ հովիւն և վ՟պն ուղ-
ղափառութե՟ սբ՟ն գերմանոս. այլ ոչինչ օգ-
տեալ՝

տեալ՝ եհան յանձնէ զեմփորոնն , և եդեալ 'ի վր̃ նր̃ սեղանոյ՝ առանձնացաւ 'ի տուն իւր . և անցեալ զիննսուն ամօք հասակին՝ հանգեաւ 'ի տր̃ , և թաղեցաւ յիւրակերտ վանս ։ Եւ սա եկեալ էր ստեփաննոս սիւնեցի յաւուրս պատրիարգութե՛ նր̃ . և սբ̃ն գերմանոս 'ի ձեռն նորա առաքեաց 'ի հայս զթուղթ միաբանական սիրոյ և խաղաղութե՛ գրեալ քաղցր վճ̃պութեամբ ։ Ն · Յ · Լ

մայ . 12 ։

ԳԵՐՏՐՈՒԴԻՍ . տե՛ս ը̃ Նազարիոսի ։

ԳԵՐՏՐՈՒԴԷ , որ և ՃԵՐՏՐՈՒՏԱՒՍ կո̃չ ՃԵՐՏՐՈՒՏԱ կոյս՝ յիսլէբիայ սաքսոնիոյ , հնգամեայ մըտեալ 'ի վանս բենեդիկտեան կուսանաց , զարգացաւ 'ի նր̃ վարս և յուսմունս , առաւելեալ 'ի խոնարհութե՛ և 'ի խոկմունս տնօրինական խորհրդոց փրկչին . զորմէ ստէպ խօսէր , և 'ի պատիւ՛ նր̃ ուղղէր զա̃մ զխորհուրդս , զբանս և զգործս . որով արժանի եղև ա̃ծամերձ ընտանութե՛ ։ Երեսնամեայ եղեալ՝ կարգեցաւ մայր վանից յերկուս մենաստանս զամս քառասուն . և օրինակաւ իւրով հանդիսացոյց 'ի նո̃ զա̃մ բարեկարգութի̃ կրօնաւորական . թո՛ղ զճգնութի̃ս մեծամեծս , այնպէս վառեալ էր սիրովն այ̃՝ մինչև կրել ստէպ յափշտակութի̃ս մտաց . որում երևեալ փրկիչն՝ վկայեաց ունել 'ի սրտի նորա օթևան հանգստեան . և տիրամայր նր̃ ա̃ծածինն էր նմա օգ̃ 'ի մայր սիրելի ։ Եւ նր̃ հաղորդութիւն և առ չարչա-

րանս

բանս ք՟ի ջերմ սիրով հալէր գերտրուդէ՝ յորդահոս արտասուօք հանդերձ, և բաղմօք օժանդակէր հոգւոց ննջեցելոց ։ Գործեաց բաղում ինչ ջերմեռանդական, և եղև արժանաւոր վերին յայտնութեանց․ և վախճանեցաւ բոցակեզ սիրով քան հիւանդութ՟բ՝ յամի 1292 ․ փայլեաւ սքանչելեօք ՚ի կենդանութեան և զկնի մահուան ։ Ն․ նոյեմբ․ 15 ։

Գէորգ զօրավար՝ մեծ վկայ տօնելի․ հտ․ Օ․ 165 ։

Գէորգ Անէացի, և Սաւրոճ Գաբեղեան՝ քաջ իշխանք հայոց նախարարազունք՝ սրով նահատակեալք վասն ք՟ի ՚ի բուղայ ոստիկանէն այլազգեաց՝ զկնի երկրորդ ատոմեանց՝ յամի 853-ին ։ Զերկոցունց քաջ նահատակացս զկատարումն տեսեալ ուրումն յայլազգեաց՝ աղաղակեաց, և ես քրիստոնեայ եմ․ վ՟յ հատին և զգլուխ նորա․ և լոյս ծագեաց ՚ի վ՟ր երեցունց վկայից ։ Ն․ ապր․ 21 ։ Տ՟ր ինէլ․ մայ․ 2 ։

Գէորգ անապատական լիմնեցի՝ ժամանակակից ս՟յն գերմանոսի, բնակեալ յոլիմպոս լերին ՚ի մանկութ՟է մինչև ՚ի խոր ծերութ՟ի սքանչելի վարուք՝ երկրորդ անտոն անուանեցաւ ։ Իջեալ ՚ի լեռնէն՝ գնաց յանդիմանեաց զչարութ՟ի լևոնի իսաւրացւոյ պատկերամարտ կայսեր․ և նա ՚ի բանտ արկեալ զն՟՝ ստիպէր տալ ձեռնագիր ը՟դդէմ յարգութ՟ե պատկերաց․ և յոյժ հաւանիլ՝ ետ տան-

տանջել զնա յոյժ, և այրել զգլուխ նր՟, և հատանել զունչս. և այնպէս անարգանօք յաքսորս առաքեաց. ուր մեռաւ գոհութե՟ այրն այ՝ զէ ամաց : ∸ . ապր . 10, կմ 14 :

Յ·Ա . օգոստ . 24 :

ԳԷՈՐԳ ԱՉԷԿԵԱՅ (ծն՝ կոյր) արճիշեցի՝ էր ճգնաւոր կատարել առ ժամանակօք շնորհաւ-ւոյն, սնեալ սրբու՟թ 'ի վանս 'ի մանկութե՟ միով մազեղինաւ, և միանգամ յաւուրն առնոյր հաց և ջուր չափով. և էր իմաստուն մտօք՝ փոխարկեալ զաչս մարմնոյ 'ի հոգւոյն աչս : Սա յետ սքանչելի քաղաքավարուն աւելի քան զամս Կ, շրջեցաւ բազում անգամ յուխտատեղիս եկմի և յայլ ուխտս առաջնորդու՟թ գրիգորի միայնակեցի : Նա իբրև կամեցան 'ի հռովմ երթալ, մոլորեալ 'ի ճանապարհէ՝ անկան 'ի ձեռս աւազակաց յծին ունկռաց, որք հարին զնո՟ և թողին կիսամահ, առեալ զգրիգոր. տյլ 'ի դիմել երանելւոյն գէորգեայ 'ի բարեխօսութե՟ սբ՟յն յովհաննու կարապետի՝ տեսիլ երևեցաւ վանականի ումեմն 'ի մերձակայ տեղեաց, զոր յայսմաւուրքն կարտինալ ասէ լինել, որ եկն տարաւ զնո՟ սայլիւք 'ի վանս իւր . ուր մեռաւ գրիգոր. բայց թախանձագին աղօթիւք գէորգեայ աչիկայի դարձաւ 'ի կեանս . և այնմս գնացեալ 'ի հռովմ կատարեցին զուխտ իւրեանց, և դարձան 'ի հայս : Ընդ յանի քաղաքի բժշկեաց գէորգ և զանբուժելի վէրս ձե-

ռայ կնոջ միոյ. և հրաշալի առաքինութ՟բ կատարեաց զկեանս իւր ։ ÷ . մայիս . 4 ։

Գէորգ վ՟պ՝ Մղրէկ կոչեցեալ, այր քաղցրաբան և իմաստուն, աշակերտ գրիգորի վըկայասիրի՝ ը՟ կիրակոսի Թարգմանչի, եր ծննդեամբ յանալուր գեղջէ վասպուրականցի. այլ կրօնաւորեալ՝ ի սևան կղզի զամս ծ՝ սևանեցի կոչեցաւ ։ Սա զա՟մ գիշերս կիրակամտից ոտնակաց աքնութ՟բ անցուցանէր. և զնոյն կարգ եմոյծ՝ ի դրազարկ վանս և յանապատն սուոյ. և կատարեալ զկեանս իւր ս՟բ և ա՟ծահաճոյ վարուք՝ փոխեցաւ առ տ՟ր՝ ի հասակի կ՟ ամաց՝ յամի . 1113 . շկբ, և Թաղեցաւ՝ ի դրազարկ ։ ÷ . յուլ . 30 ։

Գուղերբենոս կմ Գղեւներբոս քահանայ տօնելի.
հտ . Ս . 158 ։

Գուղերբենէ կմ Գղեներբեա կոյս հռովմայեցի՝ բընակեալ՝ ի տրապօլիս կմ՝ ի տրայիանուպօլիս յամս անտոնինոսի կայսեր, յայտնեաց զքրիստոնէութ՟ն իւր յաւուր՝ յորում սաբինոս դատաւոր զոհէր կռոց. և ստիպեալ՝ ի նմանէ հաւլորդ լինել զոհից՝ կործանեաց աղօթիւք զբագինն դիոսի. վ՟յ տանջեցին զնա քարամբք և քերանօք, և արկին՝ ի բանտ. ուր կերակրէր զնա հրեշտակ ա՟յ ։ Տարաւ զնա դատաւորն յարակլէա՝ որ և հերակլեա Թրակիոյ. ուր արկին զկոյսն՝ ի հուր, զոր չիջոյց անձրև. քերԹեցին զմորԹ գլխոյն, և կապանօք եդին՝ ի բանտ. և յողջանալ ն՟ր սքանչելեօք և՝ ի լուծանիլ շղԹ-

Թայիսն՝ հաւատաց 'ի Քս Աստուած բան-տապետն կամ դահիճն, և կատարեցաւ սրով ։ Իսկ սրբուհին արկաւ առաջի գազա-նաց․ յորոց 'ի միոյն խածեալ՝ աւանդեաց զհոգին․ և դոմետիանոս եպս թաղեաց զնա անդ յարակլիա ։ ․ Մայ․ 13, կմ 14 ։ Յ․

Լ․ 13 ․

Պողոսայի Հիւլոյ՝ էին մանձինք քասանեւօթն․ և գլխաւորք նոցա բաւթոյի և հերկոս քահա-նայք․ քանզի կռապաշտ արքայն գթայ վին-գուրիքոս կմ յինքուրիկոս 'ի կայսերութե վաղեսի և վաղենտիանոսի՝ մտեալ զօրօք 'ի մայրին՝ ետ հատանել փայտ բազում, և բերել այրել նովաւ զեկեղեցին՝ ուր կային քրիստոնեայք իզ, զորս չկարաց որոշել 'ի քնէ․ և այնպէս կատարեցան 'ի մէջ հրոյն օրհնելով զԱծ ։ Յայնժամ ըմբռնեցաւ և ոմն 'ի քրիստոնէից՝ որ գայր բերելով Է իւր ընծայս յեկեղեցին․ և զնա ևս 'ի նոյն բոց ընկեցին ։ Իսկ մնչխարս սբյն ժողովեաց այրի տիկինն այլոյ արքայի գթաց՝ հաւա-տով քրիստոնեայ, և փոխեաց 'ի տրութե յունաց․ և մասն ինչ 'ի նշխարաց անտի բե-րաւ 'ի կիլիկոն 'ի ձեռն դստեր նորին ։ ․

Մարտ․ 11 ։ Յ․ 26 ։

Պողոսարիոնեանք կոչին չորս եղբարք սեբաստա-ցիք 'ի Ժէ դարու՝ որդիք դաւթի իշխանի վարելոյ 'ի գերութի, որ Է երեց որդւոյն արև կոչեցելոյ անկաւ 'ի հպատոց․ իսկ մնացեալ որդիքն Պողոսարիոնէ, Ռոտորիոսս, Օրա-

Վ

Մըտէս, և Տոսէնս՝ որք անան 'ի ձեռս բարե-
պաշտ մօրն իւրեանց, 'ի չափ հասեալ՝ եղեն
արք զօրաւորք, և կարգեցան 'ի զինուորութ̃ի
ը̃ ձեռամբ այլազգի իշխանին աղեքսասայ կա̃մ
աղեքսասանայ ։ Նախանձեալ զինուորակացն՝
որ յայլազգեաց անտի էին, ընդ գոհարե-
նեանս՝ չարախօս եղեն վնոցանէ առաջի տ̃ն
իւրեանց, թէ որդիք այլազգւոյ գոլով՝ քրիս-
տոնէութ̃ի պաշտեն. և 'ի կամիլ ամիրային
դատել զն̃ն՝ ուրև ուրացօղ եղբայր նց̃ խա-
փանեաց զկրսն, ցուցանելով սուտ̃ և զն̃ն
միակամն լինել ը̃ իւր ։ Ընդ այս դժկամա-
կեալ յոյժ գոհարինեանց՝ յայնմհետէ յայտ-
նագոյն ևս պաշտէին զհաւատս ք̃ի. և մին
'ի նոցանէ ռատինոս կա̃մ ռատիոս երթեալ
կրօնաւորեցաւ 'ի վանս ո̃ր նշանի ։ Յետ ժա-
մանակաց ինչ կոչեալ զն̃ն ամիրային՝ փոր-
ձեաց զմի մի խոստմամբք և սպառնալեօք.
և գտեալ զն̃ն անշեղելի 'ի ք̃նէ՝ յետ ազգի
ազգի տանջանաց ետ գլխատել. զորոց զպատ-
ուական մարմինս ամփոփեցին սեբաստա-
ցիք 'ի տեղւոջ կատարման նց̃ հուպ 'ի Ձա-
նապարհն քառակուսի, յամի իբր 1136.
շձե̃ ։ . յուլիս . 28 ։

Գորանդուխտ, որ ը̃ յունաց՝ Գոլինդուխ, կին
էր մոգպետի պարսից 'ի զ̃ դարու. և եղև
նմա տեսանել յանուրջս զկռապաշտ ծնօղս
իւր 'ի հուր խաւարային, և զքրիստոնեայս
'ի լուսաւոր դրախտի. յոր իբրև կամեցաւ
մտանել՝ արգելաւ վ̃ն անկնունք գոլոյն.

մ̃ն խորև զարթեաւ , գնաց առ քրիստո-
նեայս , և մկրտեալ՝ անուանեցաւ Մարիամ ։
Ազդ եղև խոստովանող արքային , և ետ արկա-
նել զնա 'ի վիրապ անյուշ բերդի . ուր եկաց
անչափասելի յօձից ամս բազումս . և ուսեալ
'ի հրեշտակէ ա̃յ զսաղմոս՝ օրհնէր զա̃ծ ։
Յետոյ եհան զնա որմիզդ որդի խոստովա-
յաւուրս մօրիկ կայսեր . և չարչարեաց պէս-
պէս տանջանօք , այլ յա̃մէ զերծեալ 'ի բաց
արձակեցաւ . և սքանչելի վարուք փայլեալ ,
և շրջեալ յուխտս ե̃կմ՝ հանգեաւ խաղա-
ղութեամբ մօտ 'ի մծբին ։ Դ . յուլ . 22 ։

Յ . 12 ։

Գորդիոս հարիւրապետ տօնելի . հա . Ա .
423 ։

Գուշտազատ պարսիկ , ( որ ը̃ս ասորւոց գրի
գուժադազատ , և յն . վոյթազատ , և լտ ,
ուսթազան , ) էր ներքինի՝ դայեակ շապհոյ
արքայի , և թագաւորի նր̃ . սա քրիստոնեայ
լեալ յառաջն՝ ապա վ̃ն ահի և սիրոյ թա-
գաւորին դարձաւ 'ի պաշտօն կրակի . և տե-
սեալ երբեմն զս̃րբն շմաւոն եպ̃սն պարսից՝
երկիր եպագ նմա , և կամէր համբուրել .
իսկ ս̃րբն դարձոյց զերեսս 'ի նմանէ . յորմէ
զամօթի հարեալ՝ 'ի միտս եկն , թէ ո̃րչափ
ես ծանր է յերեսացն ա̃յ անկանիլ . սկսաւ
լալ զմեղս ուրացութե̃ իւրոյ , և դարձաւ
յա̃մ սրտէ առ ա̃ծ ։ Զայն գիտացեալ շապ-
հոյ՝ հնարէր որսալ զնա անդրէն . այլ տե-
սեալ զհաստատուն միտս նր̃ 'ի ք̃ս՝ ետ գլխա-
տել

տեղւոյն․ և այն՝ զի աղաչելոյ վկային՝ մունետրիկ կարգաւ տալով, թէ գուժգաղատ ոչ են այլ յանցանաց մեռանի, այլ միայն վն քրիստոնէութեան․ զի բարձցի առաջին գայթակղութիւն ։ Ի նոյն աւուրս եղեն և այլ բազում վկայք ՚ի պարսս ։ Տ․ մարտ․ 24, կամ 30 ։ Ծ․ նոյ․ 20․ Լ․ ապր․ 21 ։

Տուող․ ասսեմ ։

Գուրիաս և Սամոնաս տօնելիք․ հտ․ Բ․ 437 ։

Գրատիոս․ տես Սագրատիոս ։

Գրիգոր լուսաւորիչ․ տես ՚ի տօնելիս․ հտ․ Բ․ 520․ և Գ․ 74․ և 321 ։

Գրիգոր աջապահեանց տօնելի․ հտ․ Ս․ 53․ և Ծ․ 144 ։

Գրիգոր ծծաբեան տօնելի․ հտ․ Բ․ 289 ։

Գրիգոր նարեկացի տօնելի․ հտ․ Ս․ 321 ։

Գրիգոր նիւսացի տօնելի․ հտ․ Ժ․ 369 ։

Գրիգոր սքանչելագործ տօնելի․ հտ․ Ծ․ 5 ։

Գրիգոր աղուանից կաթողիկոս, որ և Գրիգորիս, տօնելի․ հտ․ Գ․ 481․ և Լ․ 5 ։

Գրիգոր ռաժիկ, որ և Գրիգորիս վկայ պարսիկ, տօնելի․ հտ․ Բ․ 461 ։

Գրիգոր հռովմայ հայրապետ, մեծն կոչեցեալ, մի ՚ի չորից վարդապետաց արևմտեայց, էր որդի յորդանէս պատրկի, այր կզօն և գիտնաւոր, և կատարեալ առաքինութբ․ որոյ վն կարգեցաւ վերակացու քաղաքին հռովմայ՝ հրամանաւ կայսերն յուստինոսի երկրորդի․ այլ յետ սակաւուց հրաժարեալ՝ կրօնաւորեցաւ ՚ի վանս մէջն անդրէի, զոր շի-

նեղեր 'ի հայրենի տան իւրում. իսկ պապն բենեդիկտոս ա՛ եկաւ զնա առ իւր, և ձեռնադրեաց սարկաւագ. և յաջորդ նո՛ր պեղագիոս բ՛ առաքեաց զգրիգոր 'ի կոստանդինուպօլիս. ուր 'ի գլուխ տարաւ նա բազում ինչ իրս յաւուրս տիբերեայ և մորկայ։ Նա 'ի դառնալ իւրում՝ անդրէն առանձնացաւ 'ի վանս. ուր երևեցաւ նմա հրեշտակ այ՛ 'ի կերպարանս աղքատի, և եկաւ 'ի նմանէ երիցս ողորմութիւն։ Ապա օծեալ հայրապետ յաթոռ սրբոյն պետրոսի յամի 590, կոչէր զերկոտասան աղքատս 'ի սեղան իւր. և յաւուր միում գտեալ ընդ՛ երեքտասան՝ գիտաց, զի մին էր հրեշտակ այն։ Գրեաց մեծն գրիգոր բազում ճառս և մեկնութիւս և թուղթս լի ա՛ծային իմաստութե՛. զարդարեաց զպաշտամունս եկեղեցւոյն հռովմայ, և արար բազում ուղղութիւնս. սա եղև և լուսաւորիչ ազգին անգղիացւոց՝ դարձուցանելով զնո՛ 'ի հեթանոսութե՛ 'ի քրիստոնէութիւն 'ի ձեռն աշակերտաց իւրոց. և լի արդեամբք հանգեաւ 'ի տր՛ յամի 604. և զի սա հաստատեաց և պայծառացոյց զկրօն սրբյն բենեդիկտոսի աբբայի, 'ի նմին կարգէ համարեալ լինի։

Ընդ գրիգորի յիշատակի 'ի մեզ և Պետրոս նախասարկաւագն իւր՝ այր լի հոգւով, և գործակից նո՛ 'ի բազում իրս. որ և արժանի եղև բազում անգամ տեսանել զա՛ղ հո-

գին

գլին աղաւնակերպ նստեալ 'ի վե՛ր շրթանց կամ 'ի վե՛ր գլխոյ սբյն գրիգորի 'ի շարագրել նո՛ր զգիրս. և Է սմին պետրոսի է յօրինեալ տրամախօսութիւնն գրիգորի: Տե՛ս մարտ. 13: Յ. Լ. 12:

ԳՐԻԳՈՐԻՍԵԱՆՔ և ՆԵՐՍԵՍԵԱՆՔ կոչին՝ նք և իմաստուն հայրապետք և վրդպք հայաստանեայց, սկսեա՛լ 'ի գրիգորէ վկայասիրէ՝ մանաւանդ թէ 'ի պետրոսէ գետադարձէ մինչև 'ի ներսէս լամբրոնացին: ՊԵՏՐՈՍ կաթուղիկոս հայոց՝ ԳԵՏԱԴԱՐՁ անուանեա՛լ, է հրաշակաւոր նախ սքանչելեօքն յետադարձութ ջուրց գետոյն՝ 'ի կատարել նո՛ր զջրօրհնէս առաջի վասլի կայսեր, յամի 1022. նհա. և երկրորդ՝ ընտիր շարականօք խաչի և եկեղեցւոյ, զորս յօրինեաց:

Ուսեալ հռչակելի եղև արդեամբք սբն ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ մեծն՝ երբեմն վահրամ կոչեցեալ, որդի գրիգորի մագիստրոսի 'ի զարմէ լուսաւորչին. ընտրեալն 'ի կաթուղիկոսութի յամի 1065. շժդ. որ բազմօք պայծառացոյց զեկեղեցի հայաստանեայց. և թարգմանեաց բազում ճառս և վկայաբանութիս, ուստի վկայասէր անուն ընկալաւ. և վս առաւել փութոյն 'ի խնամարկութի հօտին հետիոտս շրջէր և քարոզէր Է նմանութե առաքելոց: Գնաց և 'ի կոստանդինուպօլիս, և 'ի հռովմ, և անտի եկն յեգիպտոս, յորմ տեղիս թողեալ զանուն սրբութե և իմաստութե. և մինչև 'ի ծե-

րութե̃ ձգնեալ 'ի հոգևոր աշխատասիրու-
թե̃ս՝ փոխեցաւ յերկինս յամի 1105 · շծդ ·
և թաղեցաւ 'ի կարմիր վանս մօտ 'ի քեսուն ։
Գործակից էր նր̃ և քեռորդի նորին Գրիգոր
Եպիսկոպոս Եգիպտոսի · որպէս և միւս քեռորդի
նր̃ Բարսեղ կաթողիկոս · որ կրեաց բազում աշ-
խատութի̃ս վն̃ ազգին , և ծաղկեցոյց զվա-
տակս աշխատասէր վրդ̃պաց ժամանակին · և
վախճանեցաւ առաքինի վարուք յամի 1113 ։

ՇԿԲ ։

Նմանօղ եղև վկայասիրին՝ և որդի քեռ-
որդւոյ նր̃ ապիրատայ իշխանի՝ Գրիգոր կմ̃
Գրիգորիս պահլաւունի՝ աւագ եղբայր շնոր-
հալւոյն , ընտրեալ յաթոռ կաթողիկոսու-
թե̃ 'ի փոքր հասակի՝ վն̃ իւրոյ կատարեալ
իմաստութե̃ և սրբութե̃ · և սա ևս արար
բազում ինչ 'ի պայծառութի̃ եկեղեցեաց
հայաստանեայց , մինչև ոմանց կոչել զնա
վկայասէր փոքր · գրեաց անձամբ և ետ
գրել եղբօր իւրում և այլոց իմաստուն վար-
դապետաց ժամանակին բազմապատիկ ճառս
և մեկնութի̃ս և պատմութի̃ս , ոչ̃ և երգս
շարականաց ։ Նա 'ի ծերութե̃ իւրում ձեռ-
նադրեալ 'ի տեղի իւր կաթողիկոս զնր̃ եղ-
բայր իւր զներսէս կլայեցի , որ և շնորհա-
լի , հանգեաւ 'ի տր̃ յամի 1165 · ոժդ ։ Իսկ
զվարս շնորհալւոյն տեսցես 'ի կարգի տօ-
նելեաց՝ գոյգ ը̃ լամբրոնացւոյն · հտ · Ա ·

330 ։

Յաջորդ շնորհալւոյն եղև յամի 1173 · ոիբ ·
եղ-

եղբօրորդի նր Գրիգոր Տղայ կոչեցեալ, այր հզօր արդեամբք և բանիւք, զարդարեալ ածային գիտութբ. որ յառաջագոյն զաշխատասիրութիս շնորհալւոյն վն միաբանական սիրոյ ը յոյնս 'ի ձեռն ազգային ժողովոյ, որպս և զամ եկեղեցական բարեկարգութիս և բարեզարդութիս՝ աջակից ունելով զլամբրոնացին :

Եւ սոքօք և զկնի նց երևելի եղև և Գրիգոր Սկեւռացի՝ միւս եղբօրորդի շնորհալւոյն, արժանաւոր կաթողիկոս հայոց զկնի գրիգորի գահավիժի՝ յամի 1195. ոխդ. և օծօղ լեոնի 'ի թագաւոր հայոց առաջին՝ 'ի ցեղէ ռուբինեանց. և ոչ երևի 'ի յիշատակարանս մեկնութե թղթոց կաթողիկեայց յօրինելոյ իբր ոսկի շղթայ՝ բանիւք առաջնոց վդպաց, կամ սա ինքն գրիգոր ապիրատ է հեղինակ նր հաւաքօղ, և կմ համդիսացուցիչ աշխատասիրութեան շնորհալւոյն : Եւ պարզաբար՝ յետ սրբց թարգմանչաց այս նք հայրապետք Գրիգորիսեանք և Ներսէսեանք են պատճառք ամ հոգևոր բարեաց ծաղկելոյ յեկեղեցի հայաստանեայց. և յիշատակ նց օրհնութբ : ❦ . յուլ. 30. կմ օգոստ. 9 :

## Դ.

Դաղմատիոս ճգնաւոր՝ երբեմն զօրական 'ի կոստանդինուպօլիս առ թէոդոսիւ փոքու, տուեալ

տուեալ կնոջ իւրում մասն յընչիցն , և ըդ-դուստրն եղեալ 'ի վանս կուսանաց , զմնա-ցեալ ինչս բաշխեաց աղքատաց , և Է՟ որդ-ւոյ իւրում փաւստոսի եմուտ 'ի վանս սբ՟ հօրն իսահակայ , որ մարգարէացեալ էր ըդ-հրաժարումն նր՟ յաշխ՟ . և եղև միայնակեաց ընտիր և հոգեւոր . և զկնի իսահակայ հայր վանից : Սա կանխաւ գուշակելով զչարիս Նեստորի՝ ոչ ետ նմ՟ թոյլ գալ յողջոյն իւր . և 'ի ժամանակս ժողովոյն Եփեսոսի՝ քանզի Նեստոր արգել զճանապարհս , հարք ժողո-վոյն եդին գիր 'ի մէջ գաւազանի , և 'ի ձեռն աղքատի միոյ յղեցին առ սբ՟ հայրն դալմա-տիոս . և նա ա՟ծային հրամանաւ ելեալ յա-ռանձնութ՟է՝ եբեր զգիրն առ թգ՟ւորն . և ինքն եկաց մինչև ցպատրիարգութ՟ի սբ՟յն պրոկղի . և լի արդեամբք հանգեաւ 'ի տր՟ :

. օգոստ . 2 , կմ՟ 3 : Օ . 3 :

Պաշտօն տօնելի Է՟ կողմայր . հտ . Ա . 222 :

Պատմութիւն կամ պատմագրութիւն ընթերցող եկեղեց-ւոյն աւղոնայ 'ի Լիւրիկէ , յերեսաց հալա-ծանաց կռապաշտից ժողովեալ զգիրս և զա-նօթս եկեղեցւոյ՝ թաքեաւ յամուր տեղի ծովահայեաց . բայց հասեալ անօրինաց 'ի վր՟ նր՟՝ առին զնմ՟ , և զնա ստիպէին 'ի պաշ-տօն բաքոսի՝ որ և զխոնարհս չամ՟ արբեցուէ՟ . և գտեալ զերանելին հաստատուն 'ի քս՟՝ հա-տին զգլուխ նր՟ , և 'ի ծով ընկեցին . զոր եգիտ փիլիպպոս երէց 'ի ցամաքի , և թա-ղեաց . և նոյնժամայն ձիթենի ասի բու-

սեալ

սեալ 'ի վ՛ր գերեզմանի սրբ̃յն ։ Հ. փետր. 2, կ՛ց 3 ։ Տր̃ ի̃ կլ. յունվար. 23 ։ Յ. յունվ. 16 ։

Դանիէլ մարգարէ տօնելի՝ ը̃ երիս մանկունս. Հտ. Գ. 422 ։

Դանիէլ ասորի աշակերտ լուսաւորչին տօնելի. Հտ. Գ. 481 ։

Դանիէլ ճգնաւոր տօնելի. Հտ. Ա. 290 ։

Դանիէլ սիւնակեաց 'ի միջագետաց ասորւոց՝ հնգամեայ կրօնաւորեալ 'ի վանս, ապա առնու զօրհնութիւն սրբոյն սիմէօնի սիւնակեցի, և գայ ազդմամբ ա̃յն յանապատն մերձ 'ի բիւզանդիա. ուր նախ փակեալ զանձն 'ի տաճար կռոց՝ յաղթեաց փորձանաց դիւաց. ապա եւ եկաց 'ի վ՛ր բացօթեայ սեան ըստ սիմէօնի՝ անտանելի ճգնութբ̃ զամս յոլովս. մինչև կծկիլ մարմնոյն, և դնիլ իբրև կոճղ ։ Կայսրն լևոն եկն անձամբ̃ 'ի տես նորա. և սրբ̃ն դանիէլ ետ նմա խրատս օգտակարս, առաւել՝ ներողամիտ լինել. և ինքն 'ի խորին ծերութե փոխեցաւ առ ա̃ծ ։ Հ. դեկտ. 16, և 22 ։ Տր̃ ի̃ կլ. և Յ. Լ. դեկտ. 11 ։

Դաւիթ վկայ 'ի ուղղուստաւեայ միւսիոյ առ դիոկղետիանոսիւ, ըմբռնի 'ի կռապաշտից 'ի տօնի կռօնոսի չ̃ւյ. զի 'ի վ՛ր նր̃ էր անկեալ վիճակ զոհ լինելոյ. իսկ նա ասէ. լաւ է ինձ մեռանիլ վ՛ն անուանն ք̃ի, և ոչ 'ի պատիւ պղծոյն կռօնոսի. վ՛ն դատեալ զնա քաղաքի դատաւորի՝ ետ վճիռ գլխատման. այլ նախ ածին զվկայն առաջի բագնին, և

եղին

եղին 'ի ձեռս նո՛ր հուր և խունկ, զի հար-
կաւ ձգեսցէ առաջի կռոնոսի․ իսկ նա պա-
հեաց յափն իւր մինչև 'ի տեղի գլխատման,
ուր և կատարեցաւ իսկ ։ Տ․ նոյ․ 22 ։ Յ․
Ի․ 20 ։

Պօղոս, Ոսկեայ և Պօղեբոս նիկոմիդացիք՝ յաւուրս հալածանաց 'ի տօնի կռոց դիմեն 'ի մեհեանն՝ յրոճեցին զզոհս հեթանոսաց․ և նոքա յետ բազում տանջանաց՝ կապեցին վէմս 'ի պարանոցս նց, և ընկեցին 'ի խորս․ Է նոսին գրին և ժԷ զօրականք վկայք ։ Տ․ հոկտ․ 15 ։ Յ․ Ի․ 21 ։

Պաւղոս Նարգարէ տօնելի․ հտ․ Ա․ 239 ։

Պաւղոս անյաղթ տօնելի․ հտ․ Բ․ 309 ։

Պաւղոս գոմնեցի տօնելի․ հտ․ Օ․ 224 ։

Պաւղոս և Պօղոտիէն եղբարք զնունիք՝ իշխանաւուն երկտասարդք առոյգք և գեղեցիկք, ըմբռնեալ վն 'ի քն հաւատոյ յասպատակայ յուսփայ ոստիկանէ ածան կապանօք 'ի դուռն․ և տեսեալ ոստիկանին զվայելչութի հասակի նց՝ խանդաղատէր զնոքօք, և հրապուրեր բազում խոստմամբք յայլազգութի․ այլ գտեալ զնս անշարժելի 'ի սիրոյն քսի՝ ետ տանել 'ի հրապարակ, և գլխատել․ ուր նախ զկրտսերոյն հատին զգլուխ՝ Է աղաչելոյ աւագ եղբօրն, և ապա զնորա, յամի 917․ յկզ ։ Տ․ ապր, 16․ կմ մայ․ 27 ։

Պաւղոս և Սամսոն եղբարք՝ որդիք փռամիրոսի ալքայի ռուսաց դարձելոյ 'ի քն 'ի ժԷ դարու, յետ մահուան բարեպաշտ հօրն իւ-

րեանց

րեանց կայքն առաքինաբար. իսկ անդրանիկ եղբայրն նց՝ ոչ համամայր՝ ժանտն եւս տապոլկաս՝ գաւաձանուք սպան զանմեղսն. և ած յայտնեաց բազում սքանչելեօք ըզսրբութի՛ նց. մնյ շինեցաւ յանուն նոցին տաճար մեծ հինգգմբեթեայ: ✝. յուլ. 8:

ՊՕՂՈՍ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ հայկական, Պաւղիկ կամ Պաւղին կոչեցեալ, գուցէ Թօղիկ, կամ ՚ի գունոյ, (լտ. ՊԱՒՂԻ՛ՆՈՒՍ. իտ. ՊԱՒՂԻ՛ՆՕ), պարծանք տանս Հայաստանեայց, և փառք ծրութե՛ն լուքայեցւոց յիտալիա, ծնեալ ՚ի մեծն Հայս՝ ՚ի կենդանութե սրբյն գրիգորի նարեկացւոյ՝ ՚ի սկիզբն ժա դարու, և կըրթեալ յածպաշտութե, եղև կամաւոր աղքատ վն քի. քանզի բաշխեալ աղքատաց զմեծութի իւր՝ սկսաւ շրջիլ յուխտս որպս անծանօթ ոք. գնաց յԵմ, անտի ՚ի Հռոմ. ապա դէմեդեալ երթալ և ՚ի սպանիա յուխտ սրբյն յակոբայ՝ զճանապարհայն (յերթալն, կամ ՚ի դարձի) եկն զտեղի եաւ խոնջ մարմնով ՚ի լուքա քաղաք ետրուրիոյ, ուր երկրին թոսկանայ իտալացւոց, առընթեր եկեղեցւոյ սրբյն միքայելի հրեշտակապետի՝ յանկելանոցն հիւանդաց, որ յետոյ կոչեցաւ յանուն իւր՝ հիւրանոց սրբյն պաւղինոյի: Սրդ որպս յամ տեղիս եթող այրն այ զնշանակս կատարեալ առաքինութե իւրոյ, նս աւաւել ՚ի լուքա. մինչ զի տիկին ոմն ածասէր՝ ալթա անուն, ջերմեռանդն հաւատով եա բերել ՚ի մերձակայ ապարանս իւր զայրն այ,

և

և տուե՛լ նմա սենեակ մի առանձին՝ ասպն-
ջական եղև օտարացելոյն վ̄ս ք̄սի ։ Նա
նա և 'ի տկարութե̄ անդ իւրում ձգնէր 'ի
սովորական աղօթս անդադարելիս և 'ի տե-
սութ̄իս հոգևորականս՝ հանդերձ պահօք
պնդութե̄ . զի յերկուս աւուրս միանգամ
ճաշակէր , և այն հաց և ջուր լոկ . մինչև
փութապէս եհաս նմա հրաւէր կոչման 'ի
տ̄նէ ։ Ա̄յ երեք աւուրբք յառաջ ք̄զ վախ-
ճանելն կոչեաց զտիկինն զալթա , և պատ-
մեալ նմա զօր ելից իւրոյ յաստեացս՝ օրհ-
նեաց զնա իբրև զհիւրընկալ պանդխտութե̄
իւրոյ , և յաւուրն երրորդի աւանդեաց զհո-
գին 'ի ձեռս ա̄յ , յամի տ̄ն 1050 . և 'ի թուի̄ն
հայոց . ն̄ղթ . յետ կալոյ 'ի լուքա իբրև զա-
միս մի , ո̄ր իբր զաւուրս տասն 'ի հիւանդա-
նոցի , և զաւուրս 21 , 'ի տան ալթայի . որ
և ետ թաղել զայրն ա̄յ պատուո՛վ 'ի գերեզ-
մանատան հասարակաց մօտ 'ի ս̄բ միքայէլ ։
Եւ ահա յետ քանի մի աւուրց սկսաւ ա̄ծ
յայտնի առնել զսքանչելիս իւր 'ի վ̄ր ս̄ր̄յն .
քանզի նախ երևեցաւ ս̄ր̄ն միում յախտա-
ժետաց՝ որ նստէր առ գերեզմանաւ ն̄ր , և
իսկ և իսկ փարատեցաւ յախտէն ։ Եւ ապա
յանկարծօրէն բուսաւ որթ ողկուզալից 'ի
տապանէ ս̄ր̄յն . և հիւանդք՝ որք ճաշակե-
ցին 'ի հրաշալի խաղողոյ անտի , ընկալան
զառողջութի̄ . լսելի լինէին և բարբառք
հրեշտակաց 'ի տեղւոջն՝ հանդերձ բուր-
մամբ անուշահոտութե̄ . եղեն և այլ նշանք

երև-

երևելիք ։ Ս՟ոյ և եպս քաղաքին տէր Անսել-
մոս , որ եղև փոքր մի կենի քահանայապետ
Հռովմայ , յամի 1061 ․ կոչեցեալ Աղեքսանդր
Բ՟ , ետ հանել զպատուական մարմին սրբոյն
՚ի տեղւոջէ անտի , և առանձին կաւեղէն
տապանաւ հանդոյց ՚ի տաճարի սրբոյն ղու-
կասու , որ այժմ ասի սրբոյն յովսեփայ ։ Նու
յաւուրս անդ փոխադրումն ՚ի դիմել խուռն
բազմութեան յեկեղեցի անդր՝ բազում սքան-
չելիք եղեն ՚ի վերայ կուրաց , կաղաց , և այ-
լոց ախտաժետաց ։ Նու յայնմհետէ ՚ի յա-
ճախել սքանչելեաց օր քան զօր՝ նա ինքն
աղեքսանդր պապն ետ փոխադրել զմարմին
սրբոյն հանդերձ կաւեղէն տապանաւ յայլ
փառաւոր տապան կճեայ , և անդրէն հան-
գուցանել առ խորանաւ սրբոյն ղուկասու ,
կազմեալ մատուռն առանձին ։ Նու յետ ժա-
մանակաց՝ յամի 1547 ․ ՚ի յուլիսի 28 ․ ՚ի նո-
րոգել զմատուռն սրբոյն՝ բացին զկրկին տա-
պանս ․ և գտին զմարմին սրբոյն անապական
բազում մասամբք՝ հանդերձ անպատմելի
անուշահոտութ՟բ , և հանգուցին ՚ի նորաշէն
խորանի ։ Իսկ յամի 1592 ․ ամփոփեցին փա-
ռօք յաւագ բեմի նորին տաճարի ։ Դարձեալ
եղև երևելի փոխադրութիւն նշխարաց սրբոյն՝
յամի 1646 ․ ՚ի յուլիսի 30 ․ և եդաւ ՚ի նոր
տապան նոճի՝ մինչ կաւեղինի , հանգու-
ցեալ անդրէն ը՟ աւագ խորանաւ , ունելով
յառաջոյ զապակափեղկս ․ և յայն հանդէս
կոչեցեալ էին յանկոնայէ ժ՟Բ իշխանք

հայոց

Հայոց վաճառականք, որք ունէին 'ի Թա-
փորի զամպ հովանին ազգային սբյն։ Իսկ
կաւեղէն տապանն եդաւ 'ի տեղի աւազանի
օրհնեալ ջրոյ. յորմէ բազումք գտանէին
զբժշկութի ախտից։ Հանգստացաւ յոյժ և
գլխարկ սբյն՝ Թադէայ կարմրագոյն. զոր 'ի
տօնի սբյն տարեալ գլխաւոր կանոնիկոսի
յապարանս դքսին՝ դնէ 'ի գլուխ նր և ծե-
րակուտի նր հետզհետէ, տալով համբու-
րել և պաշ նր սբ ամփոփեալ յանօթ արծա-
թի. ուր և յեկեղեցւոջ զնոյն առնեն բազ-
մութեան եկելոց յոտս սբյն, և անպակաս
տեսանին սքանչելիք նշանագործ սբյն։ Որ
և գրեցաւ 'ի դասս սբց՝ 'ի նմին աղեքսան-
դրէ Գ 'ի նոյն դարու, կմ յաղեքսանդրէ Գ,
որ նստաւ յամի 1159։ Զայսմ ոմն Ճոխա-
գոյն խօսին բոլլանդեանք ընդ այլ բազում
մատենագիրս. տես և զեղեալն քաղուա-
ծով 'ի հայերէն Ճագրութե 'ի հատ. Բ. եւ-
րոպ. 522 = 528։ Ի. յունիս. 3։

ՊԵՐԵԳՐԻՆՈՍ վկայ տօնելի. հռ. Ի. 521։

ՊԷՌՈՆՉՈՐԵԴՈՍ կմ ԴԷՌՈՆՉՈՐԵԴԷՍ պմոնացի՝ զօ-
րաւոր քարոզ բանին այ, լուեալ՝ եթէ խնդ-
րեն զանձն, և թէ փոխ իւր վկայեաց իրա-
ւափառ հովիւ ոք, ետ զանձն 'ի ձեռս խնդ-
րողաց. և յետ տանջանաց և քերանաց և
նեղութե բանտի՝ կատարեցաւ և ինքն սրով։
Հ. ապր. 10, կմ 12։ Յ. մայ. 11։ Ի. մայ.
10։

ՊԵՏԱԿՈՍ կմ ՓԵՏԱՃԿՈՍ սպանիացի՝ յետ բա-


րե-

րեպաշտ սնընդեան 'ի մանկութենէ կրօնաւո-
րեալ 'ի վանս եղբարց մինորից ոչ աշխատա-
ւոր եղբայր՝ յառաջեաց 'ի ճգնութե և 'ի
սրբութե. և անդէն գոլով 'ի դպրութե՝
բարբառէր զհոգևոր բանս խորին տեսութ.
մինչև երթալ և 'ի գանարեան կղզիս, և
դարձուցանել զբազումս 'ի քս : Եկեալ 'ի
Հռովմ յամի 1450, ծառայէր հիւանդաց 'ի
վանս ուր չ'էր ասացեալ՝ այնչափ սիրով,
մինչև երբեմն լեզուով զվէրս ոմանց. և զայլս
օծանել իւղով կանթեղին՝ որ առաջի պատ-
կերի սբ ածամօրն, և բժշկել նշանաւ սբյ
խաչին : Եւ յետ բազում գործոց առաքի-
նութե վախճանեցաւ 'ի կոմպղուտոն՝ կան-
խագէտ լինելով մահուն, յամի 1463. և վս
բազմութե ամբոխին ընթացելոյ 'ի համ-
բոյր նշխարաց նր՝ մնաց անթաղ ոչ սակաւ
ամիսս, բուրելով սքանչելի հոտ անուշից :

Լ. Նոյեմբ. 13 :

ՊԱՍՔԱՍԵԱՅ ՎԿԱՅՔ նահատակեցան 'ի հոնաց
փոքր մի յետոյ քան զփոխումն սրբյն մեսրո-
պայ. քանզի յորժամ ոմանք յաշակերտաց
նր եկելոց յաղուանս՝ յետ շրջելոյ յուխտս
եհմի՝ եկեալ բնակէին յարցախ ծի 'ի գա-
ւառին խաչենոյ մեծաւ ճգնութ, եկն ե-
հաս արքայն հոնաց յափն կուր գետոյ, և
արձակեաց զզօրս իւր ը ամ կողմն յաւար և
'ի գերութի : Ոմն 'ի զօրագլխացն սպան զո-
մանս յաշակերտաց սրբյն մեսրոպայ. ը որս
և զՊ. ՊԱՒՂԻԼՈՍ ՓՈՔՐԱՆՈՅ վեկեալն յենմէ. իսկ

այլքն տանջեցան և արձակեցան ։ Այլ 'ի մէջ գերելոցն և կին մի մեծազգի՝ չքնաղ տեսլեամբ , Ագաթոնիկէ անուն . զսա կամեցաւ զօրագլուխն առնուլ իւր 'ի կնութիւն . այլ յոչ հաւանիլ նր՟ կամաց բարբարոսին՝ գան հարին զաղախինն ք՟նի , և քարշեցին ը՟ երկիր . մինչև պատառ պատառ անկանիլ մարմ՟նոյն , և այնպէս կատարեցաւ ս՟բ Թագուհին ։ Իսկ 'ի գիշերի ծագեաց լոյս աստղատեսիլ 'ի վ՟ր կաթուածոյ արեան նր՟ . ուստի հաւատայ զօրագլուխն 'ի ք՟ս հանդերձ զօրօքն . և մկրտեալ 'ի քահանայից՝ անուանեցաւ Աղէքսիոս . նմ՟ և երկու որդիք նորա՝ Սոփոնէս և Նարանոդէս . իսկ պնչխարս ս՟բ Թագուհւոյն ամփոփեցին 'ի բլրակին , որ կոչեցաւ աստղաբլուր ։ Լուեալ արքայն հոնաց զանցս Թէոփիլոսի՝ կոչեաց զնա առ ինքն Երէտոնն արամէի պատուաւորօք . և տեսեալ զհաստատութիւն խորհրդոց նց՟ 'ի ք՟ս՝ կատարեաց 'ի բերան սրոյ . յղեաց և արս 'ի վերայ որդւոյ նորա , և Կաստրեալ զօրականին՝ որք անկեալ էին 'ի լեառն մօտակայ . և ետ կոտորել զնս՟ անդ . ուր և 'ի մի վայր դիզեալ զմարմինս ն՟ցա իբրև զփայտս , կի՟ 'ի վերայ փայտից , հրոյ ետուն ճարակ . յորմէ և տեղին կոչեցաւ դիզափայտ . որ յետոյ եղև վանք , ուր և միայնակեացք ոմանք նահատակեցան 'ի ձեռաց այլազգեաց ։ ⁘ . մարտ.

29 ։

Պիետրոս և Պիետենոս վկայք 'ի ժամանակս հա-

հալածմանց կռապաշտից կատարին 'ի լաւու-
դիկիա աստուց հարուածովք գանից․ որոց
նահատակակից առի լինել և այլ ոք Գուոդի-
դէս անուն ։ Հ․ Յ․ Լ․ սեպտ․ 11 ։
Գուոդիդէս բժիշկ տօնելի․ հա․ Ն․ 153 ։
Գուէոննէսնէոս արիսպագացի տօնելի․ հատ․ Ը․
139 ։
Գուէոս ոք հայրն յանտիոքայ աստուց՝ առ
մեծն Թէոդոսիւ, խիստ վարուք ճգնեալ՝
երկիցս միայն 'ի շաբաթու ճաշակէր հաց և
ջուր․ ապա եկեալ 'ի կոստանդինուպօլիս՝
եգիտ յեզր քաղաքին քարայր մի, զոր ա-
սէին լինել բնակարան դիւաց․ և 'ի կանգ-
նել սեղն զգաւազանն 'ի դուրս այրին՝ ար-
մատացաւ և եղև ծառ պտղաբեր․ և զտե-
ղին շինեաց վանք արքունի ծախիւք․ բղխե-
ցոյց և ջուր աղօթիւք․ յարոյց և զմեռեալ
մի՝ որ անկեալ էր 'ի ջրհոր․ և եկաց այլ ևս
սքանչելի գործովք յաւուրս փոքուն Թէո-
դոսի և ատտիկոսի պատրիարգի, պատուէ-
ալ զմեծն անտոն ։ Ս տանգեալ էր երբեմն
անշնչութեն մինչև 'ի մահ․ և իբրև եկն 'ի
տես նորա ատտիկոս եպ աղեքսանդրի պա-
տրիարգին անտիոքայ՝ եբաց ոք հայրն դիոս
զաչս իւր, և ասէ․ շնորհեաց ինձ այծ այլ
ևս ժե ամ 'ի կատարել զշինութի վանացս
և եկեղեցւոյ․ և եղև այնպէս․ և յետ լըր-
ման ժամանակին երևեցաւ նմա հրեշտակ
այ, և հրաւիրեաց զնա յերկինս ։ Հ․ Յ․
յուլիս․ 19 ։

Դոմետիանոս կմ դոմետիոս ճգնաւոր նահատակ՝ յաւագն էր մոգ ՚ի պարսս. և ուսեալ ըզ-ճշմարտութի քնի յաքասայ ումեմնէ առ մեծն կոստանդիանոսիւ, եթող զծնօղս և զինչս իւր, և եկեալ ՚ի մծբին՝ եմուտ ՚ի վանք մի. ուր լուեալ զտրտունջ կրօնաւորաց ըդ առաւել ժուժկալութե իւր՝ գնաց ՚ի վանս սարգսի և բագոսի. և եղև նմանօղ վարուց հօր վանացն՝ որ էր այր մը՝ նուրբէն անուն։ Եւ եղեալ նր սարկաւագ՝ տեսանէր զաղաւնի թռուցեալ ՚ի վր նը խորհրդոյն, և ՚ի բաց վարէր քշոյաւ. մինչև հասու եղև, թէ հոգի ոչ է աղաւնակերպ երևեալ։ Եւ յորժամ զնոյն տեսիլ ետես աղօթիւք նորա և հայրն նուրբէն, կոչեաց զսբն յակոբ ձեռնադրել զդոմետիանոս քահանայ. այլ նա փախեաւ ՚ի լեառն աւագում, և եղև խոտաճարակ զամս ը. և առեալ շնորհս բժշկութեան՝ սկսաւ քարոզել ՚ի միջագետս և դարձուցանել զանհաւատս. վսն յուլիանոս իբրև անցանէր ընդ այն՝ լուեալ զհամբաւ սրբյն՝ ետ քարկոծել զնա երկու աշակերտօք հանդերձ։ Լ. օգոստ. 8, կմ 7։ Յ. մարտ. 7. (տես և օգոստ. 7. և մարտ. 23։) Լ. օգոստ. 7։

Դոմետիանոս կմ դեմետրիանոս վկայ ՚ի դաքուդայ դեղջէ, կմ ՚ի գաւառէն աբուդենայց, ՚ի հալածանս մաքսիմիանոսի դատեալ ՚ի պողղիոսէ դատաւորէ՝ յետ հրաշալի ատենախօսութե կատարի սրով. և մարմին նր փայլէ

սքան-

սքանչելի նշանօք ։ Տ. նոյ. 14։ Յ. 15։

ՊՐՈՎԻՆՉԻԿՈՍ, որ թարգմանի տիրական կամ Դրուանի, ( որ 'ի մեզ կայ տէրուկ կմ տէրոց անուն, և 'ի յոյնս կիւրակոս և կիւրեղ ), հիմնադիր կարգին քարոզչաց՝ որոց եղեն հետևօղք և ջահուկք, էր սպանիացի 'ի գա-լարոկայ քաղաքէ, որդի փելիքսի կուսմա-նեան և յովհաննայի տեծայ. որ նախ քան զծնանել զաւակին տեսանէր յանուրջս 'ի նշանակ նր, զի սկունդ մի կրէր 'ի բերանի մոմեղէն վառեալ լուսատու ջհի ։ Նաև յետ ծննդեան և մկրտութե մանկանն՝ կնքամայր նր ետես 'ի վր գլխոյ նր աստղ մի պայծառ նոյնպէս լուսատու երկրի ։ Սնաւ դոմինի-կոս յաւաքինի վարս և յուսումն բարեպաշ-տութե, որպ և 'ի գիտութի փիլիսոփայութե և ածաբանութե 'ի դպրատան բալենտիայ կմ վալենսիայ, ուր էր նախ դպրոցն սալա-մանգայ ։ 'Ի ժամանակս սովուն վաճառեաց զգիրս իւր անգամ, և ետ կարօտելոց. զի էր յոյժ աղքատասէր ։ Կամէր և զանձն ան-գամ վաճառել 'ի փրկանս առն միոյ գերե-լոյ 'ի մաւրիտանացւոց. բայց ոչ յաջողեաց ։ Զարդարեալ իմաստութբ և հասակաւ՝ ըստ հրաւիրելոյ դեկոսի եպսի եւմուա դոմինի-կոս 'ի կարգ կանոնաւոր երիցանց կրօնաւո-րելոց ըստ կանոնաւ սրբյն օգոստինոսի յեկե-ղեցւոյն ոքսոմայ. և եղև օրինակ բարեաց ա-մենեցուն յաղօթս և 'ի պահս, և 'ի գործս սիրոյ և խոնարհութե. ունէր և զշնորհս

արտասուաց · և ընթերցուածով գրոց հօրն կասիանոսի և հարանց վարուց՝ նոցին լինէր նմանօղ յամի կատարեալ առաքինութեք · վ՟յ և կանոնիկոսքն ընտրեցին զնա իւրեանց գլուխ և առաջնորդ ։ Ի.ՅԼ յետոյ հռոմա-նաւ թգւորին առաքեցաւ ը̃դ եպ̃սին վ̃ն կա-րևոր գործոյ 'ի գաղղիա · ուր եցոյց դոմի-նիկոս զհզօր քարոզութի և զճ̃ծաբանութի իւր ը̃դդէմ նորընծիւղ հերեսիովտայց աղբի-գեանց 'ի տոլոզա քաղաքի · մինչև աշխա-տեալ զամս եօթն՝ ոչ միայն պահեաց զուղ-ղափառս յողջմտութե, այլև դարձոյց զբազ-մութի հերետիկոսաց, որք և զայլս 'ի չար ձգհաց · թող զհալածանս և զվտանգս՝ զորս կրեաց ։ 'Ի միում նուագի եդաւ դաշն, զի արկցեն 'ի հուր մատեան մի չարափառաց, և մատեան մի ուղղափառական գրեալ 'ի դոմինիկոսէ · և ահա նոցայն այրեցաւ և յա-ճիւն դարձաւ, իսկ դոմինիկոսին՝ երիցս ոստեաւ 'ի դուրս, և անկէզ պահեցաւ ։ Եւ 'ի յաճախել բազմաց յաշակերտութի և 'ի գործակցութի դոմինիկոսի, որով լինէր շահ մեծ հոգւոց, ձևանայր միաբանութի և կարգ քարոզչաց բանին ա̃յ · որում ձեռնտու եղեն և առաջնորդք և իշխանք · այլ առաւել աջ հզօրին, և հովանաւորութի սրբ̃ ածածնի՝ որում ջերմ սիրով պաշտօնեայ էր դոմինի-կոս, յաջողէին զդարձ մոլորելոց իբր հա-րիւր հազարաց ։ 'Ի լինել ժողովոյն լատե-րանու եկն 'ի հռոմ ընդ եպ̃սին տոլոզայ

նաև

նաև դոմինիկոս . և խնդրեաց 'ի քհնյապե-
տէն Իննովկենտիոսէ գ զհաստատութի կրգին
իւրոյ . իսկ պապն ասէր , լաւ է յարգել և
պահել զառաջին կրօնս , քան նորս հաստա-
տել . մինչև եղև նմ տեսանել 'ի տեսլեան՝
զի մեծ եկեղեցին սրբյն յովհաննու լատե-
րանու 'ի հռովմ մերձ էր 'ի կործանումն , և
դոմինիկոս եդեալ զուս իւր 'ի ներքոյ՝ եղև
յենարան հաստատութե նր . ապա հաճե-
ցաւ ը խնդիր սրբյն , միայն թէ ընտրեսցէ
նա իւրովքն հանդերձ զմի 'ի կանոնաց հին
կարգաց կրօնաւորաց : Եկեալ սրբյն 'ի տօ-
լոզա առ վեշտասան աշակերտս իւր՝ հաւ-
տատեաց նոքօք ընտրել զօգոստինեան կա-
նոնս , փոխելով ինչ ինչ յաւելել խստա-
կրօնութի . և դարձաւ անդրէն 'ի հռովմ ,
ուր այն ինչ նստեալ էր ոնորիոս գ . և նր
հաւանութբ հաստատեցաւ կարգն քարոզ-
չաց դոմինիկեանց 'յամի . 1216 : Տեսանէր
երբեմն հոգւով սբ հայրն դոմինիկոս , զի
տր յս քս զայրացեալ 'ի վր աշխի՝ կամէր հար-
կանել զերկիր երիւք նիզակօք որ 'ի ձեռին,
սատակել վն երից չարեաց՝ հպարտութեան,
ագահութե , և անառակութե . իսկ մայր
տն աղաչէր զմիածինն՝ ներել փոքր մի . զի
ահա ծառայք քո ասէ դոմինիկոս և Ֆրան-
չիսկոս շնորհօք քո մաքրիչ են աշխի յայսպիսի
ախտից : Եւ արդարև երկոքեին այս արք
սքանչելիք՝ եղեն նոր առաքեալք նորոգիչք
երկրի : Երևեցաւ սբ տծածինն յայլևայլ

նուաճս սրբոյն Դոմինիկոսի, և եցոյց նմա ազգի ազգի նպաստս. որպէս և զձև զգեստու կրօնին. վասն և առանձին պաշտպան ճանաչի կարգի նորա, որ խնկախնկ սկսաւ տարածիլ. զի շինեցան բազում վանորայք՝ սկսեալ 'ի Հռովմայ, ուր շինեաց սրբն զերկուս վանս. մի՝ արանց, և միւս ևս կանանց: Սրբար և սքանչելիս մեծամեծս. յորս է և յարութին մեռելոյ երեցունց. և լի առաքեամբք ճգնութե և քարոզութե հանգեաւ 'ի տր՝ 'ի բոնոնիա, այն է պոլոնեա իտալիոյ, յամի 1221, կամ 1223. իբր ծա ամաց. և յետ տասն ամաց կարգեցաւ 'ի դասս սրբոց: Ս. օգոստոս. 4:

Դոմնա կոյս տօնելի է ինդոսի ներքինւոյ. հտ. մ. 158:

Դոմնա կամ Դոմնինա վկայուհի այլ առ Դիոկղետիանոսիւ, յանարզաբայ կիլիկիոյ կամ յանալըխայ լիկիոյ՝ մատնեալ 'ի ձեռս լիւսիայ դատաւորի՝ համարձակ դաւանէր զՔս, և անարգէր զկուռս. վասն զան հարին զնա ուժգին, և շամփրօք խանձողեալ զոտսն՝ արկին 'ի բանտ. դարձեալ բրածեծ արարին, և քարշեալ քակտեցին ազդանաւ զամ յօդուածս մարմնոյն. և այնպէս աղօթելով 'ի բանտի աւանդեաց զոգին: Հ. Յ. Ս. հոկտ. 12: Տր իէլ. հոկտ. 14:

Դոմինոս կամ Դոմնինոս Թեսաղոնիկեցի էր այր ջերմ յամենապաշտութե. և 'ի շինել մաքսիմիանոսի ասպարանս 'ի Թեսաղոնիկէ՝ կոչեաց զնա

և

և ասէ․ զի՞որդ իշխես դու պաշտել զՔս՛ 'ի
լինել իմ աստ, և ոչ զոհես դիցն իմոց․ իսկ
մկայն զօրաւոր բանիւք նշաւակեաց զստու-
թի կռոց, և ջատագովեաց զքրիստոնէու-
թիւն․ մնչ ետ բռնաւորն հարկանել նախ
զբերանն նր, և ապա ջարդել զոլորս նր ար-
տաքոյ քաղաքին․ ուր մնաց երանելին խոր-
տակեալ անդամօք զաւուրս եօթն, մինչև
աւանդել զոգին ։ ⁖ Հոկտ․ 19։ Յ․ Լ․ 1։

Տր իէլ․ 24։

Պօղոսն կմդոսն եպս՛ էր մի 'ի քահանայից
գերելոց Ը իննհազար քրիստոնէից, զորս
վարեաց շապուհ 'ի տրութէ յունաց․ և 'ի
Ճանապարհի հիւանդացեալ հեղինողորս
եպսն՛ ձեռնադրեաց զդոստն յեպսութի․
որ և ոմ քաջ հովիւ զօրացուցանէր զհաւա-
տացեալսն ։ Լուեալ շապհոյ՛ թէ նա է, որ
ոչ թողու զայլսն դառնալ 'ի մոգութի, ետ
գլխատել զնա, որպէս և զայլս Ը նմա ։ ⁖
Հոկտ․ 2։ տր իէլ․ սեպտ․ 27․ Յ․ ապր․ 9։

Պորփիւէա, որ թարգմանի ծածապարզն՛ իբր
թէոդորա, էր կոյս գեղեցիկ հոգւով և
մարմնով 'ի կեսարիոյ կապադովկացւոց․ զոր
'ի հալածանս դիոկղետիանոսի կալեալ աբ-
րիկիոս կամ սաբրիկիոս դատաւորն՛ փոր-
ձեաց ողոքանօք և սպառնալեօք 'ի բաց կալ
'ի Քսէ․ և յոչ հաւանիլ կուսին՛ ետ հանել
զնա 'ի կախաղան, և թողուլ 'ի կախ զբար-
ձրաւանդակէ ։ Լսէ կոյսն․ թէրևս մն այն
բարձրացուցեր զիս, զի տեսից լինելով Տր՛

տե․

տեսից և զամենեսին. այլ աչք իմ առ մր՛ են ՚ի բարձունս, և յերկնային հայրենիս ՚ի վերնական դրախտն, ուր չէք խստութի՛ ձմերայնոյ, այլ՝ մշտնջենաւոր վայելչք գարնայնոյ. անդ ծաղիկք անթառամք և պտուղք ամենաճաշակք. աղբիւր անմահութե՛, և գետք ջրոց կենդանութե՛, անպատում բարեօք հանդերձ. զոր նք՛ ևեթ գիտեն՝ որք վայելեն։ Իջոյց զնա դատաւորն, և ետ ՚ի ձեռս երկուց ուրացօղ քերց՝ որոց անուանք էին Խրիսդէ և Կալլիսթէ, դարձուցանել զԴորոթէա հրապուրանօք. բայց նա զնոսա շահեցաւ՝ դառնալ անդրէն առ քս՛։ Եւ այնպէս երեքեան միաբան յանդիման եղեն դատաւորին՝ պատրաստեալք ՚ի մեռանիլ ՚ի վր՛ ո՛ր հաւատոյ։ Յայնժամ դատաւորն բարկացեալ եարկ զերկոսին քորսն ՚ի հնոց բորբոքեալ. և նք՛ ուրախութբ՛ կատարեցան ՚ի քս՛։ Իսկ զԴորոթէա դարձեալ հանին ՚ի կախաղան, և տանջեցին չարաչար. և այրեցին ջահիւք զկողս նր՛. և ՚ի տեսանելն զզուարթութի՛ երեսաց նր՛՝ ապտակս հանէին նմա. դահիճքն խոնջեցան ՚ի տանջելոյ, և կոյսն կայր անխոնջ և անպարտելի հոգւով. վ՛յ ել ՚ի դատաւորէն վճիռ գլխատման։ Իբրև տանէին զնա, ընդառաջ ել նմա Թէոփիլոս ոմն իմաստուն ՚ի հեթանոսաց, և ասէ ցնա իբրև ՚ի խաղս. աղջի՛կ դու, լուա՛յ ՚ի քէն, զի ճառէիր զերկնային դրախտէն. արդ եթէ ստուգիւ՛ անդր երթաս

Թաս այժմ, քանզի և ուրախութք ընթա-
նաս իբրև 'ի հարսանիս, շնորհ ինձ առնես՝
առաքել առ իս 'ի ծաղկանց անտի. և կոյսն
խոստացաւ կատարել զխնդրելին: Իսկ եղև
յաղօթելն՝ 'ի տեղւոջ կատարման՝ երևե-
ցաւ նմա հրեշտակ այ՟ որպէս մանուկ գեղե-
ցիկ, և մատոյց կուսին կողով մի փոքրիկ՝
յորում էին երեք վարդք կարմիրք, և երեք
խնձորք գեղեցիկք և անուշահոտք: Ասէ
դորոթէա ցհրեշտակն. մատո՛ զայդ յինէն
Թէոփիլոսի, որ խնդրեացն. զայս ասացեալ
կատարեցաւ երանելի կոյսն սրով: Իսկ Թէո-
փիլոս իբրև եառ 'ի հրեշտակէ զանակնկալ
ընծայսն, լուսաւորեալ յայ՟՝ եթող զպաշ-
տօն կռոց, և դարձաւ 'ի քս՟. և 'ի պատմել
նորա զսքանչելիսն առաջի դատաւորին՝ ետ
բռնաւորն հանել զնա 'ի կախաղան բազկա-
տարած. և Թէոփիլոս ասէ, ահա այժմ ե-
ղէ ճշմարիտ քրիստոնեայ՝ խաչելեալ ը՟ քս՟ի
ան՟ն իմոյ. և իբրև տանջեցին զնա քերանօք,
ասէ դատաւորն. խնայեա՛ յանձն քո ո՛վ
Թշուառական. իսկ վկայն ասէ ցնա. դու
խնայեա 'ի Թշուառացեալ հոգիդ. յայն-
ժամ ետ բռնաւորն և զնա գլխատել. և
այնպէս կատարեցաւ 'ի տր՟. և էին աւուրք
ձմեռայնոյ 'ի սկիզբն փետրվարի՝ յամի իբր
300, կմ՟ ևս յռջ: Ի. փետր. 6:

ԴՈՐՈԹԷՈՍ եպ՟ս տիւրոսի՝ ըստ ոմանց քահա-
նայ, ապրեալ 'ի հալածանաց դիոկղետիա-
նոսի և լիկիանոսի Թագաւորացն յողխտա-
պօ.

պօլիս, փայլեաց իմաստութբ և առաքինու-թբ առ կոստանդիանոսիւ. և 'ի խոր ծե-րութեան ընթանեցաւ 'ի Թրակիա յարքանե-կաց յուլիանոսի ուրացողի. և ազգի ազգի տանջանօք կատարեցաւ խոստովանօղ վը-կայն քսի՝ ձէ ամաց. յորոյ անուն գտանին և գրուածք ինչ՝ անուանեալ վսեմականին դորոթէոսի: Ն. յունիս. 2, կմ 5: Յ. հոկտ. 9: Լ. յունիս. 5:

Պաւղոս կմ Պաւղոս բազմաչարչար նահատակ՝ էր իշխան 'ի կիլիկիա. որ վն 'ի քն հաւա-տոց զրկեցաւ 'ի պատուոյն, և դատեալ 'ի մաքսիմոսէ կմ 'ի մաքսիմիանոսէ՝ բրածեծ եղև. օծին և զգլուխ նր ձիթով, և եդին կայծակունս հրոյ 'ի գագաթն. պատառե-ցին զորովայնն, քերեցին խեցեաւ զմար-մինն, և արկին քացախ 'ի վէրսն. ջաղխե-ցին զծնօտս, և խորտակեցին զսրունս: Եւ իբրև հաստատուն մնաց 'ի քն, բացին բըռ-նութբ զբերան սբյն, և արկին 'ի ներքս 'ի զօհից կռոց. և քարշեցին ը երկիր ցքսան մղոնս, մինչև աւանդեաց զհոգին: Իսկ պատուական մարմինն 'ի գետ ընկեցեալ՝ գտաւ 'ի ցամաքի, և թաղեցաւ 'ի քրիստո-նէից: Ն. յունիս. 18: Յ. Լ. 15:

## Ս

Սևերոս տէրեայ աթենացի՝ որդի թէոդորո-սի և պեղագիայ՝ յարքունի զարմէ յեօթնե-րորդ

որդ դարու, մնեալ 'ի վարս ա̃ծպաշտութե̃՝ առաւելաւ ողորմածութե̃ և նշանագործու-թե̃. զի 'ի տալ զվերարկուն յողորմութե̃ հիւանդի միոյ աղքատի՝ իսկ և իսկ բժշկե-ցաւ նա. առողջացոյց և զօձահար ոք. և ա-զատեաց զոմն յայսոյն չարէ։ Սա փախչե-լով 'ի փառացն անծանօթ՝ եմուտ 'ի նաւ, և աղօթիւք դադարեցուցեալ զխռովութի̃ ծովու՝ ել 'ի դաղղիա. և գնացեալ յարե-ցաւ 'ի մաքսիմոս սր̃ եպ̃սն արելատայ. և յետ երկուց ամաց դարձեալ փախուցեալ 'ի փառաց վս̃ շնորհացն բժշկութե̃՝ էանց ը̃ հռոդան գետ. և գտեալ միայնակեաց զոմն վերդեմիոս անուն՝ եկաց առ նմա. և անդ ևս յայտնի եղեալ նշանօք՝ փախեաւ 'ի խորագոյն անապատ 'ի մէջ մայրեաց. և վարէր խոտաճարակ կեանս. է՛ զի դիէր և զկաթն եղանց, որք ոչն խորշէին 'ի նմա-նէ։ Յելանել թգ̃ւրին յորս՝ իբրև եկն եղ-ջերու մի և ապաւինեցաւ առ սբ̃ն, մին յոր-սորդաց նետաձիգ լեալ՝ եհար յանդէտս զսբ̃ն. իբրև յայտնի եղև բանն, խանդա-ղատեցաւ գնովաւ թգ̃րն, և ետ դարմա-նել զնա. և ըստ խնդրոյ նր̃ շինեաց անդ վանս միայնակեցաց. որոց առաջնորդ կա-ցոյց զնա ինքն զեգիդիոս. որ և ծաղկեցու-ցեալ զտեղին առաքինի կարգօք՝ վախճա-նեցաւ անդ սրբութե̃ յամի իբր 700 ։ Լ.

սեպտ. 1 ։

Ս[illegible]՝ խոստովանող կոչեցեալ, որդի ե-

Էտելրեդայ արքայի անգղիացւոց, և թոռն սբ՟յն Եդուարդայ նահատակի, 'ի ժամանակին՝ յորում յարձակեցան յանգղիա դանիք կմ՟ ըն՟ ոմանց դանկիք, անկաւ առ քեռւին իւր առ դուքսն նորմաննիոյ՝ դեւաբոյս հաւակաւ. և եկաց սքանչելի մաքրութբ՟ և պարկեշտութբ՟ վարուց 'ի մէջ դրդանաց, հոգեսէր և աղօթասէր՝ իբրև մեռեալ ծ՟ի. և 'ի յիշեցուցանել այլոց զժառանգութ՟ն թագաւորութե՟՝ որ նմա անկանէր, ըն՟ որում և ոմն 'ի սբ՟ց դուշակեալ էր զթագաւորել նր՟, նա վայս ասէր. լաւ լիցի ինձ զրկիլ 'ի թգ՟րութէ, զոր չէ մարթ ունել առանց կոտորածի և արեան: Իբրև բարձան բռնաւորք՝ որք բարձին զկեանս եղբարց նր՟, հրաւիրեցաւ 'ի հայրենիս իւր, և նստաւ յաթոռ թգ՟րութե. այլ փոյթ նր՟ եղև առաւել կանգնել զկրօն և զա՟ծպաշտութի, և շինել և նորոգել զեկեղեցիս աւերեալս: Ստիպեալ յիւրոյն՝ ամուսնացաւ. այլ բանս եդեալ ըն՟ թագուհւոյն՝ պահեաց անարատ զմորգարիտ կուսութե, ունելով զհարսն ոպ՟ զքոյր. և էր ամենեցուն օրինակ ա՟մ առաքինութեց. հայր էր որբոց և աղքատաց. և ուրախութ՟ն նր՟ էր բաշխել զգանձս իւր 'ի տնանկս: Արժանի եղև տեսանել և զփրկիչն իւր զտր՟ յս՟ քս՟ 'ի ժամ սբ՟ պատարագի լուսափայլ և զուարթ տեսլեամբ, ըն՟ կատարել հաւատոյն և ջերմ սիրոյն: Առանձին ջերմեռանդութ՟ կալեալ առ սբ՟ն յովհան.

հաննէս կոյս աւետարանիչն՝ ոչ երբէք ժխ-
տէր, զոր ինչ ոք խնդրէր յանուն նր. մին-
չև՛ ի միում նուաճի չունելով առ իւր դրամ
պատրաստական՝ ետ զարքունի մատանին.
զոր և գնեի դարձոյց 'ի նա աւետարանիչն
'ի տեսլեան, և աւետարանեաց նմա զփո-
խումն 'ի յերկինս. որ եղև յամի տն 1066.
'ի Ե յունվարի: Յորև եղև փոխադրութի
մարմնոյ նր յետ լԶ ամայ, գտաւ անապա-
կան և անուշահոտ: Ունէր ոք թղթս այս
և զհոգի մարգարէութե. զի կատարեցան
բանք նր՝ զոր գուշակեաց յաւուրս իւր և
վն հանդերձեալ ժմկաց: Ի. հոկտ. 13:
Յովհննէս մարգարէ տօնելի. հտ. Յ. 354:
Յովբ կմ Եղբա քահանայ տօնելի. հտ. Յ.
365:

Յուլեա–Բերիոս կմ Եղե–Բեոս եպս լիւրիկեցւոց՝
էր հռովմայեցի և սարկաւագ հայրապետին
հռովմայ. յորմէ ձեռնադրեալ եպս 'ի Ի
ամաց հասակի, և եկեալ 'ի լիւրիկիա՝ դար-
ձոյց զբազումս յանհաւատից: Յառաքել
ադրիանոսի կայսեր 'ի վն նորա զփելեկիա
նախարար՝ դարձոյց զնա ոք եպսն 'ի քս. և
ինքն անձամբ եկեալ յանդիման եղև կայ-
սեր, և եդաւ 'ի վն հրացեալ պղնձի մահ-
ճայ. և անփնաս պահեալ՝ առաքեցաւ 'ի սի-
կիլիա, և մատնեցաւ 'ի ձեռս կորևոսի ե-
պարքոսին մեսսանայ. և սա այն ինչ կամէր
արկանել զսէն 'ի վառեալ թոնիր երկաթի,
հաւատաց 'ի քս. և ինքն արկաւ 'ի հեթա-

նո

նոսաց 'ի Թոնիր անդր . և անարատ զեր-
ծեալ՝ սրով կատարեցաւ ը̄ այլս 'ի նոր հա-
ւատացելոց . ապա և նշ̄ք եղ̄ն յետ արկա-
նելոյ 'ի կաթսայ եռացեալ , ո՛չ և առաջի
ախուծուց , գլխատեցաւ ը̄ Անթիայ կամ
աթենայ մօր իւրում բարեպաշտի : Դ .
դեկտ. 17 : Յ . և տէր իէլ . դեկտ . 15 . Լ .
ապր . 18 :

Եղպիս դուստր սոփիայ տօնելի . հտ . Գ .
398 :

Եղիազար որդի ահարոնի տօնելի . հտ . Գ .
253 :

Եղիազար քահանայ առ մակաբայեցւովք՝ տօ-
նելի . Գ . 383 :

Եղիկոնիդա կմ̄ եղիկոնիս աղախինն քնի թեսա-
ղոնիկեցի՝ էր 'ի գ̄ դարու . զոր կալեալ վ̄ն
հաւատոց պերենիոս դուքս կորնթոսի՝ ետ
կապել զոտս նր̄ 'ի լուծս եզանց , և պատա-
ռոտել զներքանս ոտից . ապա գերծին
զգլուխն , և մատուցին ձիւթ կայծախառն :
Տարան 'ի տաճար կուոց . և սրբուհին աղօ-
թիւք խորտակեաց զարձանն աթենայ . վ̄ոյ
պատառեալ զստինս նր̄՝ արկին 'ի բանտ :
Յետոյ յուստինոս անթիպատոսն էարկ զն̄ա
կինն 'ի հնոց . յորմէ նա պահեցաւ , և կա-
պաշտք այրեցան՝ արք եօթանասուն . նոյն-
պէս զերծաւ և 'ի հրացեալ մահճաց , և յա-
ռիւծուց . մինչև կատարեցաւ սրով՝ բղխե-
լով կաթն փոխանակ արեան : Դ . Յ . Լ .
մայ . 28 : տէր իէլ . 29 :

ՍՈՒՐԲ ԱԴԴԷ՝ աշակերտ միոյն Թադէոսի Հայոց առաքելոյն, յետ կատարման նորա ձեռնադրեալ եպս 'ի յակոբայ եղբօրէ տն՝ եկն անդրէն յարևելս, և քարոզեաց յսն հայոց, մարաց, և ադրուանից. և 'ի կատարել միոյ յաշակերտաց իւրոց 'ի սահաւ քաղաքի ուտեացւոց՝ եկեալ 'ի գիւղն գլտ, և անտի 'ի դաշտակն՝ կատարեցաւ քարկոծմամբ, և ընկեցաւ 'ի գուբ մի անյայտ: Յետ ժամանակաց յայտնեցաւ վկնքն սբն 'ի տեսլեան. զոր բարձեալ տարան և հանգուցին պատուով 'ի գիւղն ուռեկան. ուստի փոխադրեցաւ փաւօք 'ի վանքն ջրվշտիկ. ուր առնէր բազում սքանչելիս: Իսկ 'ի վր դբրոյն կանգնեաց վաչական արքայ աղուանից սիւն մեծ 'ի յիշատակ որ առաքելոյն եղիշէի. և յայնր սեան վր ձգնեցաւ սենեկապետն արքայի: Տ. սեպտ. 21. կմ ը տր ինէլ. 29:

ՍՈՒՐԲ ԿՂԵՄԷՍ վկյ տօնելի. Հռ. Ս. 309:

ՍՈՒՐԲ ԵՂԻՍԱԲԵԹ մայր Յովհաննու՝ զօրութ է տօնախմբի ը զաքարիայ քահանայի առն իւրում. Հռ. Ս. 371:

ՍՈՒՐԲ ԵՂԻՍԱԲԵԹ այրի հաւատաւոր՝ էր դուստր անդրէի արքային ունգարիոյ. և յակամայ կամս հարսնացեալ լանտգրաւիոսի դքսին թուրինգիոյ, եկաց յծի իբրև յանապատի, հլու առն իւրում յամի. խոնարհ, և աղքատասէր յոյժ. և յետ մեռանելոյ առն իւրոյ յարևելս յաւուրս խաչակիր զօրաց դի-

մելոց 'ի պաղեստին՝ մնացեալ այրի՝ եւս զանձն յառաւել ճգնութիւնս պահոց և աղօթից. և ոչ ուխտեալ էր յառաջագոյն՝ զի թէ ապրեսցի յետ առն իւրոյ, անայր մնացէ և կրօնաւորեսցի, բաշխեաց զամենայն ինչս իւր յաղքատս. և կրեաց բազում նեղութիւնս կամաւորութեամբ, մինչև արտաքսել զնա իւրոյն յապարանից անտի՝ որպէս վատնօղ ընչից. ապա շինեաց հիւանդանոց մի վասն աղքատաց, և անդ դադարեալ՝ խնամէր զնոսա և դարմանէր ձեռօք իւրովք. և յասել ումանց՝ թէ ոչ վայել է այդ դստեր թագաւորի, տայր պատասխանի. եթէ գտանէի և զայլ վիճակ ցածութեան աստուածահաճոյ՝ 'ի նոյն մտանէի սիրով։ Նա որչափ էր ջերմեռանդն յաղօթս արտասուօք հանդերձ, նոյնչափ և անայլայլելի գլխօք զուարթութեան. և ոչ հաճէր ընդ նոսա՝ որք ցուցանեն յաղօթս զդէմս ցաւագինս արտաքուստ, և առնեն շարժմունս անհեթեթս. մի թէ կամին ասէր ահ արկանել Աստուածն։ Արժանի լինէր և պէսպէս այցելութեան 'ի Աստուծոյ յաղօթս, ըմբռնեալ 'ի յափշտակութիւն հոգւոյ. և 'ի միում նուագի յինքն եկեալ՝ ասէ. Տէ՛ր եթէ կամիս լինել ընդ իս, և ես կամիմ ընդ քեզ լինել անբաժան։ Ապա եմուտ սրբուհին 'ի կուսաստան կարգի սրբոյն Ֆրանչիսկոսի. և անդ սքանչելի խոնարհութեամբ ծառայեալ ամենեցուն, առաւել տկարաց և հիւանդաց՝ կատարեաց ըզկեանս իւր սրբութեամբ յամի 1226. և թաղե-

ցաւ

ցաւ ՚ի մարբուրգ ալամանաց : Ի . Նոյ . 19 :

Եղիսաբէթ թագուհի լուսիտանիոյ ՚ի փոր-թուգալու , դուստր թգ̃րին արագոնայ , էառ զանուն ՚ի մկրտութե՛ ՚ի յիշատակ մեծ հաւուոյն իւրոյ նախագրել̃ սրբուհւոյն Եղի-սաբեթի իշխանուհւոյն թուրինգիոյ : Եւ եղև ՚ի մանկութէ հետէ` ատեցող աշ̃ի և մարմնոյ , պահեցող և աղօթասէր . և իբրև ը̃դէմ կամաց իւրոց մուծաւ ՚ի կարգ աշ̃ի` տուեալ ՚ի կնութ̃ի դիոնեսիոսի արքային լուսիտանացւոց , տակաւին գրեթէ զկէս տարւոյն հացիւ́ և ջրով շատանայր : Համ-բուրելով զվէրս կնոջ միոյ աղքատի` իսկ և իսկ բժշկեաց զնա ՚ի չարաչար կեղոյ . և զաղջիկ մի ՚ի ծնէ կոյր լուսաւորեաց : Եւ ՚ի ծածկել յարքայէ զբազմութ̃ի դրամոց` զոր տալոց էր աղքատաց , յանհնարս մտել̃` աղօթիւք դարձոյց ՚ի վարդս գեղեցիկս ՚ի ձմերանի . թող և զայլ բզ̃մ հրաշս : Շի-նեաց և զարդարեաց զեկեղեցիս , զվանս , և զդպրոցս . ա̃մ̃ն էր բարերար , և խաղաղ-արար իմաստութ̃ն ՚ի մէջ թգ̃րաց : Ընդ մե-ռանիլ առն իւրոյ արքայի` ՚ի նմին` աւուր զգեցաւ զձև կուսանաց կարգի սրբ̃յն քլա-րայի Ֆրանչիսկեան , և այնպէս յուղարկա-ւոր եղև ՚ի թաղել զթգ̃րն . և երթեալ յուխտ սրբ̃յն յակոբայ` որ ՚ի կոմպոստեղա , բազում ինչ մեծագին ետ ՚ի յիշատակ վասն հոգւոյ առն իւրոյ : Ապա բաշխեալ և ինչս բազումս յաղքատս և ՚ի տնանկս , առանձ-

նայաւ 'ի կուսաստանն՝ զոր շինեաց · ապա 'ի գնալն վասն հաստեցուցանելոյ զերկուս Թղթրս՝ զորդին և զփեսայն , հիւանդացաւ 'ի ստրեմոտ քաղաքի · ուր արժանի եղեւ այցելութե սբ ածամօր՝ քաղցրութբ աւանդեաց զոգին յամի · 1336 · 'ի 4 · յուլիսի · և փայլեաց սքանչելեօք նաև զկնի մահուան · մինչ զի և յետ երից դարուց մարմին նր բուրէր զհոտ անապականութե · վսյ յամի 1625 · դասեցաւ ը սբս , որ արդէն սոց սբ էր հռչակեալ : Ի · յուլիս · 8 :

Յուլ·· ԵԷԸ Նոր վկայուհի՝ աւեր կամ աւերաղջն սասացեալ՝ արձիշեցի էր 'ի խառաբաստ գեղջէ · որ փորձանօք չարին յայլազգութի դարձեալ՝ կայր յանարժան գործս · մինչև եկն 'ի վան · ուր 'ի խօսելն ը ումեմն՝ երդուեաւ յայս ձև բանի · այն սբ ածածինն՝ որ այս այսպէս է · սաստեցին նմա այլազգիք · իսկ նա պնդէր ասելով · յայտնի Էս ասեմ , և ոչ ամաչեմ · զի ես աղախին եմ սբ ածածնի , և հաւատացեալ եմ 'ի միածին նր որդին յս քս 'ի խաչելեալն Թղթր վս մերոյ փրկութե : Յայնժամ ամբոխ արարին , և ձգեցին զնա յատեան · իսկ եղխաբէթ և անդ աներկիւղ դաւանեաց զքս ած , յանձն առեալ զմահ վս սիրոյ նն · վսյ և հրամանաւ տիկնոջ բդեշխին քարկոծեցաւ երանելին յաւուր տօնի սբց քառասնից՝ յամի · 1391 · պխ : ∸ · ապր · 24 :

Յուլ··է մարգարէ տօնելի · հտ · Պ · 508 :

Յու·

Էմիլիանոս ( կամ Մելիանոս ) Թրակացի 'ի դո-
րոստոլայ միւսիոյ՝ առ յուլիանոսիւ էր ծա-
ռայ առն հեթանոսի՝ հաւատով քրիստո-
նեայ. և մտեալ գաղտ 'ի տաճար կռոց՝ խոր-
տակեաց մրճով զբագինս, և զկռոսն ցըր-
ուեաց: Իսկ քուրմն կռոց կալեալ զոմն հո-
ղագործ անպարտ, որպէս թէ նորա իցէ ա-
րարեալ զայն, գանեաց զնա և մատնեաց
'ի ձեռս կապետոլինոսի բեկալի, ը՟ս փոխա-
նորդի բդեշխին: Յայնժամ եմիլիանոս ե-
կեալ յատեան՝ յայտնեաց զանձն, և ասէ.
Ես ծառայ եմ ք՟նի, և պարտ էր ինձ կորու-
սանել զսնոտի դիս ձեր: Ապա հարին զնա
արջառաջլօք, և ապա 'ի հուր արկին. ուր
անկեզ մնալով՝ աւանդեաց զհոգին. իսկ
մարմին ս՟ոյն ամփոփեցաւ 'ի քրիստոնէից.
և շնորհք տուեալ նմ՟ յե՟տ լինել արագահաս
օգնական նաւակոծելոց: Կ. մարտ. 21,
կամ 20: Յ. Ա. յուլ. 18:

Էննէնաս, Պինէմաս, և Ռէմաս, կամ Էննաս, ռի-
մաս, և պիննաս՝ էին սկիւթացիք աշակեր-
տեալք ս՟ոյն անդրէի առաքելոյ. զորս ազ-
գականք ն՟ց բարբարոսք մատնեցին իշխանի
իւրեանց վ՟ն դարձուցանելոյ ն՟ց զբազումս
'ի ք՟ս. և նա ետ կապել զն՟ս 'ի մի մի ցից 'ի
մէջ գետոյ 'ի ձմերանի. ուր սառնապատ
եղեալ ցպարանոցս՝ կատարեցան 'ի ք՟ս: Կ.
փետր. 4, կամ 5: Յ. յունվր. 20:

Էնովք, և Էնովքայ տօնելիք է նախահարս.
հտ. Գ. 200. 201:

Սն ԵՆՐԻԿՈՍ կայսր՝ դուքս բաւարիոյ, և ապա գերմանիոյ՝ մականուանեալ պիոս, որ բարե-պաշտ, առաւել քան զերկրաւոր թգրուն՝ երկնայնոյն փոյթ կալեալ, գտաւ ածասէր և երկիւղած, ձեռնտու եկեղեցւոյ յամի, շինօղ և զարդարօղ տաճարաց և վանորէից: Հիւանդացեալ 'ի կասսինեան վանս՝ առող-ջացաւ սքանչելեօք սբյն բենեդիկտոսի: Յոր ինչ և ձեռն արկանէր, նախ աղօթիւք առ ած դիմէր, և առ հրեշտակն իւր և առ սբս նր· և այնպէս յաղթօղ գտաւ 'ի բազում պատերազմունս: Պատճառ եղև դարձի հունգարաց կմ պաննոնիացւոց 'ի քս՝ տա-լով զքոյր իւր 'ի կնութիւն ստեփաննոսի թա-գաւորի նց· իսկ ինքն սքանչելի կայսրն կու-սութբ եկաց ը կնոջ իւրում սբ թագուհ-ւոյն կունեգունդայ· և յամ տեղիս եւրո-պիոյ՝ 'ի գաղղիա, 'ի գերմանիա, և յիտա-լիա եթող զյիշատակս սրբութե իւրոյ· և փայլեաց սքանչելեօք յետ մահուանն, որ եղև յամի · 1024 : Յուլիս · 15 :

Ս ՊԷՆՏԱՔՈՍ եգիպտացի՝ երիտասարդ ժիր և գեղեցիկ 'ի պելուսիայ քաղաքէ, տեսեալ զչարչարանս վկայից յաղէքսանդրիա առ դե-կոսիւ, և մանաւանդ զսրբուհւոյն եւտրո-պիայ, որ փոխանակ տապանալոյ 'ի ջերմ ջրոյ՝ զովանայր սքանչելեօք, դիմեաց 'ի տա-ճար կռոց, և խորտակեաց զպատկերս· վյ ապիլիանոս դատաւորն հարկ զնա 'ի բանտ ը այլ երանելի կապելոյն: Յայնժամ պօ-

րա-

բաւոր բանիւք եպիմաքոսի դարձան բան-
տապանքն 'ի քս, և կապեալքն քաջալերե-
ցան յոյժ ․ ուստի 'ի վաղիւ անդր կացեալ
յատենի՝ աներկիւղ յանդիմանեցին զպղծ-
ծութիւն կռապաշտութե ․ մինչ զի անդէն
հրաման ելանէր հատանել զլեզուս նց , և
ապա գլխատել ։ Իսկ զեպիմաքոս տանջե-
ցին քերանօք ․ և 'ի ցայտել յարենէ նր 'ի
կուրացեալ աչս աղջկան միոյ՝ բացաւ և ե-
տես վաղվաղակի զլոյս ․ վոյ եւ դատաւորն
վճիռ գլխատման , կիւ ը այլոյ՝ 'ի հուր ար-
բելոյ՝ ը ումեմն աղեքսանդրի վկայի ։ Ն ․
հոկտ ․ 31 ։ Յ ․ հոկ ․ 30 ։ Լ ․ դեկ ․ 12 ։
Եպիմաքոս և Գորդիանոս հռովմայեցիք առ
յուլիանոսիւ մատնեցան 'ի գանս և 'ի քե-
րանս վն անուանն քի 'ի հռովմ քաղաքի ,
և արկան 'ի բանտ զաւուրս բազումս ․ և
ապա գլխատեալ՝ թաղեցան 'ի ճանապար-
հին լատինայ ․ զոր ոմանք շփոթեն ը առաջ-
նոյն ։ Ն ․ մայ ․ 14 ․ կիւ ը տր իէլի ․ 10 ։
Յ ․ մայ ․ 9 ։ Լ ․ մայ ․ 10 ։
Եպիսկոպոսունք Հերմեայ , թւ խուխմու , 'ի չոր-
րորդ դարու՝ նահատակք և խոստովանողք ․
քանզի առ դիոկղետիանոսիւ երմոն հայրա-
պետ եմի առաքեաց զեփրեմ եպիսկոպոս
'ի թուրքաստան , և զվասիլէոս եպս 'ի քեր-
սոն վն քարոզութե ․ զոր կալեալ քերսո-
նացւոց՝ գան հարին և վարեցին 'ի քաղա-
քէն ․ և նա երթեալ ձգնէր 'ի քարանձաւս
պարթենիոն լերին ։ Բայց 'ի յարուցանել

K 4 մեյն

սքեյն զմեռուեալն որդի իշխանին՝ հաւատայ իշխանն և մկրտեցաւ հանդերձ բազմութ. և սակայն անհաւատքն կապեցին չուան յոտս վասլի , և դան հարկանելով քարշեցին , մինչև աւանդել զհոգին ։ Յետոյ եկին անդր այլ եպսունք՝ եւգինէոս , ագաթոդորոս , և ելփիդիոս . և նք ևս նահատակեցան ։ Յայնժամ առաքեաց անդր երմոն զաշակերտ իւր եթերիոս կամ աթերիոս եպս , զայր որ և առաքինի . և յոչ ընդունել քերսոնացւոց զնա՝ նա գնաց առ մեծն կոստանդիանոս 'ի բիւզանդիա . և առեալ 'ի նմանէ արքունի զօրականս՝ եհան 'ի քերսոնայ զմնացեալ անհաւատս , և եած անդր բնակիչս 'ի քրիստոնէից . շինեաց եկեղեցիս , և կարգեաց քահանայս . և ինքն 'ի միւսանգամ ճանապարհորդութե իւրում վախճանեցաւ 'ի սալոն կղզի դանուբրիս գետոյ . և գերեզման նր առնէր սքանչելիս ։ Ապա առաքեաց կոստանդիանոս 'ի քերսոն զոր եպսն կապետոն . որ 'ի խնդրոյ յամառ կռապաշտից եմուտ 'ի հուր բորբոքեալ . և կացեալ անդ ժամ մի՝ ելից զեմիփորոնն կայծակամբք , և եւ անկիզելի . որով դարձոյց զանհաւատս . և ինքն հանգեաւ 'ի բարւոք ծերութե ։ Ընդ սոսին սպանումն և յիշատակ եփրեմի եպսին թուրքաստանի , և այլ երկու եպսաց՝ նեստորիոսի և արկադէոսի ։

Ն. մարտ. 7. և ապր. 19 ։ Յ. մարտ. 8 ։
Ա. մրտ. 4 ։

Յուլիանէ նէպրայէ տօնելի · Հտ. Գ. · 210 ։
Յուլիանէ և Շ[illegible] աշակերտք որ ծերոյն
դանիէլի աշակերտին լուսաւորչի՝ բազմա-
մեայ անապատասուն կենօք եղեն հոգետես
և նշանագործ ճգնաւորք, և տեսին յայլև-
այլ լեռնէ զհոգի սրբոյն ներսեսի 'ի վերա-
նալն հրեշտակօք յերկինս ։ Մին շաղիտա՝
որ էր ասորի ամդեցի, բնակէր 'ի լերինն
կորդուաց խստաճարակ կենօք 'ի մէջ աւու-
ծուց, որք հլու էին նմա, և 'ի ցաւս իւ-
րեանց շնորհէին բժշկութի 'ի սրբոյն · զայն
առ նա և բազումք 'ի հեթանոսաց, զորս
ածայլն բանիւք և զօրութբ նշանաց դար-
ձուցանէր 'ի հաւատս · և եթէ դէպ լինէր
նմա անցանել ընդ գետ, գնայր անթաց
ոտիւք 'ի վր ջրոյ ։ 'Ի վախճանիլ նր ամենե-
քին ցանկային ունել զնշխարս նր · այլ սրբն
խնդրեալ էր 'ի տնէ՝ զի մի կարասցեն գտա-
նել ։ Իսկ սրբն եպիփան՝ որ էր 'ի յունաց,
բնակէր 'ի գաւառն ծոփաց յանապատին
մամբրէի · և առ սա եւս ժողովէին զաւանք,
որովզտին մարդիկ զբնակութին նր · և առ-
նէր ած նշանս 'ի ձեռն սրբյն, մինչև բազ-
մաց դառնալ առ տր, և բազմանալ վանա-
կանաց 'ի գաւառի անդ ։ Յու 'ի կառուցիլ եր-
կուց եղբարց վասն որսոյ ձկանց՝ որ ելանէր
յակունս մանուղ գետոյ մօտ 'ի բնակութան
սրբյն, յորժամ սպան մին զմիւսն, անիծիւք
սրբյն դառնացաւ ձուկն տեղւոյն, և եղև
յայնմհետէ անուտելի ։ Իսկ 'ի բազմանալ

աշա-

աշակերտաց՝ գնաց սննորքօք հանդերձ յեր-կերին յունաց, և բնակէր ՚ի կղզւի մի ծովու. մինչև փոխեցաւ յերկինս: Հ. փետ. 3:

Սոփրոնիա կամ Եփրոնիա կոյս ազնուական հռովմայեցի առ դիոկղետիանոսիւ դատեալ վն ՚ի քն հաւատոց ՚ի կեսարիոսէ եպարքոսէ՝ մատնեցաւ ՚ի քերանս. և ՚ի նմին ժամու բղխեաց ջուր ՚ի վիմէ՝ որ կայր առ ոտիւք աղախնոյն քնի. և բազումք հաւատացին ՚ի քն: Հրամայեաց եպարքոսն հարկանել ըղ-թիկունս կուսին կապարեայ գնտովք կամ կռանօք. անդ պատուհասեալ կորեան չորե-քին դահճիքն. ապա փութով կարճեցին ըղ-սրբուհին ՚ի կենաց սրով, և զմարմինն ՚ի հուր ընկեցին. զորոյ զնշխարս էառ փելիքս հաւատացեալն ՚ի դաշտէ սինկղիտոսաց, և եդ ՚ի տեղին, որ եղև նշանաւոր սքանչե-լեօք: Հ. սեպտ. 28: Յ. Լ. սեպտ. 27:

Սոփրոնիոս կմ Եւփրոնիոս կեսարացի ՚ի կապա-դովկիոյ՝ առ ադրիանոսիւ, մերժեալ յետ մահու հօրն յեպսէն կեսարու՝ արկաւ վասն քրիստոնէութե ՚ի բանտ. այլ գտեալ ազա-տութի՝ բաշխեաց զինչս իւր աղքատաց, և առաւել մատնչայ իւրոց իբրև բարերարաց. ապա կրեաց ՚ի սարպիկիոսէ դատաւորէ ա-նողորմ քերանս ցերեկուն աղեայն. և զկնի կատարեցաւ սրով. Հ. սեպտ. 11: Յ. Լ. և մր իէլ. սեպտ. 7: Յիշի և այլ համանուն վկայ կեսարացի առ յուլիանոսիւ. Յ. Լ. ապր. 9:

ԵՍԱՅԵԱՍ ճգնաւոր հոգելի եւ հոգետես . որոյ կան ազդու խրատք առ աշակերտս՝ առաւել ՚ի ժամ վախճանին : Հ. սեպտ. 29:
ԵՍՊՐԱՔՍԻԱ կոյս տօնելի . հտ. Զ. 525:
ԵՍԱՅԻ մարգարէ տօնելի . հտ. Դ. 5:
ԵՍՊԵՐԻՈՍ (որ ըստ յն. Էսբերոս , եւ լտ. Էքսուբերիոս ) , եւ կին նր. ԶՈՅԷ , եւ երկու որդիք նց ԿԻՒՐԱԿՈՍ եւ ԹԷՈԴՈՒԼՈՍ՝ էին յիտալիա առ ադրիանոսիւ ծառայք կատաղոնի առն հեթանոսի մեծատան . եւ յաւուր միում մանկունքն յօրդորեցին զմայրն իւրեանց չծառայել առն կռապաշտի . եւ խրատու նր ասէն ցտրն իւրեանց . մարմնոց մերոց դու ես տր , բայց հոգւոց մերոց տր է յս քս : Զարմացեալ իշխանին՝ առ ժամն առաքեաց զնս եւ զմայրն նց առ եսպերիոս՝ որ մշակեր յայգւոջ որիտոն աւանի . եւ զկնի յղեաց առ նս միս եւ գինի ՚ի սեղանոյ ուրախութե մն նորածին զաւակին իւրոյ . իսկ զայն գիտելով՝ թէ այն կերակուր զոհեալ է կռոց , եհեղ զգինին յերկիր , եւ զմիսն ընկեց շանց : Ընդ որ կատաղեալ կատաղոնի՝ մնայր դիպօղ ժամու վրիժուց . ապա ՚ի գնալ իւրում ՚ի բիւզանդիա՝ տարաւ զնս ը իւր իբրեւ ըզգերիս . եւ անդ կախեաց զկիրակոս եւ զթէոդուլոս՝ տանջեաց առաջի ծնողացն . ապա եւս զանեալ եւ զմայր նց զզոյէ . եւ զտեաց զնս հաստատունս ՚ի քս հանդերձ եսպերիոսիւ , եարկ զչորեսին եւս ՚ի փուռն վառեալ . եւ այնպէս կատարեցան ՚ի քս . եւ եղեն երեւե-

լի

լի նշանք 'ի վերայ սեղցն : Հ. տպ. ապր. 21. ձեռ. մայ. 2. ոմք և Յ. Լ. մայ. 2 :

ՍՈՐԱՆՈՍ կամ Երենիոս հետևող առաքելոց՝ տօնելի. հտ. Օ. 410 :

ՍՈՐԱՆՈՍ հայրապետ սիրմիոյ՝ տօնելի. հատ. Օ. 157 :

ՍՈՐԱՒԷՆՈՍ կմ ՊՈՒԷՐԱՒԷՆՈՍ ձգնաւոր նշանաւոր առ զենոնիւ, բնակեալ միով միայնաւ հեռի 'ի յորդանանէ, գնայր երբեմն 'ի վր գետոյ խրբև 'ի ցամաքի. ընտել էին նմա և գազանք. որպէս և առիւծ մի՝ յորոյ 'ի թաթն մխեալ էր եղէգն, կաղկաղէր առաջի ծերոյն՝ հանել զայն. և սրբն ողջացոյց զվէրս նորա. ուստի և գազանն ոչ մեկնեցաւ երբէք 'ի նմանէ : Ի գողանալ ոմանց զէշն՝ որ ծառայէր 'ի վանս 'ի պէտս եղբարց, հրամանաւ ծերոյն առիւծն կատարէր զգործս նր ոմ ջրկիր. իսկ 'ի վախճանիլ սրբյն՝ սկսաւ և առիւծն գոռալ և ողբս առնուլ 'ի վր գերեզմանի նորա : Հ. ապր. 25 : Յ. մարտ. 4 : Լ. մրտ. 5 :

ՍՈՐԷԴԱ մարգարէ՝ տօնելի. հտ. Ս. 54 :

ՍՈՐԷԴԱՍ զօրական, այն է Սորմիաս կմ Հերմիաս՝ 'ի կոմանայ պոնտոսի յաւուրս անտոնինոսի կայսեր, 'ի յետին ծերութե խրում կրեաց վասն քսի 'ի սեբաստիանոսէ դքսէ գանս և քերանս. և յետ խորտակման ծնօտի և ատամանց՝ արկաւ 'ի հուր, և ոչ փնասեցաւ, ոմ և ոչ 'ի թունաւոր կերակրոյ. մնյ և որ զմահադեղն արար՝ հաւատաց 'ի քս, և կա-

տա.

տարեցաւ սրով։ Իսկ զմ̃ն երմիաս յետ չա-
կոտոր առնելոյ արկին յեւանդն ձիթոյ. և
իբրև ել անտի ևս անվնաս, բրեցին զաչս նր̃,
և կախեցին գլխիվայր զաւուրս երիս. և ա-
պա գլխատեցին զբազմայաղթ նահատակն։
Հռ. մայ. 29։ Յ. Լ. և տր̃ իւղ. մայ. 31։
Սրբոց Մանկանցն տօնելիք ը̃ դանիելի. հտ. Գ.
412։

Սրբոց Եղբարց Կամթարց. տես 'ի Թէոդիտէ.
Ագոդիոս, Սամուէլ, Նորինէ, Սոփիա. Ծա̃։
Սրբէնարսոս կմ̃ Երբէնարսոս սեբաստացի էր դա-
հիճ երևելի 'ի հալածանս դ̃ դարու. և տե-
սեալ զհամբերութի̃ եօթն կանանց 'ի չար-
չարանս (յաւուրս մեծին վլասայ), դաւա-
նեաց և ինքն զքս̃ ա̃ծ, և զինքն ծառայ նր̃.
մ̃նյ և յետ բանտարկուե̃՝ արկաւ 'ի լիճ սե-
բաստիոյ. ուր եկաց նա 'ի վ̃ր ջրոց իբրև 'ի
ցամաքի. զորոյ զփորձ առեալ հեթանոս զօ-
րականաց՝ հեղձան արք ի̃ը։ Իսկ երինար-
քոս ելեալ անտի՝ եկն մկրտեցաւ 'ի նր̃ քա-
հանայէն ակակիոսէ. մ̃նյ արկին զերկո-
սեանն 'ի հուր ընդ երկուց մանկանց միոյ 'ի
կանանց նահատակելոյ. և 'ի շիջանիլ հրոյն՝
կատարեցան սրով։ Հռ. դեկտ. 2։ Յ. և տր̃
իւղ. նոյ. 28։ Լ. նոյ. 27։
Սրբէնէ կմ̃ Նոյենէ կոյս սքանչելագործ, որոյ
առաջին անունն էր պելենուպի, մկրտեալ 'ի
ձեռն տիմոթեայ աշակերտէն պօղոսի, խոս-
տովանօղ մկայուհի յիշատակի 'ի Հռ. Յ. մայ.
5. ով̃ և համանուն՝ հրով կատարեալ 'ի Թե-
սա-

սաղոնիկ ը̄ Լ. մայ. 5։

Ե՛ամլէ, և Երինէ կոյս Թեսաղոնիկեցի նահատակեալ զկնի քերց իւրոց ագապեայ և քիոնեայ՝ հրով և խոցմամբ սրոյ։ Հ. ապր. 4, կամ 3։ Յ. ապր. 3. և դեկտ. 22։ Լ. ապր. 5։

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՑ տօնելիք միանգամայն. հտ. Պ. 509։

ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ տօնելիք. հտ. Պ. 304։

ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎՐ̄ԴՊՑ տօնելիք. հտ. Լ. 57։

ԵՐԿՈՒ ԲԻՒՐՔ տօնելիք. հտ. Փ. 158։

ԵՐՄԵՆԵԳԻԼԴՈՍ ԿՄ ՀԵՐՄԵՆԵԳԻԼԴՈՍ որդի Լէովիգիլդոսի արիոսեան արքայի ընդ օբարտացւոց վիզիգոթաց 'ի սպանիա՝ յարեալ յուղղափառութիւն 'ի ձեռն ՍԲ եպսին Լէանդրոսի, զրկեցաւ 'ի ժառանգութենէ թգ̄րութե̄, և արկաւ 'ի հօրէն 'ի բանտ. ուր կացնով կոտրատեցաւ և գլխատեցաւ յամի 584. և 'ի լինել ձայնի պո՛ւարթնոց, և 'ի ծագել լուսոյ 'ի վր̄ մե̄ջն 'ի գիշերի՝ դարձաւ հայլըն հանդերձ բազմութբ̄։ Հ. մարտ. 24, կամ 30, Յ. ժմ. նոյ. 1։ Լ. ապր. 13։

ԵՐՄՈԳԷՆԷՍ տօնելի ը̄ն մինասայ. հտ. Փ. 341։

ԵՐՄՈՂԱՅՈՍ ԿՄ ԵՐՄՈՂԷՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ տօնելի ընդ պանդալէոնի. հտ. Օ. 488։

ԵՐՄՈՂԱՅՈՍ ԿՄ ԵՐՄԻՂՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ՝ քարոզ ճշմարտութե̄ առ լիկինոսիւ՛ 'ի սանգիտ կմ 'ի սինգիտոն վերին միւսիոյ, դատեալ յարքայէ՝ յետ գանից եդաւ 'ի բանտ. և Ստրատոնիկոս զօրականն պահապան նր̄ ը̄ն պա-

տու-

տուհան բանտի տեսեալ զհրեշտակ տյ ե-
րևեալ սքյն՝ հաւատաց 'ի քս . և չարչարա-
կեց եղև նմա . և երկոքեն սրակոտոր եղեն .
և արկան 'ի գետն խոտէր , որ և դանոբ .
և այլ գտեալ 'ի ցամաքի՝ ամփոփեցան 'ի հա-
ւատացելոց յայրի միում ։ Ծ . Յ . Ե .
յունիսի . 13 ։

Եւրմոնէ կոյս տօնելի . հտ . Օ . 286 ։

Եւրմոս կմ Երմաս , Ասրատէոն , և Փլեգոնոս կամ
Եւրմոս կմ Երմաս , Ասրատէոն , և Փլեգէնոս կամ
պողիէնոս 'ի հռովմ քաղաքէ՝ արկան յե-
պարքոսէ վն հաւատոց 'ի բանտ խաւարչտին
և դարշահոտ . ապա պարան յոտս քարշեալք
Է քարինս և Է թուփս՝ կատարեցան 'ի քս ։
Ծ . մարտ . 7 , կմ 16 ։ Յ . Ե . օգ . 18 ։

Եւագր . տես 'ի տօնելիս Է հարս եգիպտա-
ցիս . հտ . Ա . 263 . և 297 ։

Եւգենէ կոյս տօնելի՝ ընդ մտամբն . հտ . Բ .
467 ։

Եւգենէոս վկայ տօնելի ընդ եւստաթիո-
սեանս . հտ . Ա . 481 ։

Եւգենէոս և Մակարիոս քահանայք տօնելիք .
հտ . Բ . 619 . Է միւս Եւգինէոսի վկայի .
անդ . 634 ։

Եւգենէոս՝ Բապուն կարդացեալ ասորերէն ,
կամ Բ . վուն քաղդէարէն , որ թարգմանի
Ծայր մեր , էր աշակերտ մեծին անտոնի
աբբայի . յորմէ ուսեալ զնմ կարգ միակե-
ցական վարուց՝ եղև հեղինակ միայնակեցու-
թե և կրօնաւորութե 'ի միջագետս ասոր-
ւոց մինչև յասորեստան և 'ի պարս ։ Բնա-
կէր

կէր նախ 'ի լեառն իզլայ մօտ 'ի մծբին քա-
ղաք , շինեալ անդ վանս , և առաջնորդ լե՟լ
եօթանասուն եղբարց . յետոյ կալաւ զբնա-
կութի՟ն 'ի տեղին կոչեցեալ քատանայ՝ ամ՟
վարուք ճգնութե՟ և սրբութե՟ մինչև 'ի վախ-
ճան իւր ։ Սորա աշակերտ համարին ոմանք
և զո՟ն յակոբ մծբնայ հայրապետ . թող և
զայլ գործակիցս նորա , որք տարածեցին
յարևելս զո՟ր հաւատս և զկարգ կրօնաւո-
րութե՟ ։ Այլ անմիջական աշակերտ և յա-
ջորդ եւգինէոսի ավունայ 'ի վանս մծբնայ՝
երևի լինել սո՟ն մարուգէ կամ մարկեղոս ,
հանգիստացեալն 'ի պատմութե՟ վարուց սո՟յն
յակոբայ ։ Նուոդ . ասսեմ . հատ . ա՟ . երես .
67 . 92 . ՃԶ ։ Սիմոն ասսեմ . հատ . գ՟ .
մասն . բ՟ ։ Սոզոմենոս . զ՟ . 33 ։

Ն[illegible] տօնելի ընդ մինասայ . հտ . Ժ՟ .
341 ։

Ն[illegible] կին պոռնիկ հեթանոս՝ հեղիու-
պօլսեցի կի՟ սամարացի առ տրայիանոսիւ ,
լուեալ զբանս վ՟ն ահագին դատաստանին՝
զոր ընթեռնոյր գերմանոս ճգնաւորն , եկն
'ի գեղջ . և լայր յառանձնութե՟ զմեղս իւր
շաբաթ մի ։ Ապա ետես 'ի տեսլեան , զի
հրեշտակ ա՟յ հանէր զհոգին յերկինս . իսկ
դևն ը՟դէմ կայր , և կրճտելով զատամունս՝
ասէր . անիրաւ է փրկութի այդպիսի մեղա-
ւորի . և եղև ձայն յերկնից . այսպէս հա-
ճեցաւ ա՟ծ յորդիս մարդկան , զի ը՟ունող է
ամ՟ ապաշխարողաց ։ Յայնժամ գնաց եւդո-

կիա աւ Թէոդոտոս եպ̃սն , և մկրտեալ 'ի
նմանէ՝ բաշխեաց աղքատաց զամենայն իւր .
և ինքն զգեցեալ խորգ մազեղէն՝ եմուտ 'ի
վանս կուսանաց . ուր այնչափ յառաջեաց 'ի
Ճգնութ̃ի և 'ի սրբութ̃ի , մինչև յարուցա-
նել և զմեռեալս , և բազմաց առիթ լինել
փրկութ̃ե : Յետ ամի կալաւ զնա բեկենտ
կի̃մ վինչենցիոս դատաւոր , և նահատակեաց
սրով 'ի Հեղիուպօլիս փիւնիկեցւոց : Դ· Յ·

Ի· մարտ· 1 :

Եւդոքսիոս ծառայնոս կոմս տօնելի · Հտ · Ե·

447 :

Եւթիմիոս աբբայ կամ Եւթիմիոս քահանայ՝
մեծ Ճգնաւոր , էր 'ի մելիտինոյ Հայոց՝ յա-
ւուրց մեծին Թէոդոսի ցլեւոն կայսր : Ծնօղք
սորա պօղոս և դիոնեսիա ամուսինն . և որ̃
յայտնեաց նց̃ , թէ եղիցի նց̃ որդեակ 'ի
ցնծութ̃ի եկեղեցւոյ . վ̃յ եդին զանուն նր̃
Եւթիմիոս , որ̃ զուարթամիտ . և իբրև ա-
ճեաց 'ի բարի վարս՝ օծաւ քահանայ , և իե̃
ամաց կրօնաւորեցաւ . շինեաց վանորայս ,
բազմացոյց զմիայնակեացս , և եղև առաջ-
նորդ անապատի : Իսկ 'ի ծերութ̃ե երթեալ
յեէ̃մ՝ արար վանս յայրի միում , և սքան-
չելի սրբութ̃ և նշանօք դարձոյց զբազումս
յանհաւատից . և 'ի մատուցանել երբեմն
զմ̃ր պատարագն՝ տեսանէր անձն նր̃ ող̃ սիւն
հրեղէն . և փոխեցաւ յերկինս՝ ղէ̃ ամաց .
Կարճ էր ասեն հասակաւ , և երկայնամօ-
րուս մինչև 'ի ծունկսն : Դ· Յ· Ի· յուն-

վար . 20 :

ՍՈՒԽԱՐԻԱՓՈՍ . տե՛ս Քարիստոս :

ՍՈՒՂԱՄԷԷՍ . տե՛ս Պամպէոս :

ՍՈՒՊՐԱՋԻՆԷ . տե՛ս Սպրաքսիա :

ՍՈՒՌԷԷՆՈՍ վկայ տօնելի ընդ բազմօք . հտ . Ռ . 133 :

ՍՈՒՐԳՆԷՍ . տե՛ս Աինկնիոս :

ՍՈՒՓԱՂԷՈՍ կամ ԵՈՒՓԱՋԷՈՍ զօրավար տօնելի . հտ . Օ . 251 :

ՍՈՒՓԱՂԷՈՍ անկէտրայն զօրական քրիստոնեայ առ Լիկինոսիւ կամ Յուլիանոսիւ ; փորձեալ ՚ի կուռնելիոսէ դատաւորէն գաղատիոյ՝ իբրև հաստատուն գտաւ ՚ի քս, գան հարին զնա, և ծակեալ զպճղունս ոտից՝ ՚ի քարշ տարան մինչև ՚ի գետն սագարիս, և ընկլուզին տապանակաւ . բայց հանեալ ՚ի ջրոյն ձեռամբ հրեշտակի՝ եկն յանկիւրիա սաղմոսելով, Որ բնակեալ է յօգնութեի բարձրելոյն : Զոր տեսեալ դատաւորին՝ առ մոլեգնութեն չոքաւ գկւրովք : Իսկ սրբն եւստաթէոս եկեալ ՚ի տաճար սրբոյն պղատոնի վկային նահատակելոյ ՚ի քաղաքի անդ՝ աղօթեաց բազմութբ հաւատացելոց . ուր և ընկալեալ զառհաւատչեայ բրաբիոնի տեսլեամբ արդանոյ թռուցելոյ՝ աւանդեաց զոգին . և թաղեցաւ պատուով : Դ . յուլ . 5, կամ 19 : Յ . Լ . 28 : տե՛ս և Եւստաթէոս :

ՍՈՒՓԱՋԷՈՍ կամ ՍՓԱՋԷՍ առաքեալ՝ մին յեօթանասնից ( տօնեալ ընդ խմբի նց ) գործակից սրբոյն անդրէի իբրև աշակերտ նր՝ ձեռ-

նադրի 'ի նմանէ յարակլիա եպս , և գայ 'ի
բիւզանդիա . ուր դարձուցեալ զբազումս
'ի հր՝ շինեաց եկեղեցի յարգիւրոպօլիս .
կրեաց և հալածանս 'ի քրմաց , և վախճա-
նեցաւ քարկոծմամբ կմ հանգստեամբ : Հ.
յունիս . 11 , կմ 14 : Յ. Լ. հոկտ . 31 :

Ն[illegible] քուրմ, որ և գրի Եւստաթէոս
կմ Եւստոքիոս , յուստադոն քաղաքէ ( ասոր-
ւոց կմ գաղատացւոց ) տեսեալ առ մաքսի-
միանոսիւ զհամբերութի վկայից և զնշանս՝
մկրտեցաւ յեւդոքսիոսէ եպսէն անտիոքայ .
և յաւազանի անդ ետես երիս հրեշտակս ,
որք 'ի գլուխս բարձեալ ունէին զերեսին
զաւակս իւր սպիտակ զգեստուք . և եպսն
ասէ ցնա . պարտ է քեզ լուսաւորել և զոր-
դիսն քո այլովքն հանդերձ . մինչ ձեռնա-
դրեաց զնա յաւուր ութերորդի քահանայ .
որ և եկեալ 'ի գիւղն՝ մկրտեաց զորդի իւր
զՈւրբանոս , և զերկուս դստերսն զԹրոպի
և զԼուլի , և զեղբօրորդի իւր զԹայանոս .
և նոքօք հանդերձ մատնեցաւ 'ի ձեռս դա-
տաւորին , և բրածեծ եղև : Յետոյ աւա-
քեցան կապանօք յանկիւրիա առ ագրիպ-
պինոս դատաւոր . որ չարչարեաց զնս գա-
նիւք , քերանօք , անուօք և բևեռօք . իսկ
վախճան երանելեացն եղև գլխատմամբ .
և շինեցաւ եկեղեցի 'ի վր տապանի նոցա :
Հ. յունիս . 28 : Յ. յունիս . 23 : Լ.
հոկտ . 12 :

Ն[illegible] տօնելիք . հա . Թւ. 481 :

Սարպեդոն վկայ կմբ եւտիքոս ընդ բասոսի տօ-
նելի . հտ . Ա . 133 :

Սատուրնիլոս և Սիքստինոս ամասխացիք՝ հօրա-
քեռորդիք սրբոյն Թէոդորոսի զինուորի, և
զինուորակիցք սրբոյն բասիլիսկոսի՝ յաւուրս
բանտարկութեն նր դատեալ եղեն յասկղե-
պիադէս դատաւորէ . և գանեցան ուժգին .
և 'ի լինել չարչարման՝ բուրմամբ հոտոց անու-
շից՝ երևեցաւ քս ընդ սրբոյն Թէոդորոսի, և
լուծեալ զկապանս վկայից՝ ողջացոյց զվէրս
նց . յայնժամ հաւատացին ոմանք 'ի զօրա-
կանաց, և կատարեցան սրով : Իսկ զեւտրո-
պիոս և զկղէոնիկոս հրապուրէր դատաւորն
զանձուք՝ գէԹ բերանով միայն ասել, Թէ
զոհեմք . այլ նոքա մերժեցին զնա, և աղօ-
Թիւք կործանեցին զբագինս . վոյ ետ բռ-
նաւորն հեղուլ 'ի վր Թիկանց սրց ձիւԹ և
ձէԹ եռացեալ . և զկնի տանջել քերանօք .
ապա բևեռեալ 'ի խաչ՝ կատարեցան 'ի քս .
և Թաղեցան մօտ յամասիա յաւանձին տա-
պանս : Հ . Յ . Լ . մարտ . 3 :

Սափիրա կոյս տօնելի . հտ . Գ . 134 :

Սափրիկոս կմբ եփսիքոս . տես Սպսիքոս :

Սաքերդոն ոբ ժողով տօնելի . հտ . Գ . 429 :

Սափրոնիա կամ եփրոսինէ կոյս նիկոմիդացի
առ մաքսիմիանոսիւ յետ կրելոյ զխոշտան-
գանս վս անուանն քսի՝ մատնեցաւ 'ի ձեռս
անարակ զօրականի միոյ . իսկ անարատ ո-
րոջն քսի յաղօԹս ապաւինեալ՝ հնարեցաւ
աղաչել զզինուորն չմերձենալ յինքն . և ես

ու-

ուսուցից քեզ ասէ դեղ ինչ , որով ոչ ևս կարասցէ ազդել 'ի քեզ սուր կամ նետ և ձեռագործի սպանօղ . և 'ի հաւանիլ նորա՝ ետ կոյսն բերել ձէթ , և օծեալ նովաւ զմազ մի՝ զոր կորզեալ էր 'ի գլխոյն , պատեաց 'ի վերայ մերկ պարանոցին իւրոյ . և ասէ ցայրն . հար թրովդ 'ի վերայ մազիս այսորիկ յամենայն զօրութենէ , և տեսցես՝ զի ոչ կարէ ազդել յիս սուրն . և նորա չիմացեալ զհնարսն՝ եհար ուժգին , որով անկաւ գլուխ կուսին յերկիր . իսկ այրն յահէ լեալ՝ փախեաւ ։ Հ . յնվ . 18 , կմ 20 ։ Յ . յնվ . 19 ։ Բոլլանդեանք . փետր . 11 ։

Նոյեմբ խորին ասորի՝ տօնելի . հտ . Ձ . 394 ։ Նոյերունէ կոյսն՝ սմարագդոս կոչեցեալ աղեքսանդրացի՝ առ փոքրն Թէոդոսիւ , միամօր դուստր պափնուտիոսի՝ որբացեալ 'ի մօրէն ԺԲ ամաց , իբրև ետես՝ զի հայրն կամի մուծանել զնա 'ի կարգ ծի , ետ գերծել զինքն որ ծերոյ ումեմն , և առնաձև ձևով ընդ ներքինի կրօնաւորեցաւ 'ի վանս , ուր ստէպ գնայր հայր նորա . և ոչ ծանուցաւ . և զարգացեալ յամենայն ճգնութիւս առաքինութեան ընդ ձեւամբ ագապիոսի հօգևոր վերակացուի իւրոյ՝ եկաց 'ի խուց մի արգելական ամս ԺԸ , կամ ԼԸ սքանչելի սրբութեամբ . և յաւուր մահուանն յայտնեաց զանձն հօր իւրում . և եղև ողբ մեծ հօրն և ամենայն տեսողաց , որք փառս տային աստուծոյ վասն այնպիսի ժուժկալութեան սրբուհւոյն . և մին 'ի կրօ-

նաւորաց միականի 'ի մերձենալ 'ի նշխարս սրբոյն՝ ստացաւ զտեսութի̃ խաւարեա̃լ ականն ։ Իսկ պափնուտիոս կրօնաւորեալ 'ի խցի սր̃ դստերն իւրոյ ամս տասն՝ փոխեցաւ առ տր̃ 'ի բարւոք ծերութե̃ ․ որոյ և յիշատակն ուրոյն կատարի առ յոյնս ։ Հ ․ մարտ ․ 8 ։ Յ ․ սեպ ․ 25 ․ և փետր ․ 15 ։ Լ ․ յունվ ․ 1 ։

Եօթանասուն և երկու աշակերտք տօնելիք ․ Հտ ․ Զ ․ 346 ։

Եօթն խոստովանողք տօնելիք ․ Հտ ․ Ի ․ 41 ։

Եօթն կանայք ․ տես 'ի Պլասիոս ․ կմ̃ յերինարքոս ։

Եօթն կուսանք ․ տես 'ի Թէոդոտոն ։

Եօթն մանկունք մակաբայեցւոց ․ տես Մակաբայեցիք ։

Եօթն մանկունք եփեսոսի՝ ննջօղք , տօնելիք ․ Հտ ․ Ր ․ 143 ․ և Ր ․ 143 ։

## Զ

Զաքարիա մարգարէ տօնելի ․ Հտ ․ Գ ․ 433 ․ և Գ ․ 316 ։

Զաքարիա հայր յոհնի ․ մկրտ․ տօնելի ․ Հտ ․ Ե ․ 371 ։

Զաքարիա կաթողիկոս աղթամարայ 'ի ժդ̃ դարուն այր առաքինի և զգօն ․ առ որ եկեալ ջաֆար պարսիկ ոմն՝ նենգութե̃ մատոյց նմա զմախաղ իւր յաւանդ ․ իսկ տր̃ զաքարիա չեառ յանձն , զի չիք ասէ տեղի ապահով առ իս ․ ընդ որ դժուարեալ առն՝ եած ապտակ յերեսս կաթողիկոսին ․ և 'ի դի-

դիմել անդ բազմութեան՝ ապրեցուցանել զՀայրապետն՝ գնաց պարսիկն ամբաստան եղեւ զկաթողիկոսէն եւ զորոց ընդ նմա առ եզդին արքային ոստանայ, ուր խոշտանգեալ 'ի նոյանէ. զի ինքնին կամաւ փետեալ էր զմօրուս իւր, եւ այլագունեալ զերեսս: Եւ արքային ասէ ցկաթողիկոսն, չիք քեզ հնար ազատութե, եթէ ոչ ուրասցիս զՔս. յայնժամ Հայրապետն մերժեալ զհրապոյրս չարին՝ համարձակ դաւանեաց առաջի բազմութե զԱծութի յիւի. վն զեղեալ զնովաւ այլազգեաց՝ հարին սրով զմնակուշտ նր. եւ ձգեալ պարանաւ 'ի քարշ ընդ փողոցս՝ քարամբ եւ փայտիւ եւ սրով սպանին զնա, փշրելով զգագաթն եւ ցրուելով զուղեղն՝ յօրհնել նորա զԱծ: Կամէին այրել եւ զմարմին նր. բայց քրիստոնեայք հաճեալ զարքայն՝ առին եւ տարան յոստանէ յաղթամար, եւ թաղեցին պատուով յամի 1396. պխե. կմ 1393. պխբ: ~ յունիս. 26:

Օէնոբէոս եւ Օէնոբէա էին եղբայր եւ քոյր՝ զաւակք բարեպաշտ ծնողաց զենոդոտոսի եւ Թեկղեայ յեգէաս քաղաքէ կիլիկեցւոց առ Դիոկղետիանոսիւ: Օէնոբիոս ընտրեալ եպս քաղաքին՝ աղօթիւք փարատէր զամ ցաւս, եւ դարձուցանէր զբազումս 'ի Քս. ընդ որ զչարեալ բժշկաց՝ մատնեցին զնա Լիւսիայ դատաւորին. որ ետ կախել զնր եպսն, եւ գզել չարաչար զմարմին նր: Յայնժամ ընթացաւ քոյր նր զենոբիա առ դատաւորն՝

ասէ

տելով . և ես քրիստոնեայ եմ . և յանդիմանեաց զանդգթութի՟ հեթանոսաց ։ Ո՟յ յետ զանից տարածեցին զերկոսեան ՚ի վ՟ր ջեռուցել երկաթի մահճաց . և ՚ի մնալ ն՟ց կենդանի՝ արկին ՚ի կաթսայ եռացեալ ձիթոյ . և ՚ի ցրտանալ ն՟ր աղօթիւք սր՟ցն՝ հանին զն՟ս արտաքոյ քաղաքին , և գլխատեցին . զորս բարձին գիշերայն երմոգինէս և գայիոս քահանայք , և թաղեցին փայտեայ տապանաւ ՚ի լերին ։ Յ . հոկտ . 29 , կամ 30 ։ Լ . 30 ։ Օ . 31 ։

Զենոն զինուոր տօնելի . հա . Լ . 447 . և 452 ։

Զենոն զօրական , և Զենոն ը՟ նմա . տե՛ս ը՟ առաջնոյն . անդ . 465 ։

Զենոն եպ՟ս վերոնայու յիտալիա՝ առ գաղենոս կայսերաւ , յետ պահելոյ զհօտ իւր անարատ ՚ի մոլորիկս հալածանաց՝ ինքն կատարեցաւ վկայական արեամբ . և շինեցաւ եկեղեցի յանուն նորա . ուր եղեն երևելի սքանչելիք յաւուրս մեծին գրիգորի պապին՝ ը՟ պատմելոյ ն՟ր , ուստի առնու և յայսմաւուրքն մեր . զի ՚ի յորդել տիբերիս գետոյն հոսման և ՚ի զեղուլ ը՟նդ պարիսպ քաղաքին , մինչև աւերել զբազում տեղիս , նոյնպէս և աթեսիս գետոյն ՚ի վերոնա բարձրացաւ յոյժ . բայց հանդէպ դրան տաճարի սր՟ն զենոնի եկաց իբրև զպարիսպ . զի թէպէտև ծածկեալ էր դրուռն , և հասեալ ՚ի լուսամուտն , այլ ՚ի ներքս ոչ եմուտ . և

բաղ-

բազմութիւն՝ որ 'ի ներքս կայր՝ հոգայր միայն մի սովու. ուր զծարաւ իւր լնոյր՝ առնլով ջուր ափով. մինչև եղև ցածնուլ գետոյն, և ապրել ամենեցուն բարեխօսութբ սրբոյն : Յ. սեպտ. 28 : Լ. ապր. 12. և դեկտ. 26 : Կոր. պապ. տրամախօս. Գ. 8 :

Օճնոփելա և Ճճելոնետա, կոչեն և՝ Օճնայեա և Ճճելոնելլա՝ իմաստուն կուսանք և քորք տարսոնացիք, ազգականք էին սրբոյն պօղոսի, և նովաւ հաւատացեալք 'ի քս : Օենայիս՝ որ յառաջն բժշկութե պարապէր, թողեալ զտուն իւր և զինչ ինչս՝ առանձնացաւ 'ի լեառն ճգնել յայրի միում խստաքուստ կենօք. և որք գային 'ի տեսանել զնա՝ շնորհօք տն ձգէր 'ի հաւատս ճշմարտութե. և եղև՝ զի մխեցաւ յոտս նր կտրօն ինչ փայտի. և յերկարեալ 'ի նոյն ցաւս՝ փոխեցաւ առ տր : Իսկ փիլոնիլլա 'ի տան ճգնէր նովին առաքինի քաղաքավարութբ, օրինակ բարեաց լինելով ամենեցուն. մինչև հանգեաւ և նա 'ի հաճոյս տյ : Յ. հոկտ. 8 : Յ. Լ. 11 :

Օռոնձոս եպս՝ էր 'ի սիրակուսայ քաղաքէ սիկիլիայ կղզւոյն յաւուրս հերակլի կայսեր, նուիրեալ 'ի մանկութէ 'ի ծառայութիւն սրբուհւոյն լուկիայ 'ի վանս անդ նր՝ որ է այժմ արտաքոյ քաղաքին. և այնպէս ջերմ էր յածպաշտութի և 'ի կրօնաւորութի, զի թէ հարկ լինէր այց առնել ծնողացն, փութովմեկնէր 'ի նոցանէ՝ ասելով. անդ պարտ

է

է յինէն լինել՝ ուր գլուխն ընծայեցիք ։ Յետ կալոյ 'ի վանս զամս երեսուն՝ եղև առաջնորդ նոյն ուխտին, և ապա ձեռնադրեցաւ եպս սեբաստացւոց 'ի Թէոդորոսէ հռովմայ հայրապետէ. և փայլեալ քաջողութբ և նշանագործութբ՝ փոխեցաւ առ տր 'ի հասակի ծ ամաց ։ Հ. փետր. 10, կմ 11 ։
Յ. յնվ. 21 ։ Լ. մարտ. 30 ։

Զոսիմոս կրօնաւոր կիլիկեցի բնակեալ լերկ մաշկեղինօք ընդ գազանս անապատի՝ առ դիոկղետիանոսիւ կամ տրայիանոսիւ, ըմբռնեալ 'ի դոմետիանոս դատաւորէ՝ տանջեցաւ վս հաւատոյ. քանզի մխեցին հրացեալ շամփուրս յականջս նորա. և արկին զնա 'ի կաթսայ եռացեալ. դարձեալ գլխիվայր կախեցին՝ կապեալ վէմ մեծ 'ի պարանոցն. յայնժամ եհաս առիւծ մի յանապատէ՝ ընտել սբյն, և եբարձ ուսով զվէմն կախեալ. և բռնաւորն յահի լեալ՝ արձակեաց զսբն ։ 'Ի դառնալ զոսիմոսի 'ի խուղ իւր՝ գնաց և Աթանաս զօրականն զկնի նորա. և մկրտեալ 'ի նմանէ՝ եղև ընկեր ճգնութենր. և երկոքեան 'ի միասին վախճանեցան 'ի խորս լերանց ։ Հ. Յ. յնվ. 4 ։ Լ. յնվ. 3 ։ Այլ է և սքանչելի ոք հայրն զոսիմոս, որոյ են խրատք ոծիմաստք 'ի հարանց վարս. և նոյն երևի՝ որ յիշի 'ի վարս մարխամու եգիպտացւոյ 'ի Ե, կամ 'ի Զ դարու ։

Զոսիմոս զօրական հեթանոս առ տրայիանոսիւ յապողոնիադայ սողոպօլսոյ՝ մինչ էր յան-

յանտիոք պիսիդեայ, ծանեաւ զստութիւն կռոց, և երթեալ առ քահանայսն մկրտեցաւ · վ՟յ կալաւ զնա դոմետիանոս դատաւոր՝ ը՟ որով զինուորեալն էր, և տանջեաց դանիւք և քերանօք և հրացեալ մահճօք · բայց նահատակն զօրացաւ յերկնաւոր ձայնէ · Ապա վարեցին զնա չարչարանօք և երեքօրեայ անսուաղութբ՟ 'ի քաղաքն կանէատոն · ուր վերստին քննեալ՝ գլխատեցաւ վ՟ անուանն քսի ։ · յունիս · 20, կիր

22 ։ Յ · Լ · 19 ։

Օ[illegible] երէց՝ էր մի 'ի քահանայից արտաշատու յաւուրս տիրանայ հայոց արքայի · և 'ի դիմել պարսից 'ի հայս և 'ի կողոպտել զեկեղեցիս՝ գերի վարեցին և զնը երէցն զուհատ · և տարեալ 'ի պարսս՝ կացուցին կապանօք առաջի շապհոյ · որոյ տեսեալ զնա, զի էր այր անձնեայ և փառացի, հնարէր շրջել զնա 'ի հաւատոց · և պատճառս դնէր ասելով · մոգ ես դու, զի հերք գլխոյդ է սպիտակ, և մօրուսդ թուխ · արդ չիք քեզ հնար ապրելոյ՝ եթէ ոչ 'ի բաց կացցես 'ի քսէ ։ Իսկ սբն ասէ · մոգութի և կախարդութի հեռի է 'ի մէնջ · և գոյն հերացս ոչ է օտար 'ի կարգէ բնութե, զի հեր գլխոյս քսան ամաւ յառաջ է քան զմօրուացս · ապա յաւել քաջութբ խոստովան լինել զքս ած, և յանդիմանել զանմտ մոլորութի պարսից · նմին իրի հատին զգլուխ երանելւոյն ։ · փետր · 3 ։

# Մ

Մատթէոս առաքեալ տօնելի. Հտ. Դ. 14։
Սմէ և Յուդա Թադէոս. Մ. 477։
Մանուէլ և Սարոս տօնելիք. Հտ. Ա. 22։
Մաղխղէոս բժիշկ տօնելի. Հտ. Դ. 274։
Մամար նոր վկայուհի՝ էր կին առնակին յերկրէն մոկաց, գոհար կոչեցեալ վն գեղոյն. որում տափայեն քուրդ մի մոկացի՝ ջանայր հափափել զն յափշտակել զնա. վն փախեաւ Թամար ընդ առն իւրում որդւովքն հանդերձ յաղԹամար։ Յետ ամացիբր հրնգից ՚ի դալնոյ յոստան քաղաք վն իրիք գործոյ, կալան զնա այլազգիք, և ձգեցին յատեան ամիրային՝ չարախօսելով, որպս Թէ երբեմն յայլազգութի իցէ դարձեալ. իսկ նա եցոյց զսուԹի զրպարտուԹե նց. և աներկիւղ դաւանեալ զքրիստոնէութիւն իւր։ Ի ջանալ կնոջ ամիրային որսալ զնա խոստմամբք և սպառնալեօք, ծիծաղեցաւ Թամար զխանիւքն նր, և ասէ. ոչ կարեմ փոխանակել սիրոյն քո զանցաւոր մեծուԹիս, և ոչ ՚ի մահուանէ երկնչիմ։ Նոյնպէս և յահագինս սպառնալ ամիրային՝ ետ պխնի. Թէ և զմ մարմինս իմ մանր մանր կտրատել տաս՝ ոչ զչամիեղ առաջի քո, ես զքս ոչ ուրանամ։ Ապա յետ տանջելոյ զնա քաղցիւ և բանտարկուԹբ, քարկոծեցին ՚ի հրապարակի. մինչև ՚ի բազմուէ խուռն

քա-

քարանցն ծածկիլ Թամարայ իբրև գոհար
պատուականս ըստ անուանն՝ յամի · 1398 ·
պինէ ։ Յամփոփել զմարմինն նր տեսին քրիս-
տոնեայք , զի կարեալ էր հնարիւք զատո-
րոտս շապկին և զփողպատն , զի մի՛ ’ի ձգիլ
յանօրինաց՝ մերկասցի իւիք մասամբ · և
զարմացան ընդ կգաստուին նր ։ Հ · ապր · 24 ։

ԹԱՐԳՄԱՆԻՉՔ · տես Սահակ , և Մեսրովպ ։

ԹԷԿՂ կոյս նախավկայուհի տօնելի · հտ ·
Օ · 423 ։

ԹԷԿՂ այլ · տես ընդ Ագապիոսի ։

ԹԷԿՂ , ՏԱՐԽԱՆ , ՏԱՐԽՆԱ , ԵՄ ԿՄ ԱՄԱ , և ԴՈՒ-
ԽԱ ՏԱՐԽԱՆ , էին հաւատաւոր կանայք պար-
կեշտք և սրբակրօնք յասորեստան ’ի կա-
շած քղքի · ուր կայր և երեց մի պօղէ անուն՝
ագահ և մոլի · զորոյ զինչս յափշտակեաց
ներսէհ տամշապուհ կմ տրոմշապուհ՝ մին ’ի
գործակալաց շապհոյ արքայի · և ետ ըմբռնել
կապանօք առաջի իւր զերեցն և զկուսանսն ,
և ստիպէր երկիրպագանել արեգական և
կրակի ։ Յայնժամ սուտ երէցն այն կա-
տարեաց զկամս իշխանին , զի ապրեցուսցէ
զինչս և զստացուածս իւր · իսկ որք կանայքն
հաստատուն կացեալ ’ի քն՝ յանդիմանեցին
զուրացօղն ։ Իսկ տամշապուհ յետ գան հար-
կանելոյ զնս՝ ասէ ցպօղէ · եթէ կոտորես
սրով զկանայսդ զայդոսիկ , դարձուցանեմ
’ի քեզ զինչս քո · և չերէցն մոլեգին՝ մի առ
մի գլխատեաց զոր կուսանսն՝ եղեւ դահիճ
անօրէն · այլ եգիտ վաղվաղակի զհատուցին
պա-

պատիժ իւր կորստեամբ հոգւոյն և մարմնոյն . քանզի բռնաւորն ագահելով յինչս նր՝ ետ խեղդել զնա 'ի նմին գիշերի ։ Եւ այս եղև յամի իբր 346 ։ ✝ . մայիս . 31 ։ Պառընտ . Բ . նզ ։ Նուոզ . ասսեմ . յունիս . 6 ։

ԹԷՐԱՊՕՆ ԿԱՄ ԹԷՐԱՊԷՕՆ (որ թարգմանի պաշտօնեայ, և բժշկիչ), էր եպս կիպրոսի նշանաւորն՝ ընտրեալ 'ի միայնակեցութե, և նահատակեալ 'ի կռապաշտից . և տապան նր առնէր անպակաս սքանչելիս ։ Իսկ իբրև հանդերձեալ էին այլազգիք դիմել 'ի կիպրոս՝ երևեցաւ սրբն սպասաւորաց տապանին իւրոյ, և ասաց փոխել յայլ տեղի . և նոցա առեալ զնշխարս սրբյն՝ նաւեցին 'ի կոստանդինուպօլիս , և անդ հանգուցին յեկեղեցւոջ . և բղխէր 'ի նմանէ ձէթ անուշահոտ 'ի բժշկութի հիւանդաց ։ ✝ . Յ . մայ . 25 ։

ԹԷՐԷԶԻԱ ԿԱՄ ԹԷՐԷԶԱ կոյսն էր սպանիացի 'ի քաղաքէն ապուլայ կամ աւիլայ , դուստր ալփոնսոսի և բէատրիկեայ , ծնեալ յամի 1515 ։ Սնեալ յերկիւղն այ՝ յեօթնամեայ տիոց խորագոյն եղև մտնջենաւոր վիճակի փառաց և տանջանաց 'ի հանդերձելումն . վ̃յ սակայ երկրորդէր , յաւիտեան յաւիտեան ։ Եւ դեգերեալ յընթերցուածս վարուց սրբց՝ այնչափ վառեցաւ 'ի սէր նահատակութե , մինչև բանս եդեալ է մանկահասակ եղբօր իւրում հռոդերիկի՝ եւ 'ի տանէ գնալ յափրի-

ընկէ առ 'ի մարտիրոսանալ 'ի մաւրիտա-
նացւոց · որում հանդիպեալ հօրեղբօր նո՛ր
դարձոյց զունի 'ի տուն ։ Մինչդեռ ժ՛է ա-
մաց էր , որբացեալ 'ի մօրէն՝ դիմեաց 'ի
սրտէ առ 'ոք ճծածինն՝ լինել նոքեան 'ի
մայր · յորմէ և եգիտ շնորհս սքանչելիս ։
Բայց ընտանութին ը՛ ոմանս 'ի Թոյլ և յան-
կարգ ազգականաց , և ընթերցումն անպի-
տան և Ծաղան գրոց ինչ , առ ժամանակ մի
հովացուցին զԹերեւկա 'ի յառաջադիմութէ
բարւոյ · և գուցէ 'ի վատթար անդր նկրտէր՝
եթէ չլինէր 'ի բնէ երկիւղած և ամօթ-
խած , միանգամայն և փոյթ 'ի պահել զպա-
տիւ անձին · այլ առաւել ներքին ազդմամբ
ա՛ն զգաստացեալ ը՛ կամաց հօրն եմուտ 'ի
կուսաստան մի վ՛ր դաստիարակութե եւեթ ։
Իւ հի՛անդացեալ՝ հարկեցաւ դառնալ 'ի
տուն վ՛ր դարմանոյ · ուր 'ի ձեռն ընթերց-
ուածոյ հոգեւոր գրոց հաստատեաց 'ի միտս՝
կրօնաւորել · և ի՛ ամաց գոլով՝ եմուտ 'ի
վանս կարմելականն կուսանաց 'ի քաղաքի
անդ իւրում · և ը՛ առաւելուլ փութոյն 'ի
լաւ անդր՝ փորձեցաւ պէսպէս դժուարին
հիւանդութեբք · վ՛յ դարձեալ եկն 'ի տուն
հօր իւրոյ · և անդ եհաս 'ի դրունս մահու ·
և մինչդեռ կարծէին զնա մեռեալ , և հո-
գային թաղել , զարթեաւ ո՛ք 'ի քնոյ , և
պատմեաց զտեսիլ դժոխոց և արքայութե
և զայլ բանս գուշակութե · և յետ հաստա-
տելոյ փոքր մի յառողջութե՝ գնաց անդրէն
'ի

'ի վանս. և անդ վերստին կրեաց բազում
ցաւս, մինչև զերծաւ սքանչելեօք սրբոյն յով-
սեփայ Աստուածահօր առանձին պաշտպանի իւ-
րոյ: Նա և 'ի բուռն հարկանել զբարի կար-
գաց և զճգնութեանց՝ դարձեալ թուլացոյց
զնա դեւն, պատճառելով զտկարութիւն և
զայլ մարդկային պատճառանս. և ահա 'ի
միում նուագի ժամանակաւ դատարկաբա-
նութեան յանկարծակի երևեցաւ Տէրն, և խո-
ժոռ հայեցուածով նայեցաւ 'ի Թերեզիա.
և յայնմ ժամէ տուաւ նմա սիրտ այլ, մին-
չև իսպառ մոռանալ զանձն և զմարմին, և յա-
րել յԱստուած յամենայն սրտէ. քանզի անկեալ առաջի
փրկչին արտասուօք՝ ասէր, ոչ յարեայց աս-
տի՝ մինչև գտից շնորհս առաջի քո՝ մեկնել
յամենայն արարածոց, և միանալ ընդ արարչին
իմում. զոր և ընկալաւ իսկ, և եղև յայնմ
հետէ հրեշտակ 'ի մարմնի: Վառեաց զամենայն
կուսանս 'ի նոր եռանդն ճշմարիտ կրօնա-
ւորութեան և խստամբերութեան՝ բանիւ և օրի-
նակաւ. և եղև նորոգիչ կրօնին կարմե-
ղեանց՝ շինելով զբազմութիւն վանաց արանց
և կանանց իբր երեսուն և երկու՝ 'ի յետին
աղքատութեան, հանդերձ ազգի ազգի տես-
լեամբք և այցելութեամբ Տեառն և Սրբոյ Աստուածածնի և
սրբոյն յովսեփայ. որպէս է տեսանել 'ի լիակա-
տար պատմութեան նորա, և 'ի գիրսն՝ զորս շա-
րադրեաց նա ինքն սրբուհին Թերեզիա՝ լի
հոգւով և հրով սիրոյն Աստուծոյ: Ո՜ր այնչափ էր
եռանդն հոգւոյ նորա, մինչև տեսանել ըղ-

 հրեշ-

հրեշտակ էր՝ որ հրեղէն նետիւ խոցէր ըզ-
սիրտ նր խորագոյնս․ և էր յն կալեալ զա-
ջոյ նր՝ ասէր ցԹերեզիա․ յայսմհետէ ոպ
Ճշմարիտ հարսն՝ իմում պատուոյ գտցիս
նախանձաւոր ։ Որով և համարձակէր ուխ-
տէր կոյսն զանհնարին կարծեցեալ զայս
բան․ առնել միշտ զկնս կատարեալն 'ի բա-
րեաց գործոց․ այն է առաքելականն յոր-
դոր՝ առնել զբարին, զհաճոյն և զկատա-
րեալն յաչս էր ։ Իւր հիմնադրգին անձամբ
անխնայ տուեալ զանձն 'ի կամաւոր Ճգնու-
թիւնս էմ՝ սովոր էր ասել Թերեզիա առ
էծ․ տէր կամ չարչարիլ, կամ մեռանիլ ։ Օ ի
յորչափ տեսանէր զանձն պանդխտեալ յծի՝
հեռի յաղբերէն կենաց, մի միայն մխիթա-
րութի իւրեան համարէր՝ կամ կրել ինչ
վն էյ, և կամ մեռանիլ վն սիրոյ նր ։ Ունէր
և զշնորհս մարգարէութե, և զայլ պէսպէս
ձիրս․ և սքանչացեալ էր այնչափ մարդասի-
րութի էն առ ինքն՝ այսպէս ասէր․ տէր
ամփոփեա զպարգևս քո, զի մի արագ 'ի
մոռացօնս արկից զյանցաւորութի իմ և զա-
նարժանութի ։ Նախադէտ եղեալ աւուր
փոխման իւրոյ՝ հալեալ սիրով քան խօթու-
թե եղ 'ի կենաց աստի՝ յամի, 1582․ կէ․
ամաց․ և ինքն էր յն երևեալ հրեշտակօք
ընդունէր զհոգի աղախնոյն իւրոյ 'ի նմա-
նութի աղաւնոյ․ և նոյնժամայն ծաղկէր
ցամաքեալ ծառն առ սենեկի կուսին ։ Իսկ
մարմին նր մնաց անապական և անուշահոտ

մեռոնաբուղխ մինչև ցայժմ, փայլեն սքան-չելեօք ՚ի կենդանութեն և յետ մահուան:

Լ. հոկտ. 15:

Թէոգենոս կամ Թէոգենէս եպս պարիոյ կամ պիրրիոյ ( կամ հիպպոնայ յափրիկէ ) չարչա-րեալ վն քի ՚ի կռապաշտից՝ ծովակուր ե-ղև, և յետ երից աւուրց գտեալ ՚ի ցամա-քի՝ թաղեցաւ յաշակերտաց. և բազումք դարձան նովաւ ՚ի քս: Ն. յունվ. 15, կամ 16: Յ. յնվ. 4: ( Լ. յնվ. 3. և 26: )

Թէոդիտէ կամ Թէոդորիտէ և կամ Թէոդոտէ այրի, և երեք որդիք նորա տօնելիք. հտ. Ր. 61:

Թէոդիտոն կամ Թէոդոտոս գաղատացի, և եօթն կուսանք տօնելիք. հտ. Գ. 289:

Թէոդոս մեծ Թգր տօնելի. հտ. Ր. 103:

Թէոդոսիա կոյս գեղեցիկ և պարկեշտ՝ ժը ամաց ՚ի տիւրոս քաղաքէ, վն ողջունելոյն զնս նահատակս և խնդրելոյ զաղօթս նց՝ ածաւ առ ուրբանոս դատաւոր՝ դառն հա-լածիչ ՚ի կեսարիա պաղեստինոյ. որ ետ չարաչար քերել զկողս նր ստեամբք հան-դերձ. և յետ բանտարկութեան և պէսպէս վշտաց տեսեալ զհաստատութի կուսին ՚ի քն՝ հրամայեաց ընկղմել ՚ի ծով յամի տր 307: Ն. մարտ. 10: Յ. ապր. 3: Լ. ապր. 2: Լուռդ. ասորի:

Թէոդորա աղախինն քի՝ Թէոդորոս աբեղայ կոչեցեալ, էր յաղեքսանդրիոյ յաւուրս զե-նոնի կայսեր, առնակին երևելի տեսլեամբ. զոր

զոր կախարդանօք ձգեաց ոմն երիտասարդ 'ի մեղս. իսկ նր իսկ և իսկ 'ի զղջումն եկեալ խորշեցաւ առնել նորօրինակ ապաշխարութի. քանզի գերծեալ զգլուխն առնաբար` եմուտ 'ի վանս արանց ութևտասանեկի կոչեցեալ, և յանձին կալաւ զանտանելի ձրգնութիս և աշխատութիս` հանդերձ անհրնարին զրպարտութբ, որպ թէ ննջեալ իցէ ը կուսի ումեմն. որոյ վս կրեաց ծանր հալածանս և անարգանս. մինչև ոչ միայն քաւել զանձն, այլև սքանչելի սրբութբ ձոխանալ, և յայտնի հրաշս ներգործել. ապա 'ի փոխիլն առ ած` իբրև ծանեան վանականքն` թէ կին է, սքանչացան ը համբերութի նր: Յայտնեաց ած և առն նր բարեպաշտի զփոխումն ամուսնոյ իւրոյ. որ և եկեալ ետես զնա նախ քան զթաղումն, և կրօնաւորեցաւ 'ի խցի նր: Ն. սեպտ. 13,
կմ 16: Յ. Լ. 11:

Թէոդորոս կոյս և վկայ աղեքսանդրացի` էր 'ի հալածանս դիոկղետիանոսի, դատեալ յեւստրատոսէ դատաւորէ վս հաւատոյ, և արգելեալ 'ի տուն պոռնկութե. ուր 'ի դիմել կուսին առ ած` փրկել զնա 'ի մեղաց, Դիդիմոս ոմն 'ի քրիստոնէից ապամամբ ան զգեցաւ ձև զօրականի. և մտեալ 'ի ներքս` քաջալերեաց զաղախինն քի. և փոխեալ ը նմա զհանդերձ իւր` եհան զնա արտաքս, և ինքն եկաց 'ի տեղի նր: Եւ իբրև 'ի վեր ել բանն, զարմացան նոքին

իսկ հեթանոսք . իսկ դատաւորն ետ գլխա-
տել զԴիդիմոս և զԹէոդորա 'ի միասին , և
այրել զմարմինս նց : Յն . մայ . 27 , կմ 28 :
Ց . մայ . 27 : Լ . ապր . 28 :

Թէոդորետոն կմ Թէոդիտոն քահանայ տօնե-
լի . հռ . Ն . 427 :

Թէոդորոս շինարար տօնելի . հռ . Ր . 352 :

Թէոդորոս սրբարարեալ տօնելի . հռ . Ն . 201 :

Թէոդորոս աբեղայ սեբաստացի՝ որդի գոհա-
րինեայ վկայի . եր կրօնաւորեալ 'ի վանս
սբ նշանի և քահանայ նորընծայ . զորմէ չա-
րախօս եղեն առաջի ալեքսայ կմ ալփաս-
լանայ ամիրային սեբաստիոյ՝ թէ անիծանէ
զքեզ և զզէնս քո՝ վն սպանանելոյ քո ըզ-
հայր նր և զհօրեղբարս : Կալաւ զնա ամի-
րայն , և ոչ կարացեալ մեկնել 'ի քնէ ողո-
քանօք և սպառնալեօք՝ ետ արկանել զնա
'ի բանտ , և պնդել զոտս 'ի կոճեղս . ուր
երանելին հայցէր 'ի տնէ արժանի լինել
մարտիրոսութեան : Հարան զնա այլազգիք
բռնութբ 'ի դուռն մզկթի , և յոչ կամիլ
նորա 'ի ներքս մտանել՝ հարին զնա բրօք և
սրօք . և յետ կրկին բանտարկութե՝ ուր ըն-
կալաւ գիր մխիթարութե և քաջալերութե
'ի տր գրիգորէ եպսկ քաղաքին , մատնեցին
'ի ձեռս թաւտոսի կմ թօտոսի դատաւորի
անկելոյ 'ի հաւատոյ . որ յանդիմանեալ 'ի
սրբոյն իբրև ուրացող՝ ետ զնա 'ի ձեռս դահ-
ճաց սպանանել չարաչար : Իսկ նք յետ կո-
խան առնելոյ զվկայն՝ յերկիս մասունս կորա-
տե.

տեցին սրով. և այնպէս յարիւն Թաթաւեալ՝ աւանդեաց զոգին. զորոյ զպատուական մարմինն բարձեալ սարգիս իշխանն հրամանաւ ամիրային՝ տարաւ եդ 'ի վանս Ս͞բ Նշանին յամի Տեառն 1150. ՇՂԹ : Յունիս.

22 :

Թէոդորոս Կեսարացի Հայկազուն՝ որդի առն բարեպաշտի, երիտասարդ առոյգ և սիրելի յաչս քրիստոնէից և այլազգեաց, յետ մտանելոյ 'ի կարգ Տէր՝ 'ի պատճառս կարօտութեան փոխ առեալ յումեքէ քանի մի դահեկանս, և ոչ կարացեալ վճարել, իբրև ածաւ յատեան՝ տկարացաւ 'ի հաւատս. այլ ը͞դ դառնալ 'ի տուն՝ սկսաւ լալ և ողբալ. և խոյս տուեալ 'ի կեսարիոյ՝ գնաց յայլ քաղաք՝ խիղճահար կի͞ր ընորհաւոր կոչեցեալ, և անդ պաշտէր զքրիստոնէութիւն : 'Ի գալ անդր այլազգւոյ ուրումն 'ի կեսարիոյ՝ մատնեաց զնա քաղաքապետին, և ետ տանել կապանօք 'ի կեսարիա առ ամիրայն ռուգնատին. որոյ գտեալ զԹէոդորոս հաստատուն 'ի հաւատս Ք͞սի՝ ետ հարկանել ըզբերան ն͞ր, մինչև խախտել ատամանց. և առաքեաց առ այլ դատաւոր. և նա խոստամամբ ոսկւոյ և արծաթոյ և աւագութեան ոչինչ օգտեալ՝ մատնեաց զվկայն 'ի ձեռս դահճաց, որք գանեցին զնա յերկար, խոշտակեցին քարամբք զկզակս ն͞ր, և յետ անկանելոյն յերկիր ո͞պ զմեռեալ՝ տարան արկին զնա 'ի կապանս բանտի՝ միով սփածանելեաւ.

լեալ. իսկ երանելին գոհանայր զՏնէ զգի-շերն ողջոյն : Ի վաղիւն անդր դարձեալ չար-չարեցին. և կալեալ զհերաց գլխոյն՝ քար-շեցին ընդ փողոցս. և անդրէն եդին 'ի բանտ. ուր եկն քաջալերեաց զնա տր գե-որգ քահանայ 'ի դիմաց անանիայ հայրապե-տի փոքուն հայոց. երևեցաւ և փրկիչն քս ունելով 'ի ձեռին թագ արքունական, և օրհնեաց և զօրացոյց զԹէոդորոս : Զայլն առ նա օրինագէտք այլազգեաց 'ի կողմանէ դատաւորին՝ խախտել զնա 'ի հաւատոյ. իսկ սբյն ձանձրացեալ 'ի նցէ՝ զայս ևեթ ասէր. քրիստոնեայ եմ, և քսի ծառայ : Ի-կին և իշխանաւորք, և արկին առաջի նորա զանձս և հանդերձս մեծագինս, և աղա-չէին գէթ բերանով ուրանալ զհաւատս. իսկ նր զոտս արձակեալ՝ ցրուեաց զգանձս նց, և գոչեաց մեծաձայն. ես քրիստոնեայ եմ : Ապա յետ վեշտասան աւուրց բանտի՝ յորս կրեաց նահատակն ազգի ազգի վիշտս և դառն կտտանս, հանին զնա արտաքոյ քաղաքին, և պրկեալ զնա ընդ ցից մի յոտից մինչև ցլանջսն չուանօք, ստիպէին դառ-նալ 'ի դենս իւրեանց. և յոչ հաւանիլ նր՝ եհար դահճապետն տապարաւ զգագաթն սբյն, և ձեղքեաց ընդ մի կողմն մինչև յունկն նր. և այլ ոմն եհար վիմով ընդ բերանն նր. յոր-մէ ոստեաւ մի յաչացն, և կախեցաւ զերե-սօք նր : Ասէ երանելին. ներեցէք ինձ սա-կաւ մի, զի ունիմ ինչ ասել ձեզ. երդմնե-

ցու-

ցուցանեմ զձեզ 'ի կեանս արքային ձերոյ՝ Թողուլ զմիւս ակն իմ , որպէս զի կարացից տեսանել զյօշումն և զքանդումն մարմնոյս ոսկերոյս , և ցնծացայց 'ի փրկութիւն իմում՝ որ տուեալ ինձ 'ի տեառնէ իմ : Ընդ այս սրտմըտեալ դահճին՝ վերացոյց զմաղաղակաւորն , և հարեալ զձակատ սրբոյն՝ 'ի բաց եհան զսկաւառակն 'ի գլխոյ նորա . և սկսաւ աղաղակեալ . տր իմ և ած յս քս ընկալ զիս , որ վասն անուան քո մեռանիմ . և մինչդեռ շունչ նր 'ի նմ էր , և աղօթս մատուցանէր , հարին զնա յամ կողմանց սուսերօք և քարամբք և փայտիւք . և նա ուրախութբ աւանդեաց զոգին : Յետ այսորիկ 'ի ցոլանալ պայծառ լուսոյ 'ի վր մարմնոյ սրբոյն՝ դահճիճքն փախեան . և ամիրայն փութացոյց զքրիստոնեայս՝ զի բարձցեն զնա . և նք առեալ եդին յարժանաւոր տեղւոջ . ուր լինէին 'ի տապանն նր բզմ սքանչելիք 'ի վր հիւանդաց և ախտաժետաց : Կատարումն քաջայաղթ վկայիս ( որ է տր. Թորոս դայսերիու ) եղև յամի 1204 . ոծգ . 'ի մայիսի . 18 . յաւուր գշբի : Տաւրինտ . Բ . Երես . պկե :

Սւէրդորոս Տաւնուէ՝ որ և Անէնադորոս , կմ սբ Թորոս Երզնկայու , էր որդի Սուրբէնայ հայոց նախարարի՝ իշխանին սալահունեաց մօտ յԵրիզա , մկրտեալ 'ի դասխոս քահանայէ՝ ընդ տեսանելն զհրաշս սբ լուսաւորչին մերոյ , յորժամ տանէին զնա 'ի խոր վիրապն . իսկ

հայր մանկանն բարկացեալ է այն՝ ստիպէր զնա դառնալ ՚ի պաշտօն կռոց հայրենեաց. և ի բերել ոչ հաւանեցաւ, խողխողեաց զնա սրով իւրով ՚ի ձորակն սեղեմնուտ. և ՚ի ծագել լուսոյ գիշերայն ՚ի վր̃ նահատակին՝ Թաղեաց զնա դասիոս քահանայ հրամանաւ մօրն: Իսկ յետ ելից սր̃յն Գրիգորի ՚ի վիրապէն՝ յորժամ լուսաւորեաց զազգն, անուցեալ է այն տեղի, և տեսեալ լոյս ՚ի վր̃ գերեզմանի սր̃յն Թէոդորոսի՝ ետ շինել անդ վկայարան. ուր և ձգնեալ մայր մանկանն աղվիթաս՝ Թաղեցաւ արտաքոյ դրան մատրանն. ուր և դասիոս քահանայն յայնմ վայրի եդաւ. և զկնի ժամանակաց եղև տեղին վանք միանձանց՝ գոլորբու ս̃ր Թորոս անուանեալ: ⁘ մայ. 11:

Թէոդորոս աղեքսանդրացի՝ էր այր ջերմ յանձպաշտութե յաւուրս հալածմանց կռապաշտից. զոր կալեալ աղեքսանդրացւոց՝ եդին ՚ի գլուխ նր̃ պսակ փշեղէն, և կափահարեցին. և յետ դանից՝ կապանօք և Թքալից նախատանօք անցուցեալ ընդ հրապարակն՝ տարան ընկեցին ՚ի ծով. բայց ալիքն հանին զնա ՚ի ցամաք՝ կենդանի. և ապա կատարեցաւ սրով: ⁘ հոկտ. 11: Ց. սեպտեմբ. 12:

Նոյնօրինակ ասի նահատակեալ նաև ս̃րն Թէոդորոս եպս աղեքսանդրիոյ: ⁘ դեկտ. 2: Ց. 3:

Թէոդորոս անապատաւոր, այն է ս̃բ այրոց՝ Թէոդոսեայ վանահայր, ՚ի մաղարիասոս աւանէ

կա-

կապադովկիոյ , երթեալ յանտիոք՝ ետես զսբն սիմէոն սիւնակեայ , և օրհնութ նր եկն յեդէմ . և դիմեալ յանապատ՝ աշակերտեցաւ սբ հօրն զունկինոսի . և եկաց խոտաբուտ կենօք զամս երեսուն , փայլեալ նշանագործութ . շինեաց և զանազան վանս միաբանակեցաց 'ի պաղեստին և յեգիպտոս : Յետ փոխել տալոյ զտապան իւր 'ի կենդանութե՝ ասաց եղբարցն . ո՞ 'ի ձէնջ արասցէ նաւակատիս գերեզմանի իմոյ . և բասիլիոս աբեղայ՝ քահանայ ընտիր՝ ասէ . ես հա՛յր սբ . յայնժամ կատարեցին 'ի վր նր զքառասնօրեայ պաշտօն ննջեցելոց . և 'ի կատարել աւուրցն այնոցիկ ննջեաց երանելին այն , և թաղեցաւ 'ի գերեզմանի անդ : Իբրև էանց միւս ևս քառասունն՝ բազում անգամ 'ի գիշերային պաշտաման երևէր բասիլիոս վանաց հօրն . իսկ մին յեղբարց այետիոս անուն՝ զձայնն միայն լսէր բասիլիոսի . ապա ըստ խնդրելոյ հօրն 'ի տնէ՝ երևեցաւ բասիլիոս ամ եղբարց , և ետ զվերջին ողջոյն հրաժարական : Իսկ սբ հայրն թէոդորոս կամ թէոդոսիոս եկաց այլ ևս յերկար ժամանակս , և բազմացոյց զեղբարս , և արար բազում նշանաւոր գործս , առաւել 'ի ցրումն անգլուխ հերձուածողաց ժամանակին . և հանգեաւ 'ի տր իբր ճե ամաց : ⁘ . յնվր . 12 : Յ . Լ . և տր իէլ . 11 :

Թէոդորոս եպիսկոպոս կիւրենեայ լիբէացւոց առ դիոկղետիանոսիւ , վարժ 'ի սբ գիրս և աջո-

աջողագիր, գրեր բազում գիրս մինչև 'ի ծերութիւն իւր, և սփռեր 'ի մէջ հաւատացելոց. ոմ̃ և զհրէայս և զհեթանոսս ուսուցանէր ա̃ծաշունչ գրովք, և դարձուցանէր. որ վ̃ն մատնեցաւ յորդւոյ իւրմէ ելանէ 'ի ձեռս տիգնիանոսի կռապաշտ դատաւորի. որ ստիպէր զս̃ն բերել առ նա զգիրսն. և իբրև ոչ կամեցաւ առնուլ յանձն, կապեցին զնա շղթայիւք, և երկիցս շրջեցուցին ձաղանօք ը̃ մէջ քաղաքին: Ներին և արձան կռոց, զի երկիր պագցէ. և նա ոտիւք ընկեց յերկիր զբագինն, և եթուք 'ի նա. յայնժամ տանջեցին զերանելին գանիւք և քերանօք, և սրով հերձին զա̃մ մարմինն. և արկեալ 'ի վ̃ր աղ և քացախ՝ շփեցին խորգով. հատին և զլեզուն, և արկին 'ի բանտ. ուր եկեալ դարմանէին զնա բարեպաշտ կանայք՝ լուկիա, տրոյա, և կոպրիլա: Նուլեջանել հոգւոյն ս̃բյ ազատանակերպ 'ի բանտն՝ ողջացան ա̃մ վէրք ս̃րյն. և զուկիոս բանտապանն հաւատաց 'ի ք̃ս և մկրտեցաւ. իսկ ո̃ր եղ̃պն յետ երկուց աւուրց աւանդեաց զհոգին 'ի բանտի: Յայնժամ բանտապանն երթեալ պատմեաց դատաւորին զա̃մ սքանչելիսն, և դարձոյց զնա 'ի տ̃ր. և էանց ը̃ նմ̃ հանդերձ բարեպաշտ կանամբք 'ի կիպրոս կղզի. ուր նահատակեցաւ նա ինքն զուկիոսն. և տիգնիանոս թաղեաց զմարմին նր̃. 'ի նոյն աւուրս կատարեցան 'ի տ̃ր և այլք յարանց և 'ի կանանց: — . յուլ. 20:

տ̃ր

Ծր իէ. 30 : Յ. Լ. 4 :

Թէոդորոս կմ՛ Թէոդոտոս եպիսկոպոս կիւրինիոյ կիպրացւոյ առ լիկինիոսիւ մատնեցաւ 'ի ձեռս սաբինոսի դատաւորի. որ ետ հարկանել զնա արջառաջլօք, քերել զմարմինն, և տանել 'ի բանտ. իսկ նա զճանապարհայն քարոզէր զբանն կենաց, և ասէր. որք տեսանէք զվէրս, իմացարո՛ւք և զպսակն երկնաւոր : Ի բժշկել նորա 'ի բանտի 'ի ձեռն հրեշտակին' դարձեալ փորձեցին զնա, և պարզեալ 'ի վր՟ երկաթի դագաղի' մատուցին հուր 'ի ներքոյ. հարին բևեռս 'ի ներբանս ոտիցն, և տարուբերեալ այսր անդր' արկին անդրէն 'ի բանտ. ուր եկաց ոչ սակաւ ժամանակս. մինչև սատակեցաւ լիկինոս, և հրամանաւ մեծին կոստանդիանոսի արձակեցան ամ՟ կալեալքն վասն անուանն քսի. Ը՟ որս և սբ՟ եպս Թէոդորոս կմ՛ Թէոդոտոս բազում տրամութբ՟ ել 'ի բանտէ. և կացեալ ամս երկու, և զբազում աշակերտեալ զօրութբ՟ նշանաց' հանգեաւ խաղաղութբ՟ 'ի քս՟ : Հ. փետր. 20. կամ 21 : Յ.

յունվ. 19 : Լ. մայ. 6 :

Թէոդորոս ճգնաւորեաց' եպս անապատաւորոյ առ մեծն յուստինիանոսիւ, էր գաղատացի 'ի գեղջէն սիկոնայ' որդի կոզմայի արքունի սուրհանդակի' և մարիամու, սքանչելեօք և յայտնութբք ծնեալ. և էր սբ՟ն գէորգ իբրև վերակացու մանկան' երևելով նմա ստէպ 'ի տեսլեան. վոյ իբրև աճեալ,

ծա-

ծառայէր եկեղեցւոյ սբ՟յն գէորգեայ. կրէր յանձին ճգնութիւնս ծանունս 'ի ծածուկ. և նշանաւ սբ՟յ խաչին հալածէր զդևս, Քահանայ ձեռնադրեալ 'ի Թէոդորոսէ եպիսկոպոսէն ամասիոյ՝ վարէր զմիակեցական կեանս. մինչև ձեռնադրեցաւ 'ի պօղոսէ մետրապօլտէն անկիւրիոյ յեպ՟սութ՟ի անաստասիուպօլսոյ. ուր շինեաց եկեղեցի հոյակապ յանուն սբ՟յն գէորգեայ, և օր ք՟ զօր փայլեաց նշանագործութ՟բ և բազում վաստակօք: Ետես զոր ա՟ծածինն, զի արկանէր մատանի ոսկի 'ի ձեռս նր՟. և զսբ՟ն գէորգ՝ որ հրաւիրէր զնա յերկինս: Իբրև փոխեցաւ առ տ՟ր, գտին զմարմին սբ՟յն երկաթ ծանր յոյժ. և զի հնչեալ էր համբաւ սրբութ՟ն նր՟ յունկն կայսեր և պատրիարգին, ետուն բերել զմարմին նր՟ 'ի կոստանդնուպօլիս. և եդեալ մօտ յեկեղեցի սբ՟յն գէորգեայ՝ շինեցին մատուռն 'ի վերայ: Ն. Յ.

Լ. ապ. 22:

Թէոդորոս պէրգացի 'ի պամփիւլեայ՝ զօրական առ անտոնինոս կայսերաւ, յաւուրս հալածանաց եթող զզինուորութիւն, և խոստովան եղև զանձն լինել զինաւոր երկնից արքային. վ՟յ Թէոդոտոն դատաւոր գան հարեալ զնա՝ էարկ 'ի հնոց հրոյ. և յանարատն պահիլ՝ ետ 'ի խաչ հանել, ուր աւանդեաց զհոգին: Այլ 'ի տեսանել զապրիլ սբ՟յն 'ի հնոցէ՝ հաւատացին 'ի ք՟ս Սոկրատէս և Դիոնեսիոս զօրականք. և կատարեցան

սրով

սրով ը Փիլիպպէի երջանիկ մօր Թէոդորո-
սի ։ Ոմանք յաւելուն և զԴիոսկորոս քուրմ
կռոց՝ հաւատացեալ, և բազում չարչարանօք
կատարեալ ։ Հ. հոկտ. 2 կիմ 1 ։ Յ. սեպտ.
21 ։ Լ. սեպտ. 20 ։

Թէոդորոս, Ովկէանոս կամ Ովկիանոս, Ամմիա-
նոս, և Յուլիանոս որք վկայքն 'ի հալածմանս
Մաքսիմիանոսի՝ յետ քերանաց արկան 'ի ջե-
ռուցեալ բաղանի՝ կնքեալ արքունի մատա-
նեաւ. զորս անվնաս պահեալ՝ դրօքն փակե-
լովք և կնքելովք եհան արտաքս հրեշտակ
այ. իսկ դահիճքն տարան զնոսա արտաքոյ
քաղաքի, և խորտակեալ զձեռս և զոտս
նոցին՝ այրեցին ընդ կենդանւոյն ։ Հ. Յ. Լ.
սեպտ. 4 ։

Թէոդորոս ոմն, և Արիանոս սարկաւագ, ընդ
այլոց՝ Դիոդորոս և Բոստիփիանոս, յափրո-
դիսեայ քաղաքէ կարիայ գաւառի, չարչա-
րեալ վն անուանն քի 'ի քաղաքակցաց և
յազգականաց՝ քարկոծեցան 'ի հրապարա-
կի ։ Հ. ապր. 25. Լ. մայ. 3 ։

Թէոդուլա տղախինն քի՝ էր յանաւարզայ
քաղաքէ. զոր կալեալ պեղագիոս դատա-
ւորն առ դիոկղետիանոսիւ՝ ետ կապել 'ի
ծառ արմաւենւոյ, և սրով պատառել, և
հրով խանձոտել զստինս, և մխել բևեռս
յերկոսին ականջս ։ Ապա կախեցին զհե-
րացն 'ի կիպարիս ծառ, և բևեռեցին զոտսն.
և 'ի լինել սքանչելեաց՝ բազումք 'ի հեթա-
նոսաց հաւատացին. ընդ որս և երկուք յա-
տէ

տենակալաց, որք կատարեցան սրով։ Իսկ սրբուհւոյն Թէոդուլա է այլ վկայս արկաւ 'ի հուր։ Ճ. յուլիս. 30։ Յ. 18։

Թէոդուլոս ճգնաւոր ծառայ քրիստոսի՝ կիպրացի, հրաժարեալ յամէ 'ի մանկութենէ՝ կեայր յետին աղքատութիւն և խստամբեր վարուք. ննջէր 'ի վերայ քարանց, և գնայր բոկ և գըլխիբաց, ցուցանելով զանձն յիմար. բայց ունէր շնորհս կանխագիտութեան և հոգետեսութեան, որով զբաղումս 'ի մեղաւորաց դարձոյց յապաշխարութիւն՝ պատմելով նոցա զխորհուրդս սրտից նոցա. և այնպիսի քաղաքավարութեամբ հանգեաւ 'ի քրիստոս. և նշխարք նորա առնէին բժշկութիւնս։ Ճ. դեկտ. 7։ Յ. և տօր ինէլ. դեկ. 3։

Թէոպիստէ և Թէոպիստոս տօնեսցին ընդ Եւստաթէոսի. հա. Օ. 251։

Թէոպոմպոս և Թէոնաս տօնեսցին. հա. Փ. 125։

Թէոփանէս անտիոքացի՝ զաւակ հեթանոսաց՝ յետ մեռանելոյ կնոջ իւրոյ հաւատացեալ 'ի քրիստոս՝ զգեցաւ մաշեղէն, և ճգնէր արգելական 'ի խցի մերձ յանտիոք. մինչև լինել նորա նշանագործ։ Սա դարձոյց հնարիւք զհեթանոս պոռնիկն Պանսեմնի, և եդ զնա 'ի խորձիթ մի մաշեղէն խորգով. մինչև հասանել նմա 'ի չափ սրբութեան և նշանագործութեան. և յետ տարւոյ 'ի միում ուրբաթու երկոքին ևս փոխեցան առ տէր. և եդան անտիոքայ ամփոփեալ ընդ պատուով։

Ճ.

Յսմ. յունիս. 15. կմ ը ար ինէլ. 14։

Թէոֆիլոսոս կամ Թէոֆիլակտոս խոստովանող եպս Նիկոմիդեայ՝ էր 'ի սկիզբն Թ դարու, ձեռնադրեալ 'ի տարասիոսէ պատրիարգէն կոստանդնուպօլսոյ. որոյ յաջորդն սրբն Նիկեփորոս առեալ ը իւր զսբն Թէոփիլակտոս և զայլս յեպսաց՝ եմուտ առ կայսրն լեւոն արծրունի, և յանդիմանեաց զնա վս զլնելոյն ը դէմ սբ. պատկերաց. ը որ սրտմտեալ թգրն՝ ետ աքսորել զպատրիարգն 'ի թասոն կղզի, և զայլս այլուր. իսկ Թէոփիլակտոս արտասահմանեալ 'ի սմրոբիլոն՝ անդ հանգեաւ 'ի քս։ Յսմ. մարտ. 11։ Յ. 8։

Լ. 7։

Թէոֆիլոս վկայ՝ սարկաւագ լիբեացի՝ տօնելի. հտ. Դ. 363։ կամ որ նոյն երևի, տես անդ և Թէոֆիլէ ը պատրոնիկէի և դամաղիայ. 365։

Թէոֆիլոս զօրավար յունաց կոստանդնուպօլսեցի 'ի վախճան Է. դարու առ կոստանդեաւ և եւլինեաւ, առաքեցաւ 'ի նմէ 'ի պատերազմ նաւական երիւք զօրավարօք հանդերձ ը դէմ այլազգեաց. և 'ի կոտորել Թէոփիլոսի զԹշնամիս՝ նիզակակիցք նր առնախանձու Թողին զնա և փախեան. և այլազգիք կալան և գերի վարեցին զԹէոփիլոս. և տարեալ յերկիր իւրեանց՝ ստիպէին զնա յուրացումն. և 'ի խոստովանել նր արիաբար զքս հաւատս քնի՝ արկին զնա 'ի բանտ. և նեղէին սովու և ծարաւու զբազում ժամանակս.

նակս . իսկ յոչխարագէն տօնի իւրեանց դար-
ձեալ փորձել զնա , և գտել հաստատուն ՚ի
քն՝ զխմեցին ՚ի վ՟ր ն՟ր արաբացիք և խոցոտե-
ցին սուսերօք . և զկնի գլխատեցին . այլ ՚ի
ծագել լուսոյ ՚ի վերայ ս՟բ մարմնոյն՝ թոյլ
ետուն քրիստոնէից թաղել զնահատակն
պատուով : Ն. Տ. յունվ. 30 : Կան և այլ
բազում վկայք թէոփիլոս անուամբ յայլ-
և այլ դարս :

Թէոփիլոս վկայ տօնելի . հտ. Ի. 221 :
Թէոփիլոս առաքեալ տօնելի . հտ. Ի. 252 :
Թէոփիլոս ս՟բ հայրն՝ տօնելի ը՟ թաթլոյ և մա-
րոսի . հտ. Ի. 22 :

Թէոփիլոս ապաշխարողն՝ հրեշտակային վ՟րք կո-
չեցեալ , և հինգերորդ անուանեալ ՚ի վար-
դապետս եկեղեցւոյն հռովմայ , գլուխ դա-
սական ճծաբանից և առաջնորդ դպրոցաց ,
էր յերկրէն նէապօլսոյ կամ նաբոլիոյ իտա-
լացւոց՝ յակումբնայ աւանէ՝ յազատ տանէ ,
որդի լանդոլփոսի և թէոդորայ , գուշակեալ
՚ի ն՟ք անապատաւորէ ումեմնէ նախ ք՟ ըղ-
ծնունդն՝ լինել այնպիսի , ո՞պ եղև : Մինչ
դեռ երեխայ էր փոքրիկ , գտեալ ՚ի գետնի
թուղթ մի՝ ոչ թողոյր հանել ՚ի ձեռաց իւ-
րոց . կոչեցեալ ՚ի նմանէ մայրն բռնութ՟բ , և
ետես՝ զի գրեալ էր Ողջոյն քեզ Մարիամ.
և զի ոչ դադարէր տղայն ՚ի լալոյ՝ հարկ եղև
տալ անդրէն ՚ի ձեռս ն՟ր . և նա նոյն ժա-
մայն կլաւ զայն , զի մի կարասցեն հանել ՚ի
նմանէ . թո՟ղ զի և յայլ նուագս մի միայն

դեղ էր հանդարտելոյ զնա 'ի լալոյ՝ տալ գիրս ինչ 'ի ձեռս նր. և այն եւեթ էր խաղալիկ մանկութե նր՝ շրջել զթուղթս գրոց։ Հնգամեայ եղաւ յուսումն և 'ի կրթութի 'ի կասսինեան վանս սբյն բենեդիկտոսի. և էր հետաքննին ստէպ հարցանել ցվրդպ իւր, զի՞նչ է ած, զի՞նչ արքայութի, և որ սոյին սակի. և զպխնիսն տպաւորէր 'ի յուշի, և խեղամուտ լինէր 'ի սրտի. և պարկեշտ վարուք օրինակ էր հասակակից մանկանց ազատաց, և խորշէր 'ի ստահակաց. մինչ զի այն մանկունք էին բարեհամբաւ՝ ը որս կենակից լինէր Թովմաս, որ և էր սակաւախօս և աղօթասէր՝ յաւուրն ժամս երկուս յառանձնութե տալով զանձն։ Տասնամեայ էր յորժամ եհան զնա հայրն 'ի կասսինեան վանաց, և առաքեաց 'ի դպրոց քղքին նէապօլսոյ. ուր 'ի սուղ ժամանակի յառաջեաց 'ի գիտութի՝ հոգևոր հանճարով հանդերձ։ Դէպ եղև ուսմն 'ի դոմինիկեան կրօնաւորաց տեսանել զԹովմաս այլակերպել, զի ճառագայթէր լոյս յերեսաց նր հանգոյն մովսեսի. և 'ի միտ էառ զշնորհս հոգւոյն՝ որ 'ի վերայ նորա։ Եւ ինքն Թովմաս գտեալ զայլ ոմն 'ի դոմինիկեանց՝ այր սրբակրօն, յովհաննէս ոք յուլիանեան կոչեցեալ, ստէպ կանխէր առ նա. և յորդորանօք նր եմուտ 'ի կարգ սբյն դոմինիկոսի՝ 'ի հասակի ժգ ամաց, առել զքեմ 'ի ձեռաց Թովմայի լենտենեան մեծաւորին նէապօլսոյ։ Ի գալ մօրն տե-

սանել զզաւակ իւր՝ ոչ յանձն էառ Թովմաս երեւիլ նմա․ և առ հեռանալոյ յազգականաց՝ հրամանաւ մեծաւորին եւ գնաց յայլ վանս կրօնի նց՝ 'ի մեծն հռովմ․ և ապա հեռագոյն ևս մեկնեցաւ՝ եղեալ 'ի միտս գնալ և հանգարտիլ 'ի փարէզ գաղղիացւոց։ Իսկ մայրն եկեալ զկնի նր մինչև 'ի հռովմ, իբրև ոչ եգիտ զնա, իմացեալ զխորհուրդ նր՝ գրեաց առ երկու որդիս իւր աւագս, որ էին ասպետք 'ի բանակի կայսերն փրիտերիկոսի բ̅, չթողուլ զԹովմաս անցանել ընդ սահման իտալիոյ․ և նք խնդրակօք 'ի ձեռս բերել զնա՝ ածին հասուցին 'ի քղք իւր և 'ի տուն իւր․ և անդ էր տեսանել զուրախութի մօրն և ազգականացն, և զտխրութի Թովմայի և դոմինիկեանց, և զվա՛հ վա՛հ կարդալն Յաւիրաց՝ որք յառաջագոյն իսկ մեղադիր լինէին վս կրօնաւորելոյ մանկանն։ Ստիպէր մայրն հանել զսքեմն յանձնէ նր, մինչև աճեսցէ հասակաւ․ բայց Թովմաս ոչ էառ յանձն․ և կասկածել մօրն՝ գուցէ փախիցի 'ի տանէ, ետ պահել զնա 'ի բերդի միում պահապանօք հանդերձ, մինչև հաւանեսցի կամաց իւրոց։ Խօսեցին վս այսր բռնութե դոմինիկեանք առ պապն իննովկենտիոս․ և նա զեկոյց կայսեր, որ ետ բանտարգել առնել զըմբռնօղս Թովմայի առ ժամանակ մի։ Իսկ եղբարքն Թովմայի տեսեալ՝ թէ ոչ վճարի ինչ բռնութբ, եկեալ առ նա՝ խօսէին ողոք բանիւք․ և ոչ կարացեալ շրջել զմիտս նր՝

'ի

'ի ձեռս առին զքորս իւրեանց , զի Թերեւս նմա լուիցէ . բայց Թովմաս եւ քան զեւս հաստատեցաւ 'ի կոչման իւրում . մինչ զի եւ մին 'ի քերցն հայեցեալ յօրինակ նմա՝ եմուտ 'ի վանս կուսանաց : Ամենի յարեան եղբարքն ցասմամբ 'ի վերայ Թովմայի , եւ յետ բազում Թշնամանաց՝ պատառեցին զքեմնր̃ 'ի բազումծուծէնս . մինչեւ մնալ նմա մերկ : Իսկ պատանին սքանչելի լռուԹե̃ տարեալ ամ̃ի , 'ի մեկնել եղբարցն ժողովեաց զծուէնս , եւ կցկցեալ՝ արկաւ անդրէն զանձամբ : Յայնժամ եւ մախացօղ բանսարկուն գրգռեաց զեղբարս նր̃ յայլ չարուԹի . գտին կին մի գեղեցիկ 'ի կանանց անզգամաց , եւ զարդարեալ զնա՝ մուծին 'ի սենեակ Թովմայի . իսկ Թովմաս գոչեաց 'ի սրտէ առ Տր̃ եւ առ տիրամայր կոյսն . եւ գտեալ խանձող մի փայտի՝ զհետ պնդեցաւ փորձողին որպս̃ 'ի մրոտել եւ 'ի խանձողել զնա . մինչեւ կորագլուխ փախչել նմա 'ի տեղւոջէն : Յայնժամ փակել սքյն զդուրս խցին՝ արար նովին խանձողիւ փայտի զնշան խաչի յորմն . եւ ծունր եդեալ առաջի՝ խնդրէր 'ի Տնէ̃ բազում արտասուօք շնորհել նմա զձիրս մշտնջենաւոր մաքրուԹե̃ . եւ իբրեւ յերկարեալ յաղօԹս ՝ 'ի քուն լինէր ԹմրուԹե̃ , երեւեցան նմ̃ հրեշտակք երկու , եւ ասեն . լսելի եղեն աղօԹք քո , եւ Տր̃ առաքեաց զմեզ՝ ածել ի̃ մէջ քո գօտի անխախտելի մաքրուԹե̃ , եւ անդէն գօտի ածին նմա պնդապէս զապելով . մինչեւ

զարթնուլ նմա մեծաձայն աղաղակաւ. 'ի
ներքս վազեցին պահապանք 'ի ձայնէն, այլ
նա ոչ եհան զբանն 'ի վեր. և ինքն երանե-
լին յետ այնպիսի շնորհաց ևս ք̃ զևս անձ-
նապահ լինէր յա̃մաւթից ցանկութե̃ և 'ի
խօսակցութ̃է կանանց: Յետ երկուց ամաց
արգելանացն թովմայի՝ մայր նր̃ հարեալ 'ի
խղճէ և 'ի գթոյ՝ թոյլ ետ նմա իջանել 'ի
ծածուկ սանդղով ընդ պատուհանն, ուր
սպասէին նմա ոմանք 'ի դոմինիկեանց կրօ-
նաւորաց. որք փութապէս առեալ տարան
զնա 'ի նէապօլիս, և անտի 'ի հռովմ, և ա-
պա 'ի փարէզ. ուստի էանց նա 'ի կողոնիա
գերմանիայւոց, և աշակերտեցաւ մեծին ալ-
բերտի. և ապաստացե̃լ 'ի հոգւոց սրտին՝ ետ
զանձն հանդարտութե 'ի ցանկալին իւր ու-
սումնասիրութ̃ի, գերապանցեալ զա̃մ դա-
սակցօք. և զի էր սիրող լռութե̃ և ծանր 'ի
խօսել, ոմ̃ և միամտով գ̃էր, կոչէին զնա ա-
շակերտակիցքն եզն անխօսուն: Իսկ մեծն
ալբերտ՝ որ գիտակ էր առաքինութե̃ և ուշի-
մութե̃ նր̃, ասէ ցընկերսն նր̃. եկեսցէ ժմ̃՝ յո-
րում այնպէս հզօրագոյն գոչեսցէ եզնիկդ
այդ, մինչև լսելի լինել ը̃ ա̃մ աշխ̃. զորոյ և
զփորձ իմաստութեն տեսեալ ամենեցուն
հանդերձ յետին խոնարհութ̃ք, պատկա-
ռէին 'ի նմանէ: Յետ կատարելոյ զա̃ծա-
բանութի՝ գնացեալ 'ի փարէզ հրամանաւ
ալբերտի՝ եղև դասատու գրոցն մ̃ձւոց. և
իբրև կամեցան տալ նմ̃ պատիւ վ̃դպական,

նա

նա հրաժարէր առ խոնարհութեան՝ պատճա-
ռելով և զհասակ իւր, զի չև էր երեսնա-
մեայ. Մինչև ետես 'ի տեսլեան զոմն ծերու-
նի՝ որ ասաց նմա հնազանդ լինել առաջար-
կութեան առաջնորդաց, և դնել բնաբան 'ի
բեմասացութեան իւրում զասածն դաւթեան.
արբուցանէ զլերինս 'ի շտեմարանաց (կմ՛ 'ի
բարձանց) իւրոց: Դէպ եղև սմին գալ 'ի
կողմանս հռովմայ առ մտերիմն իւր կարդի-
նալ հռիքարդոս. որոյ առաջի յաղթահա-
րեաց զերկու օրէնսգէտ հրէայս, և դար-
ձոյց զնս 'ի քս: Եւ էր յոյժ յաջողեալ 'ի
վճպութեան բանիւ և գրով. և այն առաւել
զօրութբ աղօթից, յոր տքնէր հանդերձ այ-
լովք ճգնութբք. և ստէպ յափշտակէր յա-
ղօթս. և սկիզբն ամ բանից և գործոց նր
էր աղօթք հանդերձ արտասուօք, որով և
քարոզք նր էին զօրաւորք յոյժ: 'Ի մերձե-
նալ կնոջ տեռատեսի 'ի քղանցս սբյն՝ առ-
ժամայն բժշկեցաւ 'ի նէապօլիս քաղաքի:
'Ի գրել սմին զմեկնութի եսայեայ՝ երևե-
ցան նմա սբն պետրոս և պօղոս, և յայտնե-
ցին զիմաստ բանին՝ զոր աղօթիւք խնդրէր
յայ: 'Ի հիւանդանալ հռէգինալտոսի՝ ո-
րում յայտնէր Թովմաս զամ խորհուրդս
իւր, գնաց 'ի տես նր. և աղօթս արարեալ
'ի վր նորա՝ հանդերձ նշխարօք սբյ կուսին
ագնեսի՝ առողջացոյց: 'Ի գրել զպաշտա-
մանց սբյ հաղորդութեան՝ յորժամ ծունր ե-
դեալ կայր Թովմաս առաջի խաչելոյն, խօ-

սեցաւ առ նա խաչեցեալ փրկիչն . բարւոք գրեցեր զինէն Թովմաս , արդ զո՞ր վարձ խնդրես յինէն . և նա ասէ . զքե՛զ միայն տէր իմ։ Մինչդեռ ի սեղանի էր լուդովիկոսի ընդ Թագաւորին գաղղիոյ ընդ կարդինալի միում , յանկարծ բախեաց աջովն զսեղանն Թովմաս՝ ասելով , գտի զձեռնարկութիւն զոր խնդրէի ընդդէմ այս ինչ մոլորութեան . և յազդել նմա մեծաւորին՝ որ նստէր առ նմա , թէ գիտեա՛ զի 'ի սեղան Թագաւորի ես , ասէ . Թո՛ղ ինձ հա՛յր՝ զի ոչ գիտէի։ Եւս առաւել 'ի ժամաղօթից պէտք լինէին դարձուցանել զնա 'ի զգայութի՛ւն , զի երբեմն այնչափ վերանայր , մինչև հազի՛ւ հուր կի՛ր ճրագ մերձեցուցանելով ուշաբերէին զնա։ Կամեցաւ պապն կղեմէս Դ առնել զնա արքեպիս Նէաւպօլսոյ . այլ նա չէառ յանձն . նոյնպէս փախչէր յամենայն փառաց։ Յասել ուրումն զփարեզ քաղաքէ , քանի՜ մեծ է մեծութիւն սորա , պխնի ետ Թովմաս . առաւել է քան զայն՝ մի և եթ ճառ ոսկեբերանի 'ի մեկնութեան մատթէի։ Սքանչելի են և ամենայն գրուածք նորին Թովմայի՝ մանաւանդ աստուածաբանականք , հրեշտակային նրբութեամբ և պարկեշտութեամբ . և ոչ միայն անձամբ գրէր , այլև երբեմն երից և չորից նոտարաց բանս 'ի բերան դնէր 'ի վ՟ր զանազան խնդրոց։ Երկուք ոմանք տեսին աստղ լուսափայլեալ 'ի վերայ գլխոյն Թովմայի . և ինքն ետես զհոգի քեռն իւրոյ վախճանելոյ՝ որ խնդրէր առ-

նել

նել զյիշատակ նր 'ի նոր պատմագրի , որք և
զմիւս քեռ իւրոյ . իսկ միւս քոյրն մեր ասէ՝
եհաս յօթեւանս արքայութեան երկնից ։ Նու-
յետ տարւոյ փոխեցաւ յերկինս և ինքն ե-
րանելին Թովմաս՝ մինչդեռ էր 'ի վր ձղհի
'ի վանս կիստերսեանց , հանդերձեալ գնալ
'ի ժողովն լուգդոնի , 'ի հասակի ծ ամաց՝
յամի 1274 . և եղեն պէսպէս նշանք և սքան-
չելիք յետ վախճանի նր . որք և ըն ժամս ժամս
'ի բանալ զգերեզմանն սրյն՝ բուրէր հոտ ա-
նուշութե ։ 'Ի դասակարգել զնա ընդ սրբս
յամի 1323 . ասաց պապն յովհաննէս իբ .
այնչափ հրաշս գործեաց հրեշտակային վար-
դապետս՝ որչափ պրակս գրեաց ածաբանա-
կանս ։ Ի . մարտ . 7 ։

Սողոմոն եպիսկոպոս Կէլլանովայի , որ 'ի նոր գեղ-
ջէ , էր 'ի միաձակէն տոլետայ սպանիացւոց՝
ծնեալ յամի 1488 . և սնեալ 'ի նոր վարս՝ ա-
ռաւելաւ ողորմածութբ , զի և 'ի տղայու-
թե տեսեալ զաղքատս՝ մերկանայր զհան-
դերձս իւր , և արկանէր զնոքօք ։ Մինչդեռ
յուսմունս էր 'ի դպրատան կոմպղուտոնի ,
լուեալ զմահ հօրն՝ եկն և բաշխեաց զամ
ինչս 'ի սնունդ աղքատաց կուսից . և ինքն
դարձ արարեալ յուսումն՝ ներհուն գտաւ ,
և կարգեցաւ դասատու փիլիսոփայութե և
ածաբանութե 'ի նմին համալսարանի . այլ
վն առաւել փութոյն 'ի հոգևորս՝ գնաց և
եմուտ 'ի կարգ օգոստինեանց անապատա-
ւորաց յամի իբր 1517 ։ Նու յառաջադէմ ե-


ղեալ

ղեալ յամառաքինութիւն կրօնի՝ ո՛չ նորա-գիւտ ցուցաւ կարգին ։ Հրաժարեալ յարքե-պսութէ կրանադայ՝ հարկեցաւ լինել եպս վալէնցայ ․ և ոչ նուաղեալ ՚ի կարգաց բա-րեաց ճգնութե և աղօթից իւրոց՝ հանդի-սացոյց պաղքատսիրութի, մինչև զմահիճս իւր ևս տալ աղքատաց ․ մինչ զի յանկանիլ իւրում ՚ի մահիճս՝ ՚ի փոխ էառ զտուեալն յիւրմէ յողորմութի ։ Մեռաւ յամի 1555 ․ կԸ ․ ամաց ․ և արար ած նովաւ բզմ սքանչե-լիս ՚ի կենդանութե և ՚ի մահուան ․ մանա-ւանդ ՚ի լնուլ զշտեմարանս նր ՚ի պէտս աղ-քատաց ․ կենդանացաւ և մանուկ մեռեալ՝ ՚ի մերձենալ ՚ի տապան սբյն ։ Ը ․ սեպտ ․

18 ։

Թովմաս եպիսկոպոս ընկտանալւաց թմ ընկլուզայ, այն է Թովմաս պէքէդ՝ արքեպս կանտուա-րիոյ կմ կանտորբերայ անգղիացւոց, ծնն-դեամբ ՚ի լոնտրայէ ։ Սա էր յաւուրս կիռ-մանուէլ կայսեր և շնորհալւոյն, այր զօրա-ւոր հոգւով, և հովիւ քաջ ․ որ առ նախան-ձաւորութե օրինացն այ և իրաւանց եկեղեց-ւոյ՝ ընդդէմ եկաց անարժան գործոց անրի-գոսի երկրորդի անգղիացւոց արքայի ․ և հրամանաւ աղեքսանդրի գ̄ հռովմայ հայրա-պետի՝ ընդ բանիւ արար զԹգրն և զհամա-խոհս նր ․ և ինքն իբրև հալածական շրջե-ցաւ արտաքոյ աԹոռոյ իւրոյ ․ այլ ՚ի ցուցա-նել արքայի զզղջումն՝ դարձաւ անդրէն ՚ի յ-եպսն ․ զոր ընկալան ժողովուրդքն ամ մե-ծաւ

ծաւ յնծուք ։ Բայց Թգ̃րն յետ սակաւուց
միւսանգամ գրգռեալ ընդդէմ եպսին՝ ետ
սպանանել զնա 'ի ձեռն չորից իշխանաց իւ-
րոց , մինչդեռ կայր երկնելին 'ի վր̃ բեմի
առաջի որ. սեղանոյն . և եղեն յայնժամ
սքանչելիք մեծամեծք , մինչև ապաշաւել և
Թգ̃ւորին , և տալ Թաղել զնա պատուով 'ի
ներքոյ խորանին՝ ուր հատաւ գլուխ սրբյն .
և բազումս նշանս գործեցան 'ի տապանէ
նորա . վո̃յ և աղեքսանդր հայրապետ կար-
գեաց զնա 'ի Թիւ սրբց վկայից . և եղև կա-
տարումն նր̃յամի 1170 . ոժԹ . ( կմ̃ ը̃ս յայս-
մաւուրաց . ոժգ .) 'ի հասակի ծ̃ը ամաց ։ ⁘
յուլ. 9 ։ Ժ. դեկտ. 29 ։

Ի

Իգնատիոս Ա̃ծազգեաց հայրապետ տօնելի .
Հտ. Ժա. 72 ։

Իգնատիոս Լոյոլայի հիմնադիր կարգին յիսեանց
էր սպանիացի , ծնեալ յամի 1492 . 'ի Լոյո-
լա կանղաբերդի . և էր զինուորեալ 'ի դրունս
արքունի . և եղև նմ̃ վէրս առնուլ 'ի մարտ-
կոցին պամպելոնայ , և յանկանելն 'ի մա-
հիճս՝ 'ի դիպուածով կարծեցեալ ընԹերց-
ուածոյ գրոց վարուցս զհետ երԹալ քս̃ի
և սրբց նր̃ ։ Իբրև եկն 'ի լեառն սերրատոն՝
կախեաց զզէնս իւր առաջի խորանի սուրբ
ա̃ծածնին , և զհանդերձն պատուական
տուեալ մուրողի՝ ինքն զգեցաւ քուրձ , և

գնաց

գնաց 'ի մանրեսա . ուր մուրողութբ կե-
ցեալ՝ հացիւ և ջրով շատանայր , գետնա-
խշտի լինէր , շղթայ գօտի ը̄ մէջ ածէր 'ի
ներքոյ քրձին , երկաթի խարազանօք զանձն
ձաղկէր արեամբ չափ . և ներքին լուսաւո-
րութբ մխիթարեալ յոյժ՝ խորհրդազգած լի-
նէր վերին տեսութեց . և յայնպիսում ժա-
մանակի դեռ հետևակ 'ի գրոց՝ յօրինեաց
զհոգեւորց գիրս կրթութե : Նու քանզի տըն-
կեաց ամ 'ի սիրտ նր՝ հոգևոր գիտութբ սա-
տար լինել հոգւոց , զհետ եղև այնուհետև
կատարեալ դպրութե՝ սկսեալ 'ի քերական-
նութե , կրելով յայնմ վայրի բազմադիմի
հալածանս և նեղութիս , բանտս և կապանս,
գանս և խոշտանգանս . այլ տակաւին ու-
րախ էր և փափաքօղ կրել զառաւելն 'ի մե-
ծագոյն փառս այ : 'Ի լուտետիա , այն է
փարէզ գաղղիացւոց , ընտրեալ իւր գործա-
կիցս ինն 'ի գիտնաւոր արանց և 'ի վրդպաց
յայլևայլ ազգէ՝ անդ 'ի լեառն վկայից կո-
չեցեալ՝ զառաջին հիմն էարկ կարգին իւրոյ,
որ կոչեցաւ ընկերութի յսեանց . և եկեալ
'ի հռովմ և հաստատութի ընկալեալ յա-
ւել 'ի վր երից կրօնաւորական ուխտից ըզ-
չորրորդն վս առաքելական քարոզութե ը̄
հնազանդութբ սրբյ գահին . և սկսաւ սփռել
զաշակերտեալսն ը̄ ամ տիեզերս՝ 'ի դարձ
անհաւատից և հերետիկոսաց մինչև 'ի հըն-
դիկս . քանզի և յայնու ժամանակաւ ըն-
կսեալ էր սերմն ժանտ աղանդոյն լութերի ,

որոյ

որոյ գլխաւոր եղև ս̅րն Իգնատիոս ։ Իսկ
փոյթ ն̅ր և խորոյն 'ի հոգևոր կրթութ̅ հա-
ւատացելոց էր անձանձիր ․ մինչև նոր հոգի
զգենուլ ամենեցուն , և եռալ 'ի գործս ա̅ծ-
պաշտութ̅ե՝ ջերմեռանդն կարգօք ։ Եբաց
Իգնատիոս և զդպրոցս մանկանց 'ի Հռովմ և
յայլ տեղիս , և զարգացոյց զխոստութ̅իս ա̅մ
զոյգ ը̅ հոգևոր կենաց ․ շինեաց վանորայս
և հիւրանոցս և կրթարանս արանց և կա-
նանց ․ և ո̅ր էր ը̅ նմա 'ի յաջողել զգործն
ա̅յ 'ի շահ հոգւոց ․ յոր այնչափ էր անձնա-
տուր երանելին , մինչև զանձն մոռանալ և
զնել 'ի վ̅ր փրկութե այլոց ։ [illegible]հաւոր էր
և ը̅դէմ դիւաց 'ի հալածել զն̅ս , ո̅պ և այ-
լովք սքանչելի նշանօք փայլէ̅ր ․ մինչև տե-
սանել երբեմն ս̅րյն Փիլիպպոսի Ներեան այ-
լովքն հանդերձ՝ լոյս երկնային փայլատա-
կեալ յերեսս Իգնատիոսի ։ Ետես և ինքն
Իգնատիոս զհոգի միոյն յընկերացն իւրոց վե-
րաթևեալ յերկինս փառօք ․ ո̅պ և 'ի կաս-
սինեան լերին ետես զհոգիս ոմանց ոմանց
յիւրոցն թռուցեալ ը̅ հրեշտակս յերկինս ։
Երևեցաւ և ինքն կենդանւոյն միում յըն-
կերաց իւրոց՝ որ էր 'ի հեռաւոր քաղաքի ,
և անձկայր տեսութե̅ ն̅ր ։ Եւ յետ բազմա-
պատիկ մեծամեծ գործոց՝ լի արդեամբք
փոխեցաւ առ տենչալին իւր ք̅ս յամի 1556 ․
և ո̅ր արար նովաւ հրաշս բազումս յետ վախ-
ճանի ն̅ր ։ Ի յունվ․ 31 ։

Իլարիոն կամ Հիլարիոն՝ ս̅բ հայրն՝ էր 'ի գա-

ղայ պաղեստինոյ առ մեծն կոստանդիանո-
սիւ և որդւովք նր̃, զաւակ հեթանոսաց,
եկեալ յաղեքսանդրիա վս̃ ուսման, և անդ
հաւատացեալ ՚ի քս̃ և մկրտեալ. որ և աշա-
կերտեալ ս̃բ հօրն անտոնի աբբայի ՚ի հաւա-
նի ժ̃է ամաց՝ ուսաւ զա̃մ կարգս կրօնի. և
եկեալ ՚ի գազա՝ իբրև եգիտ զծնօղս իւր մե-
ռեալ, բաշխեաց աղքատաց զա̃մ ինչս նց̃.
և ինքն չոգաւ յանապատ մայեղինաւ՝ ձըգ-
նեալ ՚ի պահս և յաղօթս յանձուկ խցի. մին-
չև յաղթել ա̃մ փորձանաց դիւ̃ին, և առ-
նուլ շնորհս սքանչելեաց: Շինեաց վանս
՚ի պաղեստին և յերկրին ասորւոց, եղեալ
առաջնորդ բազմուե̃ եղբարց, և հայր հա-
րանց. այլ փախուցեա̃լ ՚ի փառաց մարդկան՝
սկսաւ շրջիլ այսր և անդր. մինչև վախճա-
նեցաւ ՚ի կիպրոս ութսունամեայ՝ յամի 371.
և յետ ժ̃ ամաց աշակերտ նր̃ իսիւքիոս ե-
բարձ զմարմին նր̃ անապական, և տարաւ
յառաջին վանս նր̃ ՚ի պաղեստին: Ն. Յ.

Ի. Հոկ. 21:

Իւղարիոս կմ̃ հիլարիոս եպս̃ պիկտաւիոյ գաղ-
ղիացւոց՝ ժամանակակից նախընթացին, եր
ծննդեամբ յակուիտանիոյ՝ որ և գու̃ասկո-
նիա, այր հզօր բանիւ և գրով. որ նախ
մտեալ ՚ի կարգ Ձ̃ի, այլ ո̃չ յանապատի քա-
ղաքավարեալ առաքինութե̃՝ ընտրեցաւ յե-
պիսկոպոսութի̃. և ՚ի ժամանակս հալածա-
նաց կոստանդեայ կայսեր՝ պարիսպ ամուր
եղև ուղղափառաց և ախոյեան ընդդեմ ա-

րիա-

բիանոսայ , և արտասահմանեցաւ 'ի փռիւ-
գիա • ուր և յարոյց զմեռեալ մի , և գրեաց
զգիրսն յաղագս երրորդութե̄ն ։ Զկնի չո-
րից ամաց հարկ եղև նմա դառնիլ 'ի ժո-
ղովն սելևկիոյ իսաւրայւոց • և անտի ան-
ցեալ 'ի կոստանդինուպօլիս՝ պապանձեցոյց
զարիոսեան եպիսկոպոսն • մինչև եղև նմա
հրաման դառնալ յաթոռ իւր • ուր անա-
րատ պահեաց զհօտն , և յետ բազում հո-
գևոր և գրաւոր վաստակոց՝ փոխեցաւ առ
Տէր յամի 369 ։ Յունվար • 14 ։

ԻՆԴՈՍ և ԴՈՄՆԱ տօնելիք • հտ • Ա • 158 ։

ՅՈՎՀԱՆ ՆԱՀԱՊԵՏ տօնելի • հտ • Բ • 229 ։

ՅՈՎՀԱՆ ՊԱՐԹԵՒ • տես Սահակ ։

ՅՈՎՀԱՆ կմ̃ ՅՈՎՀԱՆ ՊԱՐՈՆԷՆ՝ նոր վկայ , որոյ առա-
ջին անունն յուսուփ , էր 'ի շահաստանայ
դավրիժու , երիտասարդ չարաճճի՝ դաւն
Թշնամի քրիստոնէից • այլ զգաստացեալ
տեսլեամբ տանջանաց դժոխոց և փառաց
արքայութե̄՝ եղև քրիստոնեայ • և ուսեալ
զհայերէն դպրութի̄՝ խելամուտ եղև հին և
նոր կտակարանաց • և զի քաջ գիտէր և ըզ-
գիրս այլազգեաց՝ վիճէր և յաղթահարէր
զն̄ս • նմին իրի կրեաց բազում չարչարանս
'ի բազումս տեղիս • մինչև հասեալ 'ի շամա-
խի շիրուանայ , և դատեալ յատենի՝ ասէր
ցդատաւորն • մեծ երախտիս ինձ առնես ,
եթէ հրովայրես զիս 'ի նշանակ սիրոյ իմոյ
բորբոքելոյ 'ի ք̄ս ա̄ծ ։ Ապա հարին զգլուխ
վկային հաստ բրով , մինչև վայթիլ ուղղոյն

Է

ը՟ն արեան. և ապա քարկոծեցին, և զմար-մինն արկին 'ի հուր. և ծագեաց լոյս յերկ-նից 'ի վ՟ր նշխարաց ս՟բյն՝ ակներև ա՟մ այլ-ազգեաց, յամի 1417. պկզ: ∸. ապր. 18:

տէս և Սահակ:

Իսիդորոս Աղեքսանդրացի զօրական առ Դե-կոսիւ գնայ 'ի քիոն կղզի ը՟ն նաւական գըն-դի. և հարիւրապետն յուլիոս իմացեալ զքրիստոնէութ՟ին ն՟ր՝ մատնեաց նումերիա-նոսի հազարապետի. և 'ի խոստովան լինել վկային քաջութ՟բ զք՟ս ա՟ծ՝ յետ պէսպէս խոշտանգանաց հատին զգլուխ նորա. զոր բարձեալ թաղեաց ամոնիոս ո՟ն քահանայ. որ և զկնի մարտիրոսացաւ 'ի հելլեսպոն-տոս: ∸. մայ. 14, կիւ 15: {}. մայ. 14: Լ. փետր. 5. և մայ. 15. իբր երկու վկայ համանուն:

Իսիդորոս ե՟պս Հիսպաղայ 'ի սպանիա՝ սնեալ 'ի ձեռս երկուց եղբարց իւրոց ո՟ր եպ՟սաց Լեանդրոսի և Փուլգենտիոսի, և վարժեալ հռովմայեցի՝ հելլենացի և եբրայեցի դըպ-րութեամբ, եղև զօրաւոր քարոզ բանին և յաղթահարող արիանոսաց գոթացւոց. և գեղեցիկ առաքինութ՟բ զարդարեալ՝ փայ-լեաց գրով և բանիւ և օրինակաւ. շինեաց և վանորայս 'ի սպանիա, և ծաղկեցոյց ըզ-միաբանական վարս. կառոյց և դպրատունս, և աշակերտեաց զբազումս. ջախեաց և ըզ-գլուխս անգլուխ հերետիկոսաց. և լի ար-դեամբք փոխեցաւ յերկինս՝ յամի 636: Լ.

ապ-

ապրիլ. 4:

Ւրայեա կի̃ն Ւրայեա կոյս միանձնացեալ ժե̃ ամաց՝ էր աղէքսանդրացի դուստր քահանայի. և յելանելն երբեմն 'ի Ճգնարանէ հրամանաւ մօր վանից բերել ջուր 'ի մերձակայ աղբերէն, ետես՝ զի կուկլեանոս իշխանն տանէր 'ի քարշ կապանօք զքրիստոնեայս, զարս և զկանայս, զկրօնաւորս և զկուսանս, զքահանայս և զսարկաւագունս. և մատուցեալ առ կուսանսն՝ հարցանէր ըզպատճառսն. և նք̃ ասեն. 'ի նահատակութի̃ երթամք՝ ընդունել զպսակ փառաց յարքայութե̃ երկնից: Յայնժամ թողեալ խրայխտայ զսափոր իւր՝ աղաչեաց զմի 'ի գլխաւորաց զօրուն՝ արկանել և զինքն 'ի շղթայս. քանզի և ես քրիստոնեայ եմ ասէ, և աղախին քո̃ի. և այնպէս խառնեցաւ 'ի թիւս կապելոցն: Յերև տարան զնո̃ նաւու 'ի քաղաքն անտոնինուպօլիս, կոչեաց կուկլեանոս առաջի իւր զկապեալսն. և տեսեալ զնորայիտա մատաղ հասակաւ և գեղեցիկ՝ հրամանն ետ 'ի բաց արձակել. իսկ կոյսն ասէ. մեռանիմ և ես վ̃ն անուա̃նն քո̃ի ո̃չ զղջ֊ սա. զի և ես անարգեմ զկուռս ձեր, և պաշտեմ զա̃ծ երկնից զճշմարիտ. և այնչափ բանս խօսեցաւ ընդ հօգւով սր̃վ, մինչև զամօթի հարեալ բռնաւորին՝ նախ զնա ետ գլխատել, և ապա զայլ բազմութի̃ երանելի կապելոցն: Ք. Յ. սեպ. 23: Մ. 22:

Ւրաւախտա տօնելի. հտ. Մ. 228:

Յու

Լուշաբեր չանայք սոմնելիք․ Հա․ Ն․ 24։ և
Ն․ 393։

# Լ․

Լաւրէնտիոս, որ և Լօրէնցիոս պերճապսակ
վկայն քսի, նախասարկաւագ էր սբյն Քսես-
տոսի Աթենացւոյ՝ արժանաժառանգ յաջոր-
դի սբյն Ստեփաննոսի Հռովմայ հայրապե-
տի։ Եւ եղև ՚ի դառնալ Դեկոսի կայսեր ՚ի
պարսից Դեկն ՚ի Հռովմ, ընկեց անդ առաջի
գազանաց զերկուս վկայս՝ զորս կալեալ էր ՚ի
պարսս. և անուանք նց Աբդոնոս և Օէն-
նոս, կամ ըստ այլոց՝ Աբդոն և Սեննէն. և յոչ
մերձիլ գազանաց ՚ի սոսն՝ սպան զնս սրով։
Յետ այսորիկ բորբոքեալ զհալածանս զա-
հակիցն և յաջորդն Դեկոսի Վաղերիանոս՝
ետ ունել զսբ հայրապետն Քսեստոս, և
ստիպէր յուրացութի. և ՚ի խոստովան լի-
նել նր արիաբար զքս ած, և ՚ի յանդիմա-
նել զմոլորութի կռոց, հատին և զգլուխ
նորա. զոր թաղեաց Լաւրենտիոս գործակ-
ցութբ հաւատացելոց։ Ըմբռնի ապա և
ինքն սբ սարկաւագն Լաւրենտիոս. և ՚ի պա-
հանջել Կոռնելիոսի քաղաքապետին Հռով-
մայ ՚ի նմանէ զգանձս եկեղեցւոյ, խըն-
դրեաց նա սայլս, զի բարձցէ ՚ի նմ և բեր-
ցէ. և տարեալ՝ եդ ՚ի վր զաղքատս և զցա-
ւագարս, որոց բաշխեալ էր զինչսն ը հրա-
մանի հայրապետին, և եած ՚ի պալատն։

Ընդ որ բարկացեալ բռնաւորին՝ ետ զնա հարկանել զնա և խոշտանգել, և 'ի բանտ արկանել. ուր նա բժշկեաց զբազում հիւանդս և զախտաժետս անուանմբն Քի. վսյ բանտապանն Հիպողիտոս կամ Իպողիտոս հաւատաց 'ի Քս, և մկրտեցաւ։ Յետ կրկին դատելոյ զԱւրելիանոս և չարչարելոյ ազգի ազգի կտտանօք, իբրև գտին զնա հաստատուն 'ի Քս, տարածեցին զերանելին 'ի վր հրացեալ կասկարայի. և կայր առաջի նր մայր իւր՝ աւետարան 'ի ձեռին, և քաջալերէր զորդին. իսկ նր զկայն ասէ ցիշխանն. աւասիկ մի կողմն մարմնոյս խորովեցաւ յերկար, այլ դարձո զիս 'ի միւս կողմն, զի և այն խորովեսցի, և եղեց ողջակէզ կատարեալ Տն Այ իմոյ. և այսպիսի արութբ աղօթելով աւանդեաց զհոգին քաջ նահատակն՝ յամի Տն 258։ Եւ 'ի թաղել բանտապանին զմարմին սրբոյն, կալան և զնա. և յետ քերանաց կապեցին ը ձի խստերախ. յորմէ ձգեալ ը քարս և ը թուփս՝ կատարեցաւ 'ի Քս, և թաղեցաւ ը լաւրենտիոսի։ Ն. օգոստ. 12։ Յ. օգ. 10։ Լ. օգ. 6. 10, 13։ և յուլ. 30։

Լաւրենտիոս Յուստինեան վենետկեցի 'ի Ջիւստինիանի ազատ տանէ՝ 'ի մանկութէ փոյթ 'ի հոգևորս, եղև այր ճգնաւոր յոյժ. և խոյս տուեալ 'ի պատրաստութէ հարսանեաց՝ եմուտ 'ի միաբանութի կանոնիկոսաց սբյն Գէորգեայ 'ի կղզին Ալկայ. և յաւել

՚ի խոստակրօն վարս եւ յամ առաքինութիւնս՝ առաւելեալ խոնարհութեամբ եւ արհամարհութեամբ ձի եւ անձնուրացութեամբ: Յամի 1424. կարգեցաւ ընդհանուր առաջնորդ կարգին. եւ ՚ի 1451. ընտրեցաւ ՚ի պապէն՝ առաջին պատրիարգ վենետիկոյ. այլ տակաւին պահէր զկրօնաւորական աղքատութիւն իւր. եւ էր աղքատասէր յոյժ, եւ հայր աղքատաց, որբոց եւ այրեաց. շինեաց բազում վանս կուսանաց, արար եւ զայլ բազում բարեկարգութիւնս: Ունէր զշնորհս արտասուաց. եւ արժանի եղեւ ՚ի պատարագի ծննդեանն քրիստոսի տեսանել զմանկացեալն ած. լսելի եղեւ երբեմն եւ ձայն յերկնից, թէ տէրութիւն վենետկեցւոց կայ յոտին աղօթիւք պատրիարգին իւրոյ: [illegible] եւ զշնորհս մարգարէութեան եւ նշանագործութեան. գրեաց եւ գհոգեւորս գիրս պարզ ոճով. եւ փոխեցաւ յերկինս յամի 1455. հդ ամաց. եւ եղեն պէսպէս սքանչելիք ՚ի ժամուն եւ զկնի ժամանակաց յանուշահոտ եւ յանապական նշխարաց սրբոյն:

Լ. սեպտ. 5:

Լեւէրփէոս կամ Լիբերտինոս, այն է Լիպերտինուս՝ աշակերտ սրբոյն Ոնորատոսի սքանչելագործ աբբայի, եւ գործակալ նորա ՚ի փոնտեան վանս կամպանիոյ՝ էր յաւուրս տոտիղայ արքային գոթացւոց: Սա եղեւ ՚ի գնալ Լիբերտինոսի երիվարաւ ՚ի պէտս ինչ վանաց՝ զօրք դարդայ կոմսին գթաց յափշտակեցին ՚ի նմանէ զերիվարն. այլ ՚ի կամիլ

միլ իւրեանց անցանել ընդ գետն Վուլտուր-
նոն՝ կապեցան աներևոյթ զօրութեամբ, մին-
չև դարձուցին զձի առն այնորիկ ։ Իսկ ՚ի գալ ա-
ւազակաց ՚ի վանս՝ աչօք բացօք ոչ կարացին
տեսանել զսուրբն, որ կայր առաջի նոցա, և ոչ
կարացին գողանալ և ոչինչ ։ Սա ինքն Լի-
ձերտինոս ստիպեալ երդմամբ ՚ի կնոջէ ու-
մեմնէ յարուցանել զորդի նորա, զոր տանէին
՚ի թաղել, եհան ՚ի ծոցոյ իւրմէ զհողա-
թափ վարդապետին իւրոյ սրբոյն Ոնորատոսի, և եդ
՚ի վերայ մեռելոյն. և յաղօթելն առ Աստուած՝ նոյն-
ժամայն կանգնեցաւ մեռեալն. և այսպիսի
վարուք կեցեալ՝ փոխեցաւ երանելին առ
անձկալին իւր Քրիստոս ։ Տ. օգոստ. 23 ։ Գր.
պապ. տրամախօս. Ա. 2 ։ Բարոնիոս յա-
մի 543, և 555 ։

ԼԵՒԿԻՈՍ և ԿԱԼԼԻՆԻԿՈՍ նահատակակիցք սրբոյն
Թիւրսոսի վկայի. զոր գտցես ՚ի տօնելիս.
Հտ. Ա. 221 ։

ԼՈԴՈՎԻԿՈՍ սուրբ Թագաւորն Գաղղիացւոց,
որ և Լուիզ իններորդ, այր առաքինի ՚ի
մանկութէ, և հզօր ՚ի պատերազմունս, յետ
բազում և մեծամեծ գործոց յարևմուտս՝
դիմեաց յԵրուսաղէմ. և զկնի վանելոյ զսարակի-
նոսս առ մի նուագ՝ յանկանիլ ժանտախտի
՚ի զօրս իւր՝ յաղթեցաւ և ձերբակալ եղև.
և ապա դաշամբ ուխտի հաշտութեան արձա-
կեցաւ. և վասն հինգ յամեալ յարևել՝
զբազում քրիստոնեայս ապատեաց ՚ի գերու-
թէ, և զբազումս յանհաւատից դարձոյց ՚ի

քն ։ Եւ ՚ի լսել զմահ մօրն դարձ արարեալ· ՚ի գաղղիա , և առանձին նստեալ յաթոռ թգրութե՝ արար բզմ բարեկարգութիւնս · շինեալ և եկեղեցիս , վանորայս , աղքատանոցս և հիւանդանոցս · ծառայէր և անձամբ հիւանդաց · և ինքն խոշորս զգենոյր , և ճնշէր զմարմինն քրձով և պահօք ։ Եւ ՚ի միւսանգամ խաղալն յարևելս յազատութի սբ երկրի յամի տն 1270 · վախճանեցաւ ՚ի մահտարաժամէ անկելոյ ՚ի բանակն , ծե ամաց , յետ տիրելոյ նաւահանգստին թունիզու ։ Իսկ մարմին նր բերեալ ՚ի փարէզ՝ եդաւ ՚ի տաճար սբյն դիոնեսիոսի , և գլուխն յարքունի մատրան · և պայծառացեալ սքանչելեօք՝ դասակարգեցաւ ը սբս յետ իբր երեսուն ամաց ։ Լ · օգ · 25 ։

Լուճիա , կմ Լուչիա՝ ( որ թարգմանի լուսաւոր ) մեծանուն կոյս և վկայուհի , էր ՚ի սիրակուսայ հռչակաւոր հին քաղաքէ սիկիլիայ կղզւոյն՝ ՚ի հալածանս դիոկղետիանոսի · և զի ծնօղքն էին հեթանոսք , խօսեցան զնա առն հեթանոսի · բայց ինքն ծանուցեալ զճշմարտութիւն և հաւատացեալ ՚ի քն՝ ցանկայր սիրով սրբութե նմանօղ լինել սրբուհւոյ կուսին ագաթեայ նահատակելոյ ՚ի նմին կղզւոջ ։ Եւ քանզի մայր իւր էր տեռատես , առեալ տարաւ զնա ՚ի կատանիա քաղաք ՚ի տապան ագաթեայ կուսի յաւուր տօնի նր , և խնդրէր ՚ի նմանէ զբժշկութի մօրն · և ագաթի երևեալ նմա

՚ի

'ի տեսլեան երկու հրեշտակօք՝ ասէր. քո՛յր
իմ Լուկիա զի՞ է քեզ խնդրել յինէն զայն
ինչ՝ զոր դու հանդերձեալ ես այլոց առնել.
և զարթուցեալ Լուկիայ՝ եգիտ զմայր իւր
առողջացեալ ամենևին. և հաստատեալ 'ի
հաւատս՝ մկրտեցաւ մարբն հանդերձ. և
իբրև դարձան 'ի տուն, բաշխեցին զինչս
իւրեանց աղքատաց: Իմացեալ խօսնաւոն
Լուկիայ զքրիստոնէութի՟ նր̅, և ոչ կարա-
ցեալ խափանել զնա, մատնեաց պասքա-
սիոսի դքսին Սիրակուսայ. և նա իբրև փոր-
ձեաց և եգիտ զնա հաստատուն 'ի սէրն
քի՟, հրամայեաց տանել զնա 'ի տուն պոռն-
կուե̃. այլ ոչ ոք կարաց քարշել զնա և տա-
նել՝ մինչդեռ կայր 'ի գաւթի ապարանից
յեցեալ 'ի սիւն մի կճեայ. զի հոգին սր̅
անշարժ հաստատեաց զնա 'ի տեղւոջն. մինչ
զի թէպէտև բազմութիք զօրականաց պա-
րանօք ձգեցին զնա, եւս և բազում լծս
եզանց բերեալ՝ նոքօք քարշէին, այլ չեղև
հնար խախտել զնա 'ի տեղւոջէն: Ապա
հրաման ետ բռնաւորն հուր բորբոքել զնո-
վաւ նաւթիւ և ձիթով, և կենդանւոյն այ-
րել զկոյսն. բայց և ոչ հուր ազդեաց 'ի նա:
Իսկ յորժամ ել հրաման գլխատելոյ զնա,
ինքնին կամաւորութբ̃ մատեաւ, և ձգեաց
զպարանոց իւր, և այնպէս կատարեցաւ
սրով. և մայր նր̅ թաղեաց զնա 'ի նշանա-
ւոր տեղւոջ: Արժանի եղաք և մեք տե-
սանել զսիւնն զայն սրբուհւոյն Լուկիայ, և

համբուրել յամի 1809, ՚ի մէջ տաճարին՝ որ շինեալ է յանուն նր հանդերձ մենաստանաւ կրօնաւորաց. որ է հեռի յայժմու մնացուածոյ քաղաքին սիրակուսայ իբր կէս ժամու: Տ. դեկտ. 14: Յ. Լ. 13:

Լուկէա՝ միւս եւ երջանիկ կոյս՝ էր ՚ի կամպանիայ գաւառէ մերձ ՚ի հռովմ. զոր կալաւ վն ՚ի քն հաւատոց ռիքսիոս ոստիկան տեղւոյն. եւ ոչ կարացեալ տանջանօք հաւանեցուցանել՝ հրապուրէր զնա բազում պարգեւօք ամուսնանալ ը իւր: Իսկ սրբուհին մերժեաց զպարգեւս նր, եւ ասէ. ես հանդերձեալ եմ քնի հարսնանալ: Յայնժամ էարկ տն գութ ՚ի սիրտ իշխանին ՚ի վն աղախնոյն քնի. մինչ զի ետ նմա տուն առանձին մօտ յապարանս իւր՝ կարգեալ նմա աղախնայս, զի համարձակ լիցի պաշտել զհաւատս իւր պահօք եւ աղօթիւք. եւ ինքն յերթալն ՚ի պատերազմ առնոյր զաղօթս կուսին, եւ նովաւ յաղթօղ լինէր. մինչեւ աղօթիւք կուսին հաւատաց ՚ի քն. եւ փափաքեալ նահատակութե՝ եթող զիշխանութի իւր. եւ կացեալ յատեան դատաւորին կամպանիոյ հանդերձ լուկիայիւ, եւ այլ եւս քսանեւմի նահատակօք՝ կատարեցաւ ը նս: Տ. յուլ. 25, կմ 30, կմ 31: Յ. Լ. յուլ. 6:

Լուկէա տիկին հռովմայեցի եւ այրի՝ էր առ դիոկղետիանոսիւ եւ մաքսիմիանոսիւ, անցեալ վաւուրբք. որ ՚ի ջանալն մայրենի խնամով

մով դարձուցանել զկռապաշտ որդի իւր ընդ-
դրոբոս 'ի հաւատս քնի, մատնեցաւ 'ի նմա-
նէ յատեան կայսեր. և քաջութբ դաւա-
նեալ զճշմարտութիւն՝ արկաւ 'ի կաթսայ
եռացեալ. և իբրև ինչ ոչ վնասեցաւ, շըր-
ջեցուցին զնա ընդ քաղաքն ձաղանօք և ձաղ-
կանօք: Որում ընդ առաջ ելեալ Գեմինիա-
նոս կմ գերմանոս ոմն 'ի հեթանոսաց՝ զար-
մացաւ ընդ համբերութի նր. և գնացեալ
զհետ նր՝ հաւատաց 'ի քն և մկրտեցաւ. և
կոչեցաւ հոգևոր որդի Լուկիայի. և ընդ նմա
ել յատեան, և չարչարակից լեալ նմա՝ ինքն
կատարեցաւ սրով. իսկ սրբուհին Լուկիա
յափշտակեալ ձեռամբ հրեշտակի՝ եդաւ
'ի լեառն տառամենայ սիկիլիացւոց. ուր խա-
ղաղութբ հանգեաւ 'ի քն: Հ. հոկտ. 19:
Յ. սեպտ. 17: Լ. սեպ. 16:

Լուկիանոս կմ լուկիլլիանոս քուրմ էր կռոց
'ի կողմանս նիկոմիդեայ առ աւրեղիանոս
կայսերաւ, 'ի ծերութն իւրում հաւատա-
ցեալ 'ի քն. վսյ կալաւ զնա սիղուանոս
կոմսն, եւ խորտակել զկզակսն քարամբ,
և գլխիվայր տանջել 'ի խաչաձև կախաղա-
նի գանիւք և քերանօք, և 'ի բանտ արկա-
նել: Ընդ անկան յոտս նր չորս մանկունք՝
Կղոդիոս, Հիւպատիոս, Պօղոս և Դիոնե-
սիոս, և խնդրեցին զաղօթս նր՝ պսակակից
լինել նմին. տեսաք ասեն զքեզ 'ի խաչին,
զի եդ տրն մեր 'ի գլուխ քո պսակ պայծառ՝
երևեալ բազում հրեշտակօք. և սքն ուրախ

եղև, և քաջալերեաց զնոսա 'ի հաւատս․ 'Ի վաղիւն անդր կացուցին զնա և զողջոյն միանգամայն առաջի կոմսին․ և նա ետ արկանել զնոսա 'ի հուր․ և 'ի շիջանել հրոյն յանձրևոյ՝ հատին զգլուխս նոցա մանկանցն․ և զսուրբն Լուկիանոս տարեալ 'ի բիւզանդիւ՝ անդ խաչեցին գլխիվայր։ Յետ կատարմանն սոցա ամբաստանեալ եղև առաջի կոմսին բարեպաշտ և ծանօթ կոյս ոմն Պաւլա անուն, թէ նա եղև պատճառ դարձին Լուկիանոսի, և յորդորիչ մանկանց 'ի նահատակութի, և դարմանիչ նոցա 'ի բանտի․ և 'ի խնդրել զնա զօրականաց՝ եկեալ գտին զնա յաղօթս 'ի տեղին, ուր զԼուկիանոս խաչեցին․ և արկեալ շղթայս 'ի պարանոց սրբուհւոյն՝ տարան 'ի քարշ առ կոմսն․ յորմէ հարցեալ՝ արար պէնի․ ես աղախին եմ Քրիստոսի, և դուստր հոգևոր հօրն իմոյ Լուկիանոսի․ և զսպառնալիս մահուն ինձ երախտիս համարիմ, զի փրկեալ 'ի փշտաբեր կենացս՝ զանմահականն հանգիստ ժառանգեմ։ Ն՟յ հարին զնա դալար բրօք, և հրով փորձեցին․ և հրեշտակ Աստուծոյ պահեաց զնա, և ծանոյց նմա թէ, բարեխօս են վասն քո Լուկիանոս և մանկունքն՝ զորս դու հասուցեր այնպիսի փառաց․ ապա տարան զՊաւլա, և գլխատեցին 'ի տեղի կատարմանն Լուկիանոսի։ Ի․ Յ․ Լ․ յունիս․ 3։

Լուչէոս․ տե՛ս Ղուկիոս։

# Խ

Խաչ եգիպ տօնելի . հտ . գ . 375 ։
Խանձող . տես Է Ր. Թանասի ։
Խաչի տօնք . տես 'ի տօնական հատորն . ԺՐ. 205 = 238 ։

Խաչատուր նոր վկայն ամիդեցի , որ 'ի տիգրանակերտէ՝ որ և տիարպէքիր , եր պատանի քսանամեայ՝ աղօթասէր և ընթերցասէր . որ 'ի լրոյ վարուց սրբոց վկայիցն վառեալ 'ի սէր մարտիրոսութեան՝ տեսանէր յանուրջս զնահատակութիւն իւր . և յաւուր միում յելանելն 'ի տանէ՝ ասէ . երթամ 'ի շուկայն , և կարծեմ թէ ոչ ես դարձայց 'ի տուն . զի տէր կոչէ զիս ։ Եւ յայնմ աւուր թշնամանէր յայլազգւոյ ումեմնէ՝ ոչ այլ ինչ ասաց , բայց միայն պախարակեաց զդենս նոցա իբրև սուտ ։ Յայնժամ կուտեցաւ բազմութիւնն , և ձգեցին զնա 'ի դատաստան իբր հայհոյիչ . և դատաւորն խրատ տայր նմա ուրանալ զհաւատս և ապրել . իսկ նա ասէ . թէև քերթեսջիք զիս , ես ոչ դառնամ 'ի ճշմարտութենէ . վ̃ոյ յետ բազում ողոքանաց և սպառնալեաց ել վճիռ սպանման ։ Եւ դահիճքն նախ քերթեցին զմորթ նորա մինչև 'ի լանջս և 'ի քամակն . և ապա խորտակեցին կացնով 'ի վերայ վիմի զբազուկսն և զոլոքսն , և թողին զնա այնպէս ոգեսպառ մինչև ցերեկոյ . և ընդ անկնարկելոյ նորա յղեցին առ նա ծածկապէս քահանայք զմ̃ր հաղորդ.

ղորդութեան եղեալ 'ի մէջ հացի · զոր ըն-
կալեալ գոհացաւ զն՟յ · և 'ի մէջ գիշերի
աւանդեաց զհոգին · և էջ լոյս պայծառ 'ի
վ՟ր մարմնոյ նորա 'ի տեսիլ պահապանաց :
Ապա հրամանաւ դատաւորի բարձին զնա ,
և թաղեցին միաբան ա՟մ ազգք քրիստոնէից
եղելոց 'ի քաղաքին · յամի 1652 · ռճա ·
յօգոստ · 20 : ⁓ · մարտ · 10 :

Խաչէն կամ Խաչատուր վ՟րդպ հոգետես՝ մի
յաշակերտաց ս՟բյ Թարգմանչացն սահակայ
և մեսրոպայ , յետ կատարման ն՟ց շրջէր ա-
ւաքելաբար , և ուսուցանէր զբանն ա՟յ զա՟մ
աւուրս իւր : Եւ 'ի տօնի յայտնութ՟ե զատե-
ղի աւեալ 'ի գիւղն ակոռի յոտ՟ն մասեաց՝
ետես 'ի գիշերի տեսիլ , զի ժողովք բազ-
մութ՟ե ննջեցելոց կենդանացեալ՝ բազմեալ
էին փառօք 'ի կոչունս անպատում ուրա-
խութ՟ե 'ի դարպասի միում · յորոց և զոմանս
ճանաչէր յականէ յանուանէ : Ետես և զոմն
ղազար անուն ակոռեցի՝ զի կայր տխուր ար-
տաքոյ դարպասին · և հարցեալ զպատճառն՝
'ի միտ էառ , զի այլք յիշատակաւ աղօթից
և ողորմութ՟ե փոխեալ էին 'ի հանգիստ ե-
րանութ՟ե · իսկ ինքն թէպէտև բզ՟մ ինչս էր
թողեալ , բայց ընտանիք ն՟ր անհոգանային
կատարել զյիշատակ հոգւոյ ն՟ր , և ոչ տային
ողորմութիւն աղքատաց և քահանայից : Ապա
յարուցեալ է՟ առաւօտն՝ որ էր օր մեռելոց ,
պատմեաց զայն երանելին խաչիկ 'ի քարոզի·
յայնժամ դաւիթ որդի ղազարու վախճա-

նե-

նելոյ խոստովան եղև վանհոգութի իւր. և արար 'ի նմին աւուր ըունելութի մեծ երիցանց և ժողովրդոց վն հոգւոյ հօր իւրոյ, և ետ առատ ողորմութիս և պատարագիս: Եւ դարձեալ ետես նր վիճպն խաչին զնոյն տեսիլ, և զկարգ մտեալ յուրախութի նն ը սբս նր: Եւ ինքն յետ այլոց առաքինի վաստակոց հանգեաւ 'ի տր: Ն. յունվր. 7:

Մարտիրոսութիւն Խարալամպեայ քահանայն էր 'ի մագնեսիայ քաղաքէ, յաւուրս հալածանացն հեթանոսաց. և վասն ուսուցանելոյ զբանն ճշմարտութե՝ կալաւ զնա ղուկիանոս դատաւորն, և կենդանւոյն մորթեցերծ արար. և տեսեալ զնահատակն քնի հաստատուն հոգւով՝ առ զայրոյթ սրտին կամեցաւ ձեռօք իւրովք գիշատել զնա. և վաղվաղակի գօսացան ձեռք նր. իսկ սբն աղօթս արարեալ ողջացոյց զնա: Յայնժամ պորփիւրոս և դաւկտոս դահիճքն ուրացան զկուռս, և հաւատացին 'ի քս. նոյնպէս և երեք կանայք՝ որ անդն կային, տեսեալ զսքանչելիսն՝ խոստովան եղեն զքս: Ընդ որ դառնացեալ խստասիրտ դատաւորն՝ ետ անխնայ գլխատել զամենեսին ընդ սբյն խարալամպոսի: Յ. փետր. 10: Յիշի և այլ համանուն վկայ. Յ. բս. մայ. 30. և ժմ. սեպ. 17:

Մաքկաբեանք տօնելիք. հտ. Մ. 480:

Մարկեղոս և Նէոփիտոս. տես յՆ.թանաս:

Մորոսոն Վարթեղեան. տես 'ի Գէորգ անկեայն:

Մորոսոն Վանչակեցի Նոր վկայ՝ էր պատանի գեղե-

ղե-

դեցին. յոր աչս արձակեալ դստեր պարսկի ուրումն դրացւոյ, և ոչ կարացեալ որսալ զնա, ապա զչարիսն՝ զոր գործեաց Է. եղբօր իւրում, եարկ ՚ի վերայ խոսրովու սրբասէր մանկանն. վ՟ոյ կոչեցին զնա պարսիկք յատեան. իսկ նա համարձակ ետ պ՟խնի, թէ օրէնք մեր զսրբութ՟ի քարոզեն. բայց ձերդ ոչ այդպէս: Ընդ որ բարկացեալ՝ տանջեցին զնա, և արկին ՚ի բանտ, զի կ՟մ ուրասցի զ՟քս և առցէ զաղջիկն, և կ՟մ չարաչար սպանցի: Նա և խոսրով հաստատուն եկաց ՚ի ք՟ս, և ոչ խոտորեցաւ զհետ բազմապատիկ հրապուրանաց օտարաց և ընտանեաց: Եւ միւսանգամ յատեան ածեալ՝ զայս արար պ՟խնի. ես զ՟քս ոչ ուրանամ, այլ պատրաստ եմ մեռանիլ վ՟ն անուան ն՟ր: Յայնժամ տարան և կապեցին զնա հաստակն ՚ի թթենի մի. և ա՟մ բազմութ՟ի պարսից հոսելով զքարինս իբրև զտեղատարափ՝ քարկոծ արարին զնա. և զմարմինն ՚ի հուր ընկեցին. բայց ոչ այրեցաւ և ոչ մազ մի ՚ի գլխոյ ն՟ր, որ՟պս և ոչ կապանքն չուանեայ: Ապա ծնօղք ն՟ր բարձին և թաղեցին զերանելոյն. և երկնից լոյս ծագեաց սաստիկ ՚ի վերայ գերեզմանին. յամի 1399. պ՟խր:

յուլիս. 2:

Խոսրովիդուխտ քոյր Տրդատայ տօնելի. հտ. Գ. 460:
Խոստովանողք տօնելիք. հտ. Ա. 41:
Խորէն և Մեսրոպ տօնելիք. հտ. Բ. 210:

Խրիսանթոս, որ թարգմանի Ոսկեծաղիկ, էր աղեքսանդրացի՝ որդի պողոմէոսի հեթանոս իշխանի. ը̃ որ ուսմեկեալ ՚ի հռոմ յաւուրս նումերիանոսի կայսեր՝ հանդիպեցաւ կարպոփորոնի ո̃ը եպ̃կսի բնակելոյ յայրի միում. յորմէ ուսեալ զհաւատս ք̃սի՝ մկրտեցաւ. վ̃դ գանեաց զնա հայրն, և չարչարեաց բանտիւ և քաղցիւ. ապա ը̃ խրատելոյ այլոց հաներ զնա ՚ի բանտէ՝ եդ ՚ի պայծառ սենեակս փափկութեանց ը̃ աղջկունս, այլ աղօթիւք սրբասէր պատանւոյն անկաւ թմրութի̃ ՚ի վ̃ր աղջկանցն, և ոչ եղեն նմա ՚ի գայթակղութի̃ : Յետոյ ետեալ հօր նո̃ր օրիորդ մի գեղեցիկ և իմաստուն՝ կիրթ յաթենական ուսմունս՝ Դարեհ կմ̃ դարիա անուն, ետ խուսանթոսի ՚ի հարսնութիւն, յաղթել նմա գեղով կամ գիտութե̃. իսկ խուսանթոս յաղթեաց դարեհի ա̃ծային բանիւ, և դարձոյց ՚ի ք̃ս. մինչ զի ուխտ եդին կալ առ միմեանս անարատ կուսութե̃ ո̃պ եղբայր և քոյր. և միաբան քարոզ եղեն ճշմարտութե̃ և սրբութե̃ : Որոյ եղև ամբաստանութի̃ յատեան կեղերիոսի եպարքոսի, թէ խուսանթոս որոշէ զարս ՚ի կանանց իւրեանց, և դարեհ զկանայս յարանց իւրեանց. և նա յետ փորձելոյ զնո̃՝ իբրև չկարաց խախտել ՚ի հաւատոց, մատնեաց ՚ի ձեռս կղոդիոսի տրիբունի. որ ետ բևեռել զմ̃ն ՚ի փայտի. և գտեալ զնո̃ անսասան և անշխասելի, հաւատաց ՚ի ք̃ս ինքն և կին

իւր

իւր իլարիա, և երկու որդիքն յասոն և մաւ-ռոն կմ՟ մաւրոս՝ եօթանասուն զօրականօք հանդերձ: Զայն լուծեալ կայսեր՝ զկղո-դիոս ընկղմեաց 'ի ջուր, և զայլսն ետ գլխա-տել. իսկ զխուսանթոս և զդարեհ յետ այլոց տանջանաց հրամայեաց թաղել կեն-դանւոյն: Նոյնպէս և զայլ բազմութի՟ն քա-հանայից՝ որք կային յայրի միում ը՟ն թէոդո-րոսի կմ՟ դիոդորի քահանայի, և մարինոսի սարկաւագի, 'ի ներքս արգելլին՝ փակելով զդուռն, և զայրն փլուզին 'ի վ՟ր նց՟՝ լինել նց՟ գերեզման: Ն. Յ. հոկտ. 17: Լ. հոկտ. 25. և դեկտ. 1. և 3:

## Կ

Կաղիմիր որդի կազիմիրայ արքայի պօղո-նիացւոց ծ՟ն լեհաց, և եղիսաբեթի աւս-տրիացւոյ, 'ի մանկութէ սնեալ ա՟ծպաշտութ՟բ՝ ետ զփափկիկ մարմին իւր 'ի խիստ ձգունս պահոց և քրձազգեցութե՟ և գետնատարած անկողնոյ, և գիշերային տքնութե՟ յաղօթս. և յոյժ ջերմեռանդն ցուցաւ 'ի ս՟ր խոր-հուրդ պատարագին, և 'ի մտածութի՟ չար-չարանացն ք՟ի՝ մինչև յափշտակիլ արտաքոյ անձին. այնչափ աղքատասէր եղև, մինչև կոչէին զպատանին հայր և պաշտպան կարօ-տելոց. էր և զօրաւոր քարոզ ճշմարտութե՟, և զխմակաց հերձուածոց: Անարատ պահեաց զկուսութիւն, և ոչ յանձն էառ մտանել 'ի

կարգ

կարգ Ցի, Թէպէտև հարկէին զնա բժիշկք անգամ իբրև 'ի պէտս առողջութե֊ան : Նա յետ գուշակելոյ ինքնին զօր մահուն իւրոյ՝ փոխեցաւ յերկրէ յերկինս 'ի հասակի քսան և հինգ ամացյամի 1482. և 'ի բերել զմարմին նր 'ի վինյա լիգուռանիոյ՝ տապան նորա պայծառացաւ սքանչելեօք. մինչև տալ յարութի աղջկան միում մեռելոյ, և բժշկել և զկոյր և զայլ ախտաժէտս. երևեցաւ և քաղաքացւոց յօդոյ անտի յաւուրս յարձակման Թշնամեաց՝ որպ զօրավար, և շնորհեաց յաղթութի հրաշալի : Ի. մարտ. 4 :

Սաւինիանէ տօնելի Յ. Քրիստափորի. Հտ. Գ. 406 :

Սաւինիանոս բարեպաշտ վկայ տօնելի. Հտ. Ս. 146 :

Սաւէղոս կմ Սաւլէղոս 'ի պերգեայ պամփիւլիոյ՝ եր որդի Թէոկղեայ բարեպաշտ և մեծատուն տիկնոջ. որ 'ի Հալածանս դիոկղետիանոսի առաքեաց զորդի իւր 'ի պոմպէուպօլիս կիլիկիոյ. ուր կալաւ զնա մաքսիմոս դատաւոր, և. պատեալ վն 'ի քն հաւատոց՝ յետ գանից և խախտելոյ յօդից ոտից և ձեռաց՝ ետ հոլովել յանիւս, և 'ի հուր արկանել. այլ ազատեալ սճյն 'ի ձեռն հրեշտակի՝ արկաւ 'ի բանտ : Օ որ լուեալ մօրն՝ բաշխեաց զնմ ինչս իւր աղքատաց, և եկեալ 'ի պոմպէուպօլիս՝ եմուտ առ որդին 'ի բանտն, և մխիթարակից լեալ նմա արտասուախառն խնդութք՝ որբէր զարիւն վի֊

րաց

րաց նր. և 'ի սաղմոսել նց 'ի մէջ գիշերի՝
լոյս ծագեաց 'ի բանտն, և եկն յերկնից
ձայն աւետեաց ։ Ապա յաւուր մեծի հինգ-
շաբաթուն 'ի խաչ հանին զկալիպոս. և մայր
սրբյն ետ դահճաց հինգ ոսկի դահեկան, զի
մի խաչեսցեն զնա կանգուն, այլ գլխիվայր.
և մնաց սրբն կալիպոս 'ի խաչին մինչև յեր-
րորդ ժամ ուրբաթուն կենդանի, և յայն-
ժամ աւանդեաց զոգին ։ Իսկ երանելին
Թէոկղիա յետ իջուցանելոյ զմարմին որդ-
ւոյն՝ գիրկս արկեալ զնովաւ՝ աւանդեաց և
ինքն զհոգին իւր առ ած. և հաւատացեալքն
Թաղեցին զերկոսեանն 'ի միում տապանի ։

Ն. ապր. 5 ։ Օ. Ա. 7 ։

ԿԱՐՊՈՓՈՐՈՍ քաջազօր վկայ, և խմբ. զօրա-
կանք տօնելիք. հտ. Օ. 570 ։

ԿԱՅԷՏԱՆՈՍ 'ի Թիենեան տանէ վիչենցայու
յիտալիա՝ հիմնադիր կարգի Թէատինեան
կանոնաւոր կղերիկոսաց, ծնեալ յամի 1478,
իսկ և իսկ 'ի մօրէն նուիրեցաւ սբ ածածնի.
և այնչափ անմեղութբ մնաց, մինչև սբ ա-
նուն կարդային նմա ։ Վարժեալ ուսմամբ
իրաւանց գրոց 'ի պատուա քղք՝ գնաց 'ի
հռովմ, և կարգեցաւ ընդ արգոյ երիցունս
պալատան պապին. այլ նա վառեալ 'ի սէրն
այ՝ ել անտի 'ի ծառայել աղքատաց և հի-
ւանդաց. և իւրովք ընչիւք հիւանդանոցս
կառուցեալ՝ սպասաւորէր ինքնին և յաւուրս
մահտարաժամու. և զամ փոյթ իւր ծա-
խեալ վն փրկութն մերձաւորաց՝ կոչեցաւ

որսորդ հոգւոյ. և 'ի նորոգել զկարգս ա՛ծ-
պաշտութե՛ կանգնեաց զհուր կրօնի՝ ապրել
առանց մուրողութե՛ 'ի կամաւոր տրոց բա-
րեպաշտից: Յաւարհարուե՛ հռովմայ կրեաց
յանողորմ զօրականաց գանս և լլկանս և
բանտարկութիս, զի տացէ նմ զինչս ժողո-
վեալս. իսկ նա ասէր, թէ յերկինս կան-
խեալ է իմ: Առեաց զժողովուրդն յե-
ռանդն այգի այգի բարեպաշտուե՛, առա-
ւել առ խորհուրդ ո՛ք հաղորդուե՛. և եղև
զօրաւոր քարոզ ճշմարտութեան. ունէր և
զշնորհս աղօթից և արտասուաց, և զձիրս
մարգարէուե՛: Ստէպ յափշտակեալ լինէր
յաղօթս. մինչև 'ի գիշերի ծննդեան տն
ընդունել 'ի գիրկս 'ի ձեռաց ո՛ք ածամօրն
զյս՛ մանկացեալ: Նա յետ բազում ճգնուե՛ց
և սրբեանց՝ վախճանեցաւ 'ի նէապօլիս, և
եդաւ 'ի տաճարի սբյն պօղոսի, յամի 1547.
պայծառացեալ սքանչելեօք 'ի կենդանուե՛
և յետ մահուա՛ն: Լ. օգոստ. 7:

Աղէքսանդրոս փռիւգացի՝ այր առաքինի առ որե-
ղիանոս կայսերաւ՝ եկեալ 'ի գաւառն ոլո-
նիդայ՝ առնէր ողորմութի կարօտելոց, և
բժշկէր զա՛մ ցաւս անուա՛մբն քի: Կալաւ
զնա հռուփինոս դատաւորն, և նեղէր վս
հաւատոյ. այլ իբրև հարաւ յայսոյն պղծոյ,
և առողջացաւ աղօթիւք սրբյն, արձակեաց
զնա պատուով: Յետոյ կալաւ զնա կղեար-
քոս իշխանն, և ետ խորտակել զսրունս նր.
իսկ հրեշտակ տն ողջացոյց զկայինդոս. վճ

'ի բաց արձակեաց զնա իշխանն . և խոստո-
վանօղ վկայն ճգնեալ 'ի տան իւրում զամս
Ժ, հանգեաւ 'ի Ք͞ս : ♦. յուլ. 1 :

ԿԱՆԴԻԴՈՍ . տե՛ս Ը Աղեքսիսի :

ԿԱՊԵՏՈԼԻՆԷ աղախինն Ք͞սի էր կապադովկա-
ցի յերևելի տանէ առ Դիոկղետիանոսիւ .
և մատնեալ յատեան դատաւորին՝ իբրև
հարցաւ, ասէ, անուն իմ քրիստոնեայ է,
և հայր իմ Ք͞ս, և քաղաքն իմ վերինն Եդէմ.
ո՞չ ուսայ 'ի Փերմիլիանոսէ եպիսկոպոսէն
կեսարու . մ՞ոյ արկին զնա 'ի բանտ . ուր
եկն առ նա աղախինն իւր Երոտինէ կամ
երոմտէիս, և ցանկայր չարչարակից լինել
նմա : Ապա յետ վերստին հարցափորձի՝
կապետոլինէ կատարեցաւ սրով. իսկ զերո-
տինէ վ͞ս առաւել համարձակութ͞են նախ
քերանօք տանջեցին, և ապա արկին 'ի հուր.
յորմէ անկեզ պահեալ՝ գլխատի և նա : ♦.

Յ. Ա. Հոկտ: 27 :

ԿԱՏԱՐԻՆԷ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, այն է ԵԿԱՏԵՐԻՆԷ
կոյս փիլիսոփայ՝ տօնելի . հմ . Օ. 306 :

ԿԱՏԱՐԻՆԷ ՍԵՆԱՅԵՑԻ յիտալիոյ 'ի կարգէ դոմինի-
կեան կուսանաց, եղև պահեցող և ճգնա-
սէր յոյժ . և 'ի միում նուագի 'ի բուն բա-
րեկենդանէ մինչև 'ի համբարձումն տ͞ն ոչ-
ինչ ճաշակեաց՝ բայց 'ի տ͞ն խորհրդոյն . փայ-
լեաց ա͞մ առաքինութ͞բ, և էառ իշխանութի
բժշկելոյ զա͞մ ցաւս և հանելոյ զդևս . ընդ-
որս սակս մեծամարտեալ զօրութ͞բ տ͞ն՝ յա-
մօթ առնէր զն͞ս . կրէր յաճախ զխօթութիւ-
պէս-

պէսպէս՝ սքանչելի համբերութ՟ք։ Մինչդեռ էր 'ի պիղծ քաղաքի՝ յաւուր կիւրակէի զկնի սբ՟ հաղորդութե՟ ետես զխաչելեալ փրկիչն, յորոյ 'ի վիրացն հնդեցունց տպաւորէին սպիք յանձին կատարինեայ . և յաղաչելն նր՟՝ զի մի երևեսցին արտաքուստ, տպաւորուն ևեթ լուսոյ եղև 'ի ձեռս և յոտս և 'ի կողս կուսին՝ հանդերձ անբերելի ցաւօք . և այնպէս յայնմհետէ կրէր զցաւս առանց արտաքին նշանի ։ Եւ էր կատարինէ ուսեալ յոյժ, մինչև զնմ՟ խնդիրս դժուարինս լուծանել զառաջարկեալս յոճաքանից . բազում բարիս արար բազմաց, և հաշտեցոյց զթշնամիս ը՟ միմեանս . գնացեալ և յաւենիոն գաղղիացւոց՝ ուր էր յայնժամ հայրապետն հռովմայ, յետ միջնորդ լինելոյ վն՟ արձակման փլորենտացւոց 'ի կապանաց, յայտնեաց և զկամս այ՟ յաղագս դառնալոյ յաթոռ իւր 'ի հռովմ . զոր և արար իսկ պապն ։ Եւ յետ այլ ևս մեծագործութեց և սքանչելագործութեց հանդերձ պարգևօք մարգարէութե՝ գնաց առ անձկալին իւր քս՟՝ իբր ամաց երեսուն և երից, յամի 1380 . և եդաւ 'ի սենա 'ի վանս դոմինիկեանց . ուր եղև և մեզ այց առնել յամի 1810 ։ Ա . ապր . 30 ։

Ոմն է սբն Կատարինէ Բոնոնիացի մր՟ պոլոնիացի յիտալիա, 'ի կարգէ սրբուհւոյն կղարայի, պայծառացեալ սքանչելի վարուք 'ի կուսատանի . որոյ մարմինն ցարդ ևս անապական պահի 'ի վանս իւր . ոչ և ականատես իսկ

եղեաք ։ Ի . մարտ . 9 ։

Կարոլոս 'ի պոռոմեան ազատ տանէ, միդու-լեցւոց ք̃ միլանցոյ յիտալիա՝ 'ի ժամու ծննդեան խուրոյ հրաշալի ցուցաւ, 'ի ծագել գիշերայն երկնային լուսոյ 'ի սենեակ անդր . և 'ի մանկութէ կարգեալ 'ի սպասաւորութե̃ եկեղեցւոյ՝ փայլեաց սրբութ̃բ և իմաստութ̃բ և աղքատսիրութ̃բ . և յետ աբբայական պատուոյ՝ 'ի քեռւոյ իւրմէ 'ի պիոսէ չորրորդէ ընտրեցաւ կարդինալ 'ի հասակի իգ̃ ամաց , և ապա արքեպս̃ միլանու . և եղև քաջ հովիւ և առաքինի յոյժ , և դարձոյց զբազումս 'ի մոլորութեց , առաւելէն ողորմածութ̃բ . և 'ի լինել ժանտախտի՝ յետ ցուցանելոյ զմ̃ խնամս հոգւոյ և մարմնոյ առ հիւանդս , ել 'ի հանդիսական պաղատանս՝ խաչ յուսս և բոկ ոտիւք և պարան 'ի պարանոցի ։ Օրաւոր պաշտպան գտաւ ազատութե եկեղեցւոյ , և խրատիչ ստահակաց . յորոց հարեալ հրացանութ̃բ Թնդանօթոյ՝ անվնաս պահեցաւ ։ Իր պահեցող յոյժ և քրձազգեաց և տքնող յաղօթս . շինեաց եկեղեցիս , վանորայս , և եղբայրանոցս . գրեաց և բզմ̃ ինչ՝ առաւել 'ի հրահանգութ̃ եկեղեցականաց ։ Առանձնացեալ 'ի լեառն վարալլի՝ 'ի բազում ձգանց հիւանդացաւ . և եկեալ 'ի քաղաքն՝ ետ պատել զինքն խորդով և մոխրով , և այնպս̃ փոխեցաւ առ քս̃՝ խէ ամաց , յամի 1584 . և պայծառացաւ սքանչելեօք ։ Ի . ժմ̃ . նոյեմբ . 4 ։

Կարպոս եպս Թիւատիրայ, և Պապիլաս կամ պապիւլոս սարկաւագ՝ 'ի հալածման դեկոսի կմ վերոսի մատնեցան վս անուանն քի 'ի ձեռս բդեշխին ասիացւոց. որ կապեաց զնս 'ի ձի, և ետ վարել առաջի իւր մինչև 'ի սարդիս քաղաք. ուր յետ քերանաց՝ ետ բևեռել զվկայսն ընդ միմեանս: Եւ 'ի ժպտել սբյն կարպոսի՝ իբրև հարցաւ, ասէ. տեսի զփառսն տն և ուրախացայ. յետոյ արկին զնս 'ի հուր. և այնպէս կատարեցան 'ի քս: Յայնժամ քոյր միոյն 'ի սբց Ագաթոնիկէ անուն՝ ինքնակամ ընթացաւ 'ի տանջանս, ասելով. ճաշս այս և ինձ պատրաստեալ է. և ինքնին մտեալ 'ի խարոյկն՝ երից կարդաց. տր տր տր օգնեա ինձ, և աւանդեաց զոգին: Այնպէս և Ագաթոդորոս ծառայ սբցն՝ որ եկեալ էր զկնի նց, հանդերձ այլովք նահատակեցաւ զանազան տանջանօք 'ի սարդիս կմ 'ի պերգամոն: Հ. հոկտ. 12. կմ 13: Յ. հոկ. 13. Լ. ապր. 13:

Կեփաս. տես Պետրոս առաքեալ. Թող զի ոմանք եդին և զայլ ոմն կեփաս անտիոքացի յեօթանասնից համարի. որ է անհիմն. և ըստ այնմ յիշի 'ի Հ. սեպտ. 25. և Յ. դեկտ. 9:

Կէկիլեա կմ կիկլիա, այն է Չէչիլեա կմ չէչիլիա (ստուգաբանեալ երգիչ) էր մեծանուն կոյս հռովմայեցի՝ դուստր հեթանոսի մեծատան՝ յաւուրս աղեքսանդրոսի կայսեր 'ի Գ դարու, խօսեցեալ Վաղերիանոսի ազ-

նուաղման երիտասարդի։ Եւ մինչև լեալ էր
հարսանեաց, կիկիլիա հաւատաց 'ի քս՟, և
մկրտեցաւ 'ի սբյն՟ ուրբանոսէ հայրապետէ.
այլ ոչ եհան զբանն 'ի վեր. մինչև 'ի կատա-
րել անդ հարսանեացն՝ իբրև եղև կիկիլիա
առանձինն ը՟ փեսային իւրում վաղերիանո-
սի՝ ասէ ցնա. գիտեա՛, զի կայ երկնաւորին
ա՟յ հրեշտակ՝ որ այնչափ սիրէ զիս վ՟ս կու-
սութե՟ իմոյ, մինչ զի 'ի մերձենալ քո յիս՝
կորուսանէ զքեզ. ապա եթէ պահես զիս
անարատ՝ սիրեսցէ և զքեզ ո՟պ զիս, և ցուց-
ցէ քեզ զփառս ա՟յ։ Եւ 'ի խնդրել վաղե-
րիանոսի տեսանել զհրեշտակն՝ ասէ կիկի-
լիա. տեսցես, եթէ հաւատասցես 'ի քս՟ և
մկրտեսցիս. և նա չոքաւ մկրտեցաւ յուրբա-
նոսէ. և եկեալ 'ի տուն՝ եգիտ զկիկիլիա
յաղօթս, և զհրեշտակն ա՟յ առ նմա բոցա-
փայլ և հրաթև. որ եդ մի մի ծաղկեայ
պսակս 'ի գլուխ կիկիլեայ և վաղերիանոսի։
Յայնժամ խնդրեաց վաղերիանոս 'ի հրեշ-
տակէն, զի և աւագ եղբայրն իւր Տիբուր-
տիոս լիցի քրիստոնեայ. և եղև այն՟պս. զի
ը՟ մեկնիլ հրեշտակին՝ յորժամ եմուտ տի-
բուրտիոս (որ և տուբերտիոս) յողջոյն նո-
րոյ հարսին և փեսային՝ էառ զհոտ անու-
շութե՟ ծաղկի և շուշանի 'ի գլխոց ն՟ց. և ի-
մացեալ զպատճառն՝ դարձաւ և նա 'ի քս՟.
և մկրտեալ յուրբանոսէ՝ արժանի եղև և նա
տեսութե՟ հրեշտակի։ Յետ այսորիկ 'ի նա
հատակել ալմակիոսի եպարքոսի զբազում
վկայս՝

վկայս՝ Թադէին զնո երկոքին եղբարք՝ սրբն Վաղէրիանոս և սրբն Տիբուրտիոս · մնյ ըմբռնեցան և բրածեծ եղեն , և ապա կատարեցան սրով · որպս և դահճապետն Մաքսիմոս , և այլք բազումք՝ որք նոքօք հաւատացին ։ Կոչեցաւ և սրբուհին Կիկիլիա յատեան · և յետ դարձուցանելոյ ածային բանիւ՝ զբազումս յարանց և 'ի կանանց՝ արկաւ 'ի ջեռուցել բաղանիս , ուր կրեաց զտագնապ մահու · այլ յետ երից աւուրց տակաւին կենդանի գտեալ՝ գլխատեցաւ ։ Դ · Նոյ · 27 , կմ 28 ։

Յ · Նոյ · 24 ։ Ի · Նոյ · 22 · և ապր · 14 ։

Պուպլէ կամ պուպլիա սարկաւագուհի եկեղեցւոյն անտիոքայ ասորւոց՝ էր մայր սրբոյ քահանային յովհաննու , և այրի մնացեալ՝ դաստիարակէր զբազում կուսանս և զկրօնաւոր կանայս իբրև մայր վանից ։ Լուեալ յուլիանոսի ուրացողի զսաղմոսելն նորա ընդ իւրսն , կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են՝ ձեռագործ որդւոց մարդկան , ետ բերել զնա առաջի իւր , և ապտակել չարաչար , մինչև ներկան ծնօտք նորա յարենէ ․ բայց զկնի ծերութեան արձակեալ յազատութի՝ վախճանեցաւ վարուք սրբութե ։ Ն ․ հոկտ ․ 8 ․ Յ ․ Լ ․ 9 ։

Պորփիւրոս կամ պորփիւրիոս եպս գազայ՝ ծննդեամբ թեսաղոնիկեցի , էր յաւուրս ար-

արկադեայ և ոնորիոսի, կրօնաւորեալ նախ ՚ի սկիտէ. և ապա եկեալ յերմ՝ քարոզէր և դարձուցանէր զհրէայս և զհեթանոսս, և ՚ի ձեռագործէ իւրմէ կերակրէր զաղքատս. ուր և զհայրենի ժառանգութիւն՝ զոր բերին առ նա, բաշխեաց տնանկաց: Ի կրել իւրում զլերդացաւ՝ երևեցաւ նմա յանուրջս փրկիչն բևեռեալ ՚ի խաչի, և բժշկեաց զնա՝ տալ նմա զխաչ իւր ՚ի պահել: Յետ այնորիկ քահանայացեալ կարգեցաւ պահապան սբ խաչափայտին յերմ. և ՚ի մեռանիլ եպսին գաղայ՝ ընտրեցաւ յաթոռ նր. և եկեալ ընդ մետրապօլտին կեսարիոյ ՚ի բիւզանդիա՝ ողջունեաց զնս ոսկեբերանն. և հաւանեցոյց զեւդոքսիա թագուհին՝ տալ ինքեան ձեռն, զի բարձցէ ՚ի գազայ քաղաքէ զմնացուածս կռապաշտութե, և շինեսցէ եկեղեցի խաչանման ՚ի մէջ քաղաքին. և ՚ի կատարել նր զխնդիր սբյ եպսին՝ ետ նմա ոսկի ըստ բանի սբյն զաւակ արու զփոքրն թէոդոս. և ինքն պորփիւրոս փայլեալ սքանչելեօք փոխեցաւ առ տր:

Ի. մարտ. 6: Յ. Ի. փետր. 26:

Պորփիւրոս գուսան եփեսացի՝ նուագածու և խաղարկու ՚ի թատերս հեթանոսաց՝ էր յաւուրս որեղիանոսի կայսեր. և զի աղէքսանդրոս կոմս կեսարու կապադովկացւոց տարաւ զնա ընդ իւր, և հրամայեաց ձևացուցանել ընդ խաղս զմկրտութի քրիստոնէից, յորժամ խաղարկուք արկին զպորփիւրոս

՚ի կաթսայ ջրալից , յայսմ անդ սուտ ե- պիսկոպոսին զձև բանին , շրջեալ ած զմիտս պորփիւրի ՚ի ճշմարտութի . և յելանելն ՚ի ջրոյ՝ էջ ՚ի վ՛ր ն՛ր շնորհք հոգւոյն ս՛բյ , և երևեցան լուսափայլ հրեշտակք ՚ի տեսիլ ա՛մ բազմութե , և զամպար ՚ի ձեռս օրհ- նէին զա՛ծ . վ՛ս հաւատային և այլք ՚ի բազ- մուէն . իսկ կոմսն ամօթով գնաց ՚ի տուն իւր . և ՚ի վաղիւ՛ անդր անուն կախարդութե դնելով ՚ի վերայ պորփիւրոսի՝ հրաման ետ գլխատել . իսկ նա ուրախութբ մատնեաց զանձն ՚ի մահ վ՛սքի , հաղորդեալ նախ ՚ի կղէնէոսէ եպսկն կեսարու . որ և ամփո- փեաց զմարմին նահատակին : ❧ . Նոյ . 7 , կմ 5 : ❧ . 4 :

Պորփիւրոս՝ միմոս ծաղրածու , որ էր հաց- կատակ կամ չուարթարար յուլիանոսի ՚ի խնջոյս , զի օրինակի աւազանոյն ասի եկեալ ՚ի հաւատս . բայց զի այլոց՝ այլով օրինակաւ հաւատացեալ ՚ի քս՛ կշտամբեաց զուրացողն յատենի աւագաց . վ՛ս յետ բազում խոշ- տանգանաց և գանից մինչև ՚ի մերկանալ ոսկերացն՝ հատին զգլուխ ն՛ր սակրով : ❧ . ❧ . սեպտ . 15 :

Պորփէոս տօնելի ընդ տարագոսի . հտ . ❧ . 271 :

Պրոկղ աշակերտ ոսկեբերանի՝ վ՛ս սրբութե և իմաստութե իւրոյ ձեռնադրեցաւ ՚ի սի- սիննիոսէ պատրիարգէ եպս կիւզիկոյ . այլ հալածեալ ՚ի հերձուածօղ պաշտօնէից՝ դար- ձաւ

ձաւ 'ի կոստանդնուպօլիս , և պարապէր անձին իւրում և ընթերցուածոց . մինչև յետ բարձմանն պղծոյն Նեստորի , և փոխ-ճանելոյ Մաքսիմիանոսի պատրիարքի՝ ըն-տրեցաւ յաթոռ կոստանդնուպօլսոյ երա-նելին պրոկղ յամի տն 434 . յաւուր աւագ հինգշաբաթու . և յետ վարելոյ զպաշտօն քաջ հովուէի առաքելական քարոզութբ զամս ժբ , կամ ժգ , փոխեցաւ առ տր : {} . հոկ.

24 :

Պրոկղ վկայ անկիւրայի՝ էր 'ի հալածանս տրայիանոսի . և մատնեալ 'ի ձեռս մաքսի-մոսի դատաւորի՝ տանջեցաւ քերանօք 'ի տեղի ծննդեան իւրոյ 'ի գիւղն կալիպայ : Իսկ իբրև կամէր դատաւորն գալ ձիով 'ի քաղաքն , կապեցաւ յաներևոյթ զօրութէ . և ոչ կարաց յառաջ խաղալ՝ մինչև խոստո-վան եղև առ ժամն ձեռագրով զզօրութին քնի . այլ յետոյ վրէժս կամելով առնուլ 'ի սրբյն՝ ետ տանել զնա առաջի իւր 'ի քա-ղաքն . և անդ հրամայեաց խանձողել զնա շանթիւք , և ապա հանել 'ի փայտ և նետա-ձիգ առնել . որով կատարեցաւ նա 'ի տր : Իսկ քանզի զճանապարհայն հանդիպեալ էր վկային եղբօրորդի իւր Իլարիոն , և գիրկս արկեալ նմա արտասուօք , վնյ և զնա կալան սպասաւորք դատաւորին . և յետ ե-ւօրեայ անսուաղ բանտարկուէ՝ գան հա-րին , և քարշեցին է երկիր վերիս մղոնս . և ապա գլխատեցին : Իսկ նշխարք սրբյս բե-

րեալ 'ի կոստանդինուպօլիս՝ եդան 'ի վանս հիւպատոսին ։ Տ. յուլ. 6, կմ 11 ։ Յ. Լ.

յուլ. 12 ։

Պրոկոպիոս զօրավար եէ մայրի աւ դիոկղետիանոսի՛ , որդի քրիստափորի առն քրիստոնէի , և թէոդոսիայ մօր կռապաշտի , յետ վաղամեռիկ լինելոյ հօրն՝ սնեալ ձեռամբ մօրն 'ի պաշտօն կռոց , 'ի զարգանալն պատուէեցաւ 'ի կայսերէ , և կարգեցաւ դուքս աղեքսանդրիոյ . և 'ի գալ անդր երկու գընդաւ՝ պատուէր ունելով կորուսանել ըզքրիստոնեայս , ետես զճանապարհայն խաչ սառնատեսիլ , և լուաւ ձայն սպառնալեաց մահու՝ եթէ ոչ ծանիցէ զյն զորդին այ ըզխաչելեալն ։ Եկեալ 'ի սկիւթուպօլիս՝ ետ շինել ոսկերչի զնմանութի խաչի . և նովին վանեալ զասպատակս՝ յայնմհետէ պաշտէր զքն ։ Ապա 'ի մատնուէ մօրն՝ փորձեաց զպրոկոպիոս ը̅ հրամանի կայսեր ուլկիոս դատաւորն կեսարու . և գանեալ չարաչար՝ էարկ կիսամահ 'ի բանտ . ուր երևեցաւ Տրն հրեշտակօք , և ողջացոյց զնա . եղեն և այլ սքանչելիք , մինչև հաւատալ և երկուց զօրագլխաց , և մարտիլ զօրօք իւրեանց 'ի սրյն ղևոնդեայ ։ Հաւատաց և թէոդոսիա գլխովին մայր սրյն պրոկոպիոսի , և այլ տիկնայք ԺԲ նմին . զորս չարչարեաց դատաւորն գանիւք և հրով . և յետ հերձանելոյ զստինս նց՝ ետ գլխատել ։ Իսկ զպրոկոպիոս հարին սրջառաջլօք . և եդին 'ի ձեռս

նր

նր հուր և կնդրուկ , զի խնկեսցէ կուռոց . և նա պահեաց զհուրն 'ի ձեռին , և ոչ վնասեցաւ . և յետ փորձելոյ զնա դարձեալ հրով՝ հատին զգլուխ մեծի վկային : ❧ .

յուլ . 7 : Յ . Լ . 8 :

**Պրոմոս , Մարկոս և Աղէքս**՝ եգիպտացի քրիստոնեայք յաւուրս հալածանաց Մաքսիմիանոսի եկեալ 'ի կիլիկիա՝ դարմանէին զխոստովանող վկայսն 'ի բանտի . և 'ի կամիլ նոցա անցանել յասկաղոն վասն նոցին իրաց՝ կալան զնոսա պահապանք դրան քաղաքին , և մատնեցին 'ի ձեռս փերմելիանոսի դատաւորի . որոյ իմացեալ զպատճառս գալստեան նոցա 'ի բերանոյ նոցին՝ ասէ . արդ որովհետև մարտիրոսասէր էք դուք , ես և զձեզ արարից մարտիրոսս . ապա յետ փորձելոյ զնոսա դանիւք՝ զերկուսն արէոս էարկ 'ի հուր . զմիւսն պրոմոսի զաչս բրեաց և զոտս կտրեաց , և զեղիա գլխատեաց : ❧ . դեկ . 18 : Յ . 19 :

**Պօղ** պարզամիտ տօնելի . հտ . Ա . 246 :

**Պօղինոս** հայրապետ տօնելի . հտ . Մ . 544 :

**Պօղիքտոս** կմ պողիկտոս տօնելի . հտ . Մ . 446 :

**Պօղիքտոս** այլ կեսարացի 'ի կապադովկիոյ . զոր իշխան քաղաքին ետ քերել երկաթի եղնգամբք , և քանցել զատամունսն . և ապա էարկ 'ի հնոց հրոյ բորբոքելոյ . և այնպէս կատարեցաւ 'ի սէրն քսի : ❧ . դեկ . 24 : Յ . դեկ . 19 : Լ . մայ . 21 :

Պօղոս առաքեալ տօնելի. Հտ. Գ. 509. և Ժ. 286։

Պօղոս անապատական տօնելի. Հտ. Ա. 239։

Պօղոս խոստովանօղ տօնելի. Հտ. Ի. 239։

Պօղոս աբբայ աղեքսանդրացի՝ որ նստէր 'ի վանս քաղկեդոնեայն կոչեցեալ, եւ հայր աղջկանն՝ զոր ուխտեալ էին իւր ծնօղքն իւր յապատիլն 'ի մահաբեր հիւանդութենէ աղօթիւք սր հօրն փաքելի. բայց յոչ կամիլ մօրն զրկել 'ի դստերէ իւրմէ, և 'ի կապել զնա ԺԲ ամի, գնեաց պօղոս զայլ կոյս մի, և զայն ընծայեաց իւր փոխանակ դստեր իւրոյ։ Նպա տեսիլ տեսեալ սոսկալի՝ յորում ծանուցաւ նմա, թէ մեծ չար արար յոչ կատարելն զուխտ իւր, գնաց յանապատն սինայ, և անդ ելաց զմեղս իւր մինչև 'ի մահ։ Ձ. ապր. 13։ վարք հց։

Պօղոս պապան, և քոյր նր Ջուլիանէ ծաղկահասակ՝ էին 'ի պտղոմայիդայ պաղեստինոյ. ուր իբրև եկն որեղիանոս կմ վալերիանոս կայսր հալածիչ քրիստոնէից, քաջալերեաց պօղոս զքոյր իւր, և նովաւ հանդերձ սկսաւ խաչակնքել զդէմս իւր հրապարակաւ, զի պահեսցին 'ի փորձութենէ։ Զոր տեսեալ թշրին՝ ետ ունել զպօղոս, և մատուցանել 'ի քերանս. ընթացաւ 'ի տեղին յուլիանէ, և յանդիմանէր զանգթութի բռնաւորին. վոյ և զնա քերեցին երկաթեօք. և յետ բանտարկութե արկին զերկոսեանն 'ի կաթսայ եռացեալ ձիթոյ. և ապա տարածեալ

զնս

զն՟ա 'ի մ՟ջ երկաթի հրացեալ մահճաց՝ հա-
րին դալար բրօք ։ Նոյն քանզի երեքն 'ի դահ-
ճաց Սարապամոնէոս, Սոփրոնոս, և Ենէսէոս,
խնայէին 'ի սուրբսն, հրամանն ետ բռնաւորն
գլխատել զն՟ս, ոմ՟ն և զպօղոս և զպաւլիանէ ։
Լ․ մարտ․ 26 ։ Յ․ Ն․ օգոստ․ 17 ։
Պօղոս և Պաւսիրիոս եղբարք 'ի կղէոպատրի-
դայ ու դիոկղետիանոսի մատնեցան 'ի քե-
ռանս յարրիանոս դատաւորէ վ՟ս անուան
ք՟ի ։ Դստր ն՟ց և այլ եղբայր կրսեր՝ Թէո-
դոտոն անուն, երբեմն միայնակեաց, և ա-
պա գող և աւազակ ․ որ խբրև լուաւ զչար-
չարանս եղբարցն՝ եկն եկաց 'ի հեռաստա-
նէ, և խորհէր նահատակակից լինել նոցա ․
իսկ դևն 'ի կերպարանս ալևորի ասէր ցնա ․
դու ոչ կարես համբերել տանջանաց, և
այլ աւելի մեղս առնես՝ ուրանալով զք՟ս ։
Նաէ Թէոդիտոն ․ ես ուխտեցի՝ տ՟ն ոչ ծա-
ռայ լինել հաւատարիմ այսուհետև ․ և
յայն բանն կորեաւ սատանայ ․ և Թէոդիտոն
յատեանն ընթացեալ՝ ասէր ․ ես քրիստոն-
եայ եմ, և եղբայր մարտիրոսացս ․ և այն-
չափ խնչ արար, մինչև բարկացեալ դատա-
ւորին՝ ետ հարկանել շամփուրս հրացեալս
'ի կողս նր՟ և 'ի լանջս ․ և 'ի գոհանալ նր՟
զ՟ծյ՝ երևեցաւ նմա հրեշտակ տ՟ն պսակ 'ի
ձեռին ․ ապա հատին զգլուխ նր՟ ․ իսկ ըզ-
պօղոս և զպաւսէր կապանօք ընկլուզին 'ի
ջուրս ։ Լ․ փետր․ 2 ։ Յ․ յունվր․ 24 ։

# Ռ

Ռոմանոս կամ Հռոմանոս Երգեցող՝ տօնելի • հտ•
Օ • 222 ։

Ռոմանոս կամ Հռոմանոս Միայնակեաց՝ տօնելի • հտ•
Ր • 459 ։

Ռոմելոս կամ Հռոմելոս՝ տօնելի • հտ • Յ • 447 •

Ռուսինոս կամ Րուսինոս այրն սքանչելի՝ որոյ ժամանակն անյայտ, էր յոչէն հայոց 'ի մոկաց գաւառէ՝ կրօնաւորեալ 'ի վանս փասայ • ուր և տնտես կարգեալ՝ ծառայէր այ յամ սրտէ՝ ջերմեռանդն աղօթիւք և պահօք, և սպասաւորէր 'ի պէտս եղբարցն ամ խոնարհութբ՝ գծուծ և անշուք ձևով, արհամարհյաչս ամենեցուն • և յերկրի կալով՝ զերկնայինս խորհէր միշտ • զորոյ ըղձակեալ առաքինութիւնս յայտնեաց ած միում 'ի կատարեալ միանձանց վանացն՝ ցուցանելով նմա յանուրջս զռուսինոս լինել բնակիչ դրախտի ։ Եւ իբրև յայտնի եղև բանս այլոց եւս, և կամէին փառաւորել զծառայն այ, նա խորհեցաւ փախչիլ անտի • և Թէպէտ փակեցին նքզդուռն, բայց ռուսինոս իբրև ալար զնշան սբյ խաչի 'ի վր դրան, առժամայն բացաւ • և այնպէս եւ գնաց յանծանօթ տեղի • և կատարեաց զկեանս իւր 'ի հաճոյս այ ։ ✝ • ապր•
6, կմ 7 ։

Ռոփայէլ • տես Հրեշտակս ։

Ռո-

Սոզա . տես Մարդուհի ։ ոմ և Սոճենա է Սադուհի . զորմէ տես Մասլուհի , և Դիփլափայտի վկայք ։

## Ս

Սաբա աբբայն կապադովկացի՝ որդի յովհաննու և սոփիայ , փայլեաց 'ի վերջին աւուրսն Թէոդոսի փոքու ցսկիզբն Թգրութե յուստինիանոսի 'ի Ե և Զ դարու ։ Ի պատանեկութե տեսեալ խնձոր գեղեցիկ 'ի ծառն՝ ցանկացաւ ուտել . և զի ոչ էր ժամ ճաշոյ , ընկէց զխնձորն յերկիր , և կոխեաց ոտիւքն . և ուխտեաց ոչ ևս ուտել զխնձոր ։ Ըղձեցաւ 'ի վանորայս եգիպ , և աշակերտեցաւ սրբոյն եւթիմիոսի , և ապա սրբոյն Թէոկտիստոսի . և յառաջադէմ գտեալ 'ի ճգնողական վարս՝ գերապանցեաց զոմ միայնակեցօք ժամանակին իւրոյ . շինեաց վանս եօթն , և բղխեցոյց ջուր սքանչելեօք . բազում ճգնեցաւ ընդդէմ հակառակորդաց չորրորդ ժողովոյն . և յառաքիլ իւրում իբրև միջնորդ խաղաղութե 'ի պատրիարգացն եգիպ առ կայսերս յունաց՝ 'ի միում նուագի ետես յուստիանոս կամ յուստինիանոս Թգրն պսակ լուսեղէն 'ի գլուխ նր հօրն սաբայի . որ և փոխեցաւ առ տր յամի 531 . ձե , կամ ղա ամաց ։ Տօ. դեկ . 4 , կամ 5 ։ Յ. Ի . 5 ։

Սաբա գոթացի յաւուրս վաղեսի և վաղենտիանոսի , քանզի 'ի մանկութե եղև քրիս-

տո

տոնեայ, և ապա բազմաց եղև առիթ դարձի 'ի քս, փոխեցաւ 'ի կռապաշտ գթայ արտաքոյ քան զքաղաքն. և 'ի հալածանս Աթանարիկոսի իշխանի նց՝ յետ նահատակութե բազմաց յորժամ երդնուին քաղաքացիք, թէ չիք այլ աստ քրիստոնեայ, եկն եկաց երանելին 'ի մէջ նց, և ասէ. մի իմ մի՛ ոք երդնուցու, զի ես քրիստոնեայ եմ. վյ քարշեցին զնա ընդ սայլի մերկ և բոկ. կախեցին զգերանէ տանն, և ստիպէին ուտել 'ի զոհից կռոց. և յոչն հաւանիլ՝ կապեալ կոճղ մեծ ը պարանոցն՝ ընկեցին 'ի գետ յամի 372. 'ի հասակի լը ամաց. զոր հանեալ Սորանոս դուքս քրիստոնեայ՝ եած 'ի Կապադովկիա. ուր շինեցաւ վկայարան սորա:

սբյն ։ ⸪ . ապր. 13 ։ ( ) . 15 ։ | . 11 ։

**Սաբա սպարապետ** առ Որեղիանոսիւ, ը ազգի գոթայի համարեալ, էր այլ ածապաշտ և առաքինի՝ մինչև հալածել զդեւս. և մի այց առնելոյ բանտարկելոց վկայից՝ կոչեցաւ յատեան կայսեր, և խոստովանել զքս՝ ելոյծ զկամարն իշխանական, և ընկէց առաջի թգրին. յայնժամ տանջեցին զնա քերանօք և ջահիւք. արկին և 'ի կաթսայ եռացեալ ձիթոյ, ուստի ել անվնաս. որով հաւատացին արք հ, և կատարեցան սրով ընդ սբյն Սաբայի յամի 271 ։ ⸪ . ապր. 6,

կմ 7 ։ ( ) . 25 ։ | . 24 ։

**Սաբիննոս** զօրական 'ի յերապօլսոյ կմ 'ի Հերմապօլսոյ Եգիպտոսի առ Դիոկղետիանոսիւ

ոչ

ոչ ժուժեալ ընդ չարութեան կռապաշտից՝ եթող զզինուորութիւն դքսին իւրոյ, և կայր 'ի թաքստի արտաքոյ քաղաքին ընդ այլ քրիստոնեայս պահօք և աղօթիւք. և մատնեցաւ յաղքատէ, անտի՝ որում սակաւ ողորմութիւն առնէր. և ածաւ ծանր շղթայիւք առ աւրիանոս դատաւոր թեբայիդոյ. և յետ բազում գանից և քերանաց և այրման կողից՝ քանզի լռիկ կայր, որպէս թէ այլոյ մարմինն չարչարիւր, ձանձրացեալ 'ի տանջելոյ՝ ընկեցին 'ի խորս գետոյն վիմով. այլ ըստ յառաջագոյն գուշակելոյ սորին՝ հանին զնա հաւատացեալք, և թաղեցին մերձ 'ի քաղաքն անդրինոու : Հ. ապր. 14 : Յ.
Լ. և տր իէլ. մարտ. 13 :

Սուրբքն ճիը Շահդուստ եպս տիսբոնի 'ի հալածանս շապհոյ՝ ետես յանուրջս զսբն շմաւոն եպս պարսից զյառաջագոյն նահատակեալն, զի նստեր կայր 'ի գլուխ սանդղոյ, և կոչէր զնա գալ 'ի վեր աներկիւղ. որով զօրացեալ՝ յօժարութեամբ ետ զանձն 'ի ձեռս արքունի խնդրակաց. և յանդիման ատենի արքային արիաբար դաւանեալ զՔս՝ արկաւ 'ի բանտ, ընդ նմին և ոգիք ճիը՝ արք և կանայք. և յետ հինգ կամ եօթն ամսոց սովու և տառապանաց՝ կատարեցան ամենեքին սրով. իսկ սբն սադովկ վարեցաւ ծանր կապանօք 'ի խուժաստան, և գլխատեցաւ յամի 342 'ի բեթլապատ, որ և լապէտ քաղաք : Հ. փետր. 18 : Յ. Լ. 20 : Նուոդ.

ա-

տարի ։

Սահակ պարթև հայրապետ տօնելի ․ հտ ․ Բ․ 131 ․ և Գ․ ․ 421 ։

Սահակ և Համազասպ իշխանք տօնելիք ․ հտ ․ Օ ․ 330 ։

Սահակ և Յովսէփ կարնեցիք տօնելիք ․ հտ ․ Գ․ 293 ։

Սահակ կմ Իսահակ աբեղայ , իմ քահանայ կրօնաւոր յարևելեան սահմանաց յունաց՝ յազգէ հայոց , առ վաղեմին երթեալ 'ի բիւզանդիոն՝ ձգնէր 'ի վանս ուրեք ․ և յելանել թգրին 'ի պատերազմ ընդէմ գթաց՝ ասէ ցնա երանելին սահակ ․ բա՛ց զեկեղեցիս ուղղափառաց՝ որք մինչև յորդորէի ընդ քեզ , ապա թէ ոչ՝ 'ի պատերազմէդ ոչ դառնաս ։ Իսկ արիոսեան կայսրն ետ զանել զնա , և արկանել 'ի վր փշոյ ․ բայց սրբն անարատ պահեալ ձեռամբ հրեշտակի՝ եհաս զկնի թգրին , և կալեալ զերասանակ երիվարին՝ ասէր ․ ով թգր լուր ինձ , և բա՛ց զեկեղեցիս ուղղափառաց ․ այլ նա անսաստ դտեալ՝ ետ զայրն այ 'ի ձեռս երկուց իշխանաց սատորնինոսի և բիկտորոսի՝ արկանել զնա 'ի բանտ տղմային մինչև 'ի դառնալ իւր խաղաղութ ։ Իսկ սրբն ասէ ․ եթէ դու ողջանդամ դարձցիս , ապա տն չէ խօսեցեալ ընդ իս ․ բայց ինձ եցոյց տր , զի փախստեայ լինիցիս , և մարմին քո հրով այրեսցի ․ և եղև այնպէս , զի վաղէս վանեալ 'ի գթաց՝ անկաւ 'ի մարագ մի յարդի ․ յոր

ԻՐ վա

վառեցին հուր Թշնամիք, և այրեցին զԹա-
գաւորն և զորս ը՟ նմա։ Այս ՚ի Թգ̃րել
մեծին Թէոդոսի՝ բայց եկեղեցիք ուղղա-
փառայ, և ազատեցան ո̃մ բանտարկեալք
և աքսորեալք ՚ի վաղիսէ. և իշխանքն սա-
տորնինոս և բիկտորոս՝ որք ՚ի պահ ունէին
զնքն սահակ, դարձան յուղղափառութ̃,
և ծառայէին սքն̃ ՚ի սենեակ մի առանձին,
զոր շինեցին նմա. ուր և կատարեաց նա
զաւուրս իւր ՚ի տր̃։ Հ. մայ. 29։ Յ. 30։

Սամոնաս տօնելի ընդ գուրիասայ. հա. Ն.
47։

Սամուէլ մարգարէ տօնելի հա. Պ. 273։

Սամուէլ (ը՟ յն. սավէլ կմ՟ շաբէլ), Մա-
նուէլ, և Իսմայէլ՝ երեք եղբարք պարսիկք՝
որդիք էին հօր մոգպետի, և մօր քրիստո-
նէի. յորմէ ուսան զքս̃. և դաստիարակեալ
՚ի ձեռս հաւատացեալ ներքինւոյ՝ սիրելի
էին յաչս շապհոյ արքայի. որ պահէր զնս̃
յարքունիս առանց նեղելոյ վս̃ հաւատոյ։
Իսկ իբրև պետք եղեն, յղեաց դեսպանութ̃
զերեսին եղբարքս առ յուլիանոս կայսր,
որում հանդիպեցան ՚ի քաղաքն քաղկե-
դոն. և տեսեալ զնա՝ զի եմուտ ՚ի մեհեանն
զոհել, ինքեանք կային արտաքոյ՝ աշխարե-
լով զյիմարութ̃ին հեթանոսական. վս̃ և ՚ի
հարցանել յուլիանոսի զնոսա՝ համարձակ
խոստովան եղեն զքրիստոնէութ̃ իւրեանց,
և նա հրամայեաց տանջել զնս̃։ Իսկ քաջն
Մանուէլ ցյուլիանոս. չի՞ք քո իշխանութ̃ ՚ի

վ̄ր մեր . տուր մեզ պնննի Թղթոյն դեսպանութե՛ , և երթիցուք ուստի առաքեցաքն առ քեզ ։ Եւ բռնաւորն չկարացեալ տանել համարձակութե՛ նր՛ ետ հարկանել բևեռս 'ի գլուխ նորա և 'ի Թիկունս . և ծակել զպճղունս երից եղբարց , և կախել և քերել և հրով խանձողել . ապա տարեալ զն̄ս 'ի կոստանդինուպօլիս՝ անդ եհատ զգլուխս նց ։ Եւ այս ևս գործ անզգամութե՛ յուլիանոսի եղև մի 'ի պատճառաց Թշնամութե՛ շապհոյ ը՛ նմա . և ինքն ուրացօղն խաղացեա՛ 'ի պատերազմ՝ սատակեցաւ 'ի պարսս ։

Ն . յունիս . 20 ։ Յ . Լ . 17 ։

Սայէն տօնելի ը՛ ազգայի . հտ . Ա . 211 ։

Սանդուխտ կոյս տօնելի ընդ Թադէի . հտ . Գ . 14 ։

Սարգիս զօրավար տօնելի . հտ . Ա . 3 ։

Սարգիս և Բագոս տօնելիք . հտ . Գ . 140 ։

Սեբաստիանոս քաջ զօրավար իտալացի՝ առ Դիոկղետիանոսիւ , որդի հօր նարբոնացւոյ և մօր միղոլեցւոյ , վ̄ս քաջալերելոյ ըն-վկայսն՝ կապեալ 'ի ցից մի նետահարեցաւ . և յետ մնալոյ ոչ մեռեալ՝ եկեալ եռինէ բարեպաշտ կին ում՝ բառնալ զմարմին սր̄յն , իբրև եգիտ զշունչ նր՛ 'ի նմա , տարաւ 'ի տուն , և դարմանեաց . ապա ողջացեալ սեբաստիանոս՝ յանդիման եղև կայսեր , և յանդիմանեաց զամպարշտութի՛ նր . ը՛ որ սքանչացեալ և ամօԹապարտեալ բռնաւորն՝ ետ գանել զվկայն չարաչար , մինչև եհան

զո-

զոգի , և զմարմինն ընկենուլ 'ի լռճակս : Նու լուսինա կին ա̅ծասէր ապրեալ 'ի սոյն տեսլեամբ՝ թաղեաց զնա ը̅ հրամանի նր̅ 'ի քնարանս վկայից . ուր և շինեցաւ եկեղեցի յանուն սոյն սեբաստիանոսի . որ է մին յեօթանց գլխաւոր եկեղեցեաց հռովմայ : Ի . յունվր . 20 :

Սեղբեստրոս հռովմայ հայրապետ տօնելի . հտ . Ր . 420 . և Ժ . 374 :

Սերգէոս . տես ընդ Նուգինեայ կուսի . և Սարգիս :

Սեւերիանոս սեբաստացի տօնելի . հտ . Ր . 94 :

Սեւերիանոս կմ̅ սևերոս սիդացի 'ի պամփիլեայ՝ զօրական առ դիոկղետիանոսիւ , աղաչէր զա̅ծ յաւուրս հալածմանց՝ արժանի լինել մարտիրոսութե̅ . և առեալ հրաման 'ի տեսլեան՝ գնաց առ հայրապետն Մեմնոս , և դարձոյց զնա 'ի քղ̅ . և եկե̅լ ը̅ նմա 'ի փիլիպուպօլիս թրակիոյ՝ հանդիպեցաւ լ̅ք վկայից , որք սրով և հրով նահատակեցան յապեղիանոս բդեշխէ : Սա կալաւ և զսեւերիանոս և զմեմնոս . և յետ հարուածոց գանից՝ եւ հանել երիս փոկս 'ի թիկանց սբ̅յն մեմնոսի . և խորտակեալ զանդամս նորա՝ էարկ 'ի հուր ը̅ այլ վկայսն : Իսկ զսբ̅ն սեւերիանոս քերեցին դահիճք չարաչար . և հրացուցեալ մստնոցս դերձակաց՝ անցուցին ը̅ մատունս նր̅ , և գօտի ածին ը̅ մէջ նր̅ զկամար շանթացեալ . յետոյ

պնդեալ 'ի մամուլս՝ կամէին սղոցել զնա 'ի գլխոյն և 'ի վայր. բայց յոչ գծել սղոցի 'ի սբն, հաւատային դահիճք 'ի քս. և այլք հատին զգլուխ վկային: ÷. ապր. 4, կմ 3:

Յ. Լ. օգոստ. 20:

Սէբ տօնելի ի նախահարս. հտ. Դ. 200:

Սեղուանոս աշակերտ տօնելի. տես Շիղա:

Սեղուանոս կմ սիւղիանոս եպս գաղայի, երբեմն զօրական, եղև քաջ հովիւ առ Դիոկղետիանոսիւ. և վասն լուսաւորելոյ զբազումս՝ կալան զնա բնակիչք կեսարիոյ պաղեստինու, և գանեցին և քերեցին մինչև ցոսկերս. և յետ թողլոյ առ ժամանակ մի 'ի մետաղս պղնձոյ՝ տեսեալ, թէ ոչ դադարէ և անդ ուսուցանել, սպանին նախ առաջի նորա զաշակերտեալսն նմին, և ապա հատին զգլուխ սբյ եպսին: ÷. Յ. Լ. մայ. 4:

Սեղուանոս կմ սեղուանէ սբ հայրն՝ սքանչելի գտաւ յամ առաքինութիս, ոչ փոքր 'ի շատէ յայտ առնեն գիրք հարանց վարուց: Նու-սա ինքն է ի յայսմաւուրս՝ ծերն այն, որ ետ զլաւագոյն մսղեղէնն իւր աղքատի. և խաբեբայն այն վաճառեաց զայն ի գինւոյ. և 'ի տրտմիլ ծերոյն ի այս՝ երևեցաւ նմա քս զգեցեալ զմսղեղէն նր. և 'ի պատմել նր զայս եղբարցն՝ այնուհետև ոչ առնէին ընտրութի աղքատաց. զի քս ի ունի՝ ում և տացի յանուն նր. ÷. մարտ. 11. և վարք հց:

Սեդոն սեւանաչէայ՝ մեծ և առաջին, տօնելի. հտ.

Հտ․ Օ․ 26 ։

Սիմէոն Սիւնակեաց Երկրորդ՝ փոքր կոչեցեալ , յանտիոքայ ասորւոց ՚ի Զ դարու առ յուստինիանոսիւ , որդի ամուլ ծնողաց՝ յովհաննու և մարթայի , պտուղ աղօթից՝ բարեխօսութ͞բ ամլորդւոյն սրբոյն յովհաննու մկրտչի , որ երևեցաւ մօր մանկանն , և նշանակեաց զանուն նր , և օրինադրեաց զ.ք͞ղ.քաւարութ նորին ։ Իբրև եղև սիմէոն վեցամեայ , կրօնաւորեցաւ ՚ի լեառն սելևկիայ ․ և ՚ի զարգանալն՝ բնակէր անտանելի ճգնութ͞բ զամս բազում ՚ի վր երից այլևայլ սեանց , յորոց մին էր վեմբարձրացեալ ՚ի սքանչելի կոչեցեալ լերին ․ և եղև արժանի տեսանել զք͞ս ․ և նշանագործութ͞բ բժշկէր զմ͞մ ցաւս ։ Յետ ն͞մի հրամանաւ ա͞ն ձեռնադրի քահանայ յեպսկն սելևկիոյ ․ և զկնի մատուցանելոյ զպ͞տ պատարագն ահիւ և դողութ͞բ՝ ընկալաւ զյայտնութ͞ի փոխելոյ առ ա͞ծ յետ աւուրց տասանց ․ և այնպէս գնաց առ անձկալին իւր՝ հէ , կմ ձէ ամաց ։ Ն․ մայ․ 26 ։ Յ․ մայ․ 23 ։ Լ․ սեպտ․ 3 ։ Յիշի և այլ սիմէոն եր͞դ ՚ի Յ․ ժմ․ յուլ․ 26 ։

Սիմէոն ծերունի , և Աննա մարգարէ , և Եղիսաբեթ մայրն յովհաննու կարապետի յիշին ՚ի միասին ․ ՚ի Ն․ յունիս․ 10 ։ տես և ՚ի Յ․ փետր․ 3 ։ և Լ․ սեպտ․ 1 ։ հոկտ․ 8 ։ և նոյ․ 5 ։

Սիմէոն կմ սիմոն առաքեալ , և Յովհաննէս ճգնաւոր գործակից նր՝ էին եմեսացիք կմ եդեսա.

սացիք յաւուրս յուստինոսի կայսեր, որք յետ
շրջելոյ միաբանն յուխտս եկին և 'ի վանորայս
ձգնեցան յանապատի զամս քառասուն: Յետ
այնորիկ սիմէոն ազդմամբն այ դարձ արա-
բեալ յեէմ՝ յիմար ձևացոյց զինքն վն քնի,
կոչեցեալ յամենեցունց սալոս, որ այլուաշ-
և յանձն առեալ զնմ նախատինս և զգանս՝
ձգէր ճարտարութբ վրավուսմ առ ած,
հանդերձ հրաշագործութբ. և լինքն միան-
գամ յեօթնեկի ճաշակէր՝ 'ի ծածուկ ձըդ-
նեալ: Երկու աւուրք յառաջ քան զմահն
յայտնեաց ած յովհաննու ումեմն սարկա-
ւագի՝ թէ բազում պսակք պատրաստեալ
են սիմէոնի. և իբրև աղաչեաց նա զսար-
կաւագն՝ մի ումեք ասել զայն յառաջ քան
զթաղումն, փոխեցաւ առ տր, և երկու աղ-
քատք տարան զնա 'ի թաղել. բայց հրեշ-
տակք փառօք յուղարկաւոր եղեն նմա, զոր
և ետես ապակագործ հրէայն՝ որ 'ի ձեռն
սրբյն եկեալ էր 'ի հաւատս քնի: Իսկ ընկեր
սիմէոնի յովհաննէս յանապատի լցեալ զա-
ւուրս իւր՝ էառ զպսակ անապատաւորաց.
որպ յայտնեցաւ յովհաննու սարկաւագի:

Յ. յուլ. 21: Ի. 1. և 21:

Սեդոն հայկազունն՝ միայնակեաց սքանչելա-
գործ՝ ժմկակից նարեկացւոյն, էր որդի ու-
րումն 'ի նախարարաց հայոց Յին, անդրա-
տին 'ի մանկութէ պաշտօնասէր և հոգեսէր.
որ և բանի մուծեալ 'ի կարգ Յի՝ յաւուր
անդ հալածեաց խոյս ետ որպ զալէքսիա-
նոս

նոս 'ի տանէ ծնողացն, յամի տն իբր 986.
և 'ի Թուոյն Հայոց · ՆԼԵ, և առանձնացաւ
յանապատն երասխաձորոյ յերկրին արշա-
րունեաց՝ երկու ընկերօք, խարազնազգեաց
ճգնութբ և խոտաբուտ կենօք. մինչև տուաւ
նմա շնորհ սքանչելագործութե. որով յա-
րոյց 'ի մեռելոց և զաշակերտ իւր զստեփա-
նոս : Նա յետոյ փախուցեալ 'ի փառաց
անուան իւրոյ՝ մեկնեցաւ 'ի հայրենի Տէն
պատճառանօք ուխտագնացութեան, յամի
1010. բայց և յեէմ յայտնի եղև անուն նր՝
բժշկութբ հիւանդաց և դիւահարաց. վմ
դիմեաց յարևմուտս առ 'ի մնալ անծանօթ.
և եկեալ 'ի հռովմ յամի 1012. յետ այց առ-
նելոյ նշխարաց սր առաքելոց, յաղօթելն
ուխկ 'ի վկայարանի սրյն յովհաննու մկրտչի՝
Թշնամանեալ 'ի կղերիկոսէ ումեմնէ իբրև
Թափառական ոք օտար և այլահաւատ,
Թարգմանիւ յայտնի կայոյց երանելին յա-
տենի քահանայապետին զուղղափառուին իւր.
և պապն սիրեաց զնա յոյժ և գգուեաց, քզի
տեսանէր զշնորհս այ 'ի դէմս սրյն. մանա-
ւանդ զի 'ի նմին պահու այսահարեալ էր
չարախօսն, և աղօթիւք սրյն բուժեալ: Եւ
յայնմ օրէ գային առ սիմէոն բազում հի-
ւանդք. և նա բժշկէր անուամբ տն զամե-
նեսին : Նա 'ի փառաւորել իւրում խոյս
ետ 'ի հռովմայ. և անցեալ ընդ երկիրն Թոսկա-
նայ՝ արար բազմապատիկ նշանս, մինչև լու-
սաւորել զկոյրս, և զնացուցանել զկաղս.

ոտն և յերթալն 'ի սպանիա՝ եբաց զաչս կու-
րի միոյ, և բժշկեաց զայսահար դուստր առ-
քային: Շրջեալ և ը բրիտանիա և ը գաղ-
ղիա՝ միշտ փախչելով 'ի փառաց, որ ընթա-
նային զհետ նր, եկն զտեղի կալաւ 'ի սահ-
մանս մանդուայ քաղաքի իտալիոյ՝ 'ի պա-
դոլիւան վանս բենեդիկտեանց. ուր եղև
սքանչելի օրինակ վանականաց, որք հայէին
'ի նա իբրև 'ի հրեշտակ 'ի մարմնի, տեսա-
նելով զքաղցր և զհեզահամբոյր քաղաքա-
վարութի սբյն՝ զոյգ ը խստակրօն ճգնութե
պահոց և աղօթից, ոչ ինչ ը հատ 'ի նախնի
հարց սբց անապատաւորաց. թող և զնշանսն՝
որոց եղեն ականատես բզմ անգամ՝ մանդ-
ուայիք առ հասարակ: 'Ի նոյն վանս վախ-
ճանեցաւ և թաղեցաւ այրն այ սիմէոն՝
կենդանի սբն և ճգնաւոր նահատակն, յա-
մի 1016. նկե. 'ի յուլիսի 26. և եղեն 'ի տա-
պանէ նր անհամար սքանչելիք. վմյ և քա-
հանայապետ ժմկին եհան կոնդակ վր կա-
տարելոյ զյիշատակ տօնի սբյն. զոր և հաս-
տատեցին յաջորդ քահանայապետք: Տես
և 'ի պատմ. հյ. հտ. բ. երես. 860 = 865:

Ի. յուլիսի. 26:

Սեմոն. տես Սիմէոն, և Շմաւոն:

Սենփնէոս ծերունին, որ և Նուսիդնիոս աստ-
րի՝ անտիոքացի, էր քաջ զօրական և զօրա-
վար կոստասայ հօր կոստանդիանոսի. առ
որով հաւատացեալ՝ եկաց ցաւուրս յուլիա-
նոսի ուրացողի. յորմէ ստիպեալ 'ի զոհ կռոց՝
յան-

յանդիմանեաց զանո՟ծ մոլորութի նորա. ասէ. սբն կոստանդիանոս դարձաւ 'ի կռոց առ ք՟ս ա՟ծ ճշմարիտ. իսկ դու 'ի քնէ դարձար յետս 'ի կուռս: Յայնժամ ուրացօղն ետ բրածեծ առնել զպատուական ծերունին՝ որ էր ՃԺ ամաց. և յետ բանտից և կապանաց գլխատեաց. իսկ եւստաքէոս զաղտ թաղեաց զնա, և գրեաց զպատմութի նր. և նոյն ինքն եւսիգնիոս ասի աւանդեալ գրով և բանիւ զանցս ժմկին: Ն. յուլ. 4: Յ. Լ. օգոստ. 5:

Սեւերիանոս և Սեւերոյէ տօնելի ընդ ճգնաւորս. Հտ. Ա. 287:

Սերգեոս կմ Նաբերգեոս անապատական ճգնաւոր 'ի քաղաքէն անդրապիոյ՝ յարմենիակաց գաւառէ 'ի փոքրն հայս, զառաջինն դիմել 'ի լեառն մի անապատին՝ հանդիպեցաւ երկուց դիւահարաց յովհաննու և իլարիոնի, և բժշկեաց զնոսա. և յետ ճգնելոյ յերկար և փայլելոյ սքանչելեօք՝ շինեաց 'ի ստորոտս լերին առ ջրով զեկեղեցի սբն անդրէի, և վանս արանց և կանանց. և ամնով յառաջ ծանեաւ 'ի ձեռն հրեշտակի զվախճան իւր. և 'ի գիշերի աւանդման հոգւոյն՝ ծագեաց լոյս մեծ 'ի վը նր: Յետ ժամանակաց յաւուրս կոստանդեայ և եւինեայ մարմին սբյն բերբէ՟ճ եդաւ յեկեղեցւոջ ամասիոյ 'ի ձեռն եպսի: Ն. յունիս. 7: Յ. մայ. 10. տե՛ս և Նիւսիքոս. և Սուքիաս:

Սքոլաստիկէ. տե՛ս ի Բենեդիկտոսի:

Սքէա

Սմբատ Նահատակ՝ արքայ Հայոց Բագրատունի՝ որդի Աշոտոյ առաջնոյ, թագաւորեալ յամի 890. ՅԼԹ. փայլեաց յոյժ հանդերձ քաջութեամբ և աստուածպաշտութեամբ 'ի ժամանակս խռովութեան ազգին Հայոց. զի որչափ յաճախէին նեղութիւնք 'ի վերայ նորա յարտաքին և 'ի ներքին թշնամեաց, նա սքանչելի համբերութեամբ և արիութեամբ յոյժ ապաւինեալ՝ գտանէր ելս իրաց, և էր անոխակալ առ չարարարս իւր, և բարերար առ ամենեսին. փոյթ 'ի շինութիւն եկեղեցեաց, և յորդոր բարեաց ամենեցուն՝ օրինակաւ իւրով: Այս աստուածասէր թագաւոր յետ բազում մեծամեծ գործոյ՝ անմահական յիշատակաց արժանի գործ գործեաց՝ դնելով զանձն 'ի վերայ հօտին իւրոյ նմանութեամբ քաջ հովուի. զի 'ի պաշարիլ ամրոցին Կապուտայ 'ի Յուսփայ ոստիկանէ 'ի պատճառս իւր, յորժամ կոտորած լինէր բազմաց 'ի քրիստոնէից՝ առաւել 'ի բանակի, ասէ. լաւ է թէ ես մեռայց, քան թէ կորիցէ այսչափ ժողովուրդ իմ. և վասնորոյ արժանի եղև և փառաւոր պսակի մարտիրոսութեան: Քանզի իբրև մատնեաց զանձն 'ի ձեռս Յուսփայ, նա թէպէտև 'ի սկզբան առ երեսս պատուեաց զարքայ, և եթող յընդարձակի, բայց յետոյ կալեալ նենգաւ՝ էարկ շղթայիւք 'ի խաւարային բանտ Դուին քաղաքի, սովու և ծարաւու տանջեալ, զի թերևս յանձն առցէ ուրանալ զՔրիստոս: Նա ապա տարեալ կապանօք ընդ իւր 'ի Գողթն գաւառ յանդիման ամրոցին Երնջակայ, կարգեաց

գեաց դահճին 'ի վ՟ր՟՝ յայտնապէս ստիպել զթ՟գ՟րն յուրացութի՟. իսկ երանելին նահատակն եկաց մնաց հաստատուն 'ի ք՟ս՟, և հալորդել ն՟ս՟ խորհրդոյն 'ի քհնյէ ծպտելոյ՝ առաւել զօրացաւ։ Ապա յետ բ՟զ՟մ կտտանաց և ճաղանաց և ճաղկանաց առեալ դահճաց զթաշկինակ ս՟ր՟յն՝ մխեցին ընդ բերանն, և ընչարգել առնէին. և արկեալ գելարանս 'ի կզակս ն՟ր՟՝ պնդեցին ը՟ պարանոցն. և եդեալ բեռն ծանր 'ի վ՟ր՟ գլխոյն՝ արք տասն անկանէին 'ի վ՟ր՟ ն՟ր՟, ճմլել և խեղդամահ առնել զնա. ետուն և զայլ քստմնելի տանջանս՝ մաշելով փայտ սրեալ ը՟ անդամս ն՟ր՟. և մինչդեռ շունչ նորա 'ի նմա էր՝ հատին զգլուխ ս՟ր՟յն. և զմնացեալ մարմին ն՟ր՟ բերեալ 'ի դուռն՝ բևեռեցին 'ի փայտ խաչի։ Իսկ ա՟ծ փառաւորեաց զպանծալի վկայն իւր՝ ծագելով լոյս պայծառ 'ի վ՟ր՟ մարմնոյ ն՟ր՟, և տալով շնորհս բժշկութեան հողոյն՝ ուր հեղաւ արիւն ն՟ր՟ պատուականն. մինչև դառնալ և ոմանց յայլազգեաց 'ի ն՟ս՟ հաւատս. և այս եղև յամի 914. յկզ։ ապր. 16։ Ընդ ս՟ր՟յն սմբատայ արքայի յիշատակին և այլ բազմութիւնք վկայից, զորս նահատակեաց յուսուփ ոստիկանն 'ի հայս. որ և արքանեակ ն՟ր՟ նըսր յառաման բիւրական ամիրոյցին. զորոց տե՟ս 'ի պատմ. հայոց. գիրք. գ. գլ. ժե. և իզ։

Սմբատ Բագրատունի մարզպան՝ բազմայաղթն կոչեցեալ յաւուրս մօրկայ և խոսրովու, յետ

առա

առաքինի գործոց վախճանի 'ի Տիզբոն յա-
մի 601. Ծ. և մարմին նորա բերեալ 'ի Հայս՝
Թաղեցաւ 'ի Դարօնս ։ Յ. Հոկտ. 26 ։ տես
պատմ. Հյ. հատ. Բ. 297 = 307 ։

**Սմբատ սպարապետ** բագրատունի՝ աբլաբաս կոչեցեալ, և խոստովանօղ մականուանեալ, վախճանի 'ի բանտ բաղտատու. յամի 855. ՅԴ. և միով ամաւ յառաջ նահատակի անդ անտանելի չարչարանօք արին Ստեփաննոս կոն ։ Յ. մարտ. 3. զորոց տես պատմ. Հյ.
հատ. Բ. 451. 452 ։

**Սոզոն** լիկեացի [?] կամ կիլիկեցի 'ի պոմպէուպօլսոյ՝ հովիւ խաշանց. որ 'ի հալածանս Մաքսիմիանոսի՝ 'ի ննջելն Ը կաղնեաւ առ աղբեր ջրոյ՝ յայտնութ. ընկալեալ յԱյ, սկսաւ շրջիլ և քարոզել զՔս, և շնորհօքն Այ դարձոյց զբազումս 'ի բնակչաց տեղւոյն։ Յաւուր միում գաղտ բարձեալ 'ի մեհենէ զոսկի ձեռն կռոյ՝ մանրեաց և ետ աղքատաց. և յըմբռնել քրմին զայլս իբրև գող՝ Սոզոն յայտնեաց զանձն, և յայտնապէս խոստովան եղև զՔս Աստ առաջի Մաքսիմոսի իշխանի ։ Նա ագուցին յոտս երանելւոյն կօշիկս երկաթիս և բևեռեցին, և ընթացուցեալ մինչև 'ի տեղի մի՝ ուր կայր ծառ եղջերենի, կախեցին ընդ այն զվկայն, և գան հարին՝ մինչև եհան զոգի. և զմարմինն 'ի հուր արկին. այլ 'ի լինել անձրևի՝ եկին և բարձին զայն քրիստոնեայք ։ Յ. սեպտ.
11 ։ Յ. Ն. սեպտ. 7 ։

Սոէ.

Սոկրատէս քահանայ եկեղեցւոյն անկիւրիոյ՝ էր 'ի հալածանս աղեքսանդրոսի կայսեր կի՟ դատաւորի, այր ա՟ծապաշտ, և նախանձաւոր փառացն ա՟յ․ որոյ տեսեալ վխայտալ հեթանոսաց 'ի տօնի կռոց՝ կործանեաց զսեղան զոհից ն՟ց․ վ՟յ կալան զերանելին, և հատին զգլուխ ն՟ր։ Ընդ նմին նահատակեցաւ և բազմաչարչար սրբուհին Թէոդոտա կի՟ Թէոդոսիա, որ էր պոնտացի կրօնաւոր կուսան, տանջեալ վ՟ա անուանն ք՟սի նախ 'ի գաւառի իւրում քերանօք, և ազատեալ տ՟է 'ի հնոցէ հրոյն․ և ապա 'ի բիւզանդիոն յղեալ, և անտի յանկիւրիա․ ուր յետ ապրելոյ 'ի կաթսայէ եռացեալ ձիթոյ՝ գլխատեցաւ ընդ ս՟րյն սոկրատայ։ Ն․ հոկտ․ 16։

Յ․ հոկտ․ 29։

Սուքիասեանք վկայք տօնելիք․ հտ․ Բ․ 90։

Սուքիա, և երեք դստերք ն՟ր տօնելիք․ հտ․ Գ․ 398։

Սոփոնիա մարգարէ տօնելի․ հտ․ Գ․ 314։

Սպեւսիպպոս, Ելասիպպոս, և Մեղեսիպպոս՝ եռածորեակ եղբարք 'ի կապադովկիոյ կամ 'ի լինգոնայ առ մարկոսիւ որելիոսիւ, էին ձիավարժ ծառայք հեթանոս տ՟րանց․ ո՟չ և ինքեանք կռապաշտ էին․ բայց հանի ն՟ց Լէոնիլլա՝ որ էր քրիստոնեայ, հրաւիրեալ 'ի նոյանէ 'ի կոչունս՝ զոր առնէին 'ի պատիւ դիցն արամազդայ, խրատեաց զն՟ս 'ի բաց կալ 'ի մոլորութ՟է փայտեղէն և քարեղէն դրօշելոց․ և ն՟ք նոյնժամայն խոստակեցին

զար-

վարժանս կռոց, և զգլուխս նց արկին 'ի կերա-
կուր շանց ։ Զայն իմացեալ տրանց նոցա՝
տանջեցին զնա քերանօք. և ոչ կարացեալ
շրջել զմիտս նց 'ի քսէ՝ արկին զերեսեանն
'ի հուր. իսկ զհանի նց գլխատեցին է կնոջ
միում հաւատացելոյ, որ կոչիւր Յուլիտա
կիմ յուլիանէ, և է Տուրբոնի նօտարի, որոյ
կործանեալ էր զայլ կուռս ։ Հ. յունվր. 29,
կիմ 26 ։ Յ. Լ. յնվ. 17 ։

Սպիրիդոն կամ սպիրիդիոն սքանչելագործ
հայրապետ՝ էր կիպրացի հովիւ ոչխարաց,
յետ մեռանելոյ կնոջն ընտրեալ եպս տրի-
միթունեայ քաղաքին կիպրոսի, զի էր այր
աննենգ և ճշմարիտ ա̃ծապաշտ, հեզ և խո-
նարհ ։ Սա եղև մի 'ի հարց յժը ժողովոյն նի-
կիոյ խոստովանողական պատուով. զի էր 'ի
թուոյ նց՝ որք 'ի միոյ ականէ զրկեալ առա-
քեցան 'ի մետաղս 'ի հալածանս մաքսիմիա-
նոսի. և 'ի ժողովի անդ անուամբն քսի պա-
պանձեցոյց զհեթանոս փիլիսոփայն, և
դարձոյց 'ի սբ հաւատս ։ Ունէր և զհոգի
մարգարէութե, և զշնորհս սքանչելեաց.
որով յերաշտի անձրև էած աղօթիւք, և 'ի
սովու առատացոյց զցորեան ։ 'Ի պէտս ու-
րուք նեղելոյ 'ի ձեռաց պարտատիրն դար-
ձոյց և զօձ մի յոսկի, և յետ շահելոյ առն և
վճարելոյ զփոխն՝ փոխարկեաց անդրէն զոս-
կին՝ որ էր 'ի գրաւի, յօձ ։ Սն ազատելոյ
զանմեղ ոք 'ի մահուանէ՝ կասեցոյց զըն-
թացս գետոյն, զի փութով հասցէ յօգնու-
թի ։

թն ։ Նա 'ի խնդրել կնոջ միոյ զզարդս ոսկիս՝ զոր տուեալ էր Երինեայ դստեր սրբոյն Սպիրիդոնի, կարդայ երանելին զմեռեալ դուստր իւր յանուանէ. և նա 'ի գերեզմանէ ձայն տուեալ՝ յայտնեաց զտեղի պահելոյ զարդուցն ։ Արար ևս հայրապետն և այլ գործս նշանաւորս. և լի աւուրբք և արդեամբք հանգեաւ 'ի Քրիստոս. որ և անապական սքանչելեօք փայլէ ցարդ 'ի Կորկիւրա (որ 'ի Քօրֆու), ուր կայ մարմին նորա ։ Յ. Դեկտ. 16 ։ Յ. և որ իէլ. Դեկտեմ. 12 ։ Լ. Դեկտ. 14 ։

Ստանիսլաւոս Քօստքա՝ 'ի տանէ ծերակուտին Պողոնիոյ ազ̃ Լեհաց, 'ի մանկութենէ վառեալ 'ի սէր աստուածպաշտութեան՝ էր մաքուր վարուք. երթեալ 'ի Վիեննա Աւստրիոյ վասն ուսման՝ հարկեցաւ օթևանս ունել 'ի տան լութերականաց ընդ եղբօր իւրում Պօղոսի, որ աշխարհասէր գոլով՝ կամէր և զՍտանիսլաւոս ձգել 'ի թուլամորթ կեանս. և լուեալ 'ի նմանէ՝ թէ ես վասն յաւիտենից կենաց եմ ծնեալ, և ոչ վասն անցաւորիս, բազմօք նեղէր զնա. յորմէ յոգւոյ խոցեալ Ստանիսլաւոսի՝ միանգամայն և 'ի ծածուկ ճգնութեանց իւրոց վտանգեալ՝ անկաւ 'ի մահիճս մահու. այլ յոյս նորա էր 'ի սուրբ Աստուածածինն՝ զոր քաղցրիկ իւր մայր անուանէր. որով զօրացեալ՝ վանեաց նշանաւ խաչի և զսատանայ զյարձակեալն երիցս 'ի վերայ նորա որպէս շուն կատաղի ։ Ի ցանկալ Ստանիսլաւոսի հաղորդիլ սուրբ խորհրդոյն 'ի վեր-

ջին

ջին Թօշակ, որովհետեւ ոչ ոք բերէր նմա
գայն յայնպիսի բնակութե, հրեշտակ մն
հաղորդեաց զնա. այսպ արժանացեալ տե-
սանել եւ զմն 'ի գիրկս տիրամօր, որ խրատ
տայր նմա մտանել 'ի կարգ յիսուեանց, իսկ եւ
իսկ առողջացաւ. եւ ծպտեալ 'ի կերպարանս
մուրացիկ պանդխտի՝ խոյս ետ 'ի գերմա-
նիոյ. եւ 'ի Ճանապարհի դարձեալ ընկալեալ
զհաց հրեշտակաց 'ի ձեռաց հրեշտակի,
սքանչելապէս եհաս 'ի հռոմ, եւ 'ի սրբյն
Ֆրանչիսկոսէ պօրճեան յընդհանրական մե-
ծաւորէ յիսուեանց սիրով ընկալեալ եղեւ յայն
կրօն։ Այնուհետեւ սբ պատանին ստանիս-
լաւոս քաղաքավարէր իբրեւ հրեշտակ 'ի
մարմնի՝ յառաջադէմ եղեւ յոյժ առաքի-
նութիւս կրօնաւորական կարգի. այլ առա-
ւել բորբոքեցաւ 'ի սէրն այ, մինչեւ արտա-
քուստ եւս բոցափայլ երեւէին դէմք նր. եւ
'ի ձմերանի անգամ պէտք լինէին բանալ
զկուրծս՝ զի հովասցի փոքր մի 'ի սառնացեալ
օդոյ. եւ ոչ դոյր չափ արտասուաց նորա 'ի
կարօտոյ սիրոյն այ. որով եւ հալեալ՝ փոխե-
ցաւ յերկինս 'ի վիճակի նորընծայութե ան-
մեղ պատանեակն ութեւտասնամեայ. եւ
պայծառացաւ սքանչելեօք, երեւելով յօգն
յաղթութե բանակի քրիստոնէից եւ 'ի պահ-
պանութի 'ի ժանտամահէ եւ 'ի հրոյ։ Լ։

Նոյեմբ. 13։

Ստանիսլաւոս պօղոնիացի 'ի գրագովայ՝ եպս
նորին քաղաքի, այր առաքինի եւ սրբակրօն,

մծ յանդիմանելոյ զարքայն լեհաց զբոլես-լաւոս երկրորդ՝ որ բանի յափշտակեալ էր զկին օտարի, կոչեցաւ 'ի նմանէ յատեան՝ պատճառանօք սուտութե, որպէս թէ եպսն յափշտակեալ իցէ զանդս ուրուք. և սբն ետ պխնի՝ թէ ես գնոց առի զայն 'ի տնէն՝ որոյ անուն կոչիւր պետրոս, և ահա երեք ամք են՝ զի վախճանեալ է այրն. այլ եթէ կամիս՝ յետ երից աւուրց ածից զնա առաջի քո 'ի վկայութի։ Եւ յընդունել թգւորին զայն պայման ծաղրելով, եպսն ձգնեցաւ 'ի պահս և յաղօթս զաւուրս երիս. և ապա յետ պատարագին կոչեաց զպետրոս և յարոյց 'ի գերեզմանէն. որ և եկն յատեան թգրին և վկայեաց, թէ վաճառեալ է իմ զանդս, և առեալ զգինս յեպսէ. և ինքն անդրէն ննջեաց։ Զահի հարաւ թգւորն. բայց ոչ դարձաւ 'ի չար ճանապարհաց իւրոց. մծ և ստանիսլաւոս ընդ բանիւ արար զնա. ընդ որ սրտմտեալ թգւորն՝ առաքեաց զօրականս սպանանել զեպսն յեկեղեցւոջ. և իբրև արգելան նքա աներևոյթ զօրութե, ինքնին թգրն գնաց և ձեռօք իւրովք սրախողխող արար զսբն. և հրաման ետ մանր կտրատել զմարմին նորա, և ընկենուլ յերեսս դաշտի. որ անվնաս պահեցան 'ի թռչնոց և 'ի գազանաց՝ սքանչելի նշանօք ամփոփեցաւ 'ի գղերց եկեղեցւոյ. և միացան ամ մասունքն 'ի մարմին մի. թող զայլ հրաշս սբյն զկնի։ Եւ եղև նահատակութի սբյն

ստանիսլաւոսի յամի 1077. 'ի մատրան սրբոյն միքայելի ։ Լ. մայիս. 7 ։

ՍՏԵՓԱՆԷ. տես Ը Վիկտորի ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ տօնելի. Հտ. Ա. 263 ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՀՌՈՎՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ տօնելի. Հատ. Բ. 144 ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՈՒՆԳՐԵՑԻ տօնելի. Հտ. Գ. 62 ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՏԱՄԵՏՑԻ 'ի վասպուրական Տէր՝ որդի բարեպաշտ երիցու մ̃ր յուսիկ կոչեցելոյ, փայլեաց առաքինութ̃բ և նշանագործութ̃բ 'ի մանկութ̃է ։ 'Ի ժամանակի սովու բաշխեաց աղքատաց զցորեանն աղացեալ վ̃ն տան իւրոյ, և լցեալ զդատարկ պարկն մոխրով և աւազով՝ էքեր 'ի տուն. և գտաւ ալիւր պատուական. իսկ ինքն դեմ եդեալ գնայ յարգելան՝ ասացեալ վանս բերկրուոյ, և կրօնաւորեցաւ ։ Ապա եղև քահանայ՝ 'ի մատուցանել զառաջին պատարագն վասն հոգւոյ տիկնոջ ուրումն բիբէ կոչեցելոյ, ետես տեսիլ սքանչելի. որպէս թէ կայր ինքն յեզր ծովու արեան, յոր անկեալ էր բիբէ. և յաղօթել իւրում հանանա 'ի ցամաք ։ Իսկ յայնմհետէ սոսկացեալ ստեփաննոսի 'ի մեծութ̃է քահանայական պաշտաման՝ ոչ իշխեաց յանձն առնուլ պատարագել. քանզի ասէր, արեան ծովուն չեմ բաւական ։ Ապա հարկեալ ընկալաւ զպաշտօն վ̃դպութ̃ե, և քարոզէր հոգելից և յորդառատ բանիւք. մինչև կատարեաց զա̃ծահաճոյ կեանս իւր 'ի վանս անդ արգելա.

լանոյ՝ յամի Փր̃ 1251 · Չ· և ծաղկեցաւ սքանչելեօք նաև յետ մահուն : Տօ· յուն-վար · 3 :

Ստեփաննոս եպիսկոպոս սեբաստիոյ՝ առաջնորդ սբ̃ նշանի վանացն՝ էր այր առաքինի , և զօրաւոր հոգւով և մարմնով · յորոյ վր̃ բա-րուբանս եղեն բուրհանադին ամիրայն սե-բաստիոյ՝ ոմ̃ թէ խորհրդակից էյէ զօրաց ապստամբելոց յիւրմէ , եւ բերել զնա ա-ռաջի իւր · եկին և երկու ծերադոյն աբե-ղայք Սեղբեստրոս և Թորոս : Եւ իբրև ոչ եգիտ ՚ի նմա վնաս ինչ , ստիպէր զնա ուրա-նալ զքս̃ , և ազատիլ ՚ի մահուանէ · իսկ նա առ ոչինչ գրեալ զսպառնալիս և զխոստմունս նր̃՝ զուարթամիտ յանձն առին մեռանիլ վս̃ անուանն յս̃ · վս̃յ ել հրաման գլխատման : Եւ հար դահիճն երիցս զպարանոց եպսին , և ոչ կարաց հատանել · ապա քարշեալ զնա չորից արանց զձեռաց և զոտից՝ հարին սու-սերօք , և յերկուս հերձին ը̃ մէջս · յետոյ հատին և զգլուխս երկուց աբեղայից : Եւ յարկանել զմարմինս երանելեացն ՚ի մէջ դիականց այլոց մահապարտից՝ լոյսն երկն-առաք որոշեաց զմարմինս սր̃ց յանսր̃ց · և հաւատացեալքն եկեալ գողացան և ամփո-փեցին զպատուական նշխարս վկայիցն՝ յա-մի · 1387 · պլզ : Տօ· յունիս , 23 , կմ̃ 26 :

Ստեփաննոս ճգնաւոր խարազնազգեաց՝ փոքր , կմ̃ նոր վկայ կոչեցեալ , էր միայնացեալ ՚ի չորային լերին բիւթանիոյ՝ որ կոչի ոքսիա ,

կիմ սր̃յն օքսենտի, յաւուրս հալածանաց կոպ-
րոնիմոսի կաւալինոսի ը̃դէմ ո̃ր պատկե-
րաց. և բազումք յուղղափառաց թաքչէին
'ի լերինս, և ոմանք անկեա̃լ 'ի վանս ճգնա-
ւորին ստեփաննոսի՝ կրօնաւորէին: Նա և իբ-
րև յղեաց թգ̃րն առ ստեփաննոս զհամա-
խոհս իւր՝ միաբանիլ 'ի մոլորութե̃ պատկե-
րամարտից, նա ամօթով դարձոյց զնս̃. վ̃ոյ
կալան և ածին զնա անարգանօք յատեան
արքայի. ուր երանելին ջատագովեաց զպա-
տիւ̃ ո̃ր պատկերաց բանիւք հարցն ս̃բց. և
'ի ցուցանել՝ թէ անարգութե̃ պատկերին է
անարգանք սկզբնատիպին, ընկէց 'ի գետին
զդրամ մի՝ յորում կայր պատկեր թագա-
ւորին, և կոխոտեաց: Յայնժամ հարին
դահիճք զնա̃ն աքացի և բռնցի, փայտի̃ և
քարամբք. և տարեա̃լ արկին 'ի բանտ. այլ
նա՝ և անդ քարոզէր զճշմարտութի̃ն. վ̃ոյ
հանեա̃լ արտաքս՝ քարշեցին ը̃ գետին. մին-
չև հարեա̃լ հաստ բրով ը̃ գագաթն՝ աւան-
դեաց զոգին: Ն̇. դեկտ. 5: ո̃ր իէլ. նոյ.
29: Յ. Ա. նոյ. 28: Ընդ նմին կատարե-
ցան և երկու աբեղայք Պետրոս և Ա.թա-
նաս կի̃մ անդրէաս ջատագովք ո̃ր պատկե-
րաց. թող և զայլ նահատակեալս 'ի նոյն
հալածանս: Յիշի առ յոյնս 'ի մարտի 27.
միւս ևս Ստեփաննոս խոստովանող՝ հայր
վանաց Թրիլէայու, վախճանեալ յաքսորս
յաւուրս լևոնի արծրունւոյ՝ վ̃ս պաշտպա-
նութե̃ ո̃ր պատկերաց:

Ստեփաննոս թագաւոր հունգարաց ծն̃ մաճա-
ռայ, յաջորդեալ հօր իւրում գէյզէի՝ եղե-
առաջին քրիստոնեայ թգ̃ր այնր տ̃րութե̃
յամի տ̃ն 997. և ծաղկեցոյց անդ զքրիս-
տոնէութի̃, և շինեաց բազում եկեղեցիս
և վանորայս և տեղիս բարեպաշտութե̃. էր
աղքատասէր յոյժ, և ծառայէր անձամբ
հիւանդաց. նոյնպէս և աղօթասէր առա-
ւել՝ մինչև յափշտակիլ արտաքոյ իւր, և
երևիլ նաև վերացեալ յերկրէ. կրթեաց
զորդի իւր եմերիկոս յա̃ծպաշտութե̃, մին-
չև լինել և նմա 'ի կարգի սր̃ց. և զժողո-
վուրդն կառավարեաց ա̃մ արդարութբ̃ և
ուղղութբ̃, և առաջնորդեաց 'ի ճշմարիտ
հաւատս և 'ի վարս բարիս, մինչև կոչիլ ա-
ռաքեալ հունգարիոյ. ջերմեռանդն էր յոյժ
առ սր̃բ ա̃ծածինն, զոր անուանեաց պաշտ-
պան և տիրուհի տ̃րութե̃ իւրոյ. և փախճա-
նեցաւ սրբութբ̃ 'ի պուտա՝ յամի 1038, յա-
ւուր վերափոխման կուսին յօգոստ. ժե̃:

Լ. սեպտ. 2:

Սերապոն կամ՝ ստրատոնիկոս, Փիլիպպոս, և
Եւտիքիանոս՝ մտեալ 'ի թէատրոն հեթանո-
սաց 'ի նիկոմիդիա՝ քարոզեցին և դարձու-
ցին զբազումս յանարժան խաղուց և 'ի մո-
լորութե̃ կռոց. իսկ իշխանն կալաւ զն̃ս, և
ոչ կարացեալ ձգել 'ի կոհս դից իւրոց, եարկ
զվ̃կայս առաջի գազանաց. յորոց պահեալ
կատարեցան հրով 'ի մէջ հնոցին: Յ. օգ.
28: Յ. Լ. 17: Նուոր. ասորի:

Սրապիոն ճգնաւոր տօնելի . հտ . Բ . 292 :
Սրապիոն Հնոյ յաւուրս սեւերոսի կայսեր 'ի Է դարու՝ ըմբռնեալ յակիւղաս իշխանէ , և ոչ հաւանեալ ուրանալ զՔս՝ կործանեցաւ ոտիւք կկուս , վս յետ գանից և քերանաց արկաւ 'ի բանտ . ուր ողջացեալ Տէր՝ զբազումս ձգեաց 'ի հաւատս . և կատարեցաւ այրմամբ 'ի հուր : ÷ . յուլ . 6 , կմ 11 : Յ.
Ի . 13 :

Սօսան և Բուղան կուսանք հարազատ քորք 'ի տոռոմենայ սինկլիտոյ՝ չարչարեալք վն քնի յիլիդոսէ իշխանէ, սովու և ծարաւու 'ի բանտի՝ կատարին սրով : ÷ . յունիս . 7 :

## Վ

Վահան գողթնացի տօնելի . հտ . Ա . 188 :
Վաղերիոս կմ վաղերիանոս , կանդիտոս , ակիւղաս՝ տօնելիք . հտ . Ա . 631 :
Վանական վարդապետ , այն է յովհաննէս վանական տաւուշեցի յծէն արցախոյ՝ էր աշակերտ իմաստնոյն մխիթարայ գօշի , մանուկ ածասէր և ուսումնասէր՝ սնեալ 'ի վանս գետկայ . ուր քսանամեայ քահանայ օծեալ՝ եղև կատարեալ գիտնաւոր , և վդպ ծաղկեալ ամ իմաստութբ և առաքինութբ : Ապա շինեաց յաղօտանս զխորանաշատ վանս , և դարձեալ զայլ մենաստան յանապատի 'ի մեծ քար փորածոյ . և ստացաւ բազում աշակերտս : Գրեաց և բազում տա-

ռա-

ռապանս 'ի յարձակման Թաթարաց 'ի կող- մանս Հայոց և աղուանից , և վաճառեցաւ 'ի գերութի . այլ ազատեալ նր' դարձաւ յաւաքին վանս իւր. և ձգնեցաւ խստակրօն վարուք , պարապեալ միանգամայն և անդա- դար յուսուցանել և 'ի գրել բազում ինչ արդիւնաւոր . յորոց սակի է և ժողովական նամակ նր գրեալ վս ելման հոգւոյն սբյ 'ի հօրէ և յորդւոյ իբրև 'ի միոյ սկզբնէ' խո- րագոյն և զօրաւոր իմաստիւք լի , հանդերձ վկայութբ հարցն սբց . և յետ բզմ առա- քինի վաստակոց փոխեցաւ առ նր' հ ամաց , յամի 1251 . Չ : [illegible] . տպ . յունվար . 31 . ձեռ . մարտ . 18 : Ի հրամանէ սորին վա- նական վդպի յօրինեալ և նր իշել զյայս- մաւուրս իւր , որ ընտիրն է քան զայլ օրի- նակս :

Ս[illegible] կոյս տօնելի . հա . Օ . 465 :

Ս[illegible] կամ Ի[illegible] աշակերտն քնի էր յեգե- սիա 'ի ժամանակս մաքսիմիանոսի կայսեր , տուեալ 'ի կնութի առն հեթանոսի կամ քրմի . բայց սնոյց զորդիս իւր 'ի հաւատս ճշմարտութե . և անուանք նոցա Թէոգ- նիս , Ագապիոս , և Պիստոս : Սմին իրի այրն անհաւատ մատնեաց զկին իւր և զոր- դիս 'ի ձեռս բդեշխին . որոյ տեսեալ զհաս- տատութի երանելեացն 'ի քս' նախ ետ քե- րել զԹէոգնիս առաջի մօրն և եղբարցն . նոյնպէս և զագապիոս տանջեցին , և քեր- թեցին զմորթ գլխոյն . ապա և զպիստոս

բազմօք չարչարեցին . այլ զմի մի 'ի նոցանէ քաջալերէր մայրն երանելի . և նք ուրախութք կրէին զմ առ սէրն քի . մինչև գլխատեցան երեքեանն , և թաղեցան 'ի միում գերեզմանի ։ Իսկ սրբուհին վասն՝ ը ոմանց կարծի գլխատեալ ը որդիս իւր . և ը այլոց պատմի՝ չարչարեալ 'ի զանազան տեղիս պէսպէս տանջանօք , և ապա սրով նահատակեալ 'ի հրամանէ ղևոնդիոսի դատաւորին հելլեսպոնտոսի . իսկ մարմինն թաղեցաւ ասեն 'ի սոփոնիայ քահանայէ յեզր ծովու 'ի բարձր տեղւոջ ։ Ն . օգոստոս . 20 ։

Յ . Լ . 21 ։ Ղաւուրնտ . Բ . ձիգ . և Բ . միջ ։

Վասիլէոս կմ Բասիլէոս եպս ամասիոյ պոնտացւոց՝ էր 'ի ժամանակս լիկիանոսի . որոյ կնոջն կոստանդինա քոյր մեծին կոստանդիանոսի ունէր աղախին մի գլափիւրա անուն . որ վն զերծանելոյ 'ի գարշ տռփանաց լիկիանոսի՝ խորհրդով թագուհւոյն փախեաւ առն զգեստուք յարևելս , և եկեալ յամասիա՝ ապաւինեցաւ առ եպսն վասիլիոս . և զի ունէր ը իւր ինչս՝ ետ 'ի շինութն եկեղեցւոյն , զոր կանգնէր եպսն . ետ բերել և 'ի թագուհւոյն այլ ևս ինչս և աղերս 'ի պէտս եկեղեցւոյն ։ Իբրև 'ի վեր ելբանն , առաքեաց լիկիանոս հրաման առ դատաւորն ամասիոյ՝ յղել առ ինքն զվասիլիոս և զգլափիրա . և զի սա փախձանեալ գտաւ , տարան զօրականք զվասիլիոս կապեալ

պեալ հանդերձ երկու սարկաւագօք 'ի Նի-
կոմիդիա ։ Ընդ սկսաւ բռնաւոր կայսրն
ստիպել զեպիսն 'ի զոհ կռոց, և նեղել զնա
բազմօք 'ի բազում աւուրս. այլ ոչինչ օգ-
տեալ՝ յետ բանտարկութե եւ հատանել
զգլուխ սրբոյն, և ընկենուլ 'ի ծով ։ Յայն-
ժամ երևեցաւ հրեշտակ մի եղպիդիփորո-
սի՝ որում յանձնեալ էր եպսն զսարկաւա-
գունս իւր, և ասէ. եպսն ձեր 'ի սինոպ
գնայ, և անդ միայ ձեզ. և նք երթեալ են
թէոդոտոսի և պարթենիոսի սարկաւագացն
մինչև 'ի սինոպ՝ եգիտ զմարմին սրբոյ եպիս-
կոպոսին յուռկանն արգելեալ 'ի ծով յա-
ջակողմն պարսպի՝ ըստ վերստին ազդելոյ
հրեշտակի. և գտաւ գլուխ սրբոյն կցեալ են
մարմինն. զոր տարեալ ամփոփեցին պատ-
ուով յեկեղեցին շինեալ 'ի նմանէ ։ ~ . Յ.

Լ. ապր. 26 ։

ՍԱՄՈՒԷԼ եպս քերսոնի. տես Եպսունք
քերսոնայ ։

ՍԱՄՈՒԷԼՈՆՆԷ կմ ՐՈՒՄՈՒԷԼԻՏԱ կոյս տօնելի ։ հտ.

Ա. 82 ։

ՍԱՐԴԱՆԱՆԴ ԽԲ զօրավարք տօնելիք. հտ.

Ր. 278 ։

ՍԱՐԴԱՆ ԴԱՒԱՂԱՆԵՑԻ յերկրէն բաղէշու՝ էր
այր Ճոխ, և ունէր զաւակս. բայց սիրէր
զաւանձնութի, և սակայ երթեալ 'ի վա-
նորայս՝ բնակէր են միանձունս ։ Նա լուեալ
զքռնութի շամշատին ամիրայի՝ որ նեղէր
զքրիստոնեայս 'ի բաղէշ՝ յորդորելով զմի

մի

մի յուրացուն , եկն յանդիման եղև նմա , և քաղցրութբ աղաչեաց զնա խնայել 'ի հաւատացեալս • իսկ բռնաւորն յետ Թշնամանելոյ զնր հաւատս սկսաւ բռնադատել ըզվարդան յօրէնս իւր • այլ գտեալ զնա հաստատուն 'ի քն և աներկիւղ 'ի բանս՝ եհար ձեռօքն զգլուխ նր ։ Ասէ վարդան • եթէ երկնչէի 'ի հարուածոց , ոչ գայի այսր • այլ ես պատրաստ եմ և 'ի մահ վն քնի • յայնժամ բռնաւորն ետ արկանել զնա 'ի կոճեղս բանտի , և տանջել զերիս աւուրս ։ Ապա վերստին փորձեալ զնա , և յաղթահարեալ յիմաստուն բանից քաջ նահատակին՝ եհան վճիռ մահու 'ի դատաւորէն 'ի վր արդարոյն • և նա ուրախութբ ընթանայր 'ի տեղի կատարման իբրև 'ի կոչունս Թագաւորի • և այնպէս կատարեցաւ 'ի ձեռաց ամբոխին հարուածով սրոյ և փայտի և քարի՝ յամի • 1421 • պհ • և Թաղեցաւ 'ի քրիստոնէից • և արար ած բազում նշանս 'ի ձեռն պատուական նշխարաց նորա ։ ⁘

Մայ • 16 ։

ՄԱՐԴԷՆԻ կոյսն հայկազուն , որ և ՄԱՐԴՈՅ աղախինն քնի՝ էր սրբակրօն կուսան պարկեշտ առանձնացեալ 'ի տան լռին՝ պահօք և աղօթիւք • և գործէր զոստայն , և 'ի ձեռագործէ անտի առնէր ողորմութի ։ Իսկ ոմն երիտասարդ հարեալ 'ի գեղ անարատ հարսինն քնի , 'ի գնալ նր յեկեղեցի՝ սկսաւ զճանապարհայն ողոքել զնա 'ի սէր իւր • և

մեր-

մերժեալ ՚ի նմանէ՝ այնուհետեւ յղեր ստէպ պատգամս՝ ամուսնանալ օրինօք հարսանեաց։ Իսկ երբ եւ յանհնարս եմուտ կոյսն մաքուր, կոչեաց յաւուր միում զերիտասարդն. եւ իմացեալ ՚ի նմանէ՝ թէ գեղեցկութիւն աչաց իւրոց գայթակղեցուցանէ զնա, լաւ համարեցաւ զվնաս մարմնոյ իւրոյ քան զվնաս հոգւոյ երկօրին. վայ եւ անդէն եհար յաչս իւր զասեղն ոստայնին՝ որով գործէր, եւ կուրացոյց զերկոսին բիբս։ Յայնժամ զիղջ մեծ եղեւ երիտասարդին. մինչզի եթող նա զշխ, եւ գնացեալ յանապատ՝ կրօնաւորեցաւ ՚ի հաճոյս այ։ Իսկ սրբուհին վարդենի խաւարեալ աչօք՝ ճգնեցաւ այլ եւս յերկար ժամանակս. եւ ամբիծ վարուք գնաց առ անձկալի փեսայն իւր քս. եւ ը ազդելոյ հրեշտակի այ եկին հարքյանապատէ՝ ՚ի թաղումն պատուական մարմնոյ նորա. եւ բազում սքանչելիք եղեն յաւուր հանգստեան նր։ Ժամանակ սորա այսչափ է մեզ գիտելի, զի էր յառաջ քան զԺԴ դար. որովհետեւ գտանի եւ ՚ի յայսմաւուրս տր իւլի, եւ յիշատակի գովութ ՚ի յովհաննէ երզնկացւոյ ՚ի մեկնութեան մատթէոսի։ Հ. մայիս. 9։ Տօն իւլ. մայիս. 7։ Յ = Հ. մայ. 5։

ՄԱՐԴՈՒՀԻ կամ ՄԱՐԴԱՆՈՒՀԻ. տես Ռուշան դուստր վարդանայ։

ՄԱՐԴՈՒՀԻ կն ՏՕՂԱ՝ նոր ծաղիկ հարաւային ամերիկոյ ՚ի լիմայ քաղաքէ, կոյս սքանչե-

լի

ցի 'ի մանկուէ՟, հարկեալ 'ի ծնողաց մտա-
նել յա՟՝ խափանեաց զայն կտրելով զվարսս
իւր, եւ եդ զանձն յիմ՟ ձգնութ՟իս. եւ ըն-
կալեալ զքեմ դոմինիկեան կուսանաց՝ յա-
ռաջեաց յիմ՟ վարս խստակրօն սրբութ՟ե.
անձանձիր յաղօթս, եւ անտրտունջ յիմ՟
վիշտս ներքոյ եւ արտաքոյ. արժանացեալ
յետ բազմամեայ ցամաքութ՟ե հոգւոյ՝ նո-
րանոր երկնային տեսլեանց 'ի պահապան
հրեշտակէն, 'ի կատարինեայ սենացւոյ,
եւ 'ի ս՟բ ա՟ծածնէ, որ կոչեաց զնա վարդու-
հի մարիամեան. եւ փրկիչն երեւեալ նմա՝
ասէր. վարդենի՛դ սրտի իմոյ դու լե՛ր ինձ
հարսն: Պայծառացաւ եւ ազգի ազգի սքան-
չելեօք յառաջ եւ յետոյ ք՟ զվախճան իւր:

Լ. օգոստ. 30:

ՍՐԲՈՒՀԻ ԿՈՅՍ ՌՈԶԱ ԼԻՄԵՐԱՑԻ՝ որբասէր եւ
ձգնապգեաց 'ի մանկութ՟է, 'ի մատաղ տիս
յարոյց 'ի մեռելոց զհանի իւր. եւ 'ի տա-
նել զհաց իւր գաղտաբար առ աղքատս՝
հարցեալ 'ի հօրէն, զի՞նչ է՝ զոր ունիս ը՟
անթովդ, փոխեցաւ հացն 'ի վարդս: Հա-
զիւ՛ զեօթն ամ հասակին լցեալ՝ առ փափա-
քանաց կրօնաւորելոյ ձգնէր 'ի խցի իւրում
իբրեւ 'ի մենաստանի. եւ 'ի հիւծելոյ զմար-
մինն անկեալ 'ի խօթութ՟ի՝ առողջացաւ 'ի
տեսլենէ ս՟բ ա՟ծածնի, եւ հրամանն ընկալաւ
մտանել 'ի կուսաստան փրանկիսկեանց:
Տասնամեայ էր՝ յորժամ հոգելից եւ ազդու-
թանիւք դարձոյց զբազումս 'ի հերետիկո-
սաց.

սաց ․ ոյր վ҃ն և զարմի՛ն հանդերձ յաքսորս առաքեալ՝ գուշակեաց զխաղաղութի՛ն եկեղեցւոյ 'ի մահուա՛ն փրիտերիկոսի երկրորդի ․ լուսաւորեաց զաչս կնոջ միոյ կուրի ․ և 'ի դարձուցանել զայլ կին յողջամիտ հաւատս՝ եմուտ 'ի խարոյկ բորբոքեալ ․ և ել անտի անվնաս յետ երից ժամուց ։ Դարձ ապարեն 'ի վիտերպիոն՝ աղաչեաց զկուսանս վանաց մարեմայ 'ի վարդից՝ ժողովել զինքն ․ և իբրև չեղև ընդունելի վասն աղքատութեն , ասէ ․ յետ մահուանս բնակեսցայց առ ձեզ ․ և ինքն եկեալ ձգնէր 'ի խուց տան իւրոյ ․ ուր զկնի երկուց ամսոյ սրբութե՛ փոխեցաւ առ ք҃ս՝ ութևտասան ամսոյ ։ Յետ թաղմանն իբրև անցին ամիսք իբր երեսուն՝ երևեցաւ հուովմայ հայրապետին աղեքսանդրի չորրորդի՝ որ նստէր յայնժամ 'ի վիտերպիոն , և երիցս ազդ արար փոխել զտեղի գերեզմանին իւրոյ ․ և իբրև բացին , գտաւ անապական , և փոխադրեցաւ 'ի վանսն գուշակեալ 'ի նմանէ ․ ուր և միշտ մնայ ողջ մարմին թարմ , և պայծառացաւ սքանչելեօք ։ Իսկ վախճանն եղև յամի իբր 1255 ։

Ի ․ սեպտ ․ 4 ։

Սրբուհի կոյս ռօզալեա , կոյս այլ հնազգոյն և ձգնազգեաց պանորմայի 'ի տանէ մեծին կարոլոսի , վ҃ս բազմապատիկ ձգնութե 'ի յայրս և սքանչելագործութե՝ մեծապէս փառօք պաշտի 'ի բալերմօ սիկիլիոյ ․ որոյ ո҃բ նշխարացն և մեք արժանի եղաք տեսող

լի

լինելանդ. Ա. սեպտ. 4 ։

Վարոս ճգնաւոր ը՟ Թաթուլայ. հտ. Ա. 22 ։

Վարոս վկայ. հտ. Բ. 41 ։ և ը՟ ատոմեանց. հտ. Բ. 66 ։

Վենդիանոս կմ՟ վենդիմիանոս ճգնաւոր աշակերտ սրբոյն օգսենտի, միայնացեալ յոքսիա լերին մերձ 'ի քաղկեդոն, յետ վախճանելոյ վրդպին փակեալ զանձն 'ի մօտակայ քարանձաւ մի զամս խը՟, անտանելի ճգնութը՟ մրցելով ը՟դդէմ դիւին. և ընկալաւ զշնորհս բժշկութե հոգւոյ և մարմնոյ. և յետ մարգարէանալոյ զօր փոխման իւրոյ՝ 'ի ծունկս անկեալ բազկատարած աւանդեաց զոգին ։

Ն. փետր. 4, կմ՟ 7 ։ Յ. 1 ։

Վենկեսլաւոս դուքս բոհեմիոյ՝ որդի հօր քրիստոնէի վրադիսլաւայ, և մօր հեթանոսի տրահոմիրայ, թագաւոր ընտրեալ 'ի ժողովրդենէ 'ի բրակայ՝ փայլէր արդարութը՟ և սրբութը՟ և ողորմածութը՟ յաղքատս. այնչափ ջերմեռանդն էր 'ի պաշտօնն այ՟ և առ պաշտօնեայս նր՟, զի ձեռօք իւրովք հասուցանէր զցորեան և զգինի որթոյ 'ի նիւթ խորհրդոյ սբ՟ պատարագին. և բոկոտն շրջէր ձմերանի 'ի գիշերի ը՟ եկեղեցիս. հրեշտակք նր՟ պահապանք յայտնապէս երևեցան նմա երբեմն, որպէս և այլոց ։ Բայց բռնաւոր եղբայր նր՟ բոլեսլաւոս՝ ը՟ խրատու անօրէն մօրն՝ սպան զերանելին վենկեսլաւոս դաւով յեկեղեցւոջ ։ Ա. սեպտ. 28 ։

Վէ

Մելենտիոս կմ Վելենդիոս եպս բանտարկեալ վս քի 'ի կիպրոս առ դիոկղետիանոսիւ , իբրև լուեալ՝ եթէ մաքսիմիանոս իշխանն հրամայեալ է մատնել 'ի պղծութի անառակ արանց զկալանաւորս , յետ աղօթելոյ արտասուօք՝ պատեաց փիլոնաւն զերես իւր , և ընկէց զինքն 'ի վայր . իսկ դահիճքն եդին զմարմին նորա 'ի քուրձ , և արկին 'ի ծով ։ Իսկ ահա երևեցաւ ոք եպսն նաւորդաց՝ գնալով առաջի նց պսակ 'ի գլուխ , և ոստ արմաւոյ 'ի ձեռին , և երգ օրհնութե 'ի բերան նորա . և իբրև հասին ճանապարհորդքն 'ի ցամաք , և աներևոյթ եղև տեսիլն , բացեալ նց զքուրձն՝ զոր գտին , գիտացին՝ զի է մարմին սրբյն , և թաղեցին պատուով ։ . օգոստ . 30 ։

Մենոդորինոս , Մենոդոր , Նիկեփորոս , Սպուդեոս , Դեմետրոս , Սարապիոն , և Պապիաս՝ եօթն վկայք կատարեցան 'ի կորնթոս առ դեկոսիւ , կմ յեգիպտոս առ նումերիանոսիւ , 'ի տերտիոսէ դատաւորէ ։ Մենոդորինոս յետ կորուսանելոյ զակն աջոյ՝ ծայրաքաղ լեալ 'ի մատանց ձեռաց և ոտից՝ ջարդեցաւ 'ի մամուլս , կմ ջախջախեցաւ 'ի սանդի ։ Միկտոր յետ հատման լեզուին՝ նովին ջախջախանօք կատարի ։ Նիկեփորոս յետ ձմլելոյ 'ի մեքենայս՝ մինչև հոսել զարիւն ընդ ուղնդունս , Է բերանն , և Է ականջս , նոյնօրինակ սանդահարեցաւ , կմ կախեցաւ զհերաց յորմաւենի ծառոյ ։ Սպուդիոս հատեալ

ձե-

ձեռօք և ոտիւք՝ գլխիվայր կախի , և ծխեն
'ի ներքոյ զգարշահոտ իրս ։ Դիոդորոս 'ի
հուր այրի ։ Սարապիոն գլխատի ։ Պապիաս
'ի փայտ բևեռեալ՝ ապա վիմով 'ի ծով ար-
կանի ։ Ն․ փետր․ 9 ։ Յ․ յունվր․ 31 ։ Լ․
փետր․ 25 ։

Սէնչէնուէոս կամ Ձէնչէնցէոս անուամբ , ( որ և վինչէն կամ բէկէնտի , թարգմանեալ յաղթօղ , ոչ և առ յոյնս նիգոն , ) բազում են հին վկայք և խոստովանօղք ․ այլ հռչակաւոր գտաւ յոյժ 'ի յետին ժամանակս վինչենցիոս փերրարացի կոչեցեալ՝ ք 'ի փերրերեան ազնիւ տանէ , որ 'ի վալենցիա սպանիացւոց , 'ի տղայ տիոց հասուն մտօք և հոգեսէր ․ որ և ութևտասանամեայ մտեալ 'ի կարգ քարոզչաց դոմինիկեանց , և զարդացեալ 'ի գիտութե և 'ի սրբութե՝ եղև զօրաւոր քարոզ բանին , և դարձոյց զբազում 'ի հրէից և 'ի հեթանոսաց ․ ոչ և զմոլաւորս 'ի չար ճանապարհաց՝ ահեղ հնչեցուցանելով զերկիւղ դատաստանացն այ․ թող զիւր խստակրօն վարս , և զայլ գործս մեծամեծս 'ի նպաստ եկեղեցւոյ և 'ի հաշտութի թագաւորութեց ։ Ունէր զշնորհս նշանագործութե , մինչև փարատել զմմ ցաւս և հալածել զդևս , և մեռեալս անգամ յարուցանել ։ Եւ 'ի ծերութե գտեալ 'ի փոքր բրիտանիա գաղղիոյ 'ի վէնէցիա քաղաքի՝ փոխեցաւ առ տր յամի 1419 ․ և է պայծառացեալ սքանչելեօք ։ Լ․ ապր․ 5 ։

Վիտաղէս զօրական՝ հայր սրբոց վկայից Գերոճասիոսի և Պրոտասիոսի, տեսեալ 'ի հռաւէննա զբժիշկն ուրսիկինոս՝ որ 'ի չարչարանս նահատակութեան փոքր մի վատասիրտ երևէր, ասէ ցնա. տե՛ս զի բժիշկդ մարմնոց մի՛ կորուսցես զհոգիդ. որով զօրացեալ կատարեցաւ նա 'ի տր։ Իսկ պաւղինոս դատաւորն զայրացեալ ընդ վիտաղէս վն այնր բանի՝ ետ հանել զնա 'ի կախաղան քերանայ, և ապա 'ի գուբ մի արկեալ՝ ետ քարամբք ծածկել զնա, ըստ սադրելոյ քրմին ապողոնի. բայց քուրմն հարեալ 'ի դիւէն՝ գոչել սկսաւ, դու զիս տոչորես վիտաղիս վկայ քի. և այնպէս գետավէժ կորեաւ։

Ի. ապր. 28։

Վլասիոս եպս սեբաստիոյ տօնելի. հտ. Ա. 386։

Վոնիֆատոս կմ Վոնիֆատիոս (այն է պօնիֆացիոս, այսինքն բարերար) այր հռովմայեցի՝ ծառայ էր ագղայիդայ կմ ագլայիսայ դստեր ակակիոսի անթիհիւպատոսին, գինարբու և մեղսաշաղախ ընդ տիկնոջ իւրում. այլ զի ունէին երկոքեանն ողորմած բարս և սէր մեծ առ վկայս քի, խորհրդովն նոյ յորդորեալ ագղայիս զվոնիֆատոս երթալ յարեւելս 'ի հալածանս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի, և բերել զնշխարս մարտիրոսաց 'ի նպաստ թողութեան մեղաց իւրեանց։ Ասէ վոնիֆատոս իբրև ընդ խաղս. եթէ և զիմ մարմինս բերիցէ, ընդունի՞ս ոչ մարտի-

րոսի . իսկ տիկինն ասէ . Թափեա՛ զգինիդ , և արա՛ զոր ասացի : Յայնժամ առեալ զկոնիփատոսի ը̃ իւր ինչս բարձումն և կտաւս մաքուր՝ գնաց ծառայակցօք 'ի տուրսոն կիլիկեցւոց . և իջևանեալ 'ի պանդոկի մի՝ եթող անդ զընկերսն . և ինքն շրջեալ 'ի տեղիս ատենից՝ տեսանէր զահեղ տեսարան սբ̃ց վկայիցն նահատակելոց սրով և հրով և խաչիւ և այլ ևս դժնդակ մեքենայիւք . և անկեալ 'ի վր̃ խողխողեալ մարմնոց նց̃ ողբայր և համբուրէր : Զոր տեսեալ դատաւորին՝ կոչեաց և քննեաց զնա . և յասել նորա՝ թէ քրիստոնեայ եմ , և քր̃ի ծառայ , ետ քերել զնա մինչև յոսկերս , և վարել եղեգունս սրեալս յեղնգունս ձեռացն , և հեղուլ կապար հալեալ 'ի բերանն նր̃ . եհարկ զնա և յեռացեալ կաթսայ ձիթոյ . և մինչդեռ կայր կենդանի՝ հատին զգլուխ երանելւոյն : Իսկ ծառայակիցք նորա տեսեալ զյամենալ նր̃՝ կարծէին , եթէ 'ի չար ձանապարհ երթեալ իցէ . այլ իբրև լուան զմարտիրոսանալն , եկին և ամփոփեցին ըզպատուական մարմին նորա ը̃ գլխոյն . իսկ սբ̃ն ժպտեցաւ իբրև կենդանի : Եւ եդեալ զնա 'ի փայտեայ տապանի՝ բերին 'ի հռովմ . ուր ազդմամբ հրեշտակի ը̃առաջ ել սբ̃յն տիկինն , և ետ թաղել պատուով 'ի ձանապարհին լատինայ . և շինեցաւ եկեղեցի յանուն սբ̃ վկային : Ն . յունիս . 18 , կմ̃ 19 : Յ . դեկտ . 20 : Լ . մայ . 14 :

Մէ-

Սրճանէ ոք հայրապետ տօնելի . հտ . Գ . 481 :

# Տ

Տայօս պոմնիկ, որ և դայիսիա կոչ Թայիսիս (աղեքսանդրացի), յերկոտասանամենից և 'ի վեր տուեալ յապիրատ մօրէն 'ի գործ մեղաց վն կորստական ընչից, ձգէր զբազումս 'ի կորուստ . զոր լուեալ ոք ծերոյն սրապիոնի (կոչ պափնուտիոսի սիդոնացւոյ՝) եկն առ նա Ճական ձևով . և իբրև յուշ արար նմա զներկայութի ծածկագիտին այ և զահեղ դատաստան նր, իսկևիսկ զղջացաւ տայաս 'ի բոլոր սրտէ . և 'ի հուր արկեալ հրապարակաւ զամ ինչս ժողովեալս մեղօք՝ գնաց պհետ սրապիոնի յանապատ, և արգելեալ 'ի վանս կուսանաց յանձուկ և 'ի նսեմ խցի զամս երիս՝ յաւուրն միանգամ ճաշակելով հաց և ջուր չափով, և աղօթելով միշտ զայս բան . որ ստեղծեր զիս՝ ողորմեա ինձ : Յետ այսորիկ 'ի տեսանել սբյն պօղայ աշակերտի մեծին անտոնի զփառաց պսակն՝ որ պատրաստեալ էր տայասայ վն ճշմարիտ ապաշխարութե նր, եկն առ բազայ սրապիոն, և հանեալ զտայաս յարգելանոցէ՝ հրաման ետ կալ ընդ այլ կուսանս . որ և յետ ժե աւուրց հիւանդացաւ, և զկնի երից այլ աւուրց փոխեցաւ յերկինս՝ յամի իբր . 345 : Լտ . յունիս . 24 : Յ . ժամագր .

հոկտ. 8 ։ Ճառընտ. Բ. չհէ ։ Մարք հց ։
Տաւն մարտիրոսաց եգիպտացւոց, Մարկիանոս, Նիկանդրոս, Ապողոն, Լեոնդիոս, Աբէոս, Գէորգ, Ապիոք, Սելինաս, Իրինոս, և Պարսամբոն, 'ի հալածանս մաքսիմիանոսի մատնեալք յատեան դատաւորին եգիպտոսի՝ կրեցին վն անուանն քն դանս և քերանս հանդերձ խանձողմամբ վիրացն. և կիսամահ 'ի բանտ արկեալք՝ բժշկեցան 'ի ձեռն հրեշտակի. որով և զբազումս ձգեցին 'ի հաւատս քնի. և յետ կրկին հարցափորձի, սովու և ծարաւու՝ տապով և ցըրտով կատարեցան 'ի բանտի ։ Հ. ապր. 28, կմ 27 ։ Յ. Լ. յունիս. 5 ։

Տաւն մարտիրոսաց կրետացւոց, ՟ի Թէոդուլոս, Սատուռնինոս, Եւպորոս, Գելասիոս, և Եւնիկիանոս գորտինացւոց, Զոտիկոս գնոսացի, Պենտիկոս կամ լէոմենէս պոնտիոսացի, եպինացի, Ագաթոպոս պանորմացի, Բասիլիդէս կիւդոնացի, և Եւարիստոս կամ առեստիոս իրակլեցի, 'ի հալածանս դեկոսի մատնեցան վասն քնի 'ի ձեռս բդեշխին կրետայ. որ եւ զնոսա 'ի ձեռս ամբոխին՝ քարշել ը̃ հրապարակս, կախել և այպանել, թքանել և փետել զհերս նց, թաւալել յաղտեղութիս, և քարամբք կոշկոճել՝ ամսօրեայ մի ժամանակ. և յետ բանտարկութե իբրև եռեւ զհաստատութի վկայից 'ի քս, բրածեծ արար զնս, և ետ հատանել զգլուխս նց ։ Իսկ ե̃պսն գորտինոյ քա-

ղա

ղաքի ամփոփեաց զսբ̃ն գաղտաբար . և յե-
տոյ շինեաց վկայարան 'ի վ̃ր նշ̃ : Ք . դեկ .
22 : Ց . Լ . 23 :

Տատիանոս կմ̃ տատիոն իսաւրացի առ դիոկ-ղետիանոսիւ , վասն զքս̃ քարոզելոյն ածաւ-յատեան ուրբանոսի դատաւորի 'ի կղո-դիուպօլիս . և տանջեալ զանիւք և քերա-նօք , և քարշեալ ը̃ փողոցս , ասէր . որչափ յաւելուք 'ի տանջանս , այնքան յաւելուք ինձ բարութիս յերկինս : Եւ իբրև եհաս 'ի դուռն քաղաքին , առեալ յարենէ իւրմէ-հոսելոյ ը̃ երկիր՝ արար խաչ 'ի սիրտն և 'ի ճակատն . և լռեալ ձայն աւետեաց յերկ-նից՝ աւանդեաց զոգին զլխատմամբ կմ̃ յա-ռաջ քան զգլխատումն . և թաղեցաւ 'ի քաղաքի անդ : Ք . օգոստ . 29 , կմ̃ 30 : Ց .
Լ . 24 :

Տարագրութեան տօնելիք . հտ . Լ . 271 :

Տիմոթէոս աշակերտ պօղոսի տօնելի . հտ . Լ .
181 :

Տիմոթէոս գազացի 'ի պաղեստինոյ՝ այր առա-քինի և քարոզ ճշմարտութե̃ առ դիոկղե-տիանոսիւ ըմբռնեալ յուրբանոս դատաւո-րէն գազայ , յետ գեղեցիկ առենախօսու-թե̃՝ մատնեցաւ 'ի պէսպէս տանջանս . և ապա արկեալ 'ի կայծակնախառն մոխիր կամ 'ի մեղմ կրակ՝ յերկար խանձողմամբ կատարեցաւ 'ի քս̃ : Ք . օգոստ . 24 , կամ
30 : Ց . Լ . 19 :

Տիմոթէոս դպիր 'ի պէրընպեայ եգիպտոսի՝

որդի Իպիկոլոսի քահանայի, ընթերցող էր
եկեղեցւոյ. և յետ առնլոյ նոր հարսն Մաւ-
րա կն՛ մաւրաս անուն, մինչև անցեալ էին
աւուրք քսան, ըմբռնեցաւ վն՛ ՚ի քն՛ հա-
ւատոյ, և ածաւ կապանօք առ արրիանոս
դատաւոր Թեբայիդոյ. որ ետ մխել շամ-
փուրս հրացեալս յականջս նր՛, մինչև ար-
տաքս ոստնուլ աչաց նր՛յն. ապա տանջեաց
անուօք և մամլօք, և կապեալ վէմ ը՛ պա-
րանոցն՝ կախեաց գլխիվայր։ Իսկ տեսեալ
զքաջութի՛ վկային՝ որ ոչ դադարէր յորհ-
նելոյ զն՛ր, ետ բերել ՚ի գայթակղութիւն
նր՛յն զնոր հարսն նորա զարդարեալ. և եդ-
բան ՚ի բերան նր՛՝ յորդորել զայր իւր, զի
արասցէ զկամս դատաւորին։ Իսկ երանե-
լին տիմոթէոս ասէ ցնա. քո՛յր իմ մաւրա
Թո՛ղ զունայնութի՛ս կենցաղոյս, և ե՛կ զհետ
իմ, զի պսակեսցուք ՚ի քն՛է։ Յայնժամ
լցաւ և մաւրաս հոգւով, և ասէ ցդատա-
ւորն, և ես քրիստոնեայ եմ ո՛վ զայրն իմ.
և նոյնժամայն մերկացուցին զմաւրաս, և
ձաղկեցին. կերծին զհերս գլխոյն. և կը-
տրեալ զմատունսն՝ արկին զնա ՚ի ջուր ե-
ռացեալ, և ապա ՚ի կաթսայ ձիթոյ. և զի
մնաց անվնասելի, առեալ խաչեցին զտիմո-
թէոս և զմաւրաս հանդէպ իրերաց ՚ի վն՛
որմոց. ուր կացեալ նոյն զաւուրս ինն՝ ա-
ւանդեցին զհոգիս ՚ի ձեռս այ՛։ ՝·Յ·Լ։

մայ. 3։

Տէմոփէոս սուրհանդակ մարտիրոսանացն՝ հզօր ար-
դեամբք

դեամբք և բանիւք, մինչ դարձուցանելոյն զքաղուածս 'ի քոյ՝ մատնեցաւ 'ի ձեռս իշխանի տեղւոյն. և յետ պէսպէս խոշտանգանաց, և բանտի և սովու և ծարաւոյ՝ այրեցաւ կենդանւոյն 'ի հուր. և զմնացեալ նշխարս առին հաւատացեալք: Ն. դեկ. 24: Յ. Լ. և տր իէլ. 19:

ՏԻՄՈԹԷՈՍ ՔԱՀԱՆԱՅ կմ՛ եպս պրուսայի 'ի բիւթանիա, առ յուլիանոսիւ, այր մի և նշանաւոր՝ սպան աղօթիւք և զմիշասին բունեալ ընդ ծառով նշդարենւոյ 'ի պրուսա, յորմէ սարսէին ամ բնակիչք քաղաքին: Իսկ ուրացօղն յուլիանոս լուեալ մի սքանչելոյն տիմոթէոսի՝ առաքեաց զօրականս ստիպել զնա 'ի պաշտօն կռոց, ապա թէ ոչ կորուսանել. և նք յետ բանտի և կապանաց հատին զգլուխ սբյն. իսկ քրիստոնեայք թաղեցին զնա, և շինեցին վկայարան յանուն նր: Ն. յունիս. 13: Յ. 10:

ՏԻՄՈՆ առաքեալ՝ մին յեօթն սարկաւագաց և 'ի թուոյ եօթանասնից՝ ձեռնադրի յառաքելոց եպս բոստրայ յարաբիա կմ՛ յասորիս. և յետ առաքելական մշակութ՝ մախանօք հրէից տանջեալ 'ի կռապաշտից՝ հրով կատարի, կմ՛ 'ի խաչ բևեռի 'ի կորնթոս: Ն. մայ. 9. և 5: Յ. դեկտ. 30: Լ. ապր. 19:

ՏԻՏՈՍ աշակերտ պօղոսի տօնելի. հտ. Ա. 189:

ՏՐԴԱՏ արքայ հայոց տօնելի. հտ. Գ. 460:

Տրեւղեոս եպս 'ի կողմանց եգիպտոսի՝ եր-
բեմն գանձասէր, մինչեւ պղջանալ ը՟ աւատ
ողորմութեն՝ զոր արար 'ի ձեռն յովհաննու
ողորմածի, զգաստացեալ տեսլեամբ ի՛իք՝
եղեւ այնչափ ողորմած, մինչ զի յետ տալոյ
աղքատաց զա՟մ ինչս իւր, 'ի խնդրել կնոջ
միոյ ողորմութի 'ի նմանէ՝ վաճառեաց եւ
զանձն իւր 'ի ծառայութի այլազգեաց, եւ
ետ զգինն յողորմութի. եւ ինքն ծաղկեալ
սքանչելեօք 'ի մէջ անհաւատից՝ արձակե-
ցաւ, եւ հանգեաւ խաղաղութբ ։ ÷. մայ. 9 ։

Տրէփէնա կամ տրիփոնիա կոյս 'ի կիլիկոնէ՝
դուստր անաստասիոսի հեթանոս պատրկի,
եւ սոկրատիայ մօր քրիստոնէի, յաւուր տօնի
կռոց վառեալ ա՟ծային նախանձու՝ յանդի-
մանեաց զկուրութի հեթանոսաց. վ՟ո կա-
լան զնա հրամանաւ կեսարիոսի դատաւո-
րի, կամ 'ի կեսարիա հրամանաւ կիղիկոն
դատաւորի, եւ փորձեցին հրով եւ այլ մեքե-
նաւոր տանջանօք. եւ 'ի պահել զնա ա՟ն՝
կապեցին զորբուհին ը՟ մէջ երկուց ցլուց.
որք հակառակ միմեանց ձգեալ զնա՝ յեր-
կուս հերձին զերանելին. այլք ասեն, թէ
մին 'ի ցլուց եհար եղջերաւ զփոր նորա, եւ
այնպէս կատարեցաւ աղախինն ք՟ի ։ ÷.
փետր. 8 ։ Յ. Լ. յնվր. 31 ։

Տրէփոն վկայ տօնելի. հա. Ի՛. 343 ։

Տրոփիմոս եւ Սաբբատիոս յանտիոքայ պիսիդեայ՝
առ պրոբոս կայսերաւ, տեսեալ զհանդէս
զոհից կռապաշտից՝ սկսան յայտնապէս ա-
ղօթս

զօթս առնել վճ դարձի նց 'ի մոլորութէ̃ն . վս կալաւ զնա ատտիկոս իշխանն և չարչարեաց . և 'ի սաստկութէ̃ն գանից և քերանաց սաւքատիոս փութով կատարեցաւ 'ի քր . իսկ տրոփիմոս վարեցաւ երկաթի կօշկօք՝ որ բևեռեալ էին յոտսն , երեքօրեայ ճանապարհաւ ցքաղաքն սինադայ . ուր տանջեալ զնա խստագոյնս՝ ցանեցին աղ 'ի վր վիրացն , և հրով խանձողեցին զողջ տեղիս մարմնոյն : Իսկ Դորիմեդոն այր երևելի 'ի քաղաքին՝ տեսեալ զչարչարանս սրբյն՝ յայտ եղեալ նմա 'ի բանտի , և ուսեալ 'ի նմանէ զճշ հաւատս՝ եղև քրիստոնեայ . վս և զնա գան հարին ուժգին , փետեցին զմօրուսն , և այրեցին զկողս . և ապա արկին ը տրոփիմոսի առաջի գազանաց . այլ յանվնաս պահել վկայից՝ հատին զգլուխս նց : ❧ .

Յ · Լ · սեպտ · 19 :

# Փ

Փաւստոս կմ Փաւստէ կոյս 'ի կիզիկոն քաղաքէ՝ զաւակ քրիստոնէից մեծատանց , որք մնացեալ ժգ ամաց՝ ճգնէր յաղօթս և 'ի պահս պարկեշտ վարուք , և բանիւ և օրինակաւ ձգէր զբազումս 'ի քս . զոր լուեալ մաքսիմիանոսի կայսեր՝ առաքեաց 'ի քաղաքանդր զքուրմն Եւլասիոս , որ և էր այր նախարար . սա յաղթեալ ամօթով 'ի հզօր բանից մատաղ կուսին՝ ետ գերծել զհերս գլխոյ նր ,

նը, և բրածեծ առնել. և եղեն որոտմունք և կայծակունք 'ի մնաս բազմաց. ապա հրաման ետ սղոցել զնորայն 'ի մամուլս, այլ ոչ գծեաց 'ի նա սղոցն. եարկ զնա 'ի հուր, և այրեցաւ. վ֊յ հաւատալ եւլասիոս 'ի ք֊ս: Յայնժամ եկեալ յարքայէ Մաքսիմոս եպարքոսն՝ չարչարեաց զեւլասիոս քերանօք և ջահիւք. և զփուստայ ծակել զպճղունս՝ բևեռեաց 'ի փայտի. և փորձեաց գազանօք. և զերկոսին եարկ 'ի տապակ եռացել ձիթոյ. ուր տեսեալ մեծամեծ սքանչելիս՝ դարձաւ և ինքն առ տ֊ր. և կատարեցաւ ը֊ նս՝ ինքնակամ մտեալ 'ի տապակն: Ն. մարտ. 16, կամ 15: Յ. փետր. 6: Լ. սեպտ. 20:

Փեբրոնիա կոյս տօնելի. Հտ: Օ. 71:

Փելիկիտա կին հռովմայեցի եօթն որդւովք ընթացեալ եղև 'ի հալածանս մարկոսի անտոնինոսի աւրեղիոսի. և խբրև հարցեալ 'ի պօպղիոսէ եպարքոսէ՝ հաստատուն գտան 'ի ք֊ս որդիքն ըստ սրտապնդելոյ մօրն, մի առ մի նահատակեցան. յանուարիոս կապարեայ զնտովք հարեալ. փելիքս և փիլիպպոս բրածեծ լեալ. սիղուանոս 'ի բարձանց 'ի վայր հոսեալ. աղեքսանդր, վիտաղէս, և մարտիաղէս սրով գլխատեալ. նոյնօրինակ կատարեցաւ և մայրն երանելի զկնի չորից ամսոց պսակման որդւոցն: Լ. յուլ. 10: տես և Պերպետուա:

Փելիքս քհ վալոյ, որ և հուգոն 'ի վալեսեան ար-

արքունի վարմէ գաղղիացւոց, 'ի տղայ տիոց եղև ողորմած յոյժ, մինչև զընտիրս յուտեղեայ իւրոց և 'ի զգեստուց տայր աղքատաց. ազատեաց և զմահապարտ ոք՝ գուշակելով զփոխիլն 'ի վարս բարիս: Նա 'ի խորշելոյ 'ի Թագաւորական պատուոյ՝ եմուտ 'ի կարգ քահանայութե. և յառաջադէմ եղեալ 'ի նոյն վարս ը̄ սրբյն յովհաննու տէ մաթայ փարիզեան մէպի, ը̄ յայտնութե հրեշտակի գնացին 'ի հռովմ, և առին զձև երկգոյն խաչին. յոր յաւել հայրապետն հռովմայ զերրորդ գոյն զգեստուն, և անուանեաց կարգ երրորդութե: Նա այսպէս եղև սրբն փիլիքս հիմնադիր կրօնի ազատարարաց կի գերեհանից, շինել զառաջին վանս 'ի մելդեան Թեմի. և արժանի եղև տեսանել զնր ծածկին հանդերձ բազմութ երկնաւորաց 'ի ձև կրօնի իւրոյ, և երգակից լինել նց 'ի դասի. որով և իմացեալ զկոչումն յիւր յերկինս՝ յանձնեաց իւրոյն զաղքատսիրութի և զփոյթ ազատութե գերեաց. և վախճանեցաւ լի աւուրբք յամի

1212: Ն. Նոյեմբ. 20:

Փեբրոնէ, որ և տալբուլա կամ Թարպա՝ քոյր սրբյն շմաւոնի պարսից եպսի, յետ կատարման նր՝ ոչ դադարէր հանդերձ այլի քերբն իւրով ուսուցանել զքս որոց գային 'ի տունն. ընդ որ ոխացին կուապաշտք և հրէայք. մի 'ի հիւանդանալ կնոջ շապհոյ արքայի՝ համբաւեցին հրէայք, թէ այն եր-

կու

կու քորք կախարդեցին զԹագուհին. և հրամանաւ Թգ̃րին քննեալ զն̃ս մադդաւ մոգպետն, և ոչ գտեալ 'ի նո̃ վնաս ինչ, հրապուրէր զՓերբուԹէ լինել ինքեան կին, զի ապատեսցի 'ի մահուանէ, և փառաւոր լիցի ինքն և քոյրն. և իբրև մերժեցաւ անարգանօք, ստիպէր զն̃ս յերկրպագուԹի̃ արեգական և հրոյ: Եւ յոչ առնուլ նոցա յանձն՝ խրատ ետուն Թագուհւոյն աղանդաւորք 'ի հրէից, Թէ յայնժամ զերծանիս 'ի կախարդանաց և ողջանաս, եԹէ անցցես ը̃ մէջ յօշոտածոց մարմնոց երկու այնքերց. վ̃յ հերձին սղոցիւք զՓերբուԹէ և զքոյր նր̃, և ընկեցին կմ̃ կախեցին 'ի վր̃ ճանապարհի, և էանց Թագուհին ը̃ մէջ. այլ եկեալ յապարանս իւր՝ չարաչար մեռաւ. իսկ 'ո̃բ քոյրքն ընկալան զպսակն կենաց՝ ը̃ միում նաժշտի իւրեանց՝ յամի 341: Յ. մարտ. 26. և ապր. 12: Ց. ապր. 5: Լ. ապր. 22: Եւող. ասորի:

ՓԻԼԻՀԻՓԻՄՈՆ տօնելի. հտ. Օ. 25:

ՓԻԼԻՄՈՆ աշակերտ պօղոսի. տե՛ս Արքիպպաս:

ՓԻԼԻՄՈՆ փողահար եգիպտացի՝ էր 'ի քաղաքէն անտինոյու՝ առ դիոկղետիանոսիւ. և եղև, զի 'ի դատել Արրիանոսի դատաւորին Թեբայիդոյ զքրիստոնեայս լե̃ կամ լզ̃, մին 'ի նոցանէ Ապողոնիոս անուն ընԹերցող կմ̃ սարկաւագ եկեղեցւոյ՝ զանգիտեաց 'ի տանջանաց, ետ փիլիմոնի դրամս, զի զգեցցի

զիւր

զիւր հանդերձս , և փոխանակ նորա զոհեսցէ կուոցն . այլ փիլիմոն 'ի մտանել անդ 'ի մեհեանն՝ դարձաւ շնորհօք , և խոստովան եղև զքրիստոնէութի՟ն : Ասէ ցնա դատաւորն . ք՟ս չընդունի զքեզ որպէս քրիստոնեայ , զի չես մկրտեալ . և ն՟ր չգտեալ զոք՝ որ մկրտեսցէ զինքն , դիմեաց առ ա՟ծ . և անդէն էջ ամպ լուսաւոր , և ցօղեաց 'ի վերայ նորա . որով հաւատացին բազումք 'ի տ՟ր . և ապողոնիոս զօրացեալ հոգւով՝ համարձակ խոստովանեցաւ զանուն ք՟սի . վ՟ն և իբրև պատճառ քրիստոնէութե՟ն փիլիմոնի սաստիկ տանջեցաւ , և քարշեցաւ ը՟ երկիր : Իսկ փիլիմոն կապեալ 'ի ծառ մի՝ նետահար եղև . բայց ոչ վնասեցաւ նա , այլ մի 'ի նետից եհան զակն դատաւորին . և 'ի խնդրել ն՟ր թողութի՟ և առողջութիւն 'ի ս՟բյն փիլիմոնէ՝ նա ասէ . յետ մահու իմոյ եկեալ 'ի տապան իմ բժշկեսցիս . և դատաւորն ետ հատանել զգլուխ ն՟ր և ապողոնի : Ապա առեալ հող 'ի գերեզմանէ ս՟բյն՝ եդ 'ի վ՟ր աչացն , և առ ժամայն ողջացեալ՝ հաւատաց 'ի ք՟ս ա՟մ տամբ իւրով և մկրտեցաւ . և արձակեաց զկապեալսն : Յայնժամ եկին 'ի թագաւորէն չորս զօրագլուխք իբրև ոստիկանք , և առեալ տարան զարրիանոս առ արքայ . որոյ դատեալ զնա վ՟ս քրիստոնէութե՟ն՝ ետ ընկենուլ զերանելին 'ի վիհ փորեալ հանդերձ կապանօք , և քարկոծ առնել , մինչև ծածկեցաւ 'ի քարանց . և ա-

սէր ,

սէր. տեսցուք՝ եթէ գայ՟ք՟ հանել զսա 'ի գբոյ աստի. և ահա 'ի դառնալ յապարանս իւր՝ ետես զարքիանոս 'ի վ՟ր բազմականի իւրոյ, և զահի հարաւ. և 'ի կոչել յօգնութ՟ի զերրեսին զօրագլուխսն՝ ն՟ք 'ի տեսիլ ահագին հրաշից հաւատացին 'ի ք՟ս: Իսկ բռնաւորն ետ գնել զն՟ս և զարքիանոս 'ի մի մի քուրձ, և արկանել 'ի ծով. և այնպէս կատարեցան 'ի տ՟ր. բայց տ՟ր հրաման ետ գլխնայ, և տարեալ հանին զմարմինս ս՟ցն 'ի ծովեզրն աղեքսանդրիոյ. զորս եկեղ՟ ամփոփեցին ծառայք արքիանոսի՝ ը՟ն յառաջագոյն գուշակելոյ ս՟ցն: Ն. դեկտ. 17, կ՟մ 16: Յ. դեկ. 14: Ի. մարտ. 8:

**Փիլիպպոս առաքեալ** տօնելի. հտ. Ի. 485:

**Փիլիպպոս աւետարանիչ** տօնելի. հտ. Ի. 120:

**Փիլիպպոս եպիսկոպոս** հայր եւգինեայ կուսի տօնելի. հտ. Ի. 467:

**Փիլիպպոս ներեան** փլորենտացի յիտալիոյ՝ առաքինացեալ 'ի մանկութ՟է, եթող զժառանգութիս իւր, և երթեալ 'ի հռոմ՝ ետ զանձն յուսումն, և 'ի կրթութ՟ի հոգևոր վարուց. եղև պահեցօղ և աղօթասէր յոյժ և տքնօղ. և քահանայացեալ՝ ետ զանձն 'ի վ՟ր փրկութ՟ե հոգւոյ՝ զցայգ և զցերեկ ձգնելով յօգուտ հաւատացելոց. և կացոյց զմիաբանութ՟ի աղօթավանից կ՟մ աղօթարանի. յորում կրթէր զեկեալսն 'ի հոգի ա՟ծպաշտութեան: Իսկ ինքն այնչափ

վա-

վառեցաւ 'ի սէր այ , մինչև չամփոփել սըր-
տին 'ի տեղւոջ իւրում, և ընդայնել կողիցն
բեկմամբ . իսկ 'ի պատարագելն և յաղօ-
թելն՝ երբեմն երևէր վերառեալ յերկրէ՝
փայլատակէր լուսով . առ յոյժ աղքատսի-
րութե արժանի եղև տալ ողորմութիւն և
հրեշտակի երևելոյ 'ի կերպարանս աղքա-
տի . և 'ի տանելն 'ի գիշերի հաց աղքա-
տաց՝ անկեալ 'ի խորափիտ մի՝ ողջանդամ
'ի վեր հանաւ 'ի ձեռն հրեշտակի ։ Առ խո-
նարհութե խորշէր յամ փառաց և յաստի-
ճանաց պատուոյ ։ Ունէր զշնորհս մարգա-
րէութե՝ առաւել իրագէտ լինել գաղտնեաց
սրտից առ 'ի դարձուցանել առ ած ։ Երևե-
ցաւ բացականայ , և ապրեցոյց 'ի վտանգէ .
զբազում հիւանդս բժշկեաց . յարոյց և ըզ-
մեռեալ . ետես զհոգիս ոմանց 'ի վերանալ
նց յերկինս . տեսօղ եղև և հրեշտակաց և
ամենայնք ածածնի . և սքանչելի սրբութբ
փոխեցաւ առ տր լի աւուրբք ութսունամ-
եայ՝ յամի տն 1595 ։ Յ . մայ . 26 ։

Փէ—— կամ փաւստոս քահանայ , և Բէ——
կմ աբիբաս սարկաւագ , և Նէ—— ընթեր-
ցող , և այլ ևս տասն ընկերք նց , կատա-
րեցան սով յաղեքսանդրիա քաղաքի 'ի վա-
ղերիոսէ դատաւորէ առ դեկոսիւ . յորմէ
մարտիրոսացն և փաբիանոս ( այն է փա-
պիանոս ) հռովմայ հայրապետ , և Աղեք-
սանդրոս եպմի ։ Հ . Յ . Յ . սեպտ . 6 ։
ևև Յ . յուլի . 20 ։

Փլորոս և Լաւրոս . տե՛ս Գաւրոս ։

Փոկաս հայրապետ տօնելի . հտ . Օ . 375 ։

Փոտինոս կամ փոտինէ (որ լուսեղէն) աղախինն քնի՝ է կինն այն սամարացի, որ առ ջրհորով սիւքար քաղաքի խօսելով ընդ փրկչին՝ հաւատաց 'ի քս, և եղև պատճառ հաւատալոյ նաև սամարացւոց ։ Իսկ յետ համբարձման տն մկրտեալ 'ի սբյն պետրոսէ՝ գնաց հրամանաւ նորա 'ի կարքեդոն, որ և կարթագինէ քաղաք ափրիկեցւոց, և քարոզեաց զքն . և 'ի դառնալն յեգիպ՝ հալածեալ 'ի հրէից՝ չոգաւ 'ի հռովմ . ուր փորձեալ 'ի ներոնէ՝ ապրեցաւ 'ի սրոյ, 'ի հրոյ, և 'ի մահաղեղոյ . ապա քերեցին զնա, և բրեալ կաչսն զերկուսին՝ արկին 'ի բանտ ժահահոտ . ուր երևեցաւ նմա տր ընդ պետրոսի և ընդ պօղոսի, և ողջացոյց զնա . որով և ընկալաւ սրբուհին 'ի տնէ շնորհս բարեխօսութե վն ամ աչացաւաց . և յետ կալոյ 'ի բանտի զամն երիս՝ հանգեաւ 'ի տր ։ Տ . օգոստ . 23, կմ 31 ։ Հաւրնտ . Բ . մձթ . և Օ . ճղէ ։ Յ . Լ . մարտ . 20 ։ Յիշատակին և որդիք փոտինեայ Յովսէ և Սիկտոր կմ բեկտոր հանդերձ քանի մի ընկերօք նահատակեալք 'ի ներոնէ ։

Փոտինոս տօնելի ընդ անիկտոսի . հտ . Գ . 373 ։

Փրանչիսկոս . տե՛ս Ֆրանչիսկոս ։

## Ք.

**Քառասուն մանկունք սեբաստիոյ տօնելիք.**
**Հռ. Ա. 482 :**

Քառասուն կուսանք ձգնազգեացք յադրիա-նուպօլսոյ առ լիկիանոսիւ, դաստիարա-կե̃լք 'ի տան սրբակրօն կուսին կեսլինեայ՝ իմաստուն խրատուք նորա սարկաւագին Ամո-նի, մատնեցան 'ի ձեռս բարդոսի դատա-ւորի քաղաքին. և աղօթիւք խորտակեցին զկռօշէնս : Տանջել սկսաւ դատաւորն նախ զամոն. եւ քերել զնա, և այրել զկողս նր̃, և դնել պղնձի սաղաւարտ հրացեալ 'ի գլ-լուխն. այլ յաղօթել կուսանաց՝ վերացաւ սաղաւարտն, և եղաւ 'ի գլուխ դատաւո-րին. ը̃ որ դառնացեալ նորա՝ վարեաց զա-մենեսին 'ի հերակլիա քաղաք, ուր կային նշխարք սրբուհւոյն գլերիկեայ. որ երևե-ցաւ սո̃ցն, և քաջալերեաց զնո̃ : 'Ի վաղիւն անդր արկան առաջի գազանաց, և անփորձ մնացին. և մարգարէացան առաջի դատա-ւորին զկորուստ լիկիանոսի, և զծաղկել քրիստոնէութեան : Ապա առաքեցան առ թգ̃րն. և նա զոմանս 'ի նոցանէ ընկեց 'ի հնոց հրոյ, զոմանս հրացե̃լ շամփրօք եւ խոցոտել. զայլս յօշոտեաց, զայլս խողխո-ղեաց. և այնպէս առհասարակ հրով և սրով կատարեցան վն̃ անուանն ա̃ն : Ա. սեպտ.

5 : Յ. Լ. 1 :

Բ.————ն Հնայ ափրիկեցիք , որոց գլխաւորքն կոչին Տերենտիոս , ափրիկանոս , մաքսիմոս , և պոմպէոս , էին զօրականք քրիստոնեայք առ դեկոսիւ . զորս փեստինոս կմ փորտունիանոս դատաւոր ափրիկոյ արգել 'ի բանտ անսուաղ . այլ կշորեսին գլխաւորսն եդ 'ի ներքսագոյն վայրի . և յաղօթել ամենեցուն 'ի մէջ գիշերի՝ երևեցաւ նց հրեշտակ այ պայծառ լուսով . և առժամայն կապանք նց լուծան . և գտաւ առաջի սեղան բարուելից . յորմէ ճաշակեալ գոհացան զայ : Որ լուեալ դատաւորին 'ի պահապանաց՝ եհան զնսն , և չարչարէր գանիւք և քերանօք՝ արձակեաց 'ի վր նց 'ի ձեռն դիւթիչ օձս թունաւորս՝ փակեալ 'ի միումսենեկի զաւուրս երիս . և ոչինչ վնասեցան վկայքն , այլ դիւթքն . յետ այնր եւ հրաման գլխատման , և այնպէս կատարեցան սրբքն արտաքոյ քաղաքի : ✦ . փետր . 5 : տր լինել . ապր . 9 : Յ . Լ . ապր . 10 :

Յուոդ . ասոր :

Բ.————ն և երկու վկայքն էին ընտիր զօրագլուխք և իշխանք առաքեալք 'ի թէոփիլեայ կայսերէ 'ի թ դալու՝ պահել ըզքաղաքն ամորիա յերեսաց ամիրային եկելոյ զօրօք բազմօք յերկրէն ասորւոց . իսկ ամիրայն առեալ զքաղաքն՝ ստիպէր զփառաւոր իշխանքս դառնալ յայլազգութիւն . այլ նք ոչ առին յանձն՝ ըն գեղեցիկ առաջնորդութե գլխաւորի նց , որում անուն էր

կոս-

կոստանդիէն . վ՟յ սրախողխող եղեն 'ի սէրն ք՟ի ։ Սբ զառաջինն էին Թուով խգ . բայց մին անկաւ 'ի հաւատոց , և չարաչար կորեաւ . զի ոչ խնայեաց 'ի նա ամիրայն՝ ասելով . ո՛վ զեւր հաւատս ոչ պահեաց , և ո՛չ զմերն պահեսցէ ։ Ն . փետր . 15 ։ Յ . Լ . և ո՟ր իէլ . մարտ . 6 ։

Ր……ն և հինգ վկայք տօնելիք . հտ. Գ. 106 ։

Ր……ն և չոն վկայք տօնելիք՝ ը կալխտրատոսի . հտ. Օ. 570 ։ և ը Նուփիմեայ . հտ. Գ. 134 ։

Ր……ս կմ քարիստոս հովիւ , և Մարիամ աւաքինի լծակիցք՝ էին 'ի միոյ 'ի գիւղից եգիպտոսի . զորոց ասաց ա՟ծ երկուց ոմանց 'ի ն՟ք հարանց՝ թէ 'ի վեր են քան զձեզ . և նոյ եկեալ հարցին և իմացան , զի քարիստոս և մարիամ կային միշտ իբրև եղբայր և քոյր 'ի կուսութե . 'ի գիշերի խորգ զգենուին , և զատ 'ի միմեանց գետնախշտի լինէին . և զինչս իւրեանց յերիս բաժանեալ՝ զմին աղքատաց տային , զմիւսն ծախէին 'ի հիւրս օտարս , և զմնացեալն 'ի պէտս իւրեանց . և ոչ ոք գիտէր զծածուկ առաքինութի նոցա ։ Ն . դեկտ . 24 ։ Սարք հց . ուր գտանես և զայլոց ս՟ց վայսպիսի քաղաքավարութիս ։

Ր……էն կմ քարիտոնէ աղախին կղոդիոսի առն բարեպաշտի 'ի կիլիկոյ ք՟ղքէ , մատնեցաւ վ՟ս հաւատոց առ դիոկղետիանոսին 'ի ձեռս դոմետիանոսի կոմսի . որ ետ դեր-

ծուլ պղպաղալթն սրբուհւոյն , և դնել 'ի վե՛ր կայծակունս հրոյ . հեղուլ և քացախ 'ի վէրսն , և հրացեալ շամփուրս հարկանել 'ի կողս , և ապա 'ի ծով ընկենուլ . և իբրև ապրեցաւ անտի , որպէս և 'ի հրոյ , խլեցին զատամունս նորա , և զեղնգունս ձեռաց և ոտից . և հրեշտակ տ՟ն ողջացոյց զնա ։ Ապա արկեալ 'ի տուն պոռնկութեան՝ աղօթիւք դիմեաց առ տ՟ր , և աւանդեաց զոգին . իսկ զմարմին սրբուհւոյն զարկեալն 'ի ծով՝ թաղեաց տ՟րն ն՟ր պատուով ։ Հ. փետր. 28 ։ Յ. յունվր. 15. և հոկտ. 5 ։ Լ. հոկ. 5 ։

Ռ.արէտոն խոստովանող 'ի՛ք հայրն էր յիկոնիոն քաղաքէ 'ի հալածանս ուեղիանոսի . և ըմբռնեալ 'ի բդեշխէն՝ յետ գանից և խանձողելոյ հրով՝ արկաւ 'ի բանտ ։ Իսկ 'ի դադարել հալածմանց՝ արձակեցաւ , և գնաց յեգիպ. և 'ի դիմել յանապատն եղիայի և յովհաննու՝ կալան և կապեցին զնա աւազակք յայրի իւրեանց . և ինքեանք արբեալ յանդգնաս գինի յամանոյ՝ յոր թափեալ էր օձն զթոյն , մեռան առ հասարակ ։ Այնուհետև ս՟ն քարիտոն զաւար նոցա բաշխեաց կարօտելոց , և արար զտեղին վանք . ուր փայլեալ նշանագործութ՟բ՝ փախեաւ 'ի փառաց , և շրջեալ յայլեայլ տեղիս՝ եղև հայր միանձանց բազմաց . և 'ի խոր ծերութ՟ն փոխեցաւ առ տ՟ր յաւուրս որդւոցն կոստանդիանոսի ։ Հ. սեպտ. 29 ։ Յ. 28 ։

Ռ.ուլերա կոյս յասիզ քաղաքէ ումբրիոյ՝

հե-

Հետեւող լեալ քաղաքակցին իւրոյ մեծին Փրանչիսկոսի, բաշխեաց աղքատաց զամ̃ ինչս իւր, եւ առանձնացեալ յեկեղեցի մի 'ի շինին՝ ընկալաւ զքօղ կրօնաւորութե̃ 'ի սբ̃յն Փրանչիսկոսէ. եւ փոխեալ յայլ տեղի՝ ստացաւ հետեւօղս իւր զբազումս, եւ եղեւ մայր միանձնուհեաց 'ի վանս զամս խբ̃, սքանչելի քաղաքավարութե̃ յետին աղքատութեան եւ խոնարհութեան եւ խստամբեր ճգնութեան 'ի պահս եւ յաղօթս. առողջացոյց զոմն համր, զայլ ոմն խուլ, եւ զայլս յախտաժետաց. 'ի պակասիլ հացի եւ ձիթոյ՝ սքանչելեօք առատացոյց: 'Ի պաշարել սարակինոսաց զքաղաքն Ասսիզ, եւ 'ի կամելն յարձակիլ 'ի վանս Կլարայի, նա հիւանդ գոլով՝ ետ տանել զինքն 'ի դուռն. եւ ածեալ անդր զահաւոր խ̃րդն սրբութե̃՝ ամանով իբրեւ 'ի բազմոցի, եկաց յաղօթս եւ ասէ. մի մատներ տր̃ զգազանաց զանձինս՝ որք խոստովան առնին առ քեզ. եւ պահեա՛ զաղախնայքս քո՝ զորս գնեցեր պատուական արեամբդ քով սբ̃վ: Եւ եղեւ ձայն լսելի. ես պահեցից զձեզ հանապազ. եւ տր̃ ցրուեաց զթշնամիս՝ հարեալ զնոս կուրութե̃:

Յետ բազում գործոց վախճանեցաւ սրբուհին՝ լուսափայլ դիմօք եւ այցելութե̃ դասուց հրեշտակաց եւ տր̃ կուսանաց՝ յամի 1242. եւ պայծառացաւ բզ̃մ նշանօք: Ի. օգ. 12:

ՔՍԵՆՈՓՈՆ կամ Քսենիփոն պատրիկ սինկղիտիկոս 'ի Կոստանդինուպօլիս՝ էր այր ողոր-

մած և արդար · նոյնպէս և ամուսին նորա Մարիամ՝ բարեպաշտ և երկիւղած յոյժ · և եղեն նոցա երկու որդիք Արկադէոս և Յովհաննէս · զորս սնուցին յածպաշտութե, և առաքեցին 'ի բերիտոն քաղաք 'ի դպրոց իրաւագիտութե · այլ նք հազիւ ապրեցան 'ի ծովէ, և ելին յայլևայլ տեղիս : Յովհաննէս կրօնաւորեցաւ 'ի վանս ուրեք · և արկադէոս երթեալ յէմ, իբրև իմացաւ 'ի ծերոյ ումեմնէ զազատութի եղբօր իւրոյ՝ հոքաւ և ինքն եղև միայնակեաց 'ի նոյն վանս: Ծանուցեալ ծնողացն 'ի յայտնութէ զերջանիկ վիճակ զաւակացն՝ թողին և ինքեանք զնս · և յետ գնալոյ 'ի տես որդւոց իւրեանց՝ մարիամ եմուտ 'ի վանս կուսանաց, և քսենոփոն կրօնաւորեցաւ 'ի վանս արանց · և այնպէս առ հասարակ սքանչելի վարուք փոխեցան առ քս : ⁘ · Յ · յունվր · 26 : Դաւուրնտ · Ա · ջհե :

Քսենոփոս · տե՛ս 'ի Լաւրենտիոս :

Քրիստափոր վկայ տօնելի · հտ · Գ · 406 :

Քրիստինէա կամ քրիստոնեայ կոյս տօնելի · հտ · Գ · 162 :

## Օ

Օքսենտիոս կիմ աւքսենտ քահանայ տօնելի ը̄ եւստրատիոսի · հտ · Փ · 481 :

Օքսենտիոս կիմ աւքսենտիոս մեծ ճգնաւոր՝ յաւուրս Թէոդոսի փոքու և մարկիանոսի, ծնն.

ծննդեամբ յարևելից՝ որ է յունարէն անա-
տօլի հանդէպ բիւզանդիոյ, միայնացեալ
էր 'ի լեառն մի մօտ 'ի քաղկեդոն, ոքսիա
կոչեցեալ՝ որ թարգմանի սուր, և ապա յա-
նուն սրբոյն անուանեալ՝ լեառն օգսենտի։
Սա խստակրօն վարուք ընկալաւ շնորհս
սքանչելեաց և մարգարէութե. էր զի և
հրեշտակք յայտնապէս երևեալ սաղմոսէին
ընդ նմա. ուր և երբեմն աղաւնի իջեալ յերկ-
նից՝ կերակրէր զնա. և էր սքանչելի յաչս
ժողովրդեան և թգւրաց։ Բազումս ձգնե-
ցաւ երանելիս այս ընդդէմ արքանեկայ նես-
տորի և եւտիքի, պինդ ունելով զսահմանն
սբ. ժողովոյ եղելոյ ընդդէմ նոցա յաւուրս իւր։
Եւ յետ շինելոյ վանս դրիքինարիայ կոչե-
ցեալ՝ հանգեաւ 'ի տր, և անդ թաղեցաւ։
Ն. յնվր. 30։ տր իէլ. փետր. 15։ Յ. Լ.
փետր. 14։

Օգոստինոս կամ աւգուստինոս մին 'ի չորից
վրդպաց հռովմայեցւոց՝ գերազանցեալ զա-
մենեքումբք, էր ծննդեամբ 'ի տագաստայ
քաղաքէ ափրիկեցւոց՝ մանուկ քաջուսումն
և անհամեմատ ուշիմութե. որ մինչդեռ էր
'ի կարքեդոն՝ ըմբռնեցաւ 'ի մանիքեցւոց
աղանդն. ապա 'ի հռովմ երթեալ, և անտի
'ի մեդիոլան առաքեալ 'ի լինել դասատու
հռետորութե, աղօթիւք և արտասուօք բա-
րեպաշտուհի մօր իւրոյ մոնիկայի՝ յարեցաւ
'ի սբն ամբրոսիոս, և դարձեալ 'ի բոլոր
սրտէ առ տր՝ եկն յուղղափառ հաւատս, և

միլիտեցաւ յամբրոսիոսէ 'ի հասակի լԳ ա-
մաց ։ Դարձ արարեալ յափրիկէ՝ ետ զանձն
'ի վարս սրբութե , և ձեռնադրեալ քահա-
նայ 'ի վաղերիոսէ ոբ. եպսէն հիպպոնայ՝
կեայր կրօնաւորաբար . և ստացեալ իւր հե-
տևօղս՝ կանգնեաց զկարգ կանոնաւոր երի-
ցանց . և սկսաւ ծաղկեցուցանել զհրաշալի
ձիրս վրդպութե՝ գրով և բանիւ յաղթահա-
րեալ հզօրեղապէս զմանիքեցիս և զայլ
հերձուածս . և եղև աջակից վաղերիոսի
եպսի յամի ։ Ոչ գոյր չափ խոնարհութեան
նր և ժուժկալութե և ամ առաքինութեց ,
և առաւել աղքատսիրութե և ածսիրութե .
մինչև Ճանաչիլ վառարան ածային սիրոյն ,
և օրինակ կատարեալ ապաշխարողաց ։ Ձեռ-
նադրեալ եպս հիպպոնայ՝ պայծառացոյց
ոչ միայն զափրիկէ , այլև զարևմուտս և
զարևելս գրաւոր վաստակօք իւրովք . մինչ
զի ոչ ոք 'ի վրդպաց եղև ոպ զնա՝ խորագոյն
և յորդագոյն յայտնաբանիչ ամ մասանց
Ճշմարտութեան , և ոչ ոք յածաբանից եղև
զկնի նր՝ որ ոչ առաջնորդեսցի 'ի գրոց նր ։
Կացեալ յեպսութեան զամս լԳ , և լցեալ
զամս հասակի եօթանասուն և վեց՝ գնաց
առ անձկալին իւր քս , յամի տն 435 . 'ի պա-
շարման քաղաքին 'ի վանդալաց ։ Ի . օգոստ .
28 ։

Օրէնդէոս մկայ արևելեան՝ էր զինուորեալ
հանդերձ վեց եղբարբք իւրովք առ դիոկ-
ղետիանոսիւ և մաքսիմիանոսիւ , և եղև 'ի
պա-

պատերազմի բարբարոսաց սկիւթացւոց կմ՟ մաւրիտանացւոց՝ մարմարովք հնկայազօր արքայն կամ իշխանն նոցա կամեցաւ մեծամարտիլ ը՟ կայսեր։ Եւ կայսրն ընտրեալ յամենայն բազմութենէ զքաջն օրէնդիրս՝ եհան ընդդէմ թշնամւոյն, որպէս պտըրդատ ընդդէմ հաչէի. և օրէնդրեայ սպառազինե՟լ աղօթիւք՝ եհար զախոյեանն, և եբեր զգլուխ նր՟ առ կայսրն։ Իսկ կայսրն մեծապէս ուրախացեալ, և տիրեալ ՝ի վր՟ բարբարոսաց՝ սկսաւ գոհանալ զկուոյ իւրոց վս՟ յաղթութե՟։ Յայնժամ ասէ օրէնդիրս. ով թագաւոր, քս՟ զօրացոյց զիս, և ետ ինձ զյաղթութի՟, և ոչ եթէ կուռքն։ Առ այս լռեաց բռնաւորն ՝ի ժամուն. և յետ աւուրց փորձեաց զքաջ նահատակն խոստմամբք և սպառնալեօք. և ոչ կարացեալ հաւանեցուցանել ՝ի պաշտօն կռոց՝ ետ աքսորել զնա և զկէյ եղբարս նորա յարևելս, որոշեալ զնոսա ՝ի միմեանց և ցրուեալ. մինչև կատարիլ նց՟ ազգի ազգի վկայական մահուամբ. ոմն և սբ՟ն օրէնդիրս արկաւ ՝ի ծովն պոնտոսի՝ կապեալ ը՟ վէմ մի մեծ. և հանեալ ՝ի ցամաք ՝ի ձեռն հրեշտակի՝ աղօթելով աւանդեաց զոգին. և ը՟ յայտնութեան նորա ՝ի տեսլեան՝ ամփոփեցաւ ՝ի քրիստոնէից։ Գ. մարտ. 20։ տր՟ իէլ. մարտ. 18։

Յ. Լ. յունիս. 24։

# Փ

Փրանչիսկոս մեծն ասսիզայէ յումբրիայ գաւա-
ռէ իտալիոյ , յետ լինելոյ գործակից հօր
իւրում 'ի վաճառականութե̅ ՝ իբրև սկսաւ
առ աղքատսիրութե̅ տալ ողորմութի̅ առատ ,
և վառեցաւ 'ի սիրտ ն̅ր փափաք առ կատա-
րելութի̅ աւետարանական աղքատութե̅ ,
կոչեաց զնա հայրն յատեան եպ̅սի քաղա-
քին , և ընկեց զնա 'ի ժառանգութե̅ . իսկ
Փրանչիսկոս սիրով յանձն առեալ զայն՝ ըն-
կէց և զձորձս իւր յանձնէ , և ասէ , այսու-
հետև համարձակագոյնս աղօթեմ . հա՛յր
մեր՝ որ յերկինս ես ։ Եւ լուեալ զբանս ա-
ւետարանին , թէ մի՛ ստանայք ոսկի և ար-
ծաթ և պղինձ 'ի գօտիս , մի՛ պարկ , և մի՛
երկուս պարեգօտս և կօշիկս , կանոն եդ
անձին պահել զբանն ա̅ն ա̅մ իրօք . և հա-
նեալ զկօշիկս յոտից , և միով շատացեալ
պարեգօտիւ , եգիտ իւր ընկերս երկոտա-
սան , և կանգնեաց զկարգ աղքատ կրօնա-
ւորաց՝ մինօր ք̅ր կրտսեր կոչեցելոյ . զոր և
երկնաւոր տեսլեամբ հարկեցաւ հաստա-
տել հայրապետն հռովմայ իննովկենտիոս
գ . զի տեսանէր զլատերանեան եկեղեցին
մերձ 'ի կործանումն՝ հաստատուն կալ վ̅ն
դնելոյ Փրանչիսկոսի և դոմինիկոսի ը̅ նո-
վաւ զուսս ։ Արդ՝ 'ի բազմանալ աշակեր-
տաց ս̅յն՝ առաքեաց զն̅ո 'ի քարոզութի̅ ը̅
ա̅մ

ամ՟ տեղիս . և ինքն ևս փափաքանօք մար-
տիրոսութե՟ էանց յերկիրն ասորւոց . այլ 'ի
սուլտանէ տեղւոյն մարդասիրութ՟բ ընկա-
լեալ այրն այ՟՝ դարձաւ յիտալիա : Եւ յետ
շինելոյ զբազում վանորայս՝ առանձնացաւ
'ի լեառն ալվերնոն . և սկսեալ քառասնօ-
րեայ պահս 'ի պատիւ միքայելի հրեշտակա-
պետի՝ յաւուր խաչվերացին երևեցաւ նմա
խաչելեալն սրովբէական թևօք պարածած-
կեալ , և տպաւորեաց զհինգ վէրս 'ի ձեռս
և յոտս և 'ի կողս իւր՟ : Եւ յետ երկուց
ամաց՝ զկնի բազմապատիկ սքանչելի գոր-
ծոց սրբութե՟ փոխեցաւ առ տր՟ յասսիզ քա-
ղաքի՝ յամի 1226. խդ՟ ամաց : Եւ կարգ նր՟
սքանչելի յորդեալ և բազմացեալ 'ի ձիւղս
ձիւղս՝ երևեցոյց անբաւութ՟ի արդեանց և
սբ՟ անձանց : Տ. հոկտ. 4. և սեպտ. 17 :

Փրանչեսկոս պաւլայեցի 'ի պաւլայ քաղաքէ
կալաբրիոյ՝ յետ մտանելոյ 'ի կարգ մեծին
Փրանչիսկոսի , առանձնացեալ յանապատ ,
'ի ժողովել առ նա բազմաց վն՟ համբաւոյ
սրբութե՟ նր՟՝ շինեաց վանս , և եղև հիմնա-
դիր երկրորդ կարգի Փրանչիսկեանց՝ որք
կոչեցան մինիմի , այ՟ ամենանկրտսերք : Եւ
էր ինքն կատարեալ ճգնաւոր , միանգամայն
և շնորհալի 'ի բանս . էանց ընդ ծովս սիկի-
լիոյ հանդերձ ընկերաւ միով՝ սփռեալ զա-
ղաբողոնն 'ի վր՟ ջրոց որպ՟ զնաւակ . մարգա-
րէացաւ զհանդերձեալսն . և հանգեաւ 'ի տր՟
ղա՟ ամաց՝ յամի . 1507 : Տ. ապր. 2 :

Փրան-

Փրանչիսքոս Քսաւերեան՝ ծնեալ յամի փոխման պաւղայեցւոյն, 'ի քսաւերիա աւանի՝ 'ի ստորոտս պիռենեայ՝ յազնուական տոհմէ, յարեցաւ 'ի ս՛րբ իգնատիոս հիմնադիր յիսեանց 'ի փարիզ գաղղիոյ . և լցեալ հոգւով նորա՝ առաւելաւ յա՛ծային իրաց տեսութիւն, մինչև երբեմն վերանալ 'ի գետնոյ . եւս կատարեալ 'ի ձգնութե, և զօրաւոր 'ի քարոզութե . և երթեալ մինչև 'ի հնդիկս՝ իրաւամբք կոչեցաւ առաքեալ հնդկաց . զի դարձոյց զանթիւ բազմութի կողմանցն այնոցիկ մինչև 'ի ճապոն, և մկրտեաց զթագաւորս և զիշխանս . և յայսպիսի հոգևոր մեծութե տակաւին այնչափ խոնարհ էր սրտիւ, մինչև ծնրադրութե գրել թուղթ առ իգնատիոս մեծաւոր իւր : Գործեաց բազմապատիկ նշանս և սքանչելիս, մինչև յարուցանել և զմեռեալս . մարգարէացաւ և բազում ինչ : Նա լի արդեամբք փոխեցաւ առ տր 'ի սանկիան կղզի սինեացւոց, խզ ամաց, յամի 1552 . և նշխարք նր փոխադրեալք անտի գործեցին զբազում հրաշս : Ի . դեկտ . 3 :

Փրանչիսքոս Պորճեան՝ դուքս անտիոյ և փոխարքայ գադալոնիոյ 'ի սպանիա, յետ մեռանելոյ 'ի կարգ Յի և ծնանելոյ զաւակս, իբրև մեռաւ կինն, եթող զա՛մ ինչ, և եմուտ 'ի կարգ յիսեանց՝ յամի 1548 . եղեալ երրորդ 'ի մեծաւորս այնր կրօնի : Իսկ պատճառ դարձի նր էր տեսիլ այլափոխ կերպարանաց իզաբելլայ կայսրուհւոյն վախճանելոյ .

մինչ

մինչ զի յայնմ հետէ զգուշեալ խուսայր յնէ՝
կրօնաւորէր և յնի խըլլէ յանապատի այն-
պիսի քաղաքավարութե̃, մինչև կոչիլ նմա
հրաշք իշխանաց. և յորժամ՝ ի կրօն եմուտ,
եղև օրինակ և այլոց յիշխանաց առ՝ ի կրօ-
նաւորիլ։ Եր ձգնօղ յոյժ, և անձանձիր՝ ի
մշակութի հոգւոց. և այնչափ խոնարհ, զի
յատուկ անուն գիտէր անձին կոչիլ մեղա-
ւոր։ Բազում անգամ հրաւիրեալ՝ ի պա-
տիւ կարդինալութեան՝ չէառ յանձն. ծա-
ռայէր աղքատաց և հիւանդաց. յերկարէր
յաղօթս և՝ ի խոկմունս զբազում ժամս. և
հարիւր ծունր կրկնէր յաւուրն։ Ի պատա-
րագել ս̃ւ̃յն՝ երբեմն փայլատակէին երեսք
նր̃։ Սա յետ բազում վաստակոց և առաքե-
լական գործոց վախճանեցաւ՝ ի հռովմ, կբ̃
ամաց, յամի 1572։ Ի. հոկտ. 10։

Փրանչէսկոս սալէզեայ՝ իշխան գենեւայ, եպ̃
Ջինեւրայի, յազգէ իշխանական սավոյայ,
սնեալ՝ ի մանկութէ բարի վարուք և ան-
մեղութե̃, և ուսեալ զամ̃ գիտութիւնս՝ ի
փարէզ և՝ ի պատուա, հրաժարեցաւ յիշ-
խանական պատուոյ ծերակուտին սաբաւ-
դիոյ. և քահանայացեալ՝ յառաջեաց՝ ի հո-
գևոր վաստակս և՝ ի քարոզութի բանին այ̃.
և կրեաց բազում վիշտս վտանգի՝ ի նորա-
ղանդից. այլ զհազարաւորս՝ ի գլխաւորաց
նց̃ դարձոյց յուղղափառութի։ Ձեռնադ-
րեալ եպ̃ս քաղաքին իւրոյ սալեզայ՝ առա-
ւել ևս արտայայտեաց զձիրս վեհութե̃ և

զշնորհս

զշնորհս սրբութեան իւրոյ. և յաճումն ջեր-
մեռանդութեան սահմանեաց զնոր կարգ կու-
սանաց ը կանոնաւ օգոստինեանց՝ յանուն
այցելութեան սբ ածածնի։ Գրեաց բազում
ինչ լի իմաստութբ և հոգւով այ՝ 'ի պայ-
ծառութին եկեղեցւոյ, և 'ի յառաջադիմու-
թիւն հաւատացելոց 'ի քրիստոնէական կա-
տարելութեան՝ ցուցանելով ճանապարհ հարթ
և ապահով։ Վախճանեցաւ ծե ամաց՝ յամի
1622. 'ի դեկտ. իը. 'ի լիոն քաղաքի, որ և
լուգդոն գաղղիոյ. և պայծառացեալ սքան-
չելեօք՝ դասակարգեցաւ ը սրբս յամի 1665։
Յունվար. 29։

# ՎԵՐՋ.

ՑՈՒ

# ՅՈՐԴՈՐԱԿ

## 'Ի նմանօղ լինել Սբց.

Վախճան տօնելոյ զսբս մր, որպ և գովե-լոյ զվարս նց, և վերծանելոյ կմ լսելոյ ըզ-պատմութի նց, 'ի միոյ կողմանէ է փառա-ւորել զԱծ 'ի սբս իւր. և 'ի միւս կողմանէ՝ է կարդալ զնս 'ի բարեխօսութի անձանց մերոց, և յորդորիլ 'ի նմանութի ածահա-ճոյ քաղաքավարութե նց՝ առ 'ի կարօղ լի-նել հասանել և պսակայ նց. և այս վերջին բան է խնդրելին մեր յայսմ վայրի: Ու լի-րաւի. զի զի՞նչ օգուտ իցէ՝ ինձ գրել, և վերծանողից ընթեռնուլ զվարս և զվկայա-բանութիս սբց, եթէ մեք օտար գտանի-ցիմք 'ի հետոց նոցա. զի՞նչ շահ տեսանել զգանձ և զմեծութիւն, և ոչ ինչ շահել. զի՞նչ շահ զննել զականս պատուականս, կմ թուել զոսկի և զարծաթ դահեկանս, և ոչ ստանալ գէթ զմի 'ի նոցանէ. զի՞նչ շահ բազմիլ 'ի սեղան բարելից, և սովեալ ելանել. զի՞նչ շահ ընթանալ յասպարէզն, և ոչ ժամանել առնուլ զբրաբիոն յաղթու-թեան: Օ ի՞նչ շահ գիտել, եթէ գոյ ար-քայութիւն յաւիտենից, և ոչ փութալ 'ի նոյն.

նոյն . կա՟մ գիտել՝ թէ սբ՟ք կան , և ոչ հո-
գալո՟վ լինել ։

Ոչ ապաքէն ա՟մ ոք 'ի բնէ ցանկացող է ե-րանութեան , և ըստ նմին բնաւորապէս ունի ցանկալո՟վ լինել , զի հասցէ յերանութիւն անդր . և զի՟նչ է՝ որ արգելու զմեզ ։ Պի-տեմք զտկարութի՟ն մեր , և երանի թէ գի-տէաք . այլ որ զօրացոյց զա՟մ սբ՟ս իւր ա՟ծ՝ նոյն է և հզօրիչ մեր , օգնական և ապաւէն և զօրութի՟ն ։ Պիտեմք զտգիտութի՟ն մեր , և երանի թէ գիտասցուք . այլ աւանիկ գրեալ է , եթէ ոք նուաղեալ իցէ յիմաս-տութենէ՝ խնդրեսցէ յա՟յ , որ տայ ա՟մի առա-տապէս , և ոչ նախատէ ։ Պիտեմք զչարու-թիւն մեր , և երանի թէ քաջ ճանաչէաք . զի յայնժամ գարշելով մեք մեզէն 'ի մէնջ՝ թողուաք զճանապարհս մեր անբարիս , և դառնայաք առ ա՟ծ , և խնդրէաք զողորմու-թի՟ն նր՟՝ որ յա՟մ ժամ պատրաստ է , և սպա-սէ դարձի մերում յապաշխարութի՟ն . և այն-պէս շնորհաց արժանացեալք՝ փոխէաք յայլ այլ , և յանմ՟բ գոլոյ՝ մ՟բ լինէաք տիրապէս .
ո՟պ և եղեն անթիւք 'ի սբ՟ց ։

Ոչ ապաքէն և նոյն իսկ վերծանութիւն և լսելութի՟ն վարուց սբ՟ց յորդորէ զմեզ սբ՟ս լինել , և դիւրացուցանէ զա՟մ կարծեցեալ դժուարութի՟ս՝ գործնական օրինակաւ . ուր տեսանեմք , զի և ա՟մ սբ՟ք մեզ նմանօղք կարեօք մարդիկ էին , յա՟մ վիճակի և յա՟մ հասակի . մինչ զի ոչ ոք ունի ասել , թէ ես

ԻԼ ում

Ում կարայից նմանել 'ի մեզ . երբ տեսա-
նէ զիւր նմանիս բազում հասակաւ, աստի-
ճանաւ, բնաւորութբ, և ամ հանգամա-
նօք . միայն մնայ կամք և փոյթ նմանելոյ
վարուց նց ։

Եւ զի որչափ լինիցի կամք առանց մտաց . զի
ոչինչ է կամեցեալ՝ որ ոչ ծանուցեալ . ապա
ուրեմն՝ նախ քան զամ պէտք են և 'ի մնէ
խնդրել զլուսաւորութիւն աչաց հոգւոյն,
այն է պայծառ տեսութիւն ճշմարտութե՝
զոր պարտական եմք գիտել և առնել, և
խորհել յօրէնս տն 'ի տուէ և 'ի գիշերի, զի
գիտասցուք կատարել զկամս նյ զբարին և
զհաճոյն և զկատարեալն . զմտաւ ածել
զմեղս մեր, զի զղջասցուք . և զպակասու-
թիւնս՝ զի ուղղեսցուք, զթերութիւնս՝ զի
լցցուք, զպիտանաւորութիս՝ զի մաղթես-
ցուք . յիշել զանցաւորութի և զունայնութի
կենցաղոյս՝ զի մի 'ի սմին թարթափես-
ցուք, և զանանց յաւիտենականութի հան-
դերձելոյ՝ զի 'ի նոյնս պատրաստեսցուք .
զմահն անմահ, զի խորշեսցուք, և ըզ-
կեանսն յաւիտենից՝ զի ժառանգեսցուք .
զխափանարարս փրկութե՝ զի բարձցուք, և
զմիջոցս՝ զի բուռն հարցուք . զչարութիւն
թանսարկուին և զորոգայթադիր հնարսնր,
զի զգուշասցուք, և զմարդասիրութին նյ՝
զի զօրասցուք, օգնականութբ հանդերձ
բարեխօսութե ամ սբց . որք փորձ գոլով
գիտեն և փորձանաւորացս օգնական լինել ։

Եւս առաւել անմոռաց յիշատակաւ որո-ճել զերախտիս մարդացելոյ փրկչին մերոյ և այ, զփրկական տնօրէնութիւնս նր և զփր-կագործ չարչարանս խաչի և մահու. որ է օրինակ ազդու, և միջնորդ միակ, և առաջ-նորդ անվրէպ առ արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն հաւատացելոց և յուսացելոց և սիրողաց իւրոց ։

Եթէ ոք յայսոսիկ դեգերի խորհուրդս, լուսաւորի միտք, և զօրանայ կամք. սրբի ՚ի մեղաց, և սբ լինի այլ. և որ անփոյթ առ-նէ զսոքօք՝ ո՛չ կարէ և ո՛չ կամի սբ լինել, ե-թէ ոչ՝ անգործ կամօք. այլ մեք զգործու-նէայն խնդրեմք, որով ևեթ լինի ամ՝ որ ինչ և լինի ։ Իսկ գործունէութիւն կամաց կախի զնախաճառել լուսաւոր խորհրդոց, որք կենդանացուցանեն զհաւատս և ամ-րացուցանեն զյոյս և բորբոքեն զսէրն. իսկ սէրն զամ դժուարինս դիւրէ, և զանհնա-րինս հնարաւորէ շնորհօք ։ Նոյն սէրն կոչի և է գլուխ պատուիրանի, և զօդ կատար-ման, արմատ և աճումն և գլխաւորութիւն ամ շնորհաց և սրբութե. եղբայրսիրութիւն առ ածսիրութիւն առաջնորդեալ, և ածսիրութիւն ը այ միաւորեալ. զի զի՞նչ է սբ լինելն՝ ե-թէ ոչ բարեկամութիւն ընդ այ. և ահա այն իսկ է սէրն, և զայդ առնէ սէրն ։

Տեսե՞ր, եթէ որպէ՞ս լինի և իւ՞ լինի նմա-նող լինել սբց կմ սբ լինել. այսուհետև զայն տես՝ որում ՚ի սբց մարթ է քեզ նմա-

նող

նող լինել, կա՛մ որպիսի՞ ոք լինել ։ Եթէ փոքրոգի ես և վեհերոտ, գէթ մի՛ լինիր անյոյս. զի կային և տկարք 'ի սոս քան ըզքեզ, այլ զօրացան ա͞ծ կարի և առաւել քան զկար, գոնէ լինել փոքրիկ յարքայութեան երկնից. որ չէ՛ փոքր. զի ա͞մ աստիճան յարքունիս՝ որչափ և յետին իցէ, է արքունական և փառաւոր և պանծալի. որչափ ևս յարքունիսն ա͞յ. յո՛յժ լիցին քեզ պաշտօնատարք երկրաւոր թ͞գրի, զի և փոքրիկն 'ի 'ի նոսա է 'ի թուոյ աւագանւոյն և իշխան փառաւոր. իսկ զի՞նչ իցէ յաւագանիս երկնից արքայի ։

Եթէ չունիս զտաղանդ առաքելական աստիճանի, և ո՛չ զքանքար մարգարէի, և ո՛չ զշնորհս վարդապետութե՛, ունիս զպարգևս աշակերտութե՛ առաքելոց և մարգարէից և վարդապետաց. վ͞յ կարող ես լա՛լ 'ի նոցանէ ուսեալ զհրահանգս առաքինութե՛ 'ի գործ արկանել, ո՛ք արարին այլք 'ի մ͞ջ առ հասարակ, և լինել մի 'ի մ͞ջ յայլում աստիճանի ը͞ս քում վիճակի ։

Եթէ չունիս առիթ մարտիրոսութե՛, կա՛լ յանձին զսէր անարիւն նահատակութե՛. մի՛ պաշտեր զկուռս ախտից, ը͞ոտնեա՛ ըզկռապաշտութի՛ ագահութե՛, գարշեսջի՛ր 'ի պիղծ ափրոդիտեայ, մի՛ զոհեր պոռնոյ և որովայնի, մի՛ կցորդ լինիր անարժան զոհից հեթանոսական ճաշապարհաց. և պարզաբար՝ յա՛նձն առ կամս, քան հաճել ըզ-

կամս գլխին և մարմնոյ և աշխի . մեռո՛ զհին մարդն , և մի՛ ուրանար զքրիստոնէութի՛ւն , զի մի՛ գործեր ինչ ընդդէմ քրիստոնէական կարգաց . և այսպէս զօրհանապազ 'ի մահ մատնեալ վն քո՝ որ մեռաւ վն քո , լինիս կենդանի վկայ ճշմարտութե , և զմարտիրոսականն առնուս պսակ բազմապատիկ :

Եթէ չունիս արիութի՝ պահել զմշտնջենաւոր կուսութի , թո՛ղ թէ հանդիսանալ 'ի ճգնաւորական և 'ի միակեցական վարս , և կապեալ ես ընդ աշխի և ընդ մարմնոյ , գէթ մի՛ լինիր ծառայ մարմնոյդ և աշխի , այլ ընդ նոյնս քեզ ծառայեցո՛ . լե՛ր ողջախոհ 'ի խորհուրդս , սրբասէր սրտի՛ւ , անխարդախ 'ի բանս , արդար 'ի գնացս . խոնարհ՝ անփառասէր , հեզ՝ անբարկացօղ . համբերօղ առ չարչարս , և բարերար առ ամենեսին . աղօթասէր և հոգեսէր ըստ քում վիճակի և ըստ կարի քում . և Ած տացէ քեզ շնորհս առաւել քան զոր խնդրես և իմանաս , և արասցէ զքեզ մի յայնպիսեաց , որք յաշխի են , բայց չեն յաշխէ աստի . ո՛չ եղեն անհամարք յընտրելոցն Այ և 'ի սրբց մեծամեծաց :

Արդ ուրեմն յայտ է՝ թէ սէր և փափաք սրբութե է , որ առնէ զոք սբ , ո՛ւր և իցէ , յորո՛ւմ վիճակի և իցէ . և նոյն սէր է՝ որ յաղթէ անձին և աշխի , որով և դեւն յաղթահարի . նոյն սէր է՝ որ տայ խաչակից լինել փրկչին և կերպարանակից մահուն նորա , որով և փառացն հաղորդ . այն իսկ

է

է ս՟րն լինել, և նմանօղ ս՟րյն ս՟րց ։ Մի՛ ոք
զանձն խաբեսցէ՝ այլազգ Ճանապարհ աւ-
նել յերկինս, եթէ ոչ գնալով զհետ ք՟ի՝
որ է Ճանապարհ և Ճշմարտութի՟ և կեանք ․
արդ հայեա՛ց 'ի կեանս ք՟ի՝ տ՟ն քոյ և վար-
դապետի, հեզոյն և խոնարհին, աղքատա-
ցելոյ և նուաստացելոյ վ՟ն քո, հալածելոյ և
բամբասելոյ՝ յորոց բարերարեաց, և չարչա-
րելոյ և սպանելոյ 'ի նցնէ՝ որոց վ՟ն չարչա-
րեցաւ և մեռաւ կեանքն անմահական ։
Նաւ մեզ պա՛րտ է զնոյնս չարչարիլ, կ՟մ նման-
օրինակ անցս կրել ․ եթէ ը՟ փայտ դալար
այնպէս արարին, ը՟ չորն զի՞նչ լինիցի ․ ե-
թէ ո՛չ կարեմք զաւուելն կրել, գէ՛թ նո-
վին չափ պարտիմք յօժարիլ կրել ․ և եթէ
տկարանամք առ այդ ևս, գո՛նէ ըստ կարի
մերում տանել զ՟մ կրից և նեղութեց աղ-
ցաւոր կենցաղոյս՝ անտրտունջ համբերութ՟
և յօժարափոյթ սիրով ։ Բազում նեղութ՟
պա՛րտ է մեզ մտանել յարքայութիւնն ա՟յ՝
վկայեցին առաքեա՟լք բանիւ և արդեամբք ․
և ա՟մ սրբք ընդ նոյն ընթացան Ճանապարհ
փրկչին ․ ապա ուրեմն և մեզ հարկ 'ի վ՟ր
կայ զնոյն գնալ արքունի պողոտայ ․ զորոյ
զաշխատութի՟ս թեթևացուցանէ օրինակ
փրկչին և ա՟մ փրկելոց ն՟ր, յոյս հանդեր-
ձեալ բարեաց, և անեղծական փոխարէն վա-
րուց սրբութե՟, և աննուաղելի շնորհք օգ-
նականութե՟ պսակողին ա՟մ սրբ՟ց ․ նմա փառք
այժմ և յանվէտ յաւիտեանս ․ ամէն ։

# ՀԱՄԱՌՕՏ

## Յորդորակ ՚ի Բանից Հարց։

Մե̄ հայրն մեր Ն.նոռն * Սոեփ պատուէր-
,, րեր ... որոձել զ՚ի գիրսն պատուէրանս ,
,, և յեղափոխել շփոթս Մեծն՝ առ ՚ի նախանձու
,, սոցա զօրանալ հոգւոյն խրատելոյ ՚ի պատ-
,, ուէրանաց || . Ն.Նանս ՚ի Վարս անտոնի . յն։
Գրիգոր Ա͞ծաբանն ասէ . * Ս կայրին պատ-
,, ուէրք զուարձանամ , և նահատակացն
,, արեամբ ցնծամ . այլոցն են հանդեսքն և
,, զօրանալն , իսկ ինձ պսակքն . այսքան
,, յառաջագոյն յափշտակեմ զբարեփառու-
,, թիւնն , և այսպէս ընտանենամ ուղղու-
,, թեցն ։ Ն.որդ՝ ՚Ի Հնայեցն տօնելէ է , և ա-
,, մենեցուն բանալէ՛ պատրաստաբար և՛ զլե-
,, զու և՛ զլսելիս և՛ զմիտս , ասել ինչ յօժա-
,, րութե̄ յաղագս նոցա՝ և լսել . և զե̄մ՝
,, նուէազագոյնս կարծել առ նոցա նահա-
,, տակութիւն ։ Ս ասն զի ես այսպէս իսկ
,, ունի . բազմաց ՚եղելոց մեզ յառաջնոր-
,, դութի լաւագունին , և յոլովագունիցն
,, յառաքինութե̄ խրատուց , բանի , օրինաց ,
,, մարգարէից , առաքելոց , նոցին ինքեանց
,, ՚Ի Ք͞ի չարչարանացն՝ Ն.ռաջին Ս չայէն ՚ի
,, խաչն ՚ի վեր ելելոյ , և զիս ժողովողի , զի
,, բևեռեսցէ զիմ մեղս , և զօձն խայտա-
,, ռակեսցէ , և զփայտն սրբեսցէ , և հեշ-
տու.

„ տութեն յաղթեսցէ , և զաղամ վերստին
„ կեցուսցէ , և զպատկերն զանկեալն միա-
„ անգամ կոչեսցէ ։ Ո՛, յօքանեայ եղելոց
„ մեզ և այսպիսեաց , ( այլ յայսր ամի մի՛ր )
„ ոչինչ նուաղ ՚ի դաստիարակութի ( են
„ մեզ ) Ակայք , ողջակէզք բանաւորք ,
„ զենմունք կատարեալք , պատարագք ըն-
„ դունելիք , Ճշմարտութե քարոզութիք ,
„ սուլթեն արձանայուցիչք ( դ՟ յաղթա-
„ նակօղք ) , օրինացն լրումն՝ հոգևորին ի-
„ մացելոյ , մոլորութեն լուծումն , չարու-
„ թեն հալածանք , մեղացն ջնջեղեղ , աշ-
„ խարհի մաքրութի ॥ ․ ՚Ի Ճառն Հերակլեանոսի ։



## Ցուցանակ գլխաւոր հալածանաց եկեղեցւոյ, յորս եղեն բազմութիւնք վկայից :


ա. Հալածումն 'ի Ներոնէ՝ յամի Տեառն 64 :
բ. Հալ 'ի Դոմետիանոսէ՝ յամի 93 :
գ. Հալ 'ի Տրայիանոսէ՝ յամի 107 :
դ. Հալ յԱնտոնինոսէ՝ յամի 162 :
ե. Հալ 'ի Սեւերոսէ՝ յամի 202 :
զ. Հալ 'ի Մաքսիմինէ Յուլիոսէ 235 :
է. Հալ 'ի Դեկոսէ՝ յամի 250 :
ը. Հալ 'ի Վաղերիանոսէ՝ 257 :
թ. Հալ յԱւրելիանոսէ՝ յամի 272 :
ժ. Հալ 'ի Դիոկղետիանոսէ. 284 :
և կրկին ևս 'ի նմանէ և 'ի համախոհից նր, որք էին Մաքսիմիանոս Հերակլէս, Մաքսիմիանոս Գաղերիոս արմենտարիոս, Մաքսիմինոս Դաժ, և Լիկիանոս. 302 = 323 :
ժա. Հալ 'ի Յուլիանոսէ ուրացողէ. 361 :
Թող զհալածանս արիանոսաց 'ի նմին դ դարու. որպ և զպատկերամարտից 'ի ը և 'ի թ դարս :




## Սաղմոսն — Ի ծրնիչն մեր՝ բարեխօսութիւն ամենայն հեց ։

('ի Յ՞ որդւոյ · պժ = ղկ ։)

Հոգւով հաստեալ՝ տիրականին ,
և մի՛ հաներ՝ յինէն զ՚հոգին ·
Այլ առաջնորդ՝ ինձ 'ի յերկին ,
հոգւոց լեցի՛ սբ և բարին ։
Պաղատանօք՝ Ածածնին ,
անապական՝ և միշտ կուսին ·
Եւ Յովհաննու՝ կարապետին ,
յանապատէ՝ բարբառ ձայնին ։
Աղաչանօք՝ մաքուր դասին ,
Առաքելոց՝ նախ առաջին ·
Որք ըզհոսանս՝ հոգւոյդ արբին ,
և ընդհանուր՝ մեզ արբուցին ։
Աշակերտաց՝ գերագունին ,
սբ հաւատոյ՝ անշարժ Վիմին ·
Եւ Անօթոյ՝ ընտրեալ , բանին ,
անճառելեաց՝ ըն տեսողին ։
Մաքուր Որդւոյ՝ ըն զեբեդին ,
որք 'ի վերուստն՝ որոտացին ·
Եւ Անդրէի՝ քումխաչակցին ,
և Մաթէի՝ քարոզողին ։
Փիլիպպոսի՝ զ՚հայր հարցողին ,
Բարթողիմեայ՝ զ՚մե զ կոչողին ·
Յակոբոսի՝ մակալփենին ,
և Թովմայի՝ երկուորեկին ։

Եւ

Նախանձայոյզ՝ Շմաւոնին ,
և յակոբեան՝ ըն̀ Յուդային ·
Եւ ըստ անուան՝ Եղբօր քոյին ,
արդար անուն՝ հայրապետին ։
Եօթանց մէջ՝ զոր ընտրեցին ,
սարկաւագաց՝ փոքրիկ հօտին ·
Որոց նախկի՝ պարուց դասին ,
պսակ անուանն՝ է ընդ նոսին ։
Եւ քում ընտրեալ՝ Եօթանասնին ,
աշակերտաց՝ քարոզ բանին ·
Եւ որք նոցայն՝ հետեւեցին ,
յիւրաքանչիւր՝ ժամանակին ։
Հայրապետաց՝ հանուրց ազգին ,
Վարդապետաց՝ ուղիղ բանին ·
Որ զքեզ որդի՝ հօր միածին ,
խոստովանել՝ մեզ ուսուցին ։
Սպասաւորաց՝ սրբ խորհրդին ,
իննեակ դասուց՝ յեկեղեցին ·
Համանմանեաց՝ վերնագունին ,
փառաւորողաց՝ ածային ։
Նաև նոցունց՝ որք են յերկին ,
հայցմամբ Վեհիցն՝ ողորմեա ինձ ·
Որք և վասն իմ՝ քեզ պաղատին ,
անտես չառնել զգործըս ձեռին ։
* Մարտիրոսօքն՝ անթիւ անձին ,
որք վասն քո՝ զարիւնս հեղին ·
Տուր ինձ արտօս՝ ըր ցաւագին ,
հեղուլ փոխան՝ արեան նոցին ։
Ի վըկայէն՝ սրբ առաջին ,
Ստեփաննոսէ՝ զքեզ տեսողին ·

Մինչ

Մինչ 'ի վկայն՝ ընաւից վերջին ,
որ 'ի նեռնեն՝ կատարեսցին ·
Զարչարանօք՝ ամենայնին ,
'ի տանջանաց՝ փրկեա՛ չարին ·
Եւ կամաւոր՝ մահուամբ նորին ,
'ի մահուանէ՝ անվախճանին ։
Խաւար բանտիւք՝ արգելանին ,
լուսաւորեա՛ զխաւարս անձին ·
Եւ կուրութբ՝ աչաց նորին ,
յաչըս հոգւոյս՝ փայլեա՛ զարփին ։
Հատմամբ ուռկանց՝ լարանին ,
զիմըս բացցես՝ քոյոյ ձայնին ·
Եւ ծայրակտուր՝ փողից յօդին ,
յոգիս բուրեա՛ զհոտ անմահին ։
Կտրեալ լեզուօք՝ սրբաբանիցն ,
զիմս արագեա՛ բանի՛ քոյին ·
Եւ ատամանց՝ քաղմամբն ուժգին ,
բա՛ց զբերանս՝ առնուլ զհոգին ։
Հաստմամբ յուսոց՝ երկուց ձեռին ,
զիմս արձակեա՛՝ միշտ 'ի բարին ·
Եւ կոտորմամբ՝ մատանց նորին ,
զիմըս գրեսցես՝ անուն յերկին ։
Հերձմամբ մաքրոյն՝ որովայնին ,
հե՛րձ առ յինէն՝ զխորհուրդ չարին ·
Եւ կտրելով՝ ոտից նորին ,
ոտք իմ կթոտք՝ հաստատեսցին ։
Քերմամբ մորթոյ՝ սրբոյն անձին ,
բորբք մեղայն՝ իմ քերեսցին ·
Եւ մորմոքմամբ՝ հարման աղին ,
հեշտախտութիք՝ ըն մաքրեսցին ։

Ընդ

Ընդ բազմահնար՝ տանջման նոցին ,
տանջանք հոգւոյս՝ բժշկեսցին .
Եւ ընդ հատեալ՝ մասանց յօդին ,
ցաւք յօդուածոյս՝ իմ ողջասցին ։
Բեկմամբ բարձիցն՝ և յօդուածին ,
զիմըս պնդեա՛՝ յօդյօդ մարմին .
Եւ խիստ գանի՛ւ՝ գաւազանին ,
ըզխստութի՝ կակղեա՛ սրտին ։
Ընդ տատասկաց՝ սուր երկաթին ,
ըզսուր քո հա՛ն ընդդէմ չարին .
Եւ բևեռօք՝ գարշապարին ,
զիս բևեռեա՛՝ յերկիւղ քոյին ։
Ընդ նետաձիգն՝ որ առ նոսին ,
զիս խոցեսցե՛ս՝ սիրով քոյին .
Եւ ընդ գեղոյ՝ գեղարդանին ,
զիմ ձմլեսցես՝ սիրտս առ բարին ։
Ընդ եռացում՝ ըն կապարին ,
զոր 'ի բերանսն՝ արկանէին .
Շիջո՛ զեռանդ՝ բոցոյ ախտին ,
և եռացո՛՝ յիս ըզհոգին ։
Ընդ սքանչելեաց՝ խոստացունին ,
զորս առ ոչինչ՝ համարէին .
'Ի սքանչելեաց՝ փրկեա՛ չարին ,
և դարձուսցե՛ս 'ի գլուխ նորին ։
Եւ ընդ խոստման՝ անցաւորին ,
յորոց 'ի բաց հրաժարէին .
Մի՛ մատնեցայց՝ ես պատրողին ,
խաբիւ սիրով՝ հիւթանիւթին ։
Կախաղանօք՝ սրբոյն ոտին ,
զընթացս ուղղեա՛ առ քեզ յերկին .

Եւ

Եւ կապանօք՝ ծանր երկաթին ,
Թեւթեւացո՛՝ զհոգս երկրային ։
Ընդ շղթայից՝ պարանոցին ,
զիս կապեցե՛ս՝ սիրով քոյին ·
Եւ ընդ կոճեղս՝ որ յոլոքին ,
զիս ՚ի կապից՝ խլեա՛ չարին ։
Որք վասն քո՝ ընդ հուր անցին ,
և ընդ եռանդ՝ ըն կաթսային ·
Շիջո՛ ըզհուր՝ մեղաց ախտին ,
և ըզվառում՝ ըն գեհենին ։
Եւ ծովահերձ՝ սաստմամբ ցրտին ,
որով նոքա՝ համբերեցին ·
Օ՛ իմ ըզպաղեալ՝ սիրտս առ բարին ,
ջերո՛ սիրովդ՝ ա̃ծային ։
Որք վասն քո՝ ողոքէին ,
ըզչար գազանսն՝ ուտել զմարմին ·
Օ՛ իս ՚ի ժանեաց՝ փրկեա՛ չարին ,
և յեղջերէ՝ միեղջերուին ։
Ընդ բազմօրեայ՝ քաղցի նոցին ,
տո՛ւր ինձ ըզհաց՝ քո երկնային ·
Եւ ընդ պասքում՝ ըն ծարաւին ,
զանապական՝ աղբիւր կողին ։
Ընդ օձաբնակ՝ խաւար գբին ,
յոր Լուսատուն՝ էր իմանձին ·
Հա՛ն զիս ՚ի գբոյ՝ տառապանաց ,
տղմուտ կաւոյ՝ հայցմամբ նորին ։
Եւ զի՛նչ ասեմ՝ զի ո՛չ թուին ,
լեզուա՛ւ մարդկան՝ տանջանք նոցին ·
Որք այժմ առ քեզ՝ ծածկեալ պահին ,
և անդ յայտնի՝ հատուցանին ։

Որոց

Որոյ տուժիւք՝ պանապանին ,
բուժեա՛ ըզցաւս՝ իմոյ անձին ։
Զ°մարմնոյ , հոգւոյ՝ և ըզմտաց ,
և զ°խորհրդոց՝ գործոց , բանին ։
Եւ ընդ հատման՝ գլխոց նոցին ,
որով գլխոյդ՝ անուշամբ շինին ։
Զիս յարմարեա՛ տէր ընդ նոսին ,
աւնուլ պաձումն՝ ընդ բոլորին ։
* Ըգնաւորօքն՝ յանապատին ,
հետևողաց՝ կենաց ձայնին ։
( Տուր ինձ թողուլ՝ զ°սէր աշխարհի ,
փախիլ՛ի սէր՝ քո երկնային ։ )
Եւ բարձողաց՝ ուսով , խաչին ,
մեռա՛ և զիս՝ ըստ աշխարհին ։
( Եւ քո ըզկնի՝ ընթացողին ,
ըզգնացս իմ՝ ուղղեա՛ զոտին ։ )
Պաղատանօք՝ մեծն Անտոնին ,
հեղինակի՝ նոր երամին ։
Եւ ոյք նուաւ՝ յայս կարգ եկին ,
մինչև յայժմուս՝ և ոյք լինին ։
Զանապականեալ՝ վարուք նոցին ,
և ծաղկերանգ՝ քեզ ընծային ։
Շնորհեա՛ փոխիլ՝ անբերս անձին ,
ըստ պտղաբերի՝ քոյոյ տնկին ։
Որք զաղօթիւ՝ ըն շնորհս առին ,
և զարտասուաց՝ յորդ վտակին ։
Ձգեա՛ և զիս՝ հայցմամբ նոցին ,
թէև հեղգամ՛, 'ի նոյն բարին ։
Եւ ոյք պահօք՝ ըն մեռուցին ,
զախտըս մարմնոյ՝ ս°կզըննաչարին ։

Տուր

Տո՛ւր ինձ նորօք՝ առ ցանկալին ,
սանձել ըղձերս՝ որովայնին ։
Որք խորհրդովք՝ ըն յաղթեցին ,
պոռնկական՝ պատերազմին ․
Տո՛ւր յաղթութիւն՝ ծուլիս անձին ,
գո՛նէ լռման՝ գործոց չարին ։
Նա ոյք 'ի խուռն՝ փոքու նիւթին ,
ագահութեան՝ ըն տիրեցին ․
Տո՛ւր ինձ յաղթել՝ անիրաւին ,
և շատանալ՝ բաւականին ։
Քաջ եղելովքն՝ 'ի յարութիւն ,
ընդ ձանձրութե՝ միջօրէին ․
Սրխացո՛ զհեղգս՝ առ բարին ,
և կարագօղս՝ առ վատթարին ։
Որք բարկութեան՝ ըն յաղթեցին ,
և զտրտմութիւն՝ ըն սանձեցին ․
Նորօք սանձեա՛՝ զիր զերկոսին ,
մինչ տարապարտ՝ առ իս շարժին ։
Նա ոյք հպարտ՝ փառամոլին ,
յաղթօղ գտան՝ յասպարիսին ․
Ո՛ իս փրկեսցես՝ հայցմամբ նոցին ,
յաջակողմեան՝ մենամարտին ։
Որք գերազանց՝ պատուիրանին ,
քան ըզգօնութիւն՝ ժուժկալեցին ․
Տո՛ւր ինձ գո՛նէ՝ բառնալ քոյին ,
քաղցր լծոյ՝ թեթև բեռին ։
Նա թէպէտ ոչ՝ ընդ առաջին ,
ճանապարհորդս՝ որ 'ի յերկին ․
Սակայն վերջնոյն՝ եղէց վերջին ,
հետևելով՝ հետոց նոցին ։

Նա

Եւ թէ վեհիցն՝ օթեւանին ,
չեմ արժանի՝ հօր քո յարկին ․
Արժանացո՛ յոյժ խոնարհին ,
քան ըզընաւորց՝ թերեւս յետին ։
Միայն 'ի թի՛ւ՝ օդեաց դասին ,
կացո՛ եւ զիս՝ յաջակողմին ․
Եւ լըսեցո՛ ըզցնծալին ,
զերանաւէտ՝ ձայնըն քոյին ։

## ՎԱԽՃԱՆ։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՐԱՆ



БИБЛИОТЕКА